ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Ս.Շ. ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱ

Դասագիրք

ԵՐԵՎԱՆ 2019

ՀՏԴ 69:330(075.8)
ԳՄԴ 65.315g73
Ս 887

Տպագրվել է Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ

Մասնագիտական խմբագիրներ՝

տնտ. թ., դոցենտ **Ա.Ա. Հովհաննիսյան**

Գրախոսներ՝

տնտ. դ., պրոֆեսոր **Դ.Ա. Հախվերդյան**
տնտ. դ., պրոֆեսոր **Տ.Ս. Մարտիրոսյան**
տ. գ. դ., պրոֆեսոր **Վ.Ի. Գրիգորյան**
տ.գ.դ., պրոֆեսոր **Մ.Վ. Մարկոսյան**

Պատասխանատու խմբագիր՝

մանկ.գ.թ., պրոֆեսոր **Լ.Ա. Միրզոյան**

Ստեփանյան Ս. Շ.

Ս 887 Շինարարության Էկոնոմիկա: Ս.Շ. Ստեփանյան – ՀՀ ԿԳՆ, Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան, 2019.- 316 էջ

Դասագրքում շարադրված են կապիտալ շինարարության էկոնոմիկայի և կառավարման ընդհանուր հասկացությունները՝ գնագոյացումը և նախահաշվային գործը, հիմնական ֆոնդերը, շրջանառու միջոցները, նյութատեխնիկական ապահովումը, աշխատանքային պաշարները, արտադրանքի ինքնարժեքը, շահույթը և շահութաբերությունը, հաշվապահական հաշվառումը և հարկագանձումը:

Ձեռնարկը նախատեսված է շինարարական, ինչպես նաև տնտեսագիտական (շինարարության ճյուղում) մասնագիտությունների ուսանողների համար: Այն կարող է օգտակար լինել նաև շինարարության և տնտեսագիտության ոլորտի մասնագետներին:

ՀՏԴ 69:330(075.8)
ԳՄԴ 65.315g73

ISBN 978-9939-63-309-1

© Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան, 2019

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ 1

Շինարարության դերը և տեղը երկրի տնտեսությունում…… 7

1.1. «Շինարարության էկոնոմիկա» ուսումնական դասընթացի ընդհանուր նկարագիրը…… 7

1.2. Շինարարությունը որպես նյութական արտադրության կարևորագույն ճյուղ……. 15

1.3. Շինարարության էությունը, նպատակը և խնդիրները……. 20

1.4. Կազմակերպչական ձևերը կապիտալ շինարարությունում…….. 28

1.5. Շրջակա միջավայրի պահպանության համար ծախսերի տնտեսական արդյունավետության գնահատումը…… 31

ԳԼՈՒԽ 2

Սեփականության ձևերը շինարարությունում…… 36

2.1. Սեփականության իրավունքի էությունը…… 36

2.2. Սեփականության իրավունքի սուբյեկտները…….. 38

2.3. Սեփականության իրավունքի ձեռքբերումը…… 41

ԳԼՈՒԽ 3

Նախահաշվային գործը և գնագոյացումը շինարարությունում…….. 43

3.1. Գնագոյացման հիմունքները շինարարությունում……... 43

3.2. Նախահաշվային արժեքի կառուցվածքը շինարարությունում և շինմոնտաժային աշխատանքներում……. 46

3.3. Նախահաշվային նորմավորումը և նախահաշվային նորմերի համակարգ…… 51

3.4. Նախահաշվային փաստաթղթերի կազմման մեթոդները և ձևերը…… 53

3.5. Պայմանագրային գինը շինարարությունում……. 67

3.6. Շինմոնտաժային աշխատանքների որոշման մեթոդական մոտեցումները և շինարարական արտադրանքի արժեքը…… 70

3.7. Կատարված աշխատանքների հաշվարկման կարգը, նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննությունը և հաստատումը……. 78

ԳԼՈՒԽ 4

Հիմնական ֆոնդերը շինարարությունում…… 80

4.1. Հիմնական ֆոնդերի կառուցվածքը…….. 80

4.2. Հիմնական ֆոնդերի գնահատումը…… 85

4.3. Ֆիզիկական և բարոյական մաշվածություն…….. 88

4.4. Հիմնական ֆոնդերի արդյունավետության վրա ազդող գործոնները……. 94

ԳԼՈՒԽ 5

Շինարարական կազմակերպությունների շրջանառու միջոցները…… 99

5.1. Շրջանառու միջոցների կազմը և ձևավորման աղբյուրները…….. 99

5.2. Շրջանառու միջոցների նվազագույն պահանջարկի հաշվարկը…….. 107

5.3. Շրջանառու միջոցների օգտագործման արդյունավետությունը…… 113

ԳԼՈՒԽ 6

Շինարարության նյութատեխնիկական ապահովումը…….. 118

6.1. Շինարարության նյութատեխնիկական ապահովման խնդիրները…… 118

6.2. Նյութատեխնիկական պաշարների մատակարարման կազմակերպումը…… 121

6.3. Նյութատեխնիկական պաշարների ապահովման ձևերը և մեթոդները …… 122

6.4. Նյութատեխնիկական ապահովման լոգիստիկական համակարգերը……..……... 123

ԳԼՈՒԽ 7

Աշխատանքային ռեսուրսները շինարարությունում……. 129

7.1. Աշխատանքի արտադրողականության գործոնները…… 129

7.2. Աշխատանքի արտադրողականության գնահատումը…….. 131

7.3. Պետության դերը աշխատանքի շուկայի կարգավորման գործում…… 145

ԳԼՈՒԽ 8

Շինարարական կազմակերպության արտադրանքի ինքնարժեքը…… 151

8.1. Շինմոնտաժային աշխատանքների վրա իրականացվող ծախսերի կազմը…… 151

8.2. Շինմոնտաժային աշխատանքների նախահաշվային ինքնարժեքը և դրա որոշման կարգը……... 155

8.3. Շինմոնտաժային աշխատանքների պլանային և փաստացի ինքնարժեքը…….. 156

8.4. Շինմոնտաժային աշխատանքների ինքնարժեքի իջեցման ուղիները…… 160

ԳԼՈՒԽ 9

Շահույթը և շահութաբերությունը շինարարությունում…… 164

9.1. Շինարարական կազմակերպության եկամուտը…….. 164

9.2. Շահույթի տեսակները շինարարությունում…….. 167

9.3. Շահույթի բաշխում և շահութաբերությունը շինարարությունում 171

ԳԼՈՒԽ 10

Հաշվապահական հաշվառումը շինարարությունում……..……..... 176

10.1. Հաշվապահական հաշվառման էությունը, սկզբունքներն ու խնդիրները……... 176

10.2. Հաշվապահական հաշվառման առարկան ու մեթոդները…….……. 185

10.3. Հաշվապահական հաշվառման կազմակերպչական առանձնահատկությունները շինարարությունում……...…. 209

10.4. Հաշվապահական հաշվառումը շինարարական կազմակերպությունում…… 212

10.5. Հարկման տեսական հիմունքները……. 219

10.6. Հարկերի դասակարգումը…… 230

10.7. Հարկումը շինարարական կազմակերպությունում……. 235

10.8. Աուդիտը շինարարությունում…….. 247

ԳԼՈՒԽ 11

Շինարարական կազմակերպության գործունեության տարբերակված մոտեցումները…… 259

11.1. Արտադրական գործունեության ընդլայնման տարբերակված մոտեցումների էությունը…… 259

11.2. Արտադրության դիվերսիֆիկացման պայմանները և չափանիշները…… 266

11.3. Արտադրության դիվերսիֆիկացիայի կազմակերպումն ու անցկացումը…… 279

11.4. Արտադրատնտեսական գործունեության արդյունավետության հետազոտում..... 296

11.5. Կառավարչական որոշումների ընդունումը շինարարությունում……. 299

11.6. Շինարարական կազմակերպության ֆինանսական վիճակի գնահատումը և ֆինանսական հաշվետվությունը…… 305

Նախաբան

Շինարարությունը երկրի տնտեսությունում կարևոր տեղ է զբաղեցնում: Այն նյութական արտադրության յուրահատուկ ճյուղ է՝ պայմանավորված վերջնական արտադրանքի առանձնահատկությամբ: Շինարարության ոլորտի զարգացումն առաջնային դեր է կատարում երկրի տնտեսության դինամիկ զարգացման գործում: Շինարարական գործընթացի կարևոր բաղադրիչներից է ոլորտի տնտեսագիտական խնդիրների լուծման ապահովումը:

Դասագիրքը շարադրված է «Շինարարության էկոնոմիկա» դասընթացի ծրագրին համապատասխան: Այն ներառում է կապիտալ շինարարության էկոնոմիկայի և կառավարման ընդհանուր հասկացությունները՝ սեփականության ձևերը, գնագոյացումը և նախահաշվային գործը, հիմնական ֆոնդերը, շրջանառու միջոցները, նյութատեխնիկական ապահովումը, աշխատանքային պաշարները, արտադրանքի ինքնարժեքը, շահույթը և շահութաբերությունը, հաշվապահական հաշվառումը և հարկագանձումը, շինարարական կազմակերպության արտադրության դիվերսիֆիկացիան:

Դասագրքում համակարգված ձևով ներկայացված են շուկայական կառուցակարգերի տեսական և կիրառական հարցերը՝ կապված կապիտալ շինարարության հետ:

Նախատեսված է շինարարական, ինչպես նաև տնտեսագիտական (շինարարության ճյուղում) մասնագիտությունների ուսանողների համար: Այն կարող է օգտակար լինել նաև շինարարության և տնտեսագիտության ոլորտի մասնագետներին:

ԳԼՈՒԽ 1

Շինարարության դերը և տեղը երկրի տնտեսությունում

1.1.«Շինարարության էկոնոմիկա» ուսումնական դասընթացի ընդհանուր նկարագիրը

Շինարարության էկոնոմիկան ճյուղային գիտություն է, որն ուսումնասիրում է կապիտալ շինարարությունում ընդհանուր տնտեսագիտական օրենքների արտահայտման ձևերը: Շինարարության էկոնոմիկան սերտորեն կապված է այն ճյուղերի հետ, որոնք ուսումնասիրում են հասարակական արտադրության, բաշխման, նյութական բարիքների ձեռքբերման, օգտագործման տնտեսական օրենքները, իսկ մյուս կողմից՝ այն կապված է շինարարական գործընթացների իրականացման հետ:

«Շինարարության Էկոնոմիկա» դասընթացը սերտորեն կապված է մի շարք տնտեսագիտական և ճարտարագիտական ճյուղերի հետ, որոնք են՝

ա) ընդհանուր տնտեսագիտական ճյուղեր (տնտեսագիտության տեսություն, միկրո և մակրոէկոնոմիկա, կառավարման հիմունքներ և այլն),

բ) հատուկ տնտեսագիտական ճյուղեր (արտադրատնտեսական գործունեության վերլուծություն, կառավարում շինարարությունում, ֆինանսներ և վարկ, հաշվապահական հաշվառում, կապիտալի շինարարության վիճակագրություն և այլն),

գ) հատուկ շինարարական ճյուղեր (շինարարական արտադրության տեխնոլոգիա, ճարտարապետություն, շինարարական արտադրության կազմակերպում, շինարարական կոնստրուկցիաներ, շինարարական նյութեր, մեքենաներ և այլն):

Շինարարության էկոնոմիկայում պաշարների ուսումնասիրման ընթացքում դիտարկվում են հիմնական արտադրական ֆոնդերը, շինարարական կազմակերպությունների շրջանառության միջոցները, շինարարության նյութատեխնիկական մատակարարման համակարգը, շինարարության նյութատեխնիկական բազան:

Հայաստանի տնտեսության անցումը շուկայական հարաբերությունների և դրա հետ կապված սեփականության բոլոր ձևերի առաջացումը հանգեցրին նախկինում տնտեսական ճյուղում հարաբերությունների փո-

փոխության: Երկրի տնտեսությունում տեղ գտած փոփոխությունները պահանջում են ապագա ճարտարագետ-շինարարներից և շինարարական ուղղվածության տնտեսագետներից տնտեսագիտական օրինաչափությունների վերաբերյալ այլ պատկերացումներ ձևավորել «Կապիտալ շինարարության» ոլորտում: Ելնելով այս պայմաններից, ինչպես նաև դասընթացի ծրագրից՝ դիտարկվում են հետևյալ դրույթները.

- ժամանակակից պայմաններում կապիտալ շինարարության մեջ ներդրումների տնտեսական արդյունավետությունը,
- ներդրումային նախագծերի տեխնիկատնտեսական հիմնավորումը և շինարարական նախագծման տնտեսական հիմքերը,
- շուկայական պայմաններում կազմակերպության շինարարական արտադրանքի տնտեսական գործունեության վրա ազդող գործոնները,
- արդյունավետության բարձրացման նպատակով կազմակերպության ներքին պլանավորման հարցերի լուծման նոր մոտեցումներ նվազագույն ծախսերով,
- տարբեր տեսակի շինմոնտաժային կազմակերպությունների կառավարման մեթոդներ,
- ժամանակակից պայմաններում շինարարության ֆինանսավորում և վարկավորում,
- հաշվապահական հաշվառման և հաշվետվությունների համակարգ,
- շինարարական կազմակերպության տնտեսական գործունեության վերլուծության մեթոդներ,
- շինարարության ներդրումային գործընթացի մասնակիցների տնտեսական փոխհարաբերություններ:

«Շինարարության էկոնոմիկա» դասընթացի կարևոր խնդիրներն են.

- դասընթացի հիմնական հասկացությունների և դասակարգումների ընկալում,
- շինարարական կազմակերպության արդյունքների վրա ունեցած ազդեցության, ինչպես նաև ռեսուրսների օպտիմալ օգտագործման ուսումնասիրում,

- շինարարական համակարգի գործունեության հիմնական օրենսդրության և նորմատիվների հետ ծանոթացում,
- կապիտալ ներդրումների արդյունավետ օգտագործման մեթոդների և ներդրումային գործընթացի ուսումնասիրում,
- շինարարական արտադրության հիմնական տարրերի ձևավորման և արդյունավետ օգտագործման ուղիների ուսումնասիրում (աշխատուժ, շինարարական նյութեր, կոնստրուկցիաներ, շինարարական մեքենաներ, սարքավորումներ, գործիքներ և այլն),
- շինարարական օբյեկտի նախագծային լուծումների արդյունավետության հիմնավորում:

Շինարարության էկոնոմիկան ճյուղային գիտություն է, որը ուսումնասիրում է ընդհանուր տնտեսագիտական կանոնների ազդեցությունը կապիտալ շինարարության վրա: Իր հերթին շինարարության էկոնոմիկան հանդիսանում է տեսական հիմնավորում այնպիսի սոցիալ-տնտեսական ուղղությունների համար, ինչպիսիք են՝ «Շինարարության ֆինանսավորումը և վարկավորումը», «Շինարարությունում աշխատանքի տնտեսագիտությունը» և այլն:

Շինարարական կազմակերպության տնտեսական գործընթացների ուսումնասիրման գիտամեթոդաբանական բազա են համարվում տնտեսագիտական, ինչպես նաև գիտական այնպիսի ուղղությունները, որոնք ուսումնասիրում են ֆինանսներ և վարկեր, գնագոյացումը, աշխատանքի տնտեսագիտությունը, նյութատեխնիկական ապահովումը, արտադրության կառավարումը, պլանավորումը և վարկավորումը:

Շինարարության էկոնոմիկան հնարավորություն է տալիս գնահատել գիտատեխնիկական առաջընթացի արդյունքներն արտադրական տեխնոլոգիաների և շինարարության կազմակերպման անդադար զարգացման մեջ, որի արդյունքն է արտադրողական ջանքերի արդյունավետության բարձրացումը:

Շինարարության էկոնոմիկան շինարարության ճյուղում արտադրական հարաբերությունների համախումբն է, որը ներառում է ճյուղին բնորոշ շուկայական կառուցվածքների ձևավորման գործընթացը, սեփականության ձևերը, շինարարական կազմակերպության գործունեության պլանավո-

րումը և տվյալ բնագավառում պետական կարգավորման ու կառավարման մեթոդները:

Որպես տնտեսական ճյուղային գիտություն՝ շինարարության էկոնոմիկան ուսումնասիրում է շինարարության ճյուղում արտադրական հարաբերությունների զարգացման հիմնախնդիրները, արտադրող ուժերի հետ փոխհարաբերությունները և արտադրական ուժերի հետ փոխազդեցությունները, կապիտալ շինարարության արդյունավետության և զարգացման օրինաչափությունները, դիտարկում է կապիտալ ներդրումների ու շինարարական արտադրության պլանավորումը՝ կազմակերպության կազմակերպչաիրավական ձևի սահմաններում:

Շինարարության էկոնոմիկայի գլխավոր խնդիրներից է շուկայական հարաբերությունների պայմաններում շինարարական կազմակերպությունների գործունեության գնահատումը:

Շինարարության էկոնոմիկան ուսումնասիրում է շինարարությունում կապիտալ ներդրումների արդյունավետությունը և գիտատեխնիկական առաջադիմությունը (գործոններ, պայմաններ, ցուցանիշներ, նորմատիվներ) որպես աշխատուժի արտադրողականության բարձրացման, ֆոնդավերադարձելիության, շահույթի, ռենտայնության մեծացման, հզորությունների մուտք գործելու արագացման և ընկալման, ինչպես նաև նախագծային տեխնիկատնտեսական ցուցանիշների ձեռք բերման համար կարևորագույն նախապայման: Շինարարական արտադրության էկոնոմիկան մշակում է շինարարական նախագծման համար տնտեսական հիմքեր՝ հաշվի առնելով ժամանակային գործոնները, բնական և քաղաքաշինական պայմանները, սոցիալ-տնտեսական ազդեցությունը, ինչպես նաև շինարարական օբյեկտների արժեքների նվազեցումը: Շինարարության էկոնոմիկայի կարևորագույն խնդիրն է ստեղծել նորմատիվային բազա, այսինքն՝ փոխկապակցված արժեքային և բնեղեն նորմատիվային համակարգ (պլանային, արտադրական, վիճակագրական, հաշվետվությունների և այլն), ներդրումային գործընթացի բոլոր փուլերում արտադրության տեխնիկատնտեսական կարգավորման և վերահսկման նպատակով:

Շինարարության էկոնոմիկան կապված է մի շարք յուրահատուկ տնտեսագիտական ուղղությունների, ինչպես նաև գիտությունների հետ,

որոնք ուսումնասիրում են շինարարության արտադրատեխնիկական հիմքերը:

Շինարարության էկոնոմիկան մեթոդաբանական բազա է շինօբյեկտների նախագծման ժամանակ տեխնիկական որոշումների և շինմոնտաժային աշխատանքների արդյունավետության գնահատման համար:

Շինարարության էկոնոմիկան դիտարկում է տնտեսության տվյալ ճյուղում ընդհանուր տնտեսական օրենքների գործունեությունը: Շինարարությունն ունի մի շարք էական տեխնիկատնտեսական հատկություններ, որը տարբերում է տվյալ ճյուղն այլ արտադրական ճյուղերից՝ արտադրության անշարժություն, նախագծային որոշումների և բուն շինարարության գործընթացի կախվածություն արտաքին միջավայրից ու տեղային պայմաններից, շինարարական պարբերաշրջանի զգալի տևողություն, շինկազմակերպությունների և առանձին իրականացնողների զգալի շարժունակությունը, մեծ նյութատարողունակություն:

Շինարարության էկոնոմիկայի միջուկը կազմում է նախագծային, կառավարչական, կազմակերպչական գործընթացների օպտիմալացումը և ֆինանսական որոշումները:

Շինարարության էկոնոմիկայի գլխավոր նպատակն է *նվազագույն ծախսերով տնտեսության բոլոր ճյուղերին ճիշտ ժամանակին բարձրորակ շենքերով և շինություններով ապահովումը:*

Շինարարության էկոնոմիկայի ուսումնասիրման օբյեկտը համարվում է շինարարության տեղը և դերը ազգային տնտեսության զարգացման, ճյուղի տնտեսական կառուցակարգի վերլուծության, դրա զարգացման ուղիների մշակման մեջ, այս ճյուղում օգտագործվող տեխնիկայի, աշխատուժի, աշխատանքային միջոցների օգտագործման արդյունավետության բարձրացման մեթոդների փնտրումը: Շինարարության էկոնոմիկան ուսումնասիրում է նաև պլանավորման և կանխատեսման խնդիրները, նոր տեխնիկայի և շինարտադրության, նախագծային որոշումների տնտեսական արդյունավետությունը:

Պլանաբաշխայինից շուկայական տնտեսության անցման փուլում գիտնականների կողմից ստեղծվեցին տնտեսավարման հաշվարկների ձևաչափեր՝ շինկազմակերպությունների ինքնաֆինանսավորման և ինքնա-

ծախսածածկման նպատակով, մշակվեցին շուկայի ենթակառուցվածքի տնտեսական գործիքներ, շինարտադրության պայմանագրային գների օգտագործման մեթոդներ, շինարարությունում վարձակալական հարաբերությունների և սեփականաշնորհման միջոցներ:

«Շինարարության Էկոնոմիկա» հասկացության մեջ է մտնում նաև տնտեսական աշխատանքը, որն անցկացվում է շինկազմակերպությունների տնտեսական ծառայությունների կողմից (պլանատնտեսական, ֆինանսական, հաշվարկապայմանագրային բաժիններ, հաշվապահներ, աշխատանքային և աշխատավարձային բաժիններ): Սրանց գործառույթների մեջ է մտնում արտադրատնտեսական պլանների մշակումը, հաշվառման կազմակերպումն ու տնտեսական գործունեության արդյունքների վերլուծությունը, հաշվարկների կազմակերպումը, գների, ինքնարժեքի և շահույթի մակարդակի վերահսկումը, աշխատանքի վարձատրության և կազմակերպման արդյունավետ համակարգերի ներդնումը: Տնտեսական բաժինները զգալի աշխատանք են իրականացնում շինարարական կազմակերպության շուկայական կառուցվածքին հարմարվելու հետ:

Այսպիսով՝ շինարարության էկոնոմիկան զբաղվում է շինարարության, որպես ազգային տնտեսության յուրահատուկ ճյուղի, ուսումնասիրմամբ, որը ձևավորվում է մի կողմից որպես հիմնական ֆոնդերի վերարտադրության գործընթաց՝ պահանջելով անհրաժեշտ կապիտալ ներդրումներ այն իրականացնելու նպատակով, և մյուս կողմից, որպես սեփական զարգացման գործընթաց տվյալ նյութական արտադրության ուղղվածությունում:

Կապիտալ շինարարության տնտեսական տեսանկյունից ուսումնասիրման բարդությունը կայանում է շինարարական արտադրության գործընթացի բազմատեսակ կազմակերպչական և տնտեսական ձևերով, մեծ քանակությամբ տարբեր գործառութային նպատակներ և խնդիրներ ունեցող մասնակիցներով, բնական պաշարներից, պայմաններից և այլնից զգալի կախվածությամբ: Շինարտադրության գործընթացում (ցանկացած օբյեկտի կառուցում), որպես օրենք, մասնակցում են.

- ներդրողը,
- պատվիրատուն,

- նախագծողը,
- շինարարական կազմակերպությունը:

Բացի վերը թվարկվածներից շինարտադրության ուղղակի մասնակիցներից արտադրության ստեղծմանը մասնակցում են նաև տասնյակ գործարաններ՝ շինարարական նյութեր արտադրող և այլն, որոնցից յուրաքանչյուրը, մասնակցելով շինարարական արտադրության գործընթացին, առաջնահերթ ձգտում է ստանալ առավելագույն հնարավոր շահույթ:

Շինարարական արտադրության գործընթացը ձևավորվում է մեծ քանակությամբ կազմակերպչական, գիտատեխնիկական, տնտեսական, արտադրական, բնակլիմայական և այլ գործոնների ներքո՝ այդ գործընթացը իրենից ներկայացնում է բարդ համակարգ՝ զարգացման դինամիկ բնույթով: Այդ պատճառով կապիտալ շինարարության զարգացման տնտեսական հիմքերը ուսումնասիրելիս օգտագործվում է վիճակագրության մաթեմատիկական, տնտեսամաթեմատիկական մոդելավորման և համակարգային վերլուծության մեթոդները: Այս դեպքում ներդրումային գործընթացը դիտարկվում է որպես վերջնական նպատակին հասնելու համար համագործակցող տարրերի ամբողջական համակարգ՝ տրված տնտեսական ցուցանիշներով շինարարական օբյեկտի ճիշտ ժամանակին ավարտելու համար:

Տնտեսական կառուցվածքի ժամանակակից պայմաններում փոխվել են արտադրության միջոցների սեփականության ձևերը և աշխատանքի արդյունքը, հետևաբար շինարարություն էկոնոմիկան (որպես կիրառական գիտական ուղղություն) նույնպես ենթարկվում է հիմնարար փոփոխությունների:

Երկրում տեղ գտած արմատական տնտեսական հեղափոխությունը՝ դեպի նոր տնտեսական հարաբերությունների անցումը՝ հիմնված ձեռնարկատիրության և մրցակցության վրա, ստեղծում են մարդկանց ստեղծագործական հմտությունները օգտագործելու շուկայական տնտեսության պայմաններում նախապայմաններ՝ մոտիվացիայի միջոցով մեծացնելով աշխատուժի արտադրողականությունը: Այդ պայմաններում կարևոր դեր է տրվում ձեռնարկատիրությանը՝ ինքնուրույն տնտեսական գործունեություն, որը հիմնված է սեփականության տարբեր ձևերի վրա: Հա-

մաշխարհային փորձը փաստում է, որ անհատ ձեռնարկատիրությունը հասարակության զարգացման համար կարող է տալ մեծ արդյունավետություն: Դրանցով, որպես օրենք, զբաղվում են մարդիկ, ովքեր ունակ են իրականացնել շահութաբեր գործ՝ հմուտ կազմակերպիչները, ինքնուրույն, ակտիվ և այլ անձիք: Կազմակերպության համար կարևոր գործոն է հանդիսանում իրավահավասարությունը: Կազմակերպության գործունեությունն անհնար է առանց ժամանակակից տնտեսական կառուցվածքներին, ներդրումային գործընթացների մեթոդներին, ներքին և արտաքին շուկային, մարքեթինգին տիրապետելու: Այդ գիտելիքները հարկավոր են յուրաքանչյուր մասնագետի՝ անկախ նրա մասնագիտական ուղղվածությունից:

Շինարար-մասնագետները պետք է տիրապետեն տնտեսագիտական գիտելիքների, որոնք նրանց թույլ կտան իրականացնել տեխնիկատնտեսական հաշվարկներ՝ կապված տարբեր տնտեսական իրավիճակների հետ, տալ նախագծերում և շինարարությունում նոր կազմակերպչատեխնոլոգիական և ճարտարագիտական որոշումների կիրառման տնտեսագիտական արդյունավետության հիմնավորում, ճիշտ գնահատել տնտեսական իրավիճակը և կանխատեսել շուկայում շինարարական ծառայությունների հնարավոր փոփոխությունները, ունենալ հստակ պատկերացում գործարար պլանի կազմման մեթոդների, մրցութային փաստաթղթերի և այլ ֆինանսական փաստաթղթերի վերաբերյալ, որոնք անհրաժեշտ են գնահատել սակարկություններում մասնակցելու նպատակահարմարությունը՝ նպատակ ունենալով ստանալ նախագծագեոդեզիական, գիտահետազոտական, շինմոնտաժային աշխատանքների պատվեր, շինարարական ու տեխնոլոգիական սարքավորումների և շինյութերի մատակարարում, տիրապետել մարքեթինգի հիմունքներին և բանկային գործին: Բնական է, որ նման բարդ համակարգային խնդիրների լուծումը ի զորու է միայն լավ պատրաստված մասնագետը:

Երիտասարդ մասնագետները պետք է հստակ գիտակցեն, որ ժամանակակից պայմաններում յուրաքանչյուր ինժեներական, տնտեսական կամ կազմակերպչական լուծում դիտարկվում է առաջին հերթին դրա տնտեսապես նպատակահարմարության տեսանկյունից:

Ելնելով այս պայմաններից՝ շինարտադրության գործընթացի, ձեռնարկատիրական գործունեության կազմակերպչական արդյունավետության էությունը հասկանալու համար, որոնք նպատակաուղղված են հիմնական ֆոնդերի վերարտադրության մեծացմանը և նվազագույն ծախսերով մեծ շահույթ ստանալուն, գրքում առաջնահերթ տրվում է կապիտալ շինարարության տեխնիկատնտեսական խնդիրները, ձեռնարկատիրության գլխավոր ձևերի և մեթոդների հասկացությունները, բերվում են գործունեությունը կարգավորող օրինական և օրենսդրական ակտերը, տրվում են շինկազմակերպության պաշարների սահմանումները, հաշվապահական հաշվառման համակարգը, տնտեսական գործունեության վերլուծության մեթոդները և այլն:

Ինժեների պատրաստումը ժամանակակից պայմաններում կրում է զգալի յուրահատկություն: Մի կողմից, նա կրթվում է ուսումնական ծրագրերի միջոցով, որոնք ներկայացնում են գիտության և տեխնիկայի ժամանակակից մակարդակը, իսկ մյուս կողմից, դժվար է կանխատեսել, թե ինչի հետ է ապագա ինժեները հանդիպելու պրակտիկ գործունեության ընթացքում:

Ակնհայտ է, որ ուսանողը պետք է լավ տիրապետի յուրաքանչյուր ուղղության հիմնարար տեսական հասկացություններին, որը թույլ է տալիս արագ կողմնորոշվել ձեռնարկատիրության և գործարարության աշխարհում: Ունենալով հիմնարար գիտելիքներ հիմնական ուղղություններում՝ նախևառաջ պետք է սովորի ինքնուրույն աշխատել, իսկ հետագայում, օգտագործելով իր գիտելիքները կարողանա արագ հարմարվել կյանքի իրական պայմաններին:

1.2. Շինարարությունը որպես նյութական արտադրության կարևորագույն ճյուղ

Շինարարությունը երկրի տնտեսության առանձին ճյուղ է, որը նախատեսված է գործող արտադրական և ոչ արտադրական նշանակությամբ օբյեկտներում նոր շինարարության իրականացման, ինչպես նաև վերակառուցման, ընդարձակման, վերանորոգման և տեխնիկական վերազինման

համար: Շինարարական ճյուղի որոշիչ դերը կայանում է երկրի տնտեսությունում դինամիկ աճի պայմանների ստեղծումը:

Որպես նյութական արտադրության ճյուղ՝ շինարարությունը ունի մի շարք առանձնահատկություններ, որոնց միջոցով այն տարբերվում է այլ ճյուղերից: Ճյուղի առանձնահատկությունը բացատրվում է նրա վերջնական արտադրանքի բնույթով, աշխատանքային պայմանների առանձնահատկությամբ, կիրառվող մի շարք առանձնահատուկ տեխնիկայով, տեխնոլոգիայով, կազմակերպության արտադրանքով, կառավարմամբ և նյութատեխնիկական պաշարների ապահովմամբ: Ներկայացված առանձնահատկություններն ստորաբաժանվում են *ընդհանուրների*, որոնք բնորոշ են ընդհանուր շինարարությանը՝ անկախ կառուցվող օբյեկտներից ու դրանց նպատակներից, և *հատուկների*, որոնք բնորոշ են ընտրված շինարարություններին:

Շինարարության ընդհանուր առանձնահատկություններն են.

1. շինարարական արտադրանքի ոչ ստանդարտ, ժամանակային, ոչ տիպային բնույթը և վերջնական արտադրանքի բնույթը: Օբյեկտների շինարարական մոնտաժային աշխատանքներն ավարտվում են բնակելի դարձած վայրերը շահագործման հանձնելու դեպքում, և արտադրության միջոցները տեղափոխվում են նոր վայրեր: Շինարարությունում շարժական են համարվում շինարարական մեքենաները, աշխատանքի տեխնիկա-տեխնոլոգիական սարքավորումները, իսկ արտադրանքը՝ անշարժ է: Արդյունաբերությունում, որպես կանոն, արտադրանքն ունի շարժական բնույթ, իսկ աշխատանքային վայրերը տարածականորեն ամրակցված են: Շինարարությունում վերջնական արտադրանքն ստեղծվում է որոշակի ժամանակի ընթացքում և օգտագործվում է այնտեղ, որտեղ նա տարածականորեն ամրակցված է: Շինարարության ճյուղի արտադրանքը հանդիսանում է երկարաժամկետ օգտագործման օբյեկտ և հասարակությանը ծառայում է տասնյակ և հարյուրավոր տարիներ,

2. շինարարության գործընթացի կազմի մեջ մտնող տեխնոլոգիական գործողությունները փոխկապակցված են: Արտադրությունում, մինչև արտադրանքի թողարկելը, մշակվում են արտադրության տեխնոլոգիաները: Շինարարությունում, մինչև շինարարական մոնտաժային աշխա-

տանքների սկսվելը, ստեղծվում են ժամանակավոր արտադրակենցաղային և վարչատնտեսական կառույցներ, իրականացվում են ինժեներական կոմունիկացիաների, ճանապարհների, էլեկտրահաղորդման գծերի անցկացման աշխատանքներ և այլն: Բոլոր այս առանձնահատկությունները պահանջում են կազմակերպչական յուրահատուկ ձև և լրացուցիչ ծախսեր: Դրա հետ երկարաժամկետ շինարարությունն առաջ է բերում տնտեսական շրջանառությունից միջոցների շեղում՝ դեպի անավարտ շինարարություն: Շինարարության գերնորմատիվային շարունակությունը և տեխնոլոգիաների հետագա զարգացման իրականացումն առաջ են բերում շինարարության քայլերի վերաբերյալ նախապես ընդունված որոշումների վերանայում՝ հաշվարկելով նոր տեխնիկայի և տեխնոլոգիական աշխատանքների ընդունումը: Շինարարական արտադրության տեխնոլոգիան պահանջում է նրա առանձին գործընթացների վրա խիստ հետևողականություն. մի գործընթացի ավարտը նախորդում է մյուսի սկզբին: Շինարարության ոչ մի գործընթաց չի կարող սկսվել առանց նախորդի ավարտի, իր արտադրանքը նման պայմաններում չի կարելի հավաքել միջակա պահեստներում: Դրա հետ կապված՝ շինարարական գործընթացները չի կարելի դասավորել տարածականորեն, քանի որ դժվարություններ են առաջանում աշխատողների միաժամանակյա զբաղվածության հետ՝ կախված նրանց համապատասխան մասնագիտությունից և որակավորումից,

3. ամսվա ընթացքում, ըստ բարդության և տեսակների, շինմոնտաժային աշխատանքների հարաբերակցությունը, որը դժվարեցնում է աշխատողների քանակական և պրոֆեսիոնալ որակավորված կազմի հաշվարկը,

4. շինարարական արտադրության վերջնական արտադրանքին մասնակցում են տարբեր կազմակերպություններ: Արդյունաբերական արտադրության մեջ կոոպերացման ցանկացած աստիճանում վերջնական արտադրանքը թողարկում է մեկ կատարող, ով էլ այդ արտադրանքն իրացնում է: Օբյեկտի շինարարությունում միաժամանակ կարող են մասնակցել մի քանի շինմոնտաժային կազմակերպություններ (գլխավոր կապալառու, ենթակապալառու), որոնք ստեղծում են շենքի համար առանձին կառուցողական տարրեր: Այս կազմակերպություններից յուրա-

քանչյուրն իրացնում է արտադրանքի պատրաստված մասը: Շինարարությունը սերտորեն կապված է տնտեսության ճյուղերի, հատկապես արդյունաբերության հետ: Մի կողմից շինարարության ծավալների խոշորացումը կախված է արդյունաբերության ճյուղերի զարգացումից, որոնք նրան ապահովում են տեխնիկական սարքավորումներով՝ մեքենաներ, նյութեր, կոնստրուկցիաներ, էլեկտրաէներգիա և այլն, իսկ մյուս կողմից՝ տնտեսության մյուս ճյուղերի համար կապալային պայմանագրի հիման վրա շինմոնտաժային աշխատանքներ կատարելով՝ շինկազմակերպություններն անխզելիորեն կապվում են պատվիրատուների գործունեության հետ: Տնտեսության տարբեր ոլորտները շինարարության ճյուղի համար հանդիսանում են որակյալ մատակարար, ինչպես նաև շինարարական արտադրանքի սպառող: Շինարարությունը հանդիսանում է ամենանյութատար ճյուղը՝ վերջնական արտադրանք ստանալու նպատակով նրան շինանարարական նյութեր մատակարարում են երկրի տնտեսության բազմաթիվ ճյուղեր,

5. կլիմայի և տեղային պայմանների գործոնը շինարարական աշխատանքների իրականացման գործընթացում: Շինարարությունում, չնայած սեզոնային լիկվիդացմանը, բացասական ջերմաստիճանը պահանջում է միջոցներ ձեռնարկել ապահովելու շինարարությունը կառուցվող օբյեկտներում ձմեռային պայմաններում: Միևնույն տեսակի շենքերի շինարարությունը երկրի տարբեր շրջաններում պահանջում է տարբեր տեսակի նյութական պաշարների ծախսեր: Բոլոր դեպքերում շինարարությունում սահմանվում են պայմաններ՝ սեյսմակայունության, տեղանքի ռելիեֆի, գրունտի երկրաբանական կառուցվածքի, գրունտային ջրերի առկայության, ինչպես նաև հավելյալ միջոցները, կոնստուրկցիաները և նյութերը շինարարական հրապարակ հասցնելու նպատակով: Շինարարությունում աշխատողները՝ ի տարբերություն արդյունաբերության մյուս ճյուղերի, ավելի շատ են ենթարկվում կլիմայական պայմանների ազդեցությանը: Այս առանձնահատկությունը պահանջում է մեծ ուժեր գործադրել տարվա ամենաանբարենպաստ շրջանում: Դրա հետ կապված՝ շինարարության հիմնական մոնտաժային և վերանորոգաշինարարական աշխատանք-

ներում մտցվում են ուղղիչ գործակիցներ, որոնք թույլատրում են հաշվի առնել աշխատանքի նորմատիվային պայմաններից շեղումը:

Շինարարության յուրահատկությունը կապված է կառուցվող օբյեկտների մեծ բազմազանության հետ: Դրանց թվին են դասվում.

- արդյունաբերական,
- բնակելի-հասարակական,
- սոցիալ-կենցաղային,
- տրանսպորտային,
- գյուղատնտեսական, հողաբարելավման և ջրային տնտեսությունը,
- խողովակաշարերի մայրուղիները,
- էլեկտրահաղորդման գծերը:

Արդյունաբերական շենքերի շինարարությունը բնութագրվում է դրանց տրամադրված տարածքներով և կառուցվող օբյեկտի բարդությամբ: Աշխատանքները նույն վայրում կարող են շարունակվել մի քանի տարի: Կազմակերպությունները, որոնք զբաղված են երկարաժամկետ կառուցվող օբյեկտներով, քիչ ուշադրություն են դարձնում արտադրության միջոցների վերակազմավորման վրա: Այդպիսի շինարական կազմակերպությունները, որպես կանոն, ունեն կայուն կադրերի կազմ:

Տրանսպորտային, խողովակաշարերի մայրուղիների, հողաբարելավման և ջրային տնտեսության, գյուղատնտեսական նշանակության և էլեկտրահաղորդման գծերի շինարարական օբյեկտներին հատուկ են. մեկ վայրում ոչ մեծ ծավալով աշխատանքներ, տարբեր օբյեկտներում աշխատանքների իրականացման անհրաժեշտություն, ի տարբերություն մեկ տեղում կենտրոնացված աշխատանքների, վերջիններիս իրարից առանձնացումը, ինչպես նաև աշխատանքային տեղի փոփոխությունը օբյեկտների կառուցման հետ մեկտեղ կամ այլ օբյեկտների և կառույցների զարգացումը, անբնակելի վայրերում դրանց ստեղծումը:

Բնակելի-հասարակական և սոցիալ-կենցաղային օբյեկտների կառուցումը բնութագրվում է խիստ հետևողականության պահպանումով և կառուցապատման հերթականությամբ: Բնակելի թաղամասերի կողքին պետք է կառուցվեն.

- ճանապարհներ,

- ջրամատակարարման համակարգեր,
- էլեկտրամատակարարման ուղիներ,
- ջերմակայան,
- դպրոցներ,
- նախակրթարաններ,
- զբոսայգիներ,
- առևտրի օբյեկտներ,
- սոցիալ-մշակութային սպասարկման կենտրոններ:

Վերոհիշյալ օբյեկտների բացակայությունը բերում է սանիտարական և քաղաքաշինության նորմերի ու կանոնների խախտմանը: Սոցիալական նշանակության օբյեկտների շինարարությունը բնութագրվում է շինարարական տեխնիկայի, սարքավորումների, բրիգադների ու շինարարական կազմակերպությունների տեղամասերի, լրացուցիչ ժամանակի ծախսման, ֆինանսների, նյութերի հաճախակի վերապահեստավորմամբ, ինչը հանգեցնում է շինարարական կազմակերպության գործունեության արդյունավետության նվազեցմանը:

1.3. Շինարարության էությունը, նպատակը և խնդիրները

Երկրի տնտեսությունը բաղկացած է մի շարք ճյուղերից, որոնք, կախված իրենց կողմից իրականացվող գործառույթների բնույթից, պատկանում են կա՛մ նյութական արտադրության ոլորտին (արդյունաբերություն, շինարարություն, էներգետիկա, գյուղատնտեսություն), կա՛մ տնտեսության մյուս ճյուղերին՝ մատուցելով շուկայական և ոչ շուկայական ծառայություններ:

Շինարարության ճյուղի արտադրանք են համարվում արդեն կառուցված և շահագործման հանձնված շինությունները՝ գործարանները, երկաթգծերն ու ավտոճանապարհները, էլեկտրակայանները, ոռոգման ցանցերը, բնակելի տները և տնտեսությունը զարգացնող այլ օբյեկտները:

Կապիտալ շինարարությունը, որպես տնտեսության ճյուղի, զբաղվում է երկրի տնտեսության հիմնական ֆոնդերի ստեղծմամբ: Կապիտալ շինարարության արտադրանք են հանդիսանում գործընթացների մեջ ներմուծվող և սահմանված կարգով ընդունված արտադրական հզորու-

թյունները և ոչ արտադրական նշանակություն ունեցող օբյեկտները: Կախված աշխատանքների ընթացքից՝ դրանք դառնում են հիմնական ֆոնդեր: Դրանց ստեղծմանը մասնակցում են նաև տնտեսության այլ ճյուղեր (շինարարական նյութերի արդյունաբերություն, մետաղագործություն, մեքենաշինություն, քիմիական արդյունաբերություն և այլն): Շենքերը և շինությունները, տեխնոլոգիական սարքավորումները, էներգետիկ սարքավորումներն ու տեխնիկան կազմում են հիմնական արտադրական ֆոնդերի բնական նյութական բովանդակությունը: Ընդգրկում է նախագծահետազոտական և գիտահետազոտական, շինարարական և մոնտաժային կազմակերպությունները, շինարարական արտադրության կազմակերպությունները, շինարարական նյութերի արտադրությունը և տրանսպորտը:

Կապիտալ շինարարությունն ստեղծում է նյութական պայմաններ՝ ապահովելով արտադրության միջոցների գործառութային հնարավորությունը:

Շինարարության ճյուղը միավորում է ընդհանուր և մասնագիտացված շինարարական կազմակերպությունների, նախագծահետազոտական և գիտահետազոտական կազմակերպությունների, շինարարության միավորումների կազմի մեջ մտնող շինարարական արդյունաբերության կազմակերպությունները, որոնք տնտեսական եղանակով կատարում են շինարարական մոնտաժային աշխատանքներ: Շինարարական կազմակերպությունների թվին են դասվում իրավաբանական անձանց բոլոր սեփականության ձևերը (կազմակերպություններ), գրանցված և շինարարական գործունեություն կատարելու համար լիզենցիա ստացած, պատվիրատուի հետ շինարարության կապալի կամ կապալի շինարարության պայմանագրով կնքված՝ կատարվող աշխատանքները: Համանման կերպով որոշվում է նախագծահետազոտական կազմակերպությունների քանակը: Կապիտալ շինարարության ոլորտին են վերաբերվում կապիտալ ներդրումներ տնօրինող պատվիրատուի գործողությունները, որոնց աղբյուրներն են հանդիսանում սեփական, կազմակերպության փոխառու միջոցները, ինչպես նաև պետական բյուջեի միջոցները:

Շինարարության զարգացումը, նրա արդյունավետության բարձրացումը կատարվում է հիմնականում նրա արդյունաբերականացման հիման

վրա, որի հիմնական ուղղություններն են հանդիսանում՝ շինարարական հրապարակից գործարաններ տեխնոլոգիական գործընթացի կատարվող մասի տեղափոխումը, արտադրության անփոփոխ պայմանների նպատակն է բարձրացնել հավաքովի շենքերի և շինությունների կառուցումը, շենքերի և շինությունների տեխնոլոգիական նախագծային որոշումների բարելավումը նրանց ամենաէեռավոր միասնականացումը և տեսակավորումը, գործարանների կամ շինարարական կազմակերպության օժանդակ գործամասերում բարձր աստիճանի արտադրության մեքենայացված հոսքագծերով կոնստրուկցիաների, արտադրանքների, դետալների և նյութերի պատրաստում շինարարության համար, շենքերի և շինությունների կառուցման համար շինարարական աշխատանքների արտադրության ապահովման նպատակով տեխնոլոգիական գործընթացների մեքենայացված հոսքագծերի կատարումը շինարարական կոնստրուկցիաների անընդհատ մատակարարմամբ: Հիմնական ֆոնդերի ստեղծումից զատ, կապիտալ շինարարության գործառույթներին են պատկանում արդեն գործող հիմնական ֆոնդերի ընդարձակումը, վերակառուցումը և տեխնիկական վերազինումը: Այդ պատճառով կապիտալ շինարարության հիմնական խնդիրը հանդիսանում է վերարտադրության ընդլայնումը և երկրի ժողովրդական տնտեսության հիմնական ֆոնդերի արագ վերանորոգումը: Կապիտալ շինարարության ոլորտում, ուղղակի կամ անուղղակի մասնակցում են ազգային տնտեսության ճյուղեր, որոնք մատակարարում են. շինարարական մետաղներ և մետաղական կոնստրուկցիաներ, ցեմենտ, անտառանյութ, շինարարական մեքենաներ, տրանսպորտային միջոցներ, վառելիքային և էներգետիկ պաշարներ: Շինարարությունն սպասարկում են արդյունաբերության գրեթե բոլոր ճյուղերը: Շինարարական նյութերի, շինարարական կոնստրուկցիաների և շինարարական տեխնիկայի տեղափոխման համար օգտագործվում են տրանսպորտի գրեթե բոլոր ձևերը:

Երկրի տնտեսությունում կատարվող վերակառուցման գործընթացները և խոշոր պետական շինարարական ու տեղակայման տրեստերի ապապետականացումը բերեցին սեփականության տարբեր ձևերի, մանր շինարարական և տեղակայման կազմակերպությունների կտրուկ ավելաց-

մանը: Մանր շինարարական կազմակերպությունների ստեղծման հետ մեկտեղ տեղի ունեցավ այդ կազմակերպություններում աշխատողների քանակի կրճատում: Շինարարական կազմակերպությունների շինարարական արտադրանք ներկայացնող հիմնական ֆոնդերի ստեղծման գործընթացին մասնակցում են աշխատանքային կադրեր, աշխատանքի միջոցներ (աշխատանքային գործիքներ) և աշխատանքի առարկաներ (նյութեր): Շինարարական գործընթացի հիմնական բաղադրիչները, փոխազդելով միմյանց հետ, ստեղծում են վերջնական շինարարական արտադրանք (շենքեր, շինություններ, օբյեկտներ)՝ բնական և դրամային արտահայտությամբ: Շինարարության գործընթացում կարելի է առանձնացնել երեք փուլ.

1. շինարարության նախապատրաստում,
2. բուն շինարարություն,
3. շինարարական արտադրանքի իրացում (շինարարության պատրաստի օբյեկտի շահագործման հանձնում):

Շինարարության նախապատրաստումը իրականացվում է հետևյալ ուղղություններով.

- շինարարական օբյեկտի նպատակահարմարության վերաբերյալ տեխնիկատնտեսական հետազոտումներ,
- օբյեկտի նախագծում և շինարարության ինժեներատեխնիկական նախապատրաստում:

Յուրաքանչյուր ուղղություն ունի իր նպատակային խնդիրները: Տեխնիկատնտեսական հետազոտումների ընթացքում որոշվում են ապագա օբյեկտի հիմնական տեխնիկատնտեսական ցուցանիշները և գնահատվում է նրա շինարարության տնտեսական նպատակահարմարությունը:

Նախագծման փուլում մշակվում են օբյեկտի նախագծման, ամբողջացման խնդիրները, նրա շինարարության կազմակերպման մեթոդները և աշխատանքների արտադրության տեխնոլոգիան, որոշվում է շինարարության հաշվարկային արժեքը: Այս ամենից հետո իրականացվում են շինարարության ինժեներատեխնիկական պատրաստությունները, դուրս է բերվում հենակետային գեոդեզիական և շինարարական ցանցը, աշխատանքներ են տարվում շինարարական հրապարակի տարածքի, մուտքային

տրանսպորտի, կոմունիկացիաների պատրաստման նպատակով: Բուն շինարարության իրականացման փուլում շինարարական հրապարակում տեղի է ունենում շինարարական գործընթացի բոլոր տեխնոլոգիական բաղադրիչների միացում, որոնց գործունեության արդյունքում ստեղծվում է շինարարական արտադրանքը: Այս փուլում ձևավորվում են շինարարական արտադրության համախառն փաստացի ծախքերը, շենքերի և շինությունների նյութաիրային տարրերը, նրանց ճարտարապետաշինարարական արտացոլումը և որակը:

Երրորդ փուլում՝ այն է շինարարական արտադրանքի իրացում, տեղի է ունենում ավարտված շինարարական օբյեկտների շահագործման հանձնումը և դրանց փոխանցումը պատվիրատուին որպես հիմնական ֆոնդեր: Վերարտադրության երեք փուլերին համապատասխանում են կապիտալ ներդրումների շրջանառության երեք մակարդակներ.

1. արտադրությունը որպես հիմնական ֆոնդերի ստեղծման արդյունավետ մեթոդ,
2. իրացումը որպես շինարարական արտադրանքը հիմնական ֆոնդերի փոխակերպման ձև,
3. դրամական ֆոնդերը արդյունավետ ֆոնդերի վերածման նպատակով վերարտադրության հաջորդ պարբերաշրջանի նախապատրաստումը:

Որքան բարձր է վերարտադրության տարրերի փոխազդեցության աստիճանը ժամանակի և տարածության մեջ, այնքան մեծ է շինարարության տնտեսական արդյունավետությունը: Շինարարական արտադրության հիմնական տարրերի փոխազդեցության լավագույն հարաբերակցությունն ստանալու նպատակով մշակվում է շինարարական արտադրանքի ստեղծման տեխնոլոգիա, որն իրենից ներկայացնում է շինարարական գործընթացների անցկացման միջոցների և եղանակների մասին գիտելիքների համախումբ, որոնց միջոցով իրականացվում է աշխատանքի առարկաների (բետոն, մետաղ, կղմինդր, քար և այլն) որակյալ փոփոխում:

Շինարարական գործընթաց ասելով պետք է հասկանալ շինարարական հրապարակում իրականացվող փոխկապակցված հիմնական, օժանդակ և ծառայողական տեխնոլոգիական գործողությունների համախումբ,

որոնց փոխազդեցության արդյունքում ստեղծվում է շինարարական արտադրանքը :

Շինարարական գործընթացի տնտեսական էությունը արտահայտվում է նրա իրականացման նպատակով կատարվող ծախսերով: Շինարարական կազմակերպության ծախսերը՝ կապված օբյեկտի կառուցման արտադրատնտեսական գործունեությանը, բաժանվում են միանվագ և ընթացիկ ծախսերի: Միանվագ ծախսեր են համարվում շինարարական կազմակերպությունների հիմնական ֆոնդեր ստեղծելու ծախսերը, նաև շրջանառու միջոցների նյութական պաշարների, անավարտ շինարարության հետ կապված ծախսերը: Ընթացիկ ծախսերը շինարարական կազմակերպության բոլոր ծախսերն են, որոնք անմիջականորեն կամ անուղղակի կերպով կապված են շինարարական օբյեկտի ստեղծման հետ, այն է.

- աշխատավարձ,
- շինարարական նյութեր,
- ամորտիզացիոն հատկացումներ,
- այլ ծախսեր:

Ընթացիկ ծախսերի ընդհանուր գումարը կազմում է շինմոնտաժային աշխատանքների ինքնարժեքը: Շինարարական բնագավառների տնտեսական կապերն ազգային տնտեսության այլ ճյուղերի հետ, տարբեր ապրանքների արտադրությունը, վերաբաշխումը, ինչպես նաև ծառայությունների մատուցումը կոչվում են միջճյուղային կապեր: Ուսումնասիրենք հասկացությունների շարքը՝ կապված շինարարության ներդրումների հետ՝

- ներդրում,
- ներդրող,
- պատվիրատու,
- շինարար,
- գլխավոր կապալառու,
- նախագծի կառավարող,
- կապիտալ ներդրումներ:

Հիմնական կապիտալի ներդրում՝ ծախսերի ամբողջությունն (ֆինանսական, նյութական պաշարներ, մտավոր արժեքներ) ուղղված է նոր շինարարության միջոցով հիմնական ֆոնդերի ձեռքբերման, ստեղծման,

վերարտադրության, ընդարձակման, վերակառուցման, օբյեկտների տեխնիկական վերազինման, շենքերի ձեռքբերման, կառույցների, մեքենաների, սարքավորումների, գործիքների, գույքի և այլնի ներդրման նպատակով ստանալ տնտեսական, սոցիալական կամ էկոլոգիական արդյունք: Մասնավոր կապիտալը ձգտում է ստանալ տնտեսական արդյունք (շահույթ), իսկ սոցիալական և էկոլոգիական արդյունքը, որպես կանոն, ձեռք են բերվում պետական ներդրումային ծրագրերի հաշվին:

Ներդրողը՝ ներդրումային գործունեության սուբյեկտն է, ով ընդունում է շինարարության օբյեկտներում սեփական, փոխառու միջոցների և մտավոր արժեքների ներդրման վերաբերյալ որոշումներ: Ներդրողն ունի իրավաբանական իրավունք ամբողջապես տնօրինելու ներդրումների արդյունքները: Ներդրողը որոշում է կապիտալ ներդրումների ներդրման ոլորտը, ներդրումային գործընթացի մասնակիցների հետ մշակում է օբյեկտի շինարարության համար կնքվող պայմանագրի պայմանները և հաստատում է նրանց հետ ֆինանսավարկային հարաբերություններ: Ներդրողը կարող է հանդես գալ նաև պատվիրատուի, վարկատուի, շինարարական արտադրանքի (շինարարության օբյեկտի) գնորդի դերում, ինչպես նաև կատարել շինարարի գործառույթներ:

Պատվիրատուն հանդիսանում է իրավաբանական կամ ֆիզիկական անձ, ով իր վրա է վերցնում նախագծի շինարարության կազմակերպման և ֆինանսների կառավարման գործառույթները՝ սկսած կապիտալ ներդրումների տեխնիկատնտեսական հիմնավորումից մինչև վերջնական օբյեկտի շահագործման հանձնելը կամ նախագծային հզորությամբ արդյունաբերական ելքի ձեռնարկումը:

Սեփականատերը տարբերվում է պատվիրատուի իրավունքներից շինարարության համար վերցված հողատարածքով: Նա հանդիսանում է հողի սեփականատերը, իսկ պատվիրատուն օգտագործում է հողատարածքները շինարարության համար երկարաժամկետ վարձակալության պայմանով:

Կապալառու (գլխավոր կապալառու)՝ կապալային պայմանավորվածության կամ պայմանագրի համաձայն օբյեկտի շինարարությունը իրականացնող ֆիրման է: Շինարարական օբյեկտի պայմանագրի պայման-

ների, նախագծանախահաշվային փաստաթղթերի, շինարարական նորմաների և կանոնների պահանջների համար գլխավոր կապալառուն պատասխանատու է պատվիրատուին: Առանձին տիպի աշխատանքների կատարման, առանձին օբյեկտների կամ շինությունների շինարարության համար գլխավոր կապալառուն, պատվիրատուի հետ համաձայնեցման գալով, կարող է ներառել շինարարական ենթակապալային, մասնագիտացված մոնտաժային կազմակերպություններ: Պատվիրատուի մոտ ենթակապալային կազմակերպությունների կողմից կատարվող աշխատանքների ժամկետների և որակի համար պատասխանատու է գլխավոր կապալառուն:

Ներդրումային կապիտալի անշարժության գաղափարը հիմնավորվում է տեխնիկատնտեսական փուլում կապիտալ ներդրումների հաշվարկի իրականացման նպատակահարմարությամբ, սրան հաջորդում են նախագծային հետազոտության և էսքիզային նախագծեր, նախագծում, շինարարության նախապատրաստում և արտադրական աշխատանքներ, շինարարական արտադրանքի իրականացում, օբյեկտի շահագործում: Շուկայական տնտեսության շրջանակներում շինարարությունում ներդրումների իրականացման գործընթացի համար շինարարություն է ներգրավվում հատուկ կենտրոնական մարմին՝ *նախագծի կառավարիչը,* որը կարող է լինել պատվիրատուի հաստիքը՝ մասնագիտացված կողմնակի կազմակերպությունից կամ պայմանգրով մասնագետ, որպես ֆիզիկական անձ: *Նախագծի կառավարողը (նախագիծ-մենեջեր)* պետք է լինի բազմակողմանի մասնագետ, մի անձում համատեղված լինի գիտելիքներ ինժեներ-շինարարի, մենեջերի, տնտեսագետի, ֆինանսիստի և լինի խելացի կազմակերպիչ:

Կապիտալ ներդրումները նոր շինարարության, վերակառուցման, գործող արդյունաբերության ընդարձակման և տեխնիկական վերազինման, գյուղատնտեսական, տրանսպորտային, առևտրային և այլ կազմակերպություններում, բնակարանների, կոմունալ և մշակութակենցաղային շինարարությունների համար ծախսեր՝ կախված ֆինանսավորման աղբյուրներից և պատվիրատուի (ներդրողի) սեփականության ձևից: Կապիտալ ներդրումների ծախսերին վերաբերում են՝

- շինարարական աշխատանքների բոլոր ձևերը,
- սարքավորումների մոնտաժման աշխատանքներ,
- շինարարության նախահաշվով նախատեսված սարքավորումների ձեռք բերում, պահանջվող և չպահանջվող մոնտաժ,
- շինարարության նախահաշվում ներառված արտադրական գործիքների և տնտեսական գույքի ձեռք բերում,
- շինարարության նախահաշվում չմտնող մեքենաների և սարքավորումների ձեռքբերում,
- այլ աշխատանքներ և ծախսեր:

Կապիտալ ներդրումները իրենց մեջ ներառում են բնակչությանը սեփական բնակելի տների շինարարության համար անհրաժեշտ շինվածքներով և օժանդակ շենքերով ապահովելու ծախսեր:

1.4.Կազմակերպչական ձևերը կապիտալ շինարարությունում

Կապիտալ շինարարությունում լայն տարածում են ստացել շինարարության կազմակերպչական

- տնտեսական եղանակը,
- կապալային եղանակը,
- օբյեկտների շինարարությունը «բանալու տակ» ձևերը:

Կապալային եղանակի դեպքում օբյեկտի շինարարությունը, պատվիրատուի հետ պայմանագրի համաձայն, իրականացվում է մշտապես գործող շինարարական և մոնտաժային կազմակերպությունների կողմից, որոնք ունեն սեփական նյութատեխնիկական բազա, տրանսպորտ և մասնագիտական սարքավորումներ: Շինարարատեղակայմանը համապատասխանող կադրերը մշտապես մասնագիտացված են, և տիրապետում են իրենց գործունեությանը խոշոր մեքենայացված շինարարական կոնստրուկցիաների արտադրության արդյունաբերությունում՝ դետալների, կիսաֆաբրիկատների: Այս միջոցը շինարարությունում հանդիսանում է հիմնականը: Աշխատանքների կապալային եղանակը ենթադրում է պատվիրատուի և կապալառուի միջև պայմանագրի կնքում շինարարության կատարման համար: Այս պայմանագիրը համարվում է գլխավորը:

Որպես գլխավոր պայմանագրի շարունակություն՝ կողմերը կնքում են մեկ տարվա լրացուցիչ համաձայնագիր:

Շինարարության գործընթացի բոլոր մասնակիցների միջև փոխհարաբերությունները կարգավորվում են ՀՀ-ում գործող օրենսդրական ակտերով: Պայմանագրում պարզաբանվում են կողմերի փոխադարձ պարտավորությունները և դրանց կատարման համար պատասխանատվությունը, շինարարության իրագործման կարգը, նյութատեխնիկական պաշարներով ապահովումը, աշխատանքի արտադրության պայմանների կարգավորումը:

Պատվիրատուն կապալառուին տրամադրում է շինարարական հրապարակ, միաժամանակ նրան է հանձնում հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերը, ապահովում է ֆինանսապես, տրամադրում է տեխնոլոգիական, էներգետիկ և այլ տիպի սարքավորումներ:

Պատվիրատուն շահագրգռված կողմերի հետ կատարում է սարքավորումների ընդհանուր փորձարկում, կազմակերպում է արտադրական գործընթացներ և գլխավոր կապալառուի հետ ապահովում է արտադրական հզորությունների և շինարարության օբյեկտների գործարկումը:

Շինարարական գործընթացում պատվիրատուն տեխնիկական հսկողություն է իրականացնում շինարարության ընթացքի, փաստացի ծավալների, կատարվող աշխատանքների որակի և արժեքի նկատմամբ, ինչպես նաև ստուգում է արտադրության տեխնիկական և շինարարական աշխատանքների ընդունման պայմանները, ապահովում է շինարարական օբյեկտի ավարտված և առանձին փուլերի աշխատանքների ընդունումը և վճարումը, կապալառուի հետ հաշվարկվում է ավարտված շինարարական արտադրանքի ընդունումը:

Տնտեսական եղանակի դեպքում օբյեկտների շինարարությունն իրականացվում է պատվիրատուի կամ ներդրողի սեփական ուժերով: Այդ նպատակով պատվիրատուի կազմակերպչական կառուցվածքում ստեղծվում է շինարարատեղակայման ստորաբաժանում, որն իրականացնում է օբյեկտի համալիր շինարարությունը: Տվյալ եղանակը սովորաբար կիրառում են վերակառուցման աշխատանքների կամ գործող կազմակերպությունների ընդլայնման, տվյալ կազմակերպության տարածքում ոչ մեծ օբյեկտների շինարարության, գյուղատնտեսական շինարարության ժամա-

նակ, այսինքն՝ այն պայմաններում, երբ հնարավոր չէ կազմակերպել շինարարական կադրերի համաչափ բեռնավորումը, երբ շինարարատեղակայման աշխատանքները ժամանակավորապես կախված են հիմնական արտադրական գործընթացի տեխնոլոգիական բնութագրից, և աշխատանքների կատարման ժամկետը անորոշ է: Այդ պայմաններում հարկ է լինում կատարել ոչ մեծ ծավալների աշխատանքներ՝ աշխատողների ոչ պարբերական բեռնվածությամբ: Միևնույն ժամանակ պահանջվում են համեմատաբար ոչ շատ աշխատողներ, որոնք պետք է տիրապետեն միաժամանակ մի քանի մասնագիտությունների:

Տնտեսական եղանակի ժամանակ շինարարատեղակայման տեղամասերն ու բաժինները, որպես օրենք, բնութագրվում են մասնագիտացված տեխնիկայի թերհագեցմամբ, աշխատողների որակավորման ցածր մակարդակով, շինարարական գործընթացների անկանոն ռեժիմով, շինարարական կադրերի հոսունությամբ, աշխատանքի արտադրողականության ցածր մակարդակով: Այս ամենը չի նպաստում շինարարության արդիականացմանը, բարձրորակ շինարարական անձնակազմի ձևավորմանը:

Միաժամանակ կարելի է նշել նաև մի շարք առավելություններ՝

- կրճատվում է բազմաթիվ կապալային կազմակերպությունների ներգրավման հետ կապված բանակցությունների վրա ծախսվող ժամանակը,
- բարձրանում է ամբողջ անձնակազմի ընդհանուր շահագրգռվածությունը կազմակերպության վերազինման կամ ընդլայնման աշխատանքների արագ և որակով կատարման առումով, ինչպես նաև՝ ղեկավարության միասնականությունը օբյեկտի շինարարության և շահագործման ընթացքում:

Օբյեկտների շինարարությունը «բանալու տակ» եղանակի դեպքում պատվիրատուի գործառույթները փոխանցվում են գլխավոր կապալառուին: Այս դեպքում գլխավոր կապալառուն իր վրա է վերցնում հաստատված ժամանակահատվածում և հաստատված նախահաշվային արժեքի սահմաններում հաստատված նախագծին համապատասխան օբյեկտի շինարարության պատասխանատվությունը: Դա բարձրացնում է գլխավոր կապալառուի շահագրգռվածությունը սահմանված նախահաշ-

վային արժեքի գումարի առավել արդյունավետ օգտագործման հարցում, քանի որ տնտեսված մասն անցնում է նրա տնօրինության ներքո, պարզեցվում է կապերի համակարգը, որը նպաստում է որոշումների ընդունման և իրագործման արդյունավետության բարձրացմանը, իսկ արդյունքում՝ շինարարության ժամկետի կրճատմանն ու շինարարության արժեքի նվազմանը:

1.5.Շրջակա միջավայրի պահպանության համար ծախսերի տնտեսական արդյունավետության գնահատումը

Ցանկացած օբյեկտի շինարարությունը պայմանավորված է բնության պայմանների խախտմամբ: Բնության առավել նշանակալից խախտումներին են պատկանում.

- հողային աշխատանքներ կատարելիս հողի վերին շերտի վնասում, որն առաջացնում է բուսահողի կորուստ,
- անտառահատում,
- գրունտային ջրերի մակարդակի փոփոխում, որի հետևանքով տաքանում են գյուղատնտեսական հանդերը,
- բնահողի էրոզիա,
- սողանքների առաջացում,
- շինարարական և տնտեսական մնացորդներով, թափոններով հողի, ջրհորների և մթնոլորտի աղտոտում,
- վերգետնյա և ջրային ֆլորայի խախտում:

Բնական կենսական պայմաններում էկոլոգիական կապերի բազմազանությունը և նրանց բարդությունը հաճախ թույլ չեն տալիս հաշվի առնել դրանց գործունեության ընթացքում: Արդյունքում անուղղելի վնաս է հասցվում բնությանը, ինչը հետագայում ուղղակի կամ անուղղակի արտացոլվում է մարդկանց և այդ միջավայրի մյուս բնակիչների առողջության վրա՝ կրճատվում է կյանքի տևողությունը, նվազում են մարդկանց ֆիզիկական հնարավորությունները, ինչպես նաև աշխատանքի արտադրողականությունը, վնաս է հասցվում տարածքի տնտեսական զարգացմանը: Այդ պատճառով բավականին մեծ ուշադրություն է հատկացվում շրջակա միջավայրի պահպանման հարցերին, մշակվում են

ծրագրեր վնասված կենսական պայմանների վերականգնման վերաբերյալ, նախագծերում և շինարարությունում նախատեսվում են հատուկ միջոցառումներ բնական միջավայրի վրա բացասական ազդեցությունների նվազեցման նպատակով: Կառուցվող օբյեկտի նախագծերի կազմի մեջ են մտնում հետևյալ պահանջները.

- վնասված հողերի վերականգնում,
- բուսահողի շերտի պահպանում և կրկնակի օգտագործում,
- անհրաժեշտ մաքրող շինությունների, օդազտիչ սարքավորումների շինարարություն,
- պաշտպանիչ ամբարտակների և դրենաժային համակարգերի շինարարություն,
- գետերի բնական ռեժիմի և բնական լանդշաֆտների պահպանում,
- շինարարական հրապարակների տարածքում սահմանված նորմերի պահպանում,
- շինարարության համար ոչ արդյունավետ հողերի օգտագործում և այլ միջոցառումների իրականացում:

Կապիտալ շինարարության օբյեկտների զարգացման և տեղաբաշխման վերաբերյալ քննարկումների ժամանակ հատուկ նշանակություն է տրվում հողային պաշարների օգտագործման հարցերին: Հողը հանդիսանում է գյուղատնտեսական արտադրանքի, սննդամթերքի հիմնական արտադրողը և միաժամանակ օգտագործվում է արդյունաբերական կազմակերպությունների, բնակելի համալիրների, սոցիալ-մշակութային օբյեկտների, էլեկտրակայանների, ավտոմոբիլային և երկաթուղային ճանապարհների, էլեկտրահաղորդման գծերի, նավահանգիստների, օդանավակայանների և այլ օբյեկտների տեղաբաշխման համար: Այդ իսկ պատճառով հողի արդյունավետ օգտագործումն ունի կարևոր տնտեսական նշանակություն: Այս պայմաններից ելնելով՝ շրջակա միջավայրի պահպանման վերաբերյալ միջոցառումների համակարգում առանձնանում է երկու ուղղություն.

- շրջակա միջավայրի վրա կապիտալ շինարարության բացասական ազդեցության նվազեցում,
- հողային պաշարների արդյունավետ օգտագործում:

Առաջին խնդիրը լուծվում է ինժեներատեխնիկական և կազմակերպչա-տեխնոլոգիական միջոցառումների համակարգի մշակման միջոցով, երկրորդը՝ քաղաքաշինության, քաղաքների և ավանների հողերի տոպո-լոգիայի մեթոդների, արդյունաբերական կազմակերպությունների և տրանսպորտի, շինարարական տարածքների կառուցապատման կատա-րելագործման ճանապարհով:

Բնապահպանական միջոցառումները կապված են որոշակի դրամա-կան միջոցների, նյութատեխնիկական և աշխատանքային պաշարների ծախսման հետ: Բնապահպանական միջոցառումների տնտեսական արդյունքը նյութական և ոչ նյութական աշխատանքի կորուստների կանխումն է, որն արտահայտվում է մաքուր արտադրանքի ծավալի կամ շահույթի աճով կամ շրջակա միջավայրի աղտոտման հետ կապված աշխատանքների կատարման և ծառայությունների մատուցման ծախսերի տնտեսմամբ: Բնակչության համար շրջակա միջավայրի աղտոտման հիմնական հետևանքներն են հանդիսանում աշխատունակության նվազումը և հիվանդությունների ավելացումը, իսկ հիմնական ֆոնդերի համար՝ ֆիզիկական մաշվածության ժամկետների նվազումը, սարքա-վորումների չաշխատելու հավանականության ավելացումը, մաշվածության արագացումը: Աղտոտումների ծավալը մթնոլորտում, ջրային միջավայրում և հողում վնասակար նյութերի ծավալի նվազեցումը կամ բնական ռեսուրսների օգտագործման կրճատումը ապահովող բնապահպանական միջոցառումների տնտեսական արդյունքը կարող է որոշվել

$$Ա_բ = Ա_մ S_մ (Կ_ա - Կ_հ), \quad (1.1)$$

$$Ա_բ = Ծ_վ (Օ_ա - Օ_հ), \quad (1.2)$$

բանաձևերով, որտեղ $Ա_բ$-ն բնապահպանական արդյունքի մեծությունն է, ($մ^3$, հա, տ); $Ա_մ$-ն՝ օբյեկտի միջին օրական, միջին ժամային արտադրողա-կանություն ($մ^3$, տ); $Կ_ա$, $Կ_հ$-ն՝ աղտոտող նյութերի սահմանային թույլատրվող խտությունը միջոցառումների անցկացումից առաջ և հետո (մգ/բնական ցուցանիշ); $Ծ_վ$-ն՝ արտադրանքի, ծառայությունների ար-տադրության և սպառման ծավալը բնական արտահայտությամբ; $Օ_ա$, $Օ_հ$-ն՝ բնական պաշարի տեսակարար օգտագործումը բնական արտահայտու-թյամբ՝ միջոցառումների անցկացումից առաջ և հետո:

Բնապահպանական միջոցառումների ընտրությունը սովորաբար անցկացվում է՝

- տեխնիկատնտեսական հիմնավորման (ՏՏՀ),
- նախագծի մշակման փուլերում:

Առաջին փուլում որոշվում են տարածքի յուրացման բնապահպանական սահմանափակումները շրջակա միջավայրի պահպանման և վերականգնման տեսակետից, ինչպես նաև բնական պաշարներով շինարարական օբյեկտների ապահովվածության պայմանները: Քննարկվում են պլանային որոշումներ, որոնց միջոցով հնարավոր կլինի նվազեցնել բնապահպանական բեռնվածությունը տվյալ տարածքում նոր օբյեկտների ներմուծման ժամանակ և ապահովել օդային ու ջրային ավազանների, հողի աղտոտման սահմանային թույլատրվող խտությունների (ՍԹԽ) պահպանումը: Երկրորդ փուլում մշակվում են որոշակի ճարտարագիտատեխնիկական որոշումներ ՍԹԽ պահանջների կատարման նպատակով՝ շրջակա միջավայրի աղտոտման մակարդակին համապատասխան: Օդային և ջրային ավազանների պահպանման համար հիմնական տեխնիկական միջոցներ են հանդիսանում արտադրական և տնտեսակենցաղային ջրերի մաքրման շինությունները, գազի և փոշենման թափոնների մաքրման սարքավորումները, անթափոն տեխնոլոգիաները, երկրորդային պաշարների և արտադրության թափոնների օգտագործումը և այլն:

Բնապահպանական միջոցառումների տնտեսական արդյունավետության ցուցանիշը (Ա) որոշվում է որպես ընդհանուր տնտեսական արդյունքի և այդ արդյունքը ստեղծող ծախսերի՝ շահագործման ծախսեր և կապիտալ ներդրումների գումարի հարաբերություն.

$$Ա = \frac{\sum_{i=1}^{n}\sum_{j=1}^{m}\sum_{t=1}^{T} Ա_i \times 1.08^{-t}}{\sum_{t=1}^{T} Ծ_2 \times 1.08^{-t} + \sum_{t=1}^{T} Կ_2 \times 1.08^{-t}}, \qquad (1.3)$$

որտեղ $Ա_i$-ն՝ բնապահպանական միջոցառման անցկացումից հետո j-րդ (j=1,2,...,m) օբյեկտում կորուստների կանխման i-րդ (i = 1,2,...,n) տիպի տնտեսական արդյունքը, դրամ/տարի; $Ծ_2$-ն՝ բնապահպանական նշանակության հիմնական ֆոնդերի պահպանման համար կատարվող տարեկան շահագործման ծախսեր; $Կ_ն$-ն՝ բնապահպանական նշանակության օբյեկտների շինարարության համար կատարվող կապիտալ ներդրումներ, դրամ:

Բնապահպանական միջոցառումների արդյունավետության ցուցանիշը էկոլոգիական արդյունավետությունն է (Աէ), որը բնութագրում է մարդածին բեռնվածության (antropogen) նվազեցման աստիճանը շրջակա միջավայրի վրա և համապատասխանում է բնապահպանական միջոցառումների բերված ծախսերի մեկ միավորին: Այն որոշվում է

$$Ա_է = \frac{Ա}{Ծ_2 + Գ_ն Կ_ն} \qquad (1.4)$$

բանաձևով, որտեղ Ա-ն ցուցանիշ է, որը բնութագրում է շրջակա միջավայրի վիճակի բարելավումը (Ա1-Ա2) և որոշվում է բնապահպանական արդյունքի ցուցանիշների միջոցով, Գն-ն՝ տնտեսական արդյունավետության նորմատիվային գործակից: Սովորաբար, էներգետիկ շինարարության համար նորմատիվային գործակիցը ընդունվում է 0.8, իսկ արդյունաբերական և քաղաքացիական շինարարության համար՝ 0.12:

Բնապահպանական միջոցառումների տարբերակների համեմատման ժամանակ արդյունավետության չափանիշ է հանդիսանում բնապահպանական արդյունավետության առավելագույն արժեքը, որն որոշվում է վերը նշված բանաձևով: Բնության օգտագործման և շրջակա միջավայրի պահպանման կանոնակարգը ՀՀ-ում հաստատված է ՀՀ սահմանադրությամբ, որին համապատասխան հրապարակված են բազիսային օրենքներ և ՀՀ օրենսդրության հիմունքներ, որոնք վերաբերում են հողային, ջրային, անտառային պաշարներին, ընդերքին, կենդանական և բուսական աշխարհին: Կապիտալ շինարարության օբյեկտների նախագծման ժամանակ բազիսային օրենքների հետ մեկտեղ պետք է հաշվի առնել նաև նորմատիվային փաստաթղթերի պահանջները՝ պետական ստանդարտների տեսքով: ՀՀ-ում գործող պետական ստանդարտները 17.0.01-76 «Բնության պահպանության և բնական պաշարների օգտագործման բարելավման ոլորտում ստանդարտների համակարգը» սահմանում են ստանդարտների համակարգի հիմնական դրույթները, որոնք ուղղված են բնական միջավայրի պահպանմանը: Բնապահպանական անհրաժեշտ պայման է հանդիսանում բնության տարբեր միջավայրերի՝ մթնոլորտի, ջրոլորտի, երկրակեղևի որակի պահպանումը:

ԳԼՈՒԽ 2

Սեփականության ձևերը շինարարությունում

2.1.Սեփականության իրավունքի էությունը

ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը սահմանում է սեփականության իրավունքի բովանդակությունը «Սեփականության իրավունք և այլ գույքային իրավունքներ»-ի մասին օրենքի չորրորդ բաժնում: Մանրամասն ուսումնասիրենք օրենքում ամրագրված յուրաքանչյուր տարր:

Տիրապետման իրավունք: Առօրյա խոսակցությունում շրջապատվող «տիրել» բառը ոչ հազվադեպ է նշանակում «տիրապետել», «սեփականություն ունենալ», «տիրանալ»: Իրավաբանությունում տիրելը չի նույնացվում սեփականության հետ: Ոչ իրավաբանների համար այս տերմինները մեծապես իմաստով նույնացնում են: Նրանց իմաստային ընդհանրության հիմնավորման համար իրականում գոյություն ունի հիմնավոր որոշում. սեփականության իրավունքը հանդես է գալիս օգտագործման անհրաժեշտ պայմանով, իսկ իր տնօրինում է նրա սեփականատերը: Իհարկե տիրելու իրավունքն ամենից հաճախ իրականացվում է սեփականատերերի կողմից: Սակայն գույքը տիրապետման մեջ կարող է գտնվել ոչ սեփականատերերի կողմից: Օրինակ՝ փոխադրողները, պահպանողները, վարձակալողները տիրապետում են գույքը, որը կազմում է համապատասխան պայմանագրերի առարկան: Սակայն այդ պայմանագրով նրանց մոտ գույքի նկատմամբ սեփականության ուժ չի առաջանում: Սեփականատերը (օրինակ, ապրանք տեղափոխողներ կամ վարձակալներ) չի տիրապետում տեղափոխման, պահպանման կամ վարձակալման տրված գույքին, սակայն պահպանում է վերջինիս նկատմամբ սեփականության իրավունը:

Տարբերում են օրինական և անօրեն տիրապետումներ: Սեփականությունը ճանաչում է օրենքը՝ հենվելով հիմնավորապես իրավունքների վրա: Առանց տիրապետման իրավունքի տիրապետողը օրինական չի համարվում, նրա մոտ չի առաջանում սեփականատերի իրավունք, հետևաբար վերականգման իրավունքը խախտում է տիրապետումը:

Օգտագործման իրավունք: Սեփականատերը օրենքով կարող է իրեն պատկանող գույքը օտարել, նրանում զանազան փոփոխություններ կատարել, տալ վարձով: Օգուտը կարող է լինել եկամտի, բնամթերքի, աճի և այլ ձևերով (ըստ ՀՀ քաղ. օրենսգիրք, հոդված 163), որը բխում է օգտագործման իրավունքից:

Ինչպես տիրապետման դեպքում, տարբերում են օրինական և անօրեն օգտագործում:

Գույքի օգտագործման իրավունքը կարելի է փոխանցել այլ սեփականատիրոջ: Որոշ դեպքերում սեփականության իրավունքի փոխանցումը կարող է իրականացնել ոչ սեփականատերը, եթե նա գույքն օգտագործում է պատշաճ իրավական հիմունքներով, մասնավորապես վարձակալը կարող է շենքը կամ նրա մի մասը տալ ենթավարձակալության մեկ այլ անձի, եթե դա չի հակասում օրենքի կամ պայմանագրի դրույթներին:

Տնօրինման իրավունք: Սեփականատերը կարող է օգտագործել իրեն պատկանող գույքը, նրանում կատարել բազմազան փոփոխություններ, գրավ դնել և այլն: Կիրառելով գույքի տնօրինման իրավունքը՝ սեփականատերը կարող է ընդունել անընդհատ (վաճառք) և ժամանակավորապես (վարձակալության հանձնած) տնտեսական օգտագործումը դադարեցնելու որոշում:

Սեփականատիրոջ տնօրինման իրավունքը դրսևորվում է հետևյալ կերպ՝ տարբեր գործարքների կատարման միջոցով գույքն այլ անձանց հանձնվում է տիրապետման, տնտեսական տնօրինման, օպերատիվ կամ հավատարմագրային կառավարման:

Իրավաբանական բնույթով հավատարմագրային կառավարումը հանդես է գալիս ընչական իրավունքի ձևով, որը ծառայում է ոչ թե համապատասխան գույքի վրա սեփականության նոր իրավունքի ստեղծման, այլ սեփականատիրոջ կողմից իրեն պատկանող գույքի նկատմամբ տնօրինման լիազորությունների կատարման համար:

Հավատարմագրային կառավարումը սեփական գույքի հավատարմագրային կառավարմամբ այլ անձի՝ հավատարմագրային կառավարչի հանձնումն է: Իրավասությունը իր բովանդակությամբ ներառում է սեփականության իրավունքի տարրերը՝ տիրապետման, օգտագործման և

տնօրինման իրավունքները: Գույքը հավատարմագրային կառավարման հանձնելը չի հանգեցնում սեփականության իրավունքի փոխանցմանը:

Հավատարմագրային կառավարիչը պարտավոր է գույքը կառավարել ի շահ սեփականատիրոջ կամ նրա կողմից նշված երրորդ անձի (ըստ ՀՀ քաղ. օրենսգիրք, հոդված 163):

2.2.Սեփականության իրավունքի սուբյեկտները

Սեփականության հիմնական ձևերը սահմանված են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի «Սեփականության իրավունք և այլ գույքային իրավունքեր» բաժնում: Օրենսգրքում սահմանվում են սեփականության հարաբերության երկու ոլորտ՝ մասնավոր և հանրային սեփականություն.

- մասնավոր սեփականության իրավունքի սուբյեկտներ են հանդիսանում քաղաքացիները և իրավաբանական անձինք,
- հանրային սեփականության մասնակիցներ են հանդիսանում Հայաստանի Հանրապետությունը կամ համայնքները:

Քաղաքացու և իրավաբանական անձի սեփականության իրավունքները:

Ինչպես նշվեց իրավաբանական անձի սեփականությունը վերաբերում է մասնավոր սեփականության ոլորտին: Սակայն պետք է հաշվի առնել, որ հանրային սեփականությունը մասնավորից սուբյեկտիվային չափանիշների սահմանազատումը պետք է ընդունել օրենքից բխող հայտնի վերապահումներով:

Ամենից առաջ պետք է հիշել, որ իրավաբանական անձանց տարատեսակները (կազմակերպություններ, պետական և համայնքային հաստատություններ) ամրակցված գույքի նկատմամբ չունեն մասնավոր սեփականության իրավունք. Սեփականատիրոջ դերում հանդես է գալիս հանրային իշխանությունը:

Մյուս կողմից, տնտեսական ընկերակցության կամ ընկերության գույքը հանդիսանում է մասնավոր սեփականության օբյեկտ, նույնիսկ այն դեպքում, երբ այն ամբողջությամբ ձևավորվել է պետական կամ համայնքային ներդրումների շնորհիվ: Այլ կերպ ասած՝ տնտեսական ընկերակցությունները և ընկերությունները մնում են մասնավոր իրավունքի սուբյեկտներ այն դեպքում, երբ ուրիշ ոչ մեկը, բացի պետական կամ

համայնքային միավորումներից, չի մասնակցել նրանց ստեղծմանը, իսկ գույքային գործարքները ենթարկվում են գույքի շրջանառության համար նորմերին, որոնք կազմում են մասնավոր սեփականության մի մասը:

Իրավական հարաբերություններում քաղաքացիները և իրավաբանական անձինք, որպես սեփականության իրավունքի սուբյեկտներ, զբաղեցնում են միատեսակ դիրք՝ նրանք օգտվում են նույն օրենքի պաշտպանությունից: Դրանով իսկ ընդգծվում է սեփական գույքն առևտրային, ձեռնարկատիրական նպատակներով օգտագործման հնարավորություններում տարբերությունների բացակայությունը: Այլ է ձեռնարկատիրական գործունեությունը: Այդպիսի գործունեության տնօրինումը քաղաքացու կողմից, առանց իրավաբանական անձի կազմավորման, ենթադրում է քաղաքացիական իրավունքի պատասխանատվությունը վարկատուի նկատմամբ՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքի ամբողջ մեծությամբ:

Եթե քաղաքացին զբաղվում է այնպիսի ձեռնարկատիրությամբ, որ իր գույքի մի մասը ներառում է տնտեսական ընկերակցությունում, ընկերությունում կամ արտադրական կոոպերատիվում, ապա ներդրման սեփականատեր դառնում է համապատասխան իրավաբանական անձը, իսկ քաղաքացին կորցնում է ներդրված գույքի նկատմամբ սեփականության իրավունքը: Կորցրած գույքի իրավունքի փոխարեն նա ձեռք է բերում պարտավորության իրավունք՝ շահույթից ներդրմանը համամասնական շահաբաժին պահանջելու իրավունք կամ լիկվիդացման դեպքում ներդրմանը համապատասխան սեփականության մասի ստացում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ կանոնադրական փաստաթղթերում:

Քաղաքացու և իրավաբանական անձի սեփականության իրավունքի հարաբերություններում սահամնափակումները սահմանվում են միայն ՀՀ քաղ. քրենսգիրք, հոդված 167-ով:

Դրանք են.

1. սեփականության տեսակների սահմանափակումը, որոնք հարմար են սեփականության իրավունքով ձեռքբերման կամ տիրապետման համար. օրենքը կարող է սահմանել գույքի ձևերը, որոնք կարող են գտնվել միայն պետական կամ համայնքային սեփականությունում,
2. սեփականության քանակի կամ արժեքի սահմանափակումներ (օրինակ՝ քաղաքացու կամ իրավաբանական անձի սեփականու-

թյունը հանդիսացող հողային տեղամասի հրապարակի մակերեսի որոշում, կազմակերպվող օբյեկտը):

Հատուկ նորմատիվ ակտերով սահմանվում է օբյեկտների ցանկ, որոնք ենթակա չեն օտարման (կամ ենթակա չեն մասնավորեցման): Սեփականության որոշ տեսակների համար կարող են նախատեսվել նրա ձեռքբերման կամ օտարման կամ էլ տնօրինման կամ օգտագործման կարգի յուրահատկություններ: Որպես կանոն, խոսքը գնում է սեփականության այնպիսի օբյեկտների մասին, որոնք կոչված են բավարարելու ոչ թե մասնավոր անձանց հետաքրքրությունները, այլ երկրի բնակչության պահանջմունքները երկրի, շրջանի կամ բնակավայրի համար:

Շինարարությունում պետական սեփականության իրավունք:

Հայաստանի Հանրապետությունը և համայնքները քաղաքացիական օրենսդրությամբ ու այլ իրավական ակտերով կարգավորող հարաբերություններում հանդես են գալիս այդ հարաբերությունների մյուս մասնակիցների՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց հետ հավասար հիմունքներով (ՀՀ քաղ. օրենսգիրք, հոդված 128): Պետական սեփականության իրավունքի սուբյեկտների մասնակցությամբ սեփականության հարաբերությունների քաղաքացիաիրավական կարգավորումը տեղ ունի բոլոր այն դեպքերում, երբ նշված սուբյեկտները գործում են հավասարության սկզբունքով՝ չեն օգտվում իրենց իշխանական լիազորություններից:

Պետական սեփականության իրավունքի սուբյեկտի դերում հանդես է գալիս Հայաստանի Հանրապետությունը: Օրենքով սահմանվում են գույքի այն տեսակները, որոնք կարող են գտնվել միայն պետության ենթակայության ներքո (ՀՀ քաղ. օրենսգիրք, հոդված 166, կետ 3):

Այն ամրագրվում է հետևյալ դրույթներով.

1. Հայաստանի Հանրապետությանը սեփականության իրավունքով պատկանող գույքը պետական սեփականություն է:
2. Քաղաքացիներին, իրավաբանական անձանց կամ համայնքներին չպատկանող հողը և բնական այլ պաշարները պետական սեփականություն են:

Պետական գույքի տեսակները, որպես պետական սեփականություն, բաժանվում են երկու մասի.

1. պետական կազմակերպության և հիմնարկների վրա ամրակցված գույք՝ տնտեսության վարման կամ օպերատիվ կառավարման նպատակներով,
2. պետական գույք, կազմված՝
   - բյուջեի միջոցներով,
   - պետական այլ գույք, չամրակցված պետական կազմակերպությունների և հիմնարկների վրա:

Շինարարությունում համայնքային սեփականության իրավունք:

Համայնքի սեփականություն համարվում է այն գույքը, որը իրավունքով պատկանում է քաղաքային և գյուղական համայնքներին կամ այլ համայնքային կազմավորումներին:

Համայնքի սեփականության ներքո գտնվող գույքը բաժանվում է երկու մասի՝

1. գույք, որը համայնքային կազմակերպությունների և հիմնարկների վրա ամրակցված է տնտեսության վարման կամ օպերատիվ կառավարման համար:
2. համայնքային գույք, կազմված՝
   - համայնքի բյուջեի միջոցներով,
   - համայնքային այլ գույք, ամրակցված չէ համայնքային կազմակերպությունների և հիմնարկների վրա:

Մտնելով հասարակական սեփականության կազմի մեջ՝ համայնքային սեփականությունը նույնացվում է պետականին, և չի հանդիսանում նրա տարատեսակը, չնայած որ մեծմասամբ նման է վերջինիս:

Գույքի՝ համայնքային սեփականությունից պետականի անցումը թույլատրվում է միայն տեղական ինքնակառավարման մարմինների կողմից կամ դատարանի որոշմամբ:

2.3.Սեփականության իրավունքի ձեռքբերումը

Սեփականության իրավունքը կարող է ձեռք բերվել իրավաբանական փաստերի ուժով, որի հետ օրենքը կապում է նրա առաջացումը: Այդ իրավաբանական փաստերը հանդիսանում են սեփականության իրավունքի ձեռքբերման հիմքը կամ միջոցը (ըստ ՀՀ քաղ. օրենսգիրք, հոդված 172).

1. Օրենքի և այլ իրավական ակտերի պահանջների պահպանմամբ՝ անձի կողմից իր համար պատրաստած կամ ստեղծած նոր գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք է բերում այդ անձը: Գույքի օգտագործման արդյունքում ստացվածը (պտուղները, արտադրանքը, եկամուտները) պատկանում է այդ գույքն օրինական հիմունքներով օգտագործող անձին, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով, այլ իրավական ակտերով կամ այդ գույքի օգտագործման մասին պայմանագրով (ըստ ՀՀ քաղ. օրենսգիրք, հոդված 144):

2. սեփականատեր ունեցող գույքի նկատմամբ դրա առքուվաճառքի, փոխանակության, նվիրատվության պայմանագրի կամ գույքի օտարման այլ գործարքի հիման վրա սեփականության իրավունք կարող է ձեռք բերել այլ անձը,

3. քաղաքացու մահվան դեպքում նրան պատկանող գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ժառանգաբար՝ կտակին կամ օրենքին համապատասխան, անցնում է այլ անձանց,

4. իրավաբանական անձի վերակազմակերպման դեպքում նրան պատկանող գույքի նկատմամբ սեփականության իրավունքն անցնում է վերակազմակերպված իրավաբանական անձի իրավահաջորդ իրավաբանական անձին (իրավաբանական անձանց),

5. սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում և կարգով՝ անձը կարող է սեփականության իրավունք ձեռք բերել սեփականատեր չունեցող գույքի նկատմամբ, ինչպես նաև այն գույքի, որի սեփականատերն անհայտ է, կամ որից սեփականատերը հրաժարվել է, կամ որի նկատմամբ սեփականության իրավունքը նա կորցրել է օրենքով նախատեսված այլ հիմքերով,

6. բնակարանային, ամառանոցային, ավտոտնակային կամ այլ կոոպերատիվի անդամը և փայակուտակման իրավունք ունեցող այլ անձինք, որոնք լրիվ մուծել են իրենց փայավճարը կոոպերատիվի կողմից իրենց տրամադրված բնակարանի, ամառանոցի, ավտոտնակի կամ այլ շինության համար այդ գույքի նկատմամբ ձեռք են բերում սեփականության իրավունք:

ԳԼՈՒԽ 3

Նախահաշվային գործը և գնագոյացումը շինարարությունում

3.1.Գնագոյացման հիմունքները շինարարությունում

Գինը շինարարությունում շինարարական արտադրանքի մեկ միավորի վրա ծախսված գումարն է դրամական արտահայտությամբ, որն որոշվում է աշխատանքի քանակով նրա ստեղծման համար:

Շինարարության գնագոյացման և նախահաշվային նորմավորման հիմնական դրույթները կարգավորվում են ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից հաստատված մեթոդական տեղեկագրերի միջոցով: Մեթոդական տեղեկագրերի դրույթները պարտադիր են պետական բյուջեի միջոցներով կապիտալ շինարարություն իրականացնող բոլոր կազմակերպությունների և կազմակերպությունների համար: Այն կառույցների շինարարության համար, որոնց ֆինանսավորումը իրականացվում է կազմակերպության և ֆիզիկական անձանց սեփական միջոցների հաշվին՝ մեթոդական տեղեկագրերը կրում են հանձնարարական բնույթ:

Շինարարությունում գնագոյացման կառուցակարգը բնորոշվում է իր առանձնահատկությամբ: Նախևառաջ այն կախված է կառուցված շենքերի և կառույցների բնույթի յուրահատկությունից, հատկապես ջրատեխնիկական շինարարությունում գինը էականորեն կախված է շինարարության գնի որոշակի պայմաններից: Այդ հանգամանքները թույլ չեն տալիս շինարարական արտադրանքի համար տնտեսության այլ բնագավառների նման թողարկման միասնական գին սահմանել: Այդ պատճառով էլ գինը կրում է անհատական բնույթ՝ հիմնվելով նախահաշվային փաստաթղթավորման վրա՝ աշխատանքների ծավալի, արտադրության տեխնոլոգիաների և առանձին աշխատանքների համար միասնական գների մեթոդներին համապատասխան: Շինարարական արադրանքի արժեքի գնահատման համար օգտագործվում է գնագոյացման համակարգը: Շինարարությունում գործող գնագոյացման համակարգն առանաձնացված մասով մտնում է պետական «Շինարարական նորմեր և կանոնների (ՇՆևԿ)» կազմում:

Նախահաշվային գինը հիմք է հանդիսանում կապիտալ ներդրումների չափի, շինարարության ֆինանսավորման, շինարարական արտադրանքի

պայմանագրային գնի ձևավորման, կապալային շինմոնտաժային աշխատանքների հաշվարկների կատարման, սարքավորումների ձեռքբերման և դրանց շինարարական հրապարակ տեղափոխման ծախսերի վճարման, ինչպես նաև այլ ծախսերի փոխհատուցման համար՝ այն միջոցների հաշվին, որոնք նախատեսված են նախահաշվային հաշվարկներով: Նախահաշվային փաստաթղթերի հիման վրա են կատարվում հաշվառումը և հաշվետվությունը, տնտեսական հաշվարկը, պատվիրատուների և շինմոնտաժային կազմակերպությունների գործունեության գնահատումը: Նախահաշվային արժեքը հիմք է հանդիսանում նախագծվող օբյեկտի տեխնիկատնտեսական ցուցանիշների հաշվարկման համար՝ հիմնավորելով և ընդունելով շինարարության իրականացման որոշումը:

Օբյեկտի արժեքի գնահատման անհրաժեշտությունն առաջանում է շինարարության առաջնային փուլում: Նախագծման փուլում որոշվում է օբյեկտի նախագծի նախնական գինը: Հետազոտության և նախագծման ժամանակ կուտակված լրացուցիչ տեղեկատվությունը և տվայլները որոնելով՝ հայտնվում են օբյեկտի նախահաշվային արժեքն ավելի հստակ հաշվարկելու համար լրացուցիչ հնարավորություններ: Նախագծվող օբյեկտի շինարարության ցածր կամ բարձր արժեքը կարող է բերել նրա տնտեսական արդյունավետության սխալ գնահատմանը, հետևաբար օբյեկտի շինարարության նպատակահարմարության մասին սխալ եզրահանգումների: Նախահաշվային արժեքի հաշվարկի ճշտությունը կախված է ինչպես հիմնական կառույցների, այնպես էլ նրանց ստեղծման տեխնոլոգիաների, նախագծային աշխատանքների որակից, տեղեկագրական քարտեզների և ինժեներաաշխարհագրական որոնումների ամբողջությունից, աշխատանքի միավորի որոշման ճշտությունից, արտադրական պայմանները հետագայում կատարվող շինարարության համար բավականին ճշգրիտ գնահատելու կարողությունից:

Շինարարական կազմակերպությունների, շենքերի և շինությունների նախահաշվային արժեքը դրամական միջոցների գումարն է, որն անհրաժեշտ է նախագծային նյութերով նրա իրականացման համար: Նրա մեջ մտնում են շենքերի և կառույցների իրականացման համար շինարարական օբյեկտներ, տեխնոլոգիական սարքավորումների տարրեր, ժամանակավոր

շենքերի և կառույցների շինարարությունը, աշխատանքի իրականացման անհրաժեշտությունը և շինարարության ավարտից հետո հաշվետվությունը, ժամանակավոր և մշտական անցումային մուտքերի շինարարությունը, էլեկտրահաղորդման գիծը, շինարարների և շահագործվող կադրերի պատրաստման համար ժամանակավոր և մշտական ավանների կառուցումը:

Ամբողջական նախահաշվային արժեքը բաղկացած է հետևյալ ծախսերից՝ շինմոնտաժային աշխատանքներ շենքերի և շինությունների կառուցման համար, տեխնոլոգիական սարքավորումների մոնտաժ, տեխնոլոգիական գործընթացները կառավարելու համար մեքենայացված համակարգերի տեղադրում ($Ա_{տեխ.պ.կ.}$); տեխնոլոգիական սարքավորումների ձեռքբերման, կահույք, գույք ($Ա_{ս}$) և այլ ծախսեր ($Ծ_{այլ}$), ներառյալ նախագծահետազոտական, գիտահետազոտական աշխատանքներ, շահագործվող կադրերի պատրաստաման համար և այլն:

$$Ա_{ն.ա.} = Ա_{տեխ.պ.կ} + Ա_{ս.} + Ծ_{այլ.} : \quad (3.1)$$

Շինմոնտաժային աշխատանքների նախահաշվային արժեքն որոշվում է՝ հիմնվելով աշխատանքների ծավալի վրա, որը հաստատված և ընդունված է միավոր արժեքի համար:

Տեխնոլոգիական սարքավորումների արժեքը ($Ա_{ս}$) սահմանվում է այդ սարքավորումը պատրաստող գործարանի բազային արժեքի կամ մատակարարի արժեքի հաշվարկի հիման վրա: Այլ ծախսերը ($Ծ_{այլ}$) որոշվում են նախագծահետազոտական և գիտահետազոտական աշխատանքներով, հիմնվելով նախահաշվի վրա, ծախսերի հաշվարկի կամ արժեքի հաշվարկով, որոնք որպես կանոն, որոշվում են նրանց վրա կատարվող աշխատանքների ծախսերով, տնօրինության պահպանման ծախսեր՝ հաստիքային ցուցակով և նախահաշվային ծախսեր, կապված նրա արտադրատնտեսական գործունեությունով, շահագործվող կադրերի պատրաստման համար ծախսերի հաշվարկով:

Այն դեպքում, երբ օբյեկտի շինարարության ավարտից հետո օժանդակ կառույցները, ինչպես նաև շինարարական կազմակերպության կարիքների համար կառուցված շինարարների տնակները և այլ օբյեկտներն ու շինությունները կարող են օգտագործվել հետագայում այլ կազմակերպություն-

ների կողմից՝ փոխանցվում են նրանց և շինարարական օբյեկտի տնտեսական արդյունավետությունը հաշվելու ժամանակ հաշվի չեն առնվում: Այդ շինությունների արժեքը կոչվում են վերադարձվող գումարներ: Այդ դեպքում օբյեկտի համար կապիտալ ներդրումների մեծության հաշվարկի արդյունավետությունը կկազմի՝

$$Ա_{ն.ա.} = Ա_{տեխ.ապ.կ} + Ա_{ս.} + Ծ_{այլ.} - Ա_{վերադարձ.գ.} : \quad (3.2)$$

3.2.Նախահաշվային արժեքի կառուցվածքը շինարարությունում և շինմոնտաժային աշխատանքներում

Շինարարության նախահաշվային արժեքի կառուցվածք անվանում են ընդհանուր արժեքի դասավորումը խմբերի ըստ ծախսերի և տեսակարար կշռի Աղյուսակ 3.1):

Շինարարության կարևոր խնդիրներից է հանդիսանում ժամանակի կրճատումը և դրանով իսկ արդյունավետության բարձրացումը: Նախահաշվային արժեքի կառուցվածքի վերլուծումից կարելի է հետևություն անել, որ այս խնդրի լուծման համար նախևառաջ պետք է կատարելագործել շինարարական և կառուցողական դասավորության որոշումները, բարձրացնել դրանց տեխնոլոգիական մակարդակը, բարելավել շինարարության կազմակերպումը, որոնք ի վերջո կրճատում են շինարարական հրապարակում աշխատանքների ծավալը՝ արագացնելով շինարարությունը և բարձրացնելով նրա արդյունավետությունը: Արտադրության աշխատանքների ծախսը բաժանվում է երկու խմբի՝ ուղղակի ($Ծ_{ուղ}$) և վերադիր ($Ծ_{վ}$): Համաձայն այս խմբավորման՝ շինարարության միավոր արտադրանքի գինը կամ նախահաշվային արժեքի միավորը կարելի է որոշել հետևյալ բանաձևով՝

$$Ն_{շմա} = Ծ_{ուղ.} + Ծ_{վ} + Ն_{շ}, \quad (3.3)$$

որտեղ $Ն_{շմա}$*-ն՝ շինմոնտաժային աշխատանքի նախահաշվային արժեքն է,* $Ն_{շ}$*-ն՝ նախահաշվային շահույթ:*

Աղյուսակ 3.1

Շինարարության նախահաշվային արժեքի
մոտավոր կառուցվածք (%)

Ծախսերի տեսակներ	Շինարարության տեսակները		
	Քաղաքա-ցիական	Արդյունա-բերական	Ջրատեխնի-կական
Շինմոնտաժային աշխատանքներ	75-90	40-60	70-80
Հիմնական և օժանդակ տեխնոլոգիական սարքավորումների ձեռքբերում	15-5	50-25	20-15
Այլ աշխատանքներ և այլ ծախսեր	10-5	10-15	10-5
Ընդհանուր	100	100	100

Ուղղակի ծախսերը ներառում են բանվոր-շինարարների աշխատավարձը, նյութերի, դետալների և կոնստրուկցիաների արժեքը, շինարարական մեքենաների և սարքավորումների շահագործման ծախսերը: *Ուղղակի ծախսերը կազմում են շինմոնտաժային աշխատանքի արժեքի հիմնական մասը:*

Շինարարական մեքենաների ղեկավարմամբ և սպասարկմամբ զբաղված աշխատողների աշխատավարձի ծախսերը իրենց մեջ ներառում են տվյալ մեքենաների շահագործման ծախսերը: Նշված դրույթներում հաշվի չեն առնվում օժանդակ արտադրությունների, շինարարական կազմակերպություններին սպասարկող այլ տնտեսությունների աշխատողների աշխատավարձի ծախսերը:

Նյութերի արժեքի մեջ են մտնում շինմոնտաժային արտադրության համար անհրաժեշտ հումքի ձեռքբերման, կիսաֆաբրիկատների, դետալների և կոնստրուկցիաների ծախսը, ինչպես նաև ծախսեր, որոնք կապված են շինարարության միջօբյեկտային պահեստներում դրանց նախապատ-

րաստման և մատակարարման հետ: Միջօբյեկտային պահեստն այն վայրն է, որտեղ պահպանվում կամ բարձվում են նյութերը, կիսաֆաբրիկատները, դետալները, որտեղից էլ մատակարարվում են աշխատանքային գոտիներ շինարարության արտադրության և մոնտաժային աշխատանքների համար:

Բոլոր շինանյութերը, դետալները և կոնստրուկցիաները բաժանվում են երկու խմբի՝ տեղական և բերված: Տեղական խմբի մեջ են մտնում այն նյութերը, որոնք բերվում են տվյալ շինարարության մոտակա տարածքում տեղակայված արդյունաբերական կազմակերպությունից: Դրանք են աղյուսները, քարերը, խիճերը, մանրախիճերը, ավազը, բետոնե խառնուրդը, բետոնե և երկաթբետոնե կոնստրուկցիաները: Բերված խմբի մեջ մտնում են այն նյութերը, որոնք բերվել են արդյունաբերական կազմակերպություններից: Նյութերի նախահաշվային գինը որոշվում է գործող նախահաշվային գնի տեղեկագրերով, որտեղ հաշվի է առնվում բոլոր ծախսերը մինչև միջօբյեկտային պահեստ, ինչպես նաև ներառում է բացթողման գինը, տրանսպորտային ծախսերը, մատակարար-վաճառող կազմակերպության գնի բարձրացումը, նախապատրաստական պահեստավորման ծախսերը:

Նախահաշվային գնի մեջ մեծ կարևորություն ունի տրանսպորտային կազմը: *«Ֆրանկո»* հասկացողությունը որոշում է նյութերի շինկազմակերպությանը հանձնելու սահմանը: Այդ պահից նյութի սեփականատերը հանդիսանում է շինարարական կազմակերպությունը, նա էլ կրում է պատասխանատվությունը հետագա ծախսերի, նրանց պահպանման, փոխադրման և այլնի համար:

Շինարարական մեքենաների և սարքավորումների շահագործման ծախսերը որոշվում են այս կամ այն տիպի շինարարական սարքավորումների շահագործումից մեքենա/ժամ արժեքով: Մեքենա-ժամի արժեքի մեջ մտնում են մեքենաների առաքումը շինհրապարակ, ամորտիզացիոն հատկացումը, նրանց տեղափոխումը մի օբյեկտից մյուսը, մոնտաժը և ապամոնտաժը (սարքավորումը և ապասարքավորումը), նորոգումը, վարորդների աշխատավարձը և ուրիշ սպասարկող անձնակազմի, վառելիքաքսուքային նյութերի ծախսը, էլեկտրաէներգիան և այլն:

Նախահաշիվ կազմելու ժամանակ ուղղակի ծախսերը որոշվում են աշխատանքի ֆիզիկական ծավալով, կառույցի կոնստրուկիվ որոշում-

ներով, շինարարության կազմակերպման և արտադրության աշխատանքների տեխնոլոգիայի ընդունված մեթոդներով, առանձին ձևի աշխատանքների միավոր արժեքի հիման վրա:

Վերադիր ծախսերը նախատեսված են շինարարական կազմակերպության սեփական ծախսերը ծածկելու համար, որոնք կապված են շինարարության կազմակերպման և կառավարման հետ՝ ապահովելով շինարարական գործընթացի կազմակերպումը: Վերադիր ծախսերը դառնում են շինմոնտաժային աշխատանքի ինքնարժեքի մաս: Ելնելով պայմաններից՝ վերադիր ծախսերը բաժանվում են.

1. <u>Վարչատնտեսական ծախսեր.</u>
   - ինժեներատեխնիկական անձնակազմի, ծառայողների և կրտսեր սպասարկող անձնակազմի (ԿՍԱ) աշխատավարձ,
   - արձակուրդայիններ,
   - գրասենյակային, փոստային և այլ ծախսեր,
   - խորհրդատվական, աուդիտորական ծառայություններ,
   - այլ ծախսեր:
2. <u>Շինարարության աշխատողների սպասարկման ծախսեր.</u>
   - կադրերի պատրաստում և վերապատրաստում,
   - բժշկական և սոցիալական ապահովագրության վճարներ,
   - աշխատանքի հսկողություն և անվտանգության տեխնիկա,
   - սանիտարահիգիենիկ և կենցաղային պայմանների ապահովում:
3. <u>Շինարարական հրապարակում աշխատանքների կազմակերպման ծախսեր.</u>
   - հրդեհային և պահակային հսկողություն,
   - լաբորոտորիաների պահպանում,
   - նախագծերի մշակման արտադրական աշխատանքներ,
   - շինարարական հրապարակի բարեկարգում և պահպանում:
4. <u>Այլ վերադիր ծախսեր.</u>
   - կազմակերպության գույքի ապահովագրում,
   - բանկերից վերցված վարկերի հետ կապված վճարումներ,
   - գովազդային, ներկայուցչական ծախսեր,
   - Այլ ծախսեր:

Վերադիր ծախսերի համակարգում առանձնացվում են ծախսեր, որոնք ստացել են հետևյալ անունները՝

- վերադիր ծախսերի պայմանական-մշտական մաս,
- վարչատնտեսական և սպասարկող անձնակազմի պահպանման ծախսեր,
- պահակների և շինարարական հրապարակի տարածքի լուսավորության ծախսերը և այլն:

Պայմանական-մշտական մասի գումարային մեծությունը կախված է շինարարության տևողությունից և սովորաբար կազմում է գլխավոր կապալառու կազմակերպության վերադիր ծախսերի ընդհանուր գումարի 50%, իսկ ենթակապալառու կազմակերպության 30%-ը:

Նախահաշվային շահույթը շինարարական կազմակերպությունների դրամական միջոցների պահպանումն է, որոնք անհրաժեշտ են արտադրության զարգացման և աշխատողների նյութական խթանման համար: Այդ ծախսերի մեջ են մտնում՝

1. արտադրության զարգացման, սարքավորումների արդիականացման, օբյեկտների վերակառուցելու համար հիմնական ֆոնդերի անհրաժեշտ ծախսերը,
2. սեփական շրջանառու միջոցների մասնակի ավելացման ծախսերը,
3. ըստ օրենքի սահմանված կարգով՝ շահույթից հարկերի վճարման ծախսերը,
4. աշխատողների նյութական խթանման ծախսերը,
5. նյութական օգնությունը,
6. սոցիալական ոլորտի զարգացման ծախսերը,
7. առողջության և հանգստի ապահովման միջոցարումների ծախսերը:

Նախահաշվային շահույթը հաշվարկվում է աշխատող բանվորների և մեխանիզատորների աշխատավարձի միջոցների 65%-ով: Նախահաշվային շահույթի ծավալը թույլատրվում է ուղղակի և վերադիր ծախսերի ընդհանուր գումարի 11%-ը:

Շինմոնտաժային աշխատանքի ինքնարժեքի մոտավոր կառուցվածքն արտահայտվում է հետևյալ ձևով, տոկոս

1. ուղղակի ծախսերը 77%, այդ թվում.

- աշխատակիցների աշխատավարձը՝13%,
- նյութերի և արտադրանքի արժեքը՝ 47%,
- շինարարական մեքենաների և սարքավորումների շահագործումը՝ 17%,

2. Վերադիր ծախսերը (հաշվարկ)՝ 23%:

3.3.Նախահաշվային նորմավորումը և նախահաշվային նորմերի համակարգ

Նախահաշվային նորմավորումը տեխնիկական, կազմակերպչական և տնտեսական մեթոդների ծախսերի որոշման, աշխատանքային և նյութա-տեխնիկական պաշարների, շինմոնտաժային աշխատանքի արտադրության նպատակով նախահաշվային նորմայի և նորմատիվների մշակման ու արտադրության համակարգն է:

Նախահաշվային նորմա կոչվում է աշխատողների աշխատանքի պաշարների՝ ծախսերի ամբողջությունը, շինարարական մեքենաների և սարքավորումների աշխատանքի ժամանակը, շինանյութերի պահանջը, մոնտաժային կամ այլ աշխատանքների արտադրանքը և կոնստրուկցիաները:

Նախահաշվային նորմատիվ է կոչվում նախահաշվային նորմերի, գների և գնահատման ամբողջությունը, որոնք ներկայացված են առանձին ժողովածուներով և ներկայացնում են շինմոնտաժային աշխատանքի կատարման համար անհրաժեշտ պահանջները:

Պետական նախահաշվային նորմերը հանդիսանում են որպես առաջնային նորմատիվ փաստաթուղթ և ծառայում են նախահաշվային արժեքի մշակման համար: Այս նորմերը արտացոլում են.

- աշխատանքի ծախսերի մասին տվյալները՝ մարդ/ժամ,
- շինարարական մեքենաների և սարքավորումների օգտագործման ժամանակի նորմերը, արտահայտված մեքենա/ժամ-ով,
- նյութերի, կիսաֆաբրիկատների, դետալների և կոնստրուկցիաների բնական արտահայտման նորմերը:

Նախահաշվային նորմերի առանձին աղյուսակներ խմբավորվում են ըստ աշխատանքի և կոնստրուկցիայի տեսակի: Յուրաքանչյուր գլխում կա տեխնիկական մաս, որտեղ տվյալները նշված են՝ ըստ ընդունված նորմերի և աշխատանքի ծավալի որոշման կանոնի: Տարրային նախահաշվային նորմերը հաշվի են առնում շինարարական արտադրության միջին բնագավառի տեխնոլոգիական մակարդակը, շինարարական կազմակերպության և արտադրության աշխատանքի համար նախատեսված նախագիծը, որոնցում հաշվի են առնվում համապատասխան գործակիցները:

Միավոր նախահաշվային նորմատիվը սահմանում է ուղղակի ծախսերի չափը, այսինքն՝ առանց վերադիր ծախսերի և նախահաշվային շահույթի հաշվառման:

Արժեքային ձևի միավորի գնահատման մեջ հաշվի են առնվում աշխատանքների համալիրի կատարման ծախսերը:

Խոշորացված նախահաշվային նորմեր: Միավորի գնահատման հիման վրա շինարարության նախահաշվային արժեքի որոշումը պահանջում է շինարարության տեղային պայմանների կառույցի կոնստրուկտիվ որոշումների, արտադրության աշխատանքի մեթոդները, կիրառվող սարքավորումների և այլ տեղեկությունների վերաբերյալ մեծ ծավալով ելակետային տվյալներ, որոնք կարող ենք ստանալ միայն մանրամասն կազմված նախագծից: Բացի այդ, պահանջվում են ինժեներական աշխատանքի մեծ ծախսեր:

Խոշորացված նախահաշվային նորմերն ավելի լայն տարածում ունեն բնակարանային, քաղաքացիական և արդյունաբերական շինարարության մեջ, որոնց համար մշակված են հատուկ ժողովածուներ: Արդյունաբերական և քաղաքացիական շինարարության խոշորացված նախահաշվային նորմերի ժողովածուները բաժանվում են երկու խմբի: Առաջին խմբի մեջ մտնում են տիպային կամ կրկնվող նախագծերով կառուցվող շենքերն ու կառույցները և դրանց համար նախատեսված նախահաշվային արժեքը:

Երկրորդ խմբի մեջ մտնում են շենքերի կոնստրուկտիվ մասերը և առանձին աշխատանքները: Խոշորացված նախահաշվային նորմերը մշակվում են խոշոր ցուցանիշների հիման վրա:

Զանգվածային բնակարանային-քաղաքացիական շինարարությունում, որտեղ օբյեկտների կառուցվածքները իրականացվում են տիպային նախագծերի հիման վրա, նախահաշիվ կազմելու ժամանակ լայնորեն օգտագործում են շենքերի և կառույցների շինարարության գնացուցակը: Ի տարբերություն խոշորացված նախահաշվային նորմերի՝ գնացուցակները կարող են օգտագործվել ինչպես նախահաշվի արժեքի որոշման համար նախագծի վաղ փուլերում, այնպես էլ աշխատանքային գծագրեր կազմելու համար:

Շինարարության պրակտիկայի ներածությունում շինարարական արտադրության վերջին ապրանքի գնի փոխարինումն առանձին տեսքի աշխատանքների բազմաթիվ գների, անհամեմատ պարզեցնում է գործընթացը նախահաշվային փաստաթղթի կազման, իսկ գլխավորը, աշխատանքների կատարման համար պարզեցնում է փոխադարձ հաշվարկները պատվիրատուի և կապալառուի միջև, բարձրացնում է որակը նախահաշվային փաստաթղթերի, մեծապես մոտեցնում է շինարարության փաստացի և հաշվարկային արժեքները: Ջրատեխնիկական շինարարությունում հաստատուն խոշորացվող գնի կիրառությունը հանդիպում է օբյեկտիվ բարդությունների տեղային պայմանների գնագոյացման նշանակալից ազդեցության պատճառով:

Նախահաշվային արժեքի խոշորացված ցուցանիշ անվանում են շինարարական և մոնտաժային աշխատանքի կամ շենքերի և կառույցների առանձին մասերի մակերեսների խոշորագույն միավորի միջին արժեքը:

3.4.Նախահաշվային փաստաթղթերի կազմման մեթոդները և ձևերը

Նախահաշվային փաստաթղթերը ցանկացած նախագծի անբաժան մասն են կազմում: Փաստաթղթերի կազմման մեթոդաբանությունը, նախահաշվային հաշիվների ձևը կախված է նախնական տվյալներից, դրանց ճշտությունից, ինչպես նաև նախագծային որոշումների մշակման աստիճանից, նախագծման փուլերից:

Այն կառույցների համար, որոնք ունեն յուրահատուկ բնույթ (որպես կանոն՝ դրանք են ջրաէներգետիկական, ջրատեխնիկական կառույցները) նախագծումն իրականացվում է երկու փուլով՝

- նախագծի տեխնիկատնեսական հիմնավորում(ՏՏՀ),
- աշխատանքային փաստաթղթեր:

Տեխնիկական հետազոտության օբյեկտների, ինչպես նաև այն օբյեկտների համար, որոնք կառուցվում են զանգվածային նախագծերով մշակվում են միայն աշխատանքային փաստաթղթերը:

Այս պայմաններում ՏՏՀ նախագծողը մշակում է հետևյալ նախահաշվային փաստաթղթերը՝ ամփոփ նախահաշվային հաշվարկ, ծախսերի ամփոփագիր, օբյեկտային և տեղային նախահաշվային հաշվարկներ, նախագծահետազոտական և գիտահետազոտական աշխատանքների նախահաշվային հաշվարկ, օբյեկտի շինարարության նախահաշվային արժեքի մասին տեղեկագիր: Աշխատանքային փաստաթղթերի կազմի մեջ մտնում են օբյեկտային և տեղային նախահաշիվները, շինարարական արտադրանքի նախահաշվային արժեքի տեղեկագիրը:

Նախահաշվային փաստաթղթերում կարող են մշակվել շինարարական և մոնտաժային աշխատանքների միավոր արժեքի հաշվարկները, որոնք չկան գործող շինարարական նորմերի ժողովածուներում:

Առաջնային փաստաթուղթ է հանդիսանում տեղային նախահաշվային հաշվարկը: Այն կազմվում է հիմնական աշխատանքների ֆիզիկական ծավալների, շենքերի և շինությունների կոնստրուկտիվ տարրերի գծագրերի հիման վրա, արտադրական աշխատանքների ընդունված մեթոդներով և, որպես կանոն, յուրաքանչյուր շենքի և կառույցի աշխատանքային ձևի հիման վրա: Ընդ որում՝ աշխատանքների առանձին տեսակների տվյալները խմբավորվում են ըստ շենքերի և շինությունների: Տվյալների խմբավորման կարգը շենքերի, կառույցների առանձին կոնստրուկտիվ տարրերը, աշխատանքային ձևերը պետք է համապատասխանեն աշխատանքների տեխնոլոգիական հաջորդականությանը և հաշվի առնեն շինարարության առանձին ձևերին բնորոշ յուրահատկությունները: Ելնելով այս սկզբունքներից՝ տեղային նախահաշվային հաշվարկը բաժանվում է.

- համաշինարարական, հարդարման, հողային աշխատանքներ, հիմքեր, ստորգետնյա, վերգետնյա մասի պատեր, կարկաս, ծածկեր, միջնորմեր, հատակներ և հիմքեր, ծածկեր և տանիք,

որմնանցքերի լցում, սանդուղքներ և հարթակներ, այլ աշխատանքներ (սանդղամուտքեր) և այլն,

- հատուկ աշխատանքներ. սարքավորումների համար հիմքեր, հատուկ հիմնատակեր, ուղիներ և փոսեր (հատուկ նպատակով), աղյուսապատում և մեկուսացում, քիմիական պաշտպանիչ ծածկույթներ և այլն,
- ներքին սանտեխնիկական աշխատանքներ, ջրմուղ, կոյուղի, ջեռուցում, օդափոխություն և այլն,
- սարքավորումների տեղադրում, տեխնոլոգիական սարքավորումների, խողովակաշարերի, մետաղական կոնստրուկցիաների (որոնք կապված են սարքավորումների տեղադրման հետ) և այլնի ձեռքբերում ու տեղակայում:

Բացի այդ տեղային նախահաշիվը կարող է բաժանվել խոշորացված փուլերի, այսինքն՝ շինարարական ու մոնտաժային աշխատանքների ավարտված տեխնոլոգիական ամբողջականություն: Օրինակ՝ նախահաշիվներում առանձնացնում են շենքերի ստորգետնյա և վերգետնյա մասեր: Դա թույլ է տալիս պատվիրատուին ավարտված փուլերի աշխատանքների համար կապալառուի հետ հաշվարկներ իրականացնել: Համեմատաբար պարզ օբյեկտների համար նախահաշվային արժեքի խմբավորումն ըստ բաժինների կարող է չիրականացվել: Ստացված նախահաշվային արժեքի հանրագումարի արդյունքը տեղային նախահաշվում իրենից ներկայացնում է ուղղակի ծախսերը: Կապված այն հանգամանքի հետ, որ վերադիր ծախսերի չափերը սովորաբար սահմանվում են տարբեր ձևի աշխատանքների համար, ստացված ուղղակի ծախսերի հանրագումարի վրա ավելանում են վերադիր ծախսերը և նախահաշվային շահույթը: Առանց բաժանման տեղային նախահաշվի կազման դեպքում առանձին ավելացումներով վերադիր ծախսերը և նախահաշվային շահույթը ավելացվում են նախահաշվի վերջում՝ ուղղակի ծախսերի հանրագումարի միջոցով:

Այսպիսով, երկփուլանի նախագծման դեպքում շինարարության արժեքը որոշվում է.

- նախագծի տեխնիկատնտեսական հիմնավորման մեջ՝ խոշորացված նախահաշվային նորմերով, շինարարության արժեքի խոշո-

րացված ցուցանիշներով և համանման օբյեկտների արժեքային ցուցանիշներով,

- միափուլ նախագծման դեպքում համաձայն տիպային կամ կրկնվող կիրառմամբ և յուրահատուկ նախագծերի նախահաշիվներ, կապված շինարարության տեղային պայմանների և նախահաշվի, համաձայն կազմվող աշխատանքային գծագրերի, օգտագործվող գնացուցակների, սահմանվում են այդ նպատակի համար:

Եթե ըստ աշխատանքային նախագծերի նախահաշվի կազմման դեպքում աշխատանքային փաստաթղթերում բացակայում է նախահաշվային նորմատիվի խոշորացված ցուցանիշը, ապա ընդունվում են աշխատանքները տեղեկագրերից, սարքավորումների մոնտաժի համար ժողովածուներից և գնացուցակներից, վերջիններիս բացակայության դեպքում մշակվում են յուրահատուկ եզակի գնացուցակներ:

Տեխնոլոգիական սարքավորումների և նրանց տեղակայման տեղային նախահաշիվը կազմվում է հետևյալ կերպ: Տեխնոլոգիական սարքավորումները իրենց նշանակությամբ բաժանվում են՝

- հիմնական տեխնոլոգիական, էներգետիկական, վերամբարձ մեքենաներ, պոմպաօդախթանիչներ և այլն,
- գործիքներ, վերահսկման միջոցներ, մեքենայացում, կապ,
- շենքերի և շինությունների ինժեներական սարքավորումներ,
- տրանսպորտային միջոցներ,
- գործամասերի տարածքները մաքրող մեքենաներ:

Տեղային նախահաշվի կազմման սկզբնական տվյալների համար տեխնիկական և ինժեներական սարքավորումների ձեռքբերմանը ծառայում են կառուցողական գործարանների սարքավորումներին բնորոշող, պայմանագրային փաստաթղթերի տեխնիկական մասի գծագրերը, գործարանային գնացուցակը և սարքավորումների բորսային տեղեկագրերի մեծածախ արժեքը: Մեծածախ գնի վրա հիմնված սարքավորումների արժեքը ներառում է սարքավորումների՝ դեպի շինարարական պահեստ մատակարարման ծախսերը, ապրանքափաթեթի փաթեթավորման և բեռնաբարձման-բեռնաթափման ծախսեր, սարքավորումների համալրման և մթերման պահեստների ծախսերը:

Գործիքների, արտադրական ու տնտեսական գույքի նախահաշվային արժեքը, որն անհրաժեշտ է սարքավորումների սկզբնապես կառուցման, արտադրական շենքերի վերակառուցման և ընդլայնման համար որոշվում է՝ ելնելով տրանսպորտային և նախապատրաստապահեստավորման ծախսերի, տիպային հավաքումը պահանջվող գործիքների ու գույքի, և ամփոփագրման գնի հաշվառմամբ:

Հասարակական և վարչական շենքերի համար նախատեսված սարքավորումների և գույքի արժեքն որոշվում է շենքերի կառուցման համար համանման ծախսերի հաշվառմամբ:

Ինչպես հայտնի է, շուկայական հարաբերությունների անցման ժամանակաշրջանում տնտեսությունը բնութագրվում էր շատ բարձր արժեզրկման մակարդակով և անկայուն վիճակի պայմաններով, ուստի հնարավոր չէր մշակել ինչ-որ ժամանակաշրջանի նկատմամբ միավոր արժեք առանձին աշխատանքի ձևի, մեքենա-հերթափոխի, մեքենաների և սարքավորումների շահագործման արժեքներ, սահմանել աշխատավարձի մակարդակ: Այս ամենի հետ կապված՝ վերջին տարիներին մշակվել են և լայն կիրառում են ստացել նախահաշվային արժեքի գործակիցները ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից հաստատված տեղեկագրերում: Նախահաշիվներում շինարարատեղակայման աշխատանքների նախահաշվային արժեքը խորհուրդ է տրվում որոշել նախահաշվային գների բազիսային և ընթացիկ մակարդակով:

Արժեքի բազիսային մակարդակը որոշվում է փաստացի ժամկետում ֆիքսված գների մակարդակով: Նախահաշվային արժեքի բազիսային մակարդակը նախատեսված է ներդրումային գործունեության տարբեր ժամանակարջանի արդյունքների համեմատման տնտեսական վերլուծության և ընթացիկ գներով արժեքի որոշման համար:

Արժեքի ընթացիկ մակարդակը մինչև նախահաշիվների կազմման պահը կամ մինչև նախագծի իրականացման պահը ձևավորված գների մակարդակն (կանխորոշված գներ) է:

Նախկինում միասնական գների և դասիչների միջոցով նրանց ընթացիկ ժամանակաշրջանի գների մասշտաբին բերելու նախահաշվի կազմման մեթոդն անվանում են բազիսադասիչային:

Պաշարային մեթոդը նախագծային խնդիրների իրականացման համար անհրաժեշտ պաշարների հաշվարկն է ընթացիկ՝ կանխորոշվող գներով և տարիֆներով։

Շինարարության արժեքի որոշման պաշարային մեթոդը նախահաշիվների կազմման եղանակ է, որի դեպքում, ըստ աշխատանքների տեսակների, ցույց են տրվում նյութատեխնիկական պաշարների, ժամանակավոր մեքենաների և սարքավորումների, աշխատողների աշխատավարձի ծախսերը բնական չափման միավորներով, իսկ նշված պաշարների համար ընդունվում են նախահաշիվների կազմման պահին գործող ընթացիկ գներն ու տարիֆները։ Այս մեթոդը թույլ է տալիս որոշել շենքերի շինարարության նախահաշվային արժեքը ժամանակի ցանկացած պահի համար, ինչպես նաև հաշվի առնել շինարարության ընթացքում պաշարների լրացուցիչ ծախսը։ Աշխատանքների արտադրության համար անհրաժեշտ ռեսուրսները որոշվում են՝ ելնելով նախագծային նյութերից, տարբեր նորմատիվային և այլ աղբյուրներից։

Տեղային նախահաշվային հաշվարկների (նախահաշիվների) մշակումը ռեսուրսային մեթոդի կիրառման դեպքում իրականացվում է հետևյալ հաջորդականությամբ. առաջին փուլում կազմվում է լոկալ նախահաշվի ամփոփագիրը (տե՛ս Գծապատկեր 3.1), երկրորդ փուլում՝ լոկալ նախահաշվային հաշվարկը՝ (նախահաշիվ) Գծապատկեր 3.2-ում բերված ձևով։

Օբյեկտային նախահաշվի հաշվարկը կազմվում է յուրաքանչյուր շենքի և շինության շինարարության հիման վրա և որոշվում է բոլոր ծախսերի ընդհանուր չափը՝ կապված տվյալ օբյեկտի կառուցումից։ Օբյեկտային նախահաշիվը կազմվում է շենքի տեղային նախահաշիվներից հաշվարկի առանձին ձևի աշխատանքների և ծախսերի, կառույցների և ընդհանուր հրապարակի աշխատանքների հիման վրա։ Օբյեկտային նախահաշիվները իրենց կազմում միավորում են տվյալներ ընդհանուր օբյեկտի տեղային նախահաշիվները և հանդիսանում են նախահաշվային փաստաթղթեր, որոնց հիման վրա ձևավորվում են շինարարական արտադրանքի ազատ (պայմանագրային) գները։ Օբյեկտային նախահաշվի մեջ ներառվում են բոլոր ձևի շինարարական և մոնտաժային աշխատանքների արժեքները, սարքավորումների և գույքի ծախսերը։

Օբյեկտի լրիվ նախահաշվային արժեքի որոշման նպատակով, որն անհրաժեշտ է պատվիրատուի և կապալառուի միջև գների ընթացիկ մակարդակի հաշվարկման համար, օբյեկտային նախահաշվի վերջում կառուցողական և մոնտաժային աշխատանքների արժեքում լրացուցիչ ներառվում են լիմիտային ծախսերի ծածկման համար հետևյալ միջոցները.

- ձմռան շրջանում կատարվող աշխատանքների թանկացում և նմանատիպ այլ ծախսեր, որոնք ներառվում են շինարարա-տեղակայման աշխատանքների նախահաշվային արժեքում,
- այլ աշխատանքներ և ծախսեր, որոնք որոշվում են տեղային նախահաշվի աշխատանքների յուրաքանչյուր տեսակի արժեքի, ծախսերի կամ շինմոնտաժային աշխատանքների վերջնահաշ-վարկի հիման վրա տոկոսային հարաբերությամբ,
- չնախատեսված աշխատանքների և ծախսերի պահուստ, որը նա-խատեսված է շինարարության արժեքի ամփոփ նախահաշվային հաշվարկում, կապալառուի ծախսերի փոխհատուցման համար նախատեսված մասում, որի չափը որոշվում է պատվիրատուի և կապալառուի համաձայնության միջոցով:

Եթե օբյեկտի արժեքը կարող է որոշվել մեկ տեղային նախահաշվով, ապա օբյեկտային նախահաշիվ չի կազմվում: Այս դեպքում օբյեկտային նախահաշվի դերը կատարում է տեղային նախահաշիվը, որի վերջում նշվում են սահմանափակ ծախսերի ծածկման համար միջոցները նույն կարգով, ինչ օբյեկտային նախահաշվում: Օբյեկտ և շինություն հասկա-ցությունների համընկման դեպքում շինարարության արժեքի ամփոփ նախահաշվային հաշվարկում ներառվում են նաև տեղային նախահաշիվ-ներից տվյալներ: Օբյեկտային նախահաշիվների հաշվարկի ժամանակ յուրաքանչյուր տողում և արդյունքում բերվում են շենքերի և շինություն-ների ծավալի, մակերեսի, երկարության միավոր արժեքի ցուցանիշներ:

Օբյեկտային նախահաշվային հաշվարկի հանրագումարում տեղե-կագրային կարգով նշվում են գումարները, որոնք հանդիսանում են վերադարձվող գումարներ, որոնք որոշվում են այդ օբյեկտին վերաբերող բոլոր լոկալ նախահաշվային հաշվարկներում:

Գծապատկեր 3.3-ում պատկերված է օբյեկտային նախահաշվային հաշվարկի ձևը:

_____

(շինարարության անվանումը)

ԼՈԿԱԼ ՌԵՍՈՒՐՍԱՅԻՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ N_____

_____ համար

(աշխատանքների և ծախսերի անվանումները, օբյեկտի անվանումը)

Հիմնավորումները. գծագրեր N _____

N	Ծածկագիր, նորմատիվների համարները և ռեսուրսների կոդերը	Աշխատանքների և ծախսերի անվանումները, սարքավորումների բնութագրերը և նրանց քաշը	Չափման միավորը	Քանակը	
				միավորի համար	ընդհանուրի համար
1	2	3	4	5	6

Կազմեց _____

պաշտոնը, ստորագրությունը (ազգանուն, անուն, հայրանուն)

Ստուգեց _____

պաշտոնը, ստորագրությունը (ազգանուն, անուն, հայրանուն)

Գծապատկեր 3.1: *Լոկալ պաշարային ամփոփագիր*

Կազմակերպությունների, շենքերի և շինությունների շինարարության արժեքի ամփոփ նախահաշվային հաշվարկը փաստաթուղթ է, որն որոշում է նախագծով նախատեսված բոլոր օբյեկտների շինարարության վերջնականապես ավարտման համար անհրաժեշտ միջոցների նախահաշվային սահմանը:

Շինարարության արժեքի հաստատված ամփոփ նախահաշվային հաշվարկը հիմք է ծառայում կապիտալ ներդրումների սահմանի որոշման և շինարարության ֆինանսավորումը սկսելու համար: Շինարարության արժեքի հաստատված ամփոփ նախահաշվային հաշվարկը հիմք է ծառայում շինարարության կապիտալ ներդրումների և ֆինանսավորման լիմիտը որոշելու համար:

_____

(շինարարության անվանումը)

ԼՈԿԱԼ ՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՀԱՇՎԱՐԿ N_____

(լոկալ նախահաշիվ)

_____ համար

(աշխատանքների և ծախսերի անվանումները, օբյեկտի անվանումը)

Հիմնավորումները. գծագրեր N _____

Նախահաշվային արժեքը _____մլն.դր.

Աշխատանքների վճարման միջոցները _____մլն.դր.

Կազմված ընթացիկ (կանխորոշվող) գների մակարդակում _____20__թ.

N	Ծածկագիր, նորմատիվների համարները և ռեսուրսների կոդերը	Աշխատանքների և ծախսերի անվանումները, սարքավորումների բնութագրերը և նրանց քաշը, միավորին ընկնող ռեսուրսների ծախսը	Չափման միավորը	Միավորների քանակը ըստ նախագծային տվյալների	Նախահաշվային արժեքը դրամ			
					բազիսային մակարդակում		ընթացիկ մակարդակում	
					միավորի համար	ամբողջի համար	միավորի համար	ամբողջի համար
1	2	3	4	5	6	7	8	9

Կազմեց _____

պաշտոնը, ստորագրությունը (ազգանուն, անուն, հայրանուն)

Ստուգեց _____

պաշտոնը, ստորագրությունը (ազգանուն, անուն, հայրանուն)

Գծապատկեր 3.2: *Տեղային նախահաշվային հաշվարկ*

Ամփոփ նախահաշվային հաշվարկի ձևը պատկերված է Գծապատկեր 3.4-ում: Նրանում ներառված են բոլոր օբյեկտային նախահաշվային հաշվարկի համաձայն առանձին տողերի հանրագումարները: Ամփոփ նախահաշվային հաշվարկի յուրաքանչյուր տողը համապատասխանում է տվյալ օբյեկտային նախահաշվային հաշվարկի առանձին օբյեկտների, ծախսերի ու աշխատանքի տվյալներին և հղում է տալիս նշված փաստաթղթերի համարներին: 1-12 գլուխների ամփոփումից հետո շինարարության նախահաշվային արժեքի ամփոփ նախահաշվային հաշվարկում ներառվում է չնախատեսված աշխատանքների և ծախսերի համար միջոցների պահուստը, որը նախատեսված է աշխատանքների և ծախսերի արժեքի հաստուցման համար: Վերջիններիս պահանջը առաջանում է աշխատանքային փաստաթղթերի մշակման ընթացքում կամ շինարարության ընթացքում

նախագծային որոշումների կամ շինարարության պայմանների ճշտման ժամանակ: Պահուստը սահմանվում է առավելագույնը 2%-ի չափով սոցիալական ոլորտի օբյեկտների և 3%-ի չափով արտադրական նշանակության օբյեկտների համար 1-12 գլուխների արդյունքից:

Ամփոփ նախահաշվային հաշվարկի հանրագումարում նշվում են վերադարձելի գումարները, որոնք հաշվի են առնում՝

- ժամանակավոր շենքերի և շինությունների քանդման արդյունքում ստացված նյութերի և դետալների արժեքը, որը կազմում է ժամանակավոր շինությունների նախահաշվային արժեքի 15%-ը,
- նյութերի արժեքը՝ ստացված շենքերի ու շինությունների մասնատման և փոխադրման արդյունքում, ինչպես նաև զուգընթաց ստացվող նյութերի արժեք:

_____

(շինարարության անվանումը)

ՕԲՅԵԿՏԱՅԻՆ ՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՀԱՇՎԱՐԿ N_____

(օբյեկտային նախահաշիվ)

_____շինարարության համար

(օբյեկտի անվանումը)

Նախահաշվային արժեքը _____մլն.դր.

Աշխատանքի վճարման միջոցները _____մլն.դր.

Կազմված գներով _____20__թ./_____20__թ.

N	Նախահաշվային հաշվարկների (նախահաշիվների) համարները	Աշխատանքների և ծախսերի անվանումները	Նախահաշվային արժեքը մլն.դր.					Աշխատանքի վճարման միջոցներ	Միավոր արժեքի ցուցանիշ
			շինմոնտաժային աշխատանքներ	սարքավորումներ, գույք	այլ ծախսեր	ընդհանուր			
1	2	3	4	5	6	7	8	9	10

Նախագծի գլխավոր ճարտարագետ_____

(ազգանուն, անուն, հայրանուն)

Բաժնի _____ վարիչ _____

(անվանումը) (ազգանուն, անուն, հայրանուն)

Կազմեց _____

պաշտոնը, ստորագրությունը (ազգանուն, անուն, հայրանուն)

Ստուգեց _____

պաշտոնը, ստորագրությունը (ազգանուն, անուն, հայրանուն)

Գծապատկեր 3.3: *Օբյեկտային նախահաշվային հաշվարկ*

Շինարարության ամփոփ նախահաշվային հաշվարկը կազմվում է ընթացիկ գների մակարդակով: Արտադրական և բնակելի-հասարակական շինարարության ամփոփ նախահաշվային հաշվարկի արժեքի միջոցները բաժանվում են հետևյալ գլուխների.

- Գլուխ 1: Շինարարության տարածքի նախապատրաստում:
- Գլուխ 2: Շինարարության հիմնական օբյեկտներ:
- Գլուխ 3: Օժանդակ և ծառայողական նշանակության օբյեկտներ:
- Գլուխ 4: Էներգետիկ տնտեսության օբյեկտներ:
- Գլուխ 5: Տրանսպորտային տնտեսության և կապի օբյեկտներ:
- Գլուխ 6: Արտաքին ցանցեր և շինություններ՝ ջրամատակարարման, կոյուղու, ջերմամատակարարման և գազամատակարարման:
- Գլուխ 7: Տարածքի բարելավում և կանաչապատում:
- Գլուխ 8: Ժամանակավոր շենքեր և շինություններ:
- Գլուխ 9: Այլ աշխատանքներ և ծախսեր:
- Գլուխ 10: Տնօրինության հետ կապված ծախսեր (տեխնիկական հսկողություն):
- Գլուխ 11: Շահագործող կադրերի պատրաստում:
- Գլուխ 12: Նախագծային և հետազոտական աշխատանքներ (հեղինակային հսկողություն):

Գլուխներում ներառված օբյեկտների, աշխատանքների և ծախսերի բաշխումը ընթանում է՝ համաձայն ճյուղերի շինարարության արժեքի ամփոփ նախահաշվային հաշվարկի անվանացուցակի: Մի քանի տեսակի ավարտված արտադրությունների կամ համալիրի առկայության դեպքում (որոնցից յուրաքանչյուրն ունի մի քանի օբյեկտ), գլուխներում կարող է իրականացվել խմբավորում, որոնց անվանումը համապատասխանում է արտադրության (համալիրի) անվանմանը:

Տնտեսության առանձին ճյուղերի՝ արդյունաբերության, շինարարության համար կարող են փոփոխվել ամփոփ նախահաշվային հաշվարկի գլխի անվանումը և անվանացուցակը՝ հիմնվելով պետական կառույցների կողմից հաստատված նախագծի նորմատիվային փաստաթղթերի վրա: Մասնավորապես՝ ջրաէլեկտրակայանների և այլ ջրատեխնիկական կա-

ռույցների շինարարության համար ամփոփ նախահաշվային հաշվարկում ավելանում է գլուխը 13-ը՝ «Միջոցառումներ կապված ջրամբարի գոտու նախապատրաստման համար»:

Շինմոնտաժային, վերանորոգման աշխատանքներ կատարող կազմակերպությունների համար հարկվող է համարվում իրացված շինարարական արտադրանքի (աշխատանքներ, ծառայություններ) արժեքը, որը հաշվարկվում է՝ ելնելով ազատ (պայմանագրային) գներից: Շինարարության նախահաշվային փաստաթղթերի կազմման դեպքում, անկախ նրանից, այն կազմվում է կապալային թե տնտեսական եղանակով, ամփոփ նախահաշվային հաշվարկում պետք է ներառել այդ հարկի վճարման համար անհրաժեշտ միջոցները:

Ըստ շինարարության ամփոփ նախահաշվային հաշվարկի՝ ԱԱՀ-ի գումարը կազմում է վերջնական տվյալների 20%-ը և նշվում է առանձին տողով՝ (4-8 սյունակներում) «ԱԱՀ վճարման ծախսերի ծածկման միջոցներ» վերնագրով:

Հաստատման ներկայացված նախագծի կազմում ամփոփ նախահաշվային հաշվարկին կցվում է բացատրագիր, որտեղ բերված են.

- շինարարության վայրի տարածքային շրջանի հողում,
- նախահաշվային գների մակարդակը, որոնցով կազմված է հաշվարկը:
- Օբյեկտի շինարարության նախահաշվի կազմման համար ընդունված նախահաշվային նորմատիվների փաստագրքերի ցանկը:
- Գլխավոր կապալառու հանդիսացող կազմակերպության անվանումը:
- Տվյալ շինարարության համար շինարարական աշխատանքների նախահաշվային արժեքի որոշման յուրահատկությունները:
- Հավաք նախահաշվային հաշվարկի 8-12 գլուխներում տվյալ շինարարության միջոցների որոշման առանձնահատկությունները:
- Ըստ կապիտալ ներդրումների ուղղվածության՝ միջոցների տեղաբաշխման հաշվարկը:

Պատվիրատու մարմին _____

«Հաստատված է»

Հավաք նախահաշվային հաշվարկ _____մլն. դր. գումարով

Այդ թվում վերադարձվող գումարներ _____ մլն. դր.

_____

(քաղվածք փաստաթղթերի հաստատման մասին)

« »_____20___թ.

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՐԺԵՔԻ ՀԱՎԱՔ ՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ԱՐԺԵՔԸ

_____

(շինարարության անվանումը)

Կազմված է _____20___թ./_____20___թ. գներով

N	Նախահաշվային հաշվարկների և նախահաշիվների համարները	Գլուխների, օբյեկտների, աշխատանքների և ծախսերի անվանումները	Նախահաշվային արժեքը, մլն.դր.				Ընդհանուր նախահաշվային արժեքի դիմաց
			շինարարական աշխատանքների	տեխնոլոգիական սարքավորումների	գույք, կահույք, գործիքներ	այլ ծախսեր	
1	2	3	4	5	6	7	8

Շինարարական կազմակերպության ղեկավար _____

(ազգանուն, անուն, հայրանուն)

Նախագծի գլխավոր ճարտարագետ _____

(ազգանուն, անուն, հայրանուն)

Բաժնի _____ վարիչ _____

(անվանումը) (ազգանուն, անուն, հայրանուն)

Պատվիրատու _____

(ազգանուն, անուն, հայրանուն)

Գծապատկեր 3.4: *Շինարարության արժեքի ամփոփ նախահաշվային հաշվարկ*

Եթե նախագծով նախատեսված են օբյեկտների շինարարությանը մասնակցող մի քանի կառուցապատողներ, ապա ամփոփ նախահաշվային հաշվարկում նշվում են շինարարությունում մասնակցության մասով նրանցից յուրաքանչյուրի ծախսերը:

Խոշոր՝ հատկապես էներգետիկական և արդյունաբերական նշանակության, օբյեկտների շինարարության դեպքում, երբ շինարարությունում կապիտալ ներդրումների դուրսգրման հետ միաժամանակ օբյեկտի շինարարության համար նախատեսվում են բնակարանային-քաղաքացիական

կամ շինարարական արդյունաբերությունների բազաների շինարարության համար կապիտալ ներդրումներ, կազմվում են առանձին ամփոփ նախահաշվային հաշվարկներ, որոնք ներառվում են ծախսերի ամփոփագրում: Շինարարության ամբողջական նախահաշվային արժեքը տվյալ դեպքերում որոշվում է ծախսերի ամփոփագրով՝ միավորելով երկու կամ ավելի հանրագումարային նախահաշվային հաշվարկներ: Ծախսերի ամփոփագիրը պատկերված է Գծապատկեր 3.5-ում:

Պատվիրատու մարմին _____

«Հաստատված է»

Հավաք նախահաշվային հաշվարկ _____ մլն. դր. գումարով

Այդ թվում _____ մլն. դր. վերադարձվող գումարներ

_____

(քաղվածք փաստաթղթերի հաստատման մասին)

« »_____20___թ.

ԾԱԽՍԵՐԻ ԱՄՓՈՓԱԳԻՐ

_____

(շինարարության անվանումը)

Կազմված է _____20___թ./_____20___թ. գներով

Ծախսերի անվանումը	Արտադրական նշանակության օբյեկտներ	Բնակելի նշանակության օբյեկտներ	Ընդամենը մլն.դր.
1	2	3	4
Շինարարական և տեղակայման աշխատանքների, կահույքի և գույքի, սարքավորումների, այլ ծախսերի նախահաշվային արժեքը			
Ամբողջ նախահաշվային արժեքը, այդ թվում՝ վերադարձվող գումարները ԱԱՀ			

Շինարարական կազմակերպության ղեկավար_____

(ազգանուն, անուն, հայրանուն)

Նախագծի գլխավոր ճարտարագետ _____

(ազգանուն, անուն, հայրանուն)

Բաժնի _____ վարիչ _____

(անվանումը) (ազգանուն, անուն, հայրանուն)

Պատվիրատու _____

(ազգանուն, անուն, հայրանուն)

Գծապատկեր 3.5: *Ծախսերի ամփոփագիր*

3.5.Պայմանագրային գինը շինարարությունում

Շինարարության միջազգային պրակտիկայում, նաև Հայաստանում, շինարարության օբյեկտի կապալառուն, որպես կանոն, հիմնականում որոշվում է մրցույթի անցկացման միջոցով: Այսպիսի պայմաններում նախահաշվի կառուցվածքը ձևավորում է պատվիրատուն՝ հավաք նախահաշվային հաշվարկն առանձին գլուխների բաժանելու միջոցով, որոնց կատարման համար պատվիրատուն հրավիրում է տարբեր կապալառուների: Այդպիսի աշխատանքները կոչվում են *լոտ*: Նախագծողը կամ պատվիրատուն, պատվիրատուի առաջադրանքին համապատասխան, մրցութային փաստաթղթերը պատրաստելով, նախագիծը բաժանում է առանձին լոտերի: Դրանք կարող են լինել ինչպես առանձին կառույցներ, այնպես էլ աշխատանքի առանձին տեսակներ (հողաժայռային, բետոնային և այլն): Յորաքանչյուր լոտի արժեքը որոշվում է կա՛մ տեղային նախահաշվով, կա՛մ օբյեկտայինով, կա՛մ մի քանի օբյեկտային և տեղային նախահաշիվների հանրագումարով: Բոլոր լոտերի նախահաշվային արժեքների գումարը արտացոլվում է ամփոփ նախահաշվային հաշվարկում: Նախագծողի կողմից կազմված նախագծանախահաշվային փաստաթղթերը հանդիսանում են պատվիրատուի սեփականությունը: Այդպիսի պայմաններում նախագծում որոշված օբյեկտի շինարարության արժեքը հանդիսանում է պատվիրատուի առևտրային գաղտնիքը: Կապալառուն կամ կապալառուները մտադրված մասնակցում են առևտրին, որպեսզի մրցութային փաստաթղթերը գնեն ոչ մեծ գնով, քանի որ նրանք են որոշում կառուցվող օբյեկտի շինարարության արժեքը:

Մրցութային առաջարկների գնահատականը և կապալառուի ընտրությունն որոշվում է մի շարք փաստաթղթերով, որոնցից գլխավորներն են. պահանջներին համապատասխան առաջարկվող գին և աշխատանքների կատարման երաշխիք, կապալային շինմոնտաժային կազմակերպության հեղինակությունը, տեխնիկական և տեխնոլոգիական առաջարկները, արտադրության աշխատանքների տեխնոլոգիան մեթոդները, ենթակառուցվածքի առկայությունը, ֆինանսավորման պայմանները և ֆինանսավորման երաշխիքները: Հանրագումարի ամփոփումից և կապալառուի որոշումից հետո պատվիրատուի և կապալառուի միջև կնքվում է պայմանագիր, որով

կատարվում են մրցույթով կամ առանձին լոտերով որոշված աշխատանքների ծավալները: Պատվիրատուի և կապալառուի համար պայմանագրի կարևոր հոդվածներից է հանդիսանում պայմանագրի գինը, որը հիմնականում որոշվում է փոխադարձ ընդունելի ֆինանսատնտեսական պայմաններով: Մինչ պայմանագրային գնի քննարկումը սկսելը պատվիրատուն նախագծողի հետ ծանոթանում է նախահաշվին: Կապալառուն մրցութային առաջարկների փաթեթում պատվիրատուին ներկայացնում է շինարարության արժեքի իր գինը, որով էլ նշվում են արտադրության ենթադրող ծախսերը և պլանավորված շահույթը: Խիստ հազվադեպ է պատահում, որ պատվիրատուն և կապալառուն միանգամից փոխադարձ ընդունելի որոշման գան: Մեծմասամբ վերջնական որոշումները ընդունվում են լարված բանակցությունների, փոխզիջման միջոցով և կապալառուի կողմից հիմնավորված գնագոյացման և նախահաշվային արժեքի ձևավորման հարցերին համապատասխան:

Շինարարական արտադրանքի արժեքի որոշումը իրականացվում է ներդրողի (պատվիրատուի) և կապալառուի միջև կապալային պայմանագրի կնքման գործընթացում: Արժեքի որոշման ընթացքում խորհուրդ է տրվում կազմել.

- ներդրումային նախահաշիվ (հաշիվներ, ծախսերի կալկուլացիա), մշակվում է ներդրողի պատվերի համաձայն՝ նախանախագծման կամ նախագծանախահաշվային փաստաթղթերի ժամանակ,
- վերջնական պայմանագրի պատրաստման հաշիվներ (նախահաշիվ, արտադրության ծախսերի հաշվարկ), մշակվում է ներդրողի կողմից տրված մրցութային փաստաթղթերի հիման վրա առևտրի ժամանակ:

Ներդրողի և կապալառուի նախահաշիվները կարող են կազմվել տարբեր մեթոդներով, որի ընտրությունը, կախված պայմանագրային հարաբերություններից, ընդհանուր տնտեսական իրավիճակից և պայմաններից իրականացվում է յուրաքանչյուր կոնկրետ դեպքում:

Կապալառուի հաշիվները խորհուրդ է տրվում կազմել ընթացիկ մակարդակի համար՝ օգտագործելով ներդրողի փաստաթղթերում պարու-

նակվող տվյալ աշխատանքի ծավալների և պաշարների պահանջի վերաբերյալ համաձայնեցված տվյալները:

Պատվիրատուն և կապալառուն ընթացիկ մակարդակի արժեքի հիման վրա որոշում են նախահաշվային փաստաթղթերի կազմը, ձևավորում են շինարարական արտադրանքի պայմանագրային գինը: Պայմանագրային գինը կարող է լինել *բաց* (մոտավոր)՝ շինարարության ընթացքում պայմանագրի պայմաններին համապատասխան ճշտելով կամ *հաստատուն* (կայուն):

Շինարարության արտադրանքի պայմանագրային գնի ձևավորումը, որպես կանոն, հիմնականում իրականացվում է կապալային առևտրի մրցույթ անցկացնելու միջոցով:

Պատվիրատու (գլխավոր կապալառու) _____

(անվանումը)

Գլխավոր կապալառու -(ենթակապալառու) _____

(անվանումը)

Կազմված է ըստ _____

(նախահաշվային կամ այլ փաստաթղթերի մեջբերում)

և համարվում է կցված կապալառուի (ենթակապալառուի) պայմանագրին

N° _____ մինչ « » _____ 20 ____ թ.

_____

(կառույցի և շին. արտադրանքի անվանումը)

Ազատ (աճուրդային) գնի համաձայնեցման արձանագրություն

_____

(շին. արտադրանքի անվանումը)

Նախահաշվային հաշվարկների (նախահաշվի կամ այլ փաստաթղթերի համար	Օբյեկտի աշխատանքի և ծախսերի անվանումը	Ազատ(աճուրդային) գնին ավելացված արժեք				Արտադրանքի ազատ (աճուրդային) գին
		կապալային աշխատանքների այդ թվում			վճարումներ և վերադիր ծախսեր	
		շինարարական	մոնտաժային	այլ		
1	2	3	4	5	6	7

Գծապատկեր 3.6: *Ազատ (աճուրդային) գնի համաձայնեցման արձանագրություն*

Կապալային պայմանագրերը կարգավորում են օրենքին համապատասխան: Կապալային առևտրի անցկացման դեպքում շինարարության պայմանագրային գինը սահմանվում է կապալառուի ներկայացրած գնահատումից և առաջարկների համադրումից հետո: Որոշ դեպքերում, երբ առևտուրը չի անցկացվում, նրա հիմնավորումը համաձայնեցվում է կապալառուի և պատվիրատուի միջև:

Համատեղ ընդունած որոշման ժամանակ շինարարական արտադրանքի համար ձևակերպվում է պայմանագրային գնի համաձայնեցման արձանագրություն, որը հանդիսանում է կապալային պայմանագրի անբաժան մասը (տե՛ս Գծապատկեր 3.6):

Շինարարական արտադրանքի համար պատվիրատուի և կապալառուի կողմից ընդունված պայմանագրային գինը կարող է վերանայվել կողմերի համաձայնության դեպքում:

Շինարարական արտադրանքի պայմանագրային գնի սահմանումից և սարքավորումների արժեքների ճշտումից հետո պատվիրատուն, անհրաժեշտության դեպքում, ճշտում է մտցնում ներդրումային նախահաշվում՝ շինարարության իրականացման համար ամբողջական միջոցները սահմանելու նպատակով: Շինարարական արտադրանքի պայմանագրային գնի վերջնական արդյունքից հետո առանձին տողով նշվում է ԱԱՀ-ի գումարը:

3.6.Շինմոնտաժային աշխատանքների որոշման մեթոդական մոտեցումները և շինարարական արտադրանքի արժեքը

Գոյություն ունի շինմոնտաժային աշխատանքների և շինարարական արտադրանքի արժեքի որոշման հնարավոր 3 եղանակ՝ ծախսերով որոշված գների նվազագույն մակարդակ, պահանջարկով որոշված գնի առավելագույն մակարդակով և գնի հնարավոր օպտիմալ մակարդակով (տե՛ս Գծապատկեր 3.1):

Գոյություն ունեն գնի հաշվարկման մի քանի հիմնական մեթոդներ.

«Ծախսերին գումարած ֆիքսված շահույթի» մեթոդը ամենապարզ և ամենատարածված մեթոդն է: Կապալառու ֆիրմայի կողմից ավելացվող հավելագնի չափը կարող է լինել ստանդարտ աշխատանքների յուրաքանչյուր տեսակի համար, սակայն տարբերվել՝ ըստ աշխատանքի տե-

սակի, ըստ աշխատանքի միավոր արժեքի և այլն: Սակայն ստանդարտ հավելագինը չի թույլատրում յուրաքանչյուր կոնկրետ դեպքում հաշվի առնել պահանջարկի և մրցակցության առանձնահատկությունները, հետևաբար որոշել օպտիմալ գինը: Այնուամենայնիվ մեթոդը մեծ տարածում ունի, որը բացատրվում է 3 պատճառներով՝

- որքան էլ որ կապալառուները հանգամանորեն ուսումնասիրեն պատվիրատուի պահանջները և մրցակիցների գները, ամեն դեպքում նրանք ավելի լավ տեղեկացված են ծախսերից: Այդ պատճառով էլ գները սահմանում են ծախսերի բազայի վրա հիմնված և պարտավոր չեն ամեն անգամ վերանայել՝ հետևելով պահանջարկի տատանումներին,
- ընդունված է, որ սա ամենաարդար մեթոդն է և՛ կապալառուի, և՛ պատվիրատուի համար,
- այս մոտեցումը նվազեցնում է գնային մրցակցությունը, քանի որ շինարարական ճյուղի բոլոր ֆիրմաները գները հաշվարկում են միևնույն սկզբունքով՝ միջին ծախսեր գումարած շահույթ: Այդ պատճառով էլ նրանց գներն իրար մոտ են:

Գների նվազագույն մակարդակ	Գների հնարավոր օպտիմալ մակարդակը			Գնի առավելագույն մակարդակ
Ստացված շահույթ	Շին. արտադրանքի ինքնարժեքը (շինմոնտաժային աշխատանքներ)	Մրցակիցների գինը	Շինարարական արտադրանքի առավելու-թյունները	Պահանջարկի ձևավորումը

Գծապատկեր 3.7: *Գնի նշանակման հիմնական մոտեցումները*

«Պահանջարկի վրա հիմնված» մեթոդը նույնպես հիմնված է ծախսերի վրա և բխում է նպատակային շահույթի ստացումից: Այս դեպքում գինը ձևավորվում է կապալառու ֆիրմայի կողմից ցանկալի շահույթի հաշվարկի միջոցով: Գործնականորեն այս մեթոդը կենտրոնացված է պահանջարկի

վրա, քանի որ ֆիքսված գնի դեպքում շահույթի մեծությունը որոշվում է շինմոնտաժային աշխատանքների ծավալով:

«Մրցակցության վրա հիմնված» մեթոդ. կապալառու ֆիրման հիմնականում մրցակցային ցուցանիշները հաշվի չի առնում, և գինը նշանակվում է շուկայում ձևավորված ընթացիկ գնի հիման վրա, քիչ ուշադրություն է դարձվում սեփական ծախսերի և պահանջարկի ցուցանիշների վրա: Եթե դժվար է որոշել պահանջարկի ճկունությունը, կարող է թվալ, որ շուկայում ձևավորված և ֆիրմայի կողմից ընդունված ընթացիկ գնի մակարդակը շահույթի արդար նորմայի ստացման գրավականն է: Բացի այդ ֆիրման կարող է կարծել, գների նման մակարդակի վրա մնալ նշանակում է պահպանել շուկայի նորմալ հավասարակշռությունը:

«Փորձնական վաճառքի» մեթոդը ամենաարդյունավետն է շինարարական արտադրանքի իրացվելիության համար: Շինմոնտաժային աշխատանքների, շինարարական արտադրանքի և ծառայությունների «իրացվելիության» քանակական գնահատման ավելի արդյունավետ մեթոդն է հանդիսանում ապրանքի իրացվելիության փորձնական առաջարկները: Այս մեթոդը կիրառվում է այն դեպքերում, երբ բացակայում է շուկայի մասին անհրաժեշտ տեղեկատվությունը: Շինարարական արտադրանքի շրջանակներում փորձնական վաճառքը կարող է օգտագործվել առաջին հերթին ձեռք բերված անհատական ոչ առևտրային օգտագործման համար նախատեսված շինարարական նյութերի և պատրաստվածքների համար:

«Նոր շինարարական նյութերի և նոր տեսակի շինարարական արտադրանքների գնի սահմանման» մեթոդ: Շատ երկրների շուկայական գնագոյացման պրակտիկան մշակել է գների առաջացման հետևյալ մեթոդները: Շուկա նոր ապրանքի թողարկման ժամանակ կազմակերպությունը կամ ֆիրման, որպես օրենք, ընտրում են հետևյալ ռազմավարություններից մեկը:

«Սերուցքը հանելու» գին: Արտադրության սկզբից մինչև շուկա հայտնվելը շինարարական ապրանքի վրա դրվում է առավելագույն գին՝ հաշվի առնելով սպառողներին, ովքեր պատրաստ են ապրանքն այդ գնով գնել: Դա թույլ է տալիս նոր սպառողների ներգրավելով ընդլայնել վաճառքի գոտին: Նման մոտեցումն ունի մի շարք առավելություններ՝

- թույլ է տալիս գնի մեջ հեշտությամբ ուղղել սխալները, քանի որ սպառողները ավելի լավ են տրամադրված գների իջեցմանը, քան գների բարձրացմանը,
- բարձր գինը ապրանքի առաջնային թողարկման համեմատաբար բարձր ծախսերի դեպքում ապահովում է բավականին մեծ շահույթ,
- թույլ է տալիս պահպանել սպառողական պահանջարկը, որն ունի որոշակի իմաստ. ավելի ցածր գնի դեպքում ֆիրմաները արտադրական հնարավորությունների սահմանափակման պատճառով չեն կարող բավարարել շուկայի պահանջարկը,
- առաջնային բարձր գինը նպաստում է սպառողների մոտ որակյալ ապրանքի հեղինակության ստեղծմանը, որը կարող է հետագայում գների իջեցման շնորհիվ դյուրացնել նրա սպառումը,
- բարձր գինը նպաստում է պահանջարկի բարձրացմանը ապրանքի հեղինակություն վայելելու դեպքում:

Գնագոյացման նման քաղաքականության հիմնական թերությունը համարվում է այն, որ բարձր գինը գրավում է մրցակիցներին: Դրա համար էլ «սերուցքը հանելու» գինը կարելի է հաջողությամբ կիրառել մրցակցության որոշակի սահմանափակ ժամանակ: Հաջողության պայման է համարվում նաև բավարար պահանջարկը:

«Շուկա ներխուժելու գին»: Կապալառու ֆիրման սահմանում է համեմատաբար ավելի ցածր գին, քան համանման ապրանքների և ծառայությունների մրցակիցների շուկայի գները, որը թույլ է տալիս ներգրավել սպառողների առավելագույն քանակ և գրավել շուկան: Այդպիսի ռազմավարությունը ընդունելի է արտադրության մեծ ծավալների դեպքում, որը հնարավորություն է տալիս ընդհանուր շահույթի զանգվածի մեջ փոխհատուցել առանձին արտադրությունների ժամանակ առաջացած կորուստները: Այդպիսի ռազմավարությունն առաջին հերթին պահանջում է նկատելի ֆինանսական ծախսեր, շուկա ներխուժելու գինը դարձնելով այնպիսին, որ նմանատիպ ֆինանսական ռեսուրսների չտիրապետող փոքր և միջին կազմակերպությունների համար այն անընդունելի է: Վերոնշյալ գնային քաղաքականությունն արդյունք է տալիս ճկուն պահանջարկի,

ինչպես նաև այն դեպքում, երբ արտադրողականության ծավալների մեծացումն ապահովում է ծախսերի իջեցում:

«Զեղչված գների սահմանման» մեթոդ: Որոշակի գործողությունների համար շատ ֆիրմաներ սպառողների համար, որպես պարգևատրություն, պատրաստ են փոփոխել իրենց թողարկային գները: Ընտրելով թվարկված մեթոդներից մեկը՝ կարելի է սկսել գների վերահաշվարկումից: Ընդ որում՝ պետք է հիշել, որ հաշվարկը չի կարող ներառել բոլոր գործոնները, մասնավորապես անհրաժեշտ է հաշվի առնել սպառողների կողմից շինարարական արտադրանքի գնի հոգեբանական ըմբռնումը: Օրինակ՝ շատ պատվիրատուներ և սպառողներ գտնում են, որ գինը համարվում է որակի ցուցանիշ: Հայտնի են ոչ քիչ դեպքեր, երբ գների բարձրացման հետ ավելանում են վաճառքի ծավալները:

Կապալառուն պատվիրատուի հետ պայմանական գնի վերաբերյալ բանակցություններ անցկացնելու ժամանակ բացի սեփական միջոցներով շինարարական աշխատանքներ կատարելիս պետք է հաշվի առնի նաև ապրանքների և ծառայությունների շուկայից ձեռքբերվող հատուկ աշխատանքների կատարման, ինչպես նաև շինարարական նյութերի և դետալների գները: Դրա հետևանքով առաջանում է գների դասակարգման և մասսայական արտադրության ապրանքների գների առանձնացման անհրաժեշտությունը, գումարած շինարարական կոնստրուկցիաների և շինարարական ապրանքների տեսքով շինարարական արտադրանքի, շինմոնտաժային աշխատանքների տեսքով շինարարական արտադրանքի գինը:

Մասսայական ապրանքներ: Շինարարական նյութերը, որպես օրենք, պատրաստողի կողմից իրացվում են մեծածախ գներով: Արտադրող կազմակերպությունը հիմնականում գները սահմանում է այն պայմանով, որ դրանք ապահովվեն ընկերության հետագա տնտեսական գործունեությունը: Այլ կերպ ասած՝ իր արտադրանքը վաճառելով, ընկերությունը պետք է ծածկի իր ծախսերը և ստանա այնքան շահույթ, որ կարողանա գոյատևել շուկայում: Սակայն ընկերությանը ոչ-ոք չի կարող ամբողջական երաշխիք տալ, քանի որ վերջինիս գործունեության առևտրային հաջողությունները կախված են բազմաթիվ շուկայական գործոններից, որոնց

գուշակումն իրենից բավական մեծ դժվարություն է ներկայացնում: Այդ պատճառով էլ կազմակերպության տնտեսական գործունեության վերջնական արդյունքը կարող է լինել ինչպես դրական(շահույթ), այնպես էլ՝ բացասական(վնաս): Դրա համար էլ կազմակերպության մեծածախ գինն ուղղված է արտադրությանը և սերտորեն կապված է վերջինիս հետ:

Ընկերության մեծածախ գնի տեսակներից է համարվում *տրանսպորտային գինը*: Այն կիրառվում է նույն ընկերության ստորաբաժանումների միջև առևտրային գործողությունների կատարման համար: Այսպիսի գնի կիրառումը կարող է էականորեն ազդել շուկայում ֆիրմայի մրցունակության վրա: Այսպիսով, դուստր ընկերությունների կողմից մատակարարվող նյութերի գների իջեցմամբ, կարելի է բարձրացնել հիմնական ընկերության ապրանքների մրցունակությունը:

Բորսայական գին: Շինարարական նյութերի և արտադրանքի բորսայական գինը ձևավորվում է մեծածախ գների հիման վրա՝ հաշվառելով բորսայական գնանշումը, ավելացնելով կամ զեղչելով կախված ապրանքի տեսակից, տեղափոխման հեռավորությունից, որը հաստատվել է բորսայական պայմանագրում:

Մանրածախ գինը: Գին, ըստ որի՝ ապրանքը վաճառվում է՝ բնակչության, ինչպես նաև մի շարք կազմակերպությունների և ընկերությունների համար մանրածախ առևտրի խանութներում: Մանրածախ գնի տեսակ է համարվում նաև աճուրդային գինը:

Աճուրդային գին: Աճուրդում վաճառված ապրանքի գինն է: Աճուրդային գինը կարող է էականորեն տարբերվել շուկայական գնից, քանի որ արտացոլում է ապրանքների հազվագյուտ հատկությունները և հատկանիշները, ինչպես նաև էապես կախված է աճուրդը վարող անձի մասնագիտական աստիճանից: Եվ վերջապես, գնի դասակարգումը կախված է ապրանքը գնորդին փոխանցելու վայրից, այսինքն՝ ֆրանկի տեսակից:

Ֆրանկո վագոն տեղափոխման կայանից: Այս գնի սահմանման համար ապրանքը փոխանցվում է ապրանքի նկատմամբ բոլոր իրավունքներն ունեցող գնորդին, ով ապրանքի նկատմամբ պատասխանատվություն է կրում: Գնորդը վճարում է ապրանքի տեղափոխման համար տրանսպորտային բոլոր ծախսերը: Այս մեթոդի թերությունը կայանում է նրանում, որ

համարվում է ոչ շահավետ հեռվում գտնվող գնորդի համար: Այս գնի յուրահատուկ ձևն է՝ ֆրանկո տրանսպորտային միջոցները մատակարարի պահեստ հասցնելը, ինչպես նաև ապրանքի փոխանցումը արտադրության վայր, շատ հաճախ գնորդի տրանսպրտային միջոց բեռնաբարձումով:

Այսպիսի մեթոդը տարածված է հատկապես մասսայական շինարարական նյութերի համար, օրինակ՝ ավազ, քար, բետոն և այլն: Սրանք արտադրությունում օգտագործվում են մեծ քանակներով, և, որպես օրենք, տեղափոխվում են փոքր տարածությունների վրա:

Ֆրանկո վագոն նշանակման վայրից: Այս դեպքում ֆիրման գանձում է միասնական գին՝ ընդգրկելով նաև տրանսպորտային ծախսերի միևնույն գումարները՝ անկախ հաճախորդի հեռավորությունից: Տեղափոխման գինը հավասար է տրանսպորտային ծախսերի միջին գումարին: Այս դեպքում ավելի մոտ գտնվող հաճախորդները կնախընտրեն այն ընկերությանը, որն օգտվում է այդ մեթոդից ապրանքի արտադրման վայրում, քանի որ գինը նրանց համար կլինի ցածր, քան ավելի հեռու գտնվողների համար:

«Գոտևորված գներ»՝ «ֆրանկո վագոն տեղափոխման վայրից» և «ֆրանկո վագոն նշանակման վայրից» մեթոդների միջև գտնվող գին:

Բոլոր պատվիրատուները, ովքեր գտնվում են մի գոտու սահմանում՝ վճարում են միևնույն ընդհանուր գինը: Այս պայմանով յուրաքանչյուր առանձին գնային գոտու գնորդ չի ստանում ոչ մի գնային առավելություն, սակայն գնային գոտու ներսում ավելի մոտիկ գտնվող հաճախորդները պետք է վճարեն ավելի հեռու գտնվող հաճախորդների տրանսպորտային ծախսերի մի մասը: Բացի դրանից տարբեր գոտիներում գտնվող պատվիրատուները, որոնց հեռավորությունը մի քանի կիլոմետր է՝ պետք է վճարեն տարբեր գներ:

Ըստ բազիսային կետի՝ կիրառվող գները թույլ են տալիս արտադրողին որպես բազիսային կետ ընտրել այս կամ այն քաղաքը և բոլոր պատվիրատուներից գանձել բոլոր տրանսպորտային ծախսերը այն գնով, որը հավասար կլինի այդ կետից տեղափոխմանը՝ անկախ նրանից, թե իրականում որտեղից է կատարվում բարձումը: Եթե բոլոր վաճառողները ընտրեն միևնույն բազիսային կետը, տեղափոխման ծախսերի գինը բոլոր հաճախորդների համար կլինի նույնը և գնային մրցակցությունը կվերանա: Այսօր

մի շարք ֆիրմաներ մեծ ճկունության հասնելու համար որպես բազիսային կետ ընտրում են մի քանի քաղաքներ:

Տեղափոխման տարիֆներ: Սրանք երկաթուղային տրանսպորտի, ավտոմոբիլային տրանսպորտի, գետային և ծովային տրանսպորտի տարիֆներն են: Ապրանքի գինը բացի արտադրական ծախսերից ներառում է նաև շրջանառության ծախսերը, մասնավորապես մինչև գնորդ տեղափոխելու ծախսերը, որոնք մի շարք դեպքերում կազմում են ապրանքի վաճառքի գնի էական մասը, հատկապես տեղական շինարարական նյութերի դեպքում:

Ներկայումս շուկայական հարաբերությունների անցնելու հետևանքով առաջանում է ևս մեկ դասակարգման հատկանիշ, ինչպիսին գների սահմանման ժամանակ պետական ազդեցությունից նրանց ազատ լինելու մակարդակն է: Տարբերում են՝

- *Ազատ գներ*: ազատ են համարվում այն գները, որոնք ձևավորվում են շուկայում տիրող իրավիճակի ազդեցությունից՝ անկախ պետական մարմինների ազդեցությունից: Պետությունը կարող է միջամտել միայն՝ ազդելով շուկայում տիրող իրավիճակի վրա:
- Կարգավորող գներ՝ ձևավորվում են առաջարկի և պահանջարկի ազդեցության ներքո, սակայն զգացվում է պետական մարմինների ազեցությունը, որոնք օգտագործում են մի շարք մեթոդներ՝ կա՛մ ուղղակիորեն սահմանափակելով դրանց աճը կամ նվազումը, կա՛մ շահութաբերության կարգավորմամբ, կա՛մ այլ մեթոդով, որը կիրառելի է էներգակիրների նկատմամբ: Ազատ գների ձևավորման ժամանակ ամեն դեպքում ապրանքի սկզբնական գինը որոշում է արտադրողը այլ ոչ թե վաճառողը: Առևտրային հավելավճարը կարգավորվում է և կազմում է մինչև 25%, ընդ որում՝ տեղական իշխանության օրգանները կարող են այն կարգավորել:

Շինարարական արդյունաբերության գնային քաղաքականության հիմքում շինարարական արտադրանքի վրա ազատ գների կիրառման ոլորտի ընդլայնումն է:

Ազատ գները ձևավորվում են՝ ելնելով նախնական բնույթ կրող արժեքից, որոնք որոշված են պատվիրատուի կողմից նախահաշվային

փաստաթղթերում: Տիպային նախագիծ ունեցող հասարակական նշանակության օբյեկտների համար, նախնական գինը որոշվում է գնացուցակի հիման վրա, իսկ արդյունաբերական նշանակության օբյեկտների գինն որոշվում է «Խոշորացված նախահաշվային նորմերի» հիման վրա: Անհատական նշանակության արդյունաբերական օբյեկտներինը որոշվում է աշխատանքների ծավալների և միավորի ուղիղ հաշվարկով:

Լինում են դեպքեր, երբ շինարարական կազմակերպությունը սեփականատիրական իրավունքներով կառուցում է բնակելի շենքեր շուկայում ուղղակի իրացման համար: Այդպիսի ապրանքը համարվում է անշարժ գույք: Շինարարական կազմակերպությունը, որպես օրենք, չի զբաղվում վաճառքով, այլ օգտվում է միջնորդի օգնությունից: Այս դեպքում պայմանական գինը բացակայում է և ապրանքի գինը ձևավորվում է՝ կախված շուկայում տիրող իրավիճակից ու արտադրական ծախսերից:

3.7.Կատարված աշխատանքների հաշվարկման կարգը, նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննությունը և հաստատումը

Շինարարական գործընթացում կատարված աշխատանքների ընդունման կարգը և ժամկետների հաշվարկները կարգավորվում են կապալային պայմանագրով: Շինմոնտաժային և վերանորոգաշինարարական աշխատանքների հաշվարկների կատարումը կարող է իրականացվել կոնստրուկտիվ տարրերի միջոցով (այդ տարրերի տեխնիկական պատրաստվածության տոկոսով), պայմանագրի համաձայն առանձին փուլերով կամ բոլոր աշխատանքների ավարտից հետո, ինչպես նաև «բանալու տակ»:

«Կազմակերպությունների, շենքերի ու շինությունների շինարարության նախագծային փաստաթղթերի մշակման, համաձայնեցման, հաստատման կարգի և կազմի մասին» (ՇՆևԿ 11.01-95) հրահանգի համաձայն՝ նախահաշվային փաստաթղթերը հանդիսանում են արտադրական նշանակության կազմակերպությունների, շենքերի և շինությունների, ինչպես նաև բնակելի քաղաքացիական նշանակության օբյեկտների շինարարական նախագծերի բաղկացուցիչ մասը և որպես առանձին բաժին մտնում են նախագծի մեջ:

Համաձայն այս հրահանգի՝ նախահաշվային փաստաթղթերը նախագծի կազմում ենթարկվում են պետական փորձաքննության և հաստատման՝ անկախ ֆինանսավորման աղբյուրներից, սեփականության ձևից և նախագծերի նշանակությունից:

Կախված ֆինանսավորման աղբյուրներից՝ արտադրական նշանակության օբյեկտների շինարարական նախագծերի հաստատումը իրականացվում է՝

- ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորվող պետական կապիտալ ներդրումների հաշվին կատարվող շինարարության դեպքում շահագրգիռ նախարարությունների և վարչությունների հետ համատեղ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից սահմանված կարգով:
- Հայաստանի մարզերի բյուջեներից ֆինանսավորվող կապիտալ ներդրումների հաշվին կատարվող շինարարության դեպքում՝ համապատասխան պետական կառավարման մարմինների միջնորդությամբ կամ նրանց կողմից սահմանված կարգով:
- Սեփական ֆինանսական միջոցների, փոխառությունների և ներդրողներից (ներառյալ ոչ ռեզիդենտ ներդրողներին) ներգրավված միջոցների հաշվին կատարվող շինարարության դեպքում՝ անմիջապես պատվիրատուի (ներդրողի) կողմից:

ՀՀ-ում կազմակերպությունների, շենքերի ու շինությունների շինարարության, վերակառուցման, ընդլայնման ու տեխնիկական վերազինման քաղաքաշինական փաստաթղթերը, տեխնիկատնտեսական հիմնավորումները և շինարարության նախագծերը (անկախ ֆինանսավորման աղբյուրներից, սեփականության ձևից և օբյեկտի նշանակությունից) մինչ վերջնական հաստատումը ենթակա են փորձաքննության հանրապետական, մարզային, պետական արտագերատեսչական փորձաքննական կազմակերպությունների, ինչպես նաև այլ լիազորված պետական մարմինների կողմից:

ԳԼՈՒԽ 4


Հիմնական ֆոնդերը շինարարությունում

4.1.Հիմնական ֆոնդերի կառուցվածքը

Ցանկացած տիպի արտադրանքի, այդ թվում նաև շինարարական արտադրանքի արտադրության համար, անհրաժեշտ են երեք բաղադրիչների՝ աշխատանքի միջոցների, աշխատանքի առարկաների և կենդանի աշխատանքի առկայությունն ու փոխազդեցությունը:

Աշխատանքի միջոցներն ու աշխատանքի առարկաներն իրենցից ներկայացնում են արտադրության միջոցներ, որոնք, բնական և արժեքային արտահայտությամբ, մասնակցելով արտադրական գործընթացին՝ համախմբվելով կազմում են արտադրական ֆոնդերի նյութական բովանդակությունը:

Արտադրական ֆոնդերը, կախված արտադրական գործընթացում դրանց մասնակցության յուրահատկությունից և շրջանառության եղանակից, ստորաբաժանվում են հիմնական և շրջանառու ֆոնդերի (տե՛ս Գծապատկեր 4.1):




Գծապատկեր 4.1: *Արտադրական ֆոնդերի դասակարգումը*

Շինարարությունում հիմնական ֆոնդերն իրենցից ներկայացնում են նյութաիրային արժեքների համախումբ, որոնք գործում են ինչպես նյութական արտադրության ոլորտում, այնպես էլ՝ ոչ արտադրական ոլորտում (տե՛ս Գծապատկեր 4.2)։

Հաշվապահական հաշվառման մեջ հիմնական ֆոնդերն արտացոլվում են որպես կազմակերպության, կազմակերպության և տնտեսության հիմնական միջոցներ։

Հիմնական ֆոնդերը համարվում են կազմակերպության (շինարարական կազմակերպության) գույք և կազմում են նրա հիմնական մասը։



Գծապատկեր 4.2: *Հիմնական ֆոնդերի կազմը*

Կազմակերպության գույքի և հետևաբար հիմնական ֆոնդերի ձևավորման աղբյուրներ կարող են լինել.

- հիմնադրամների դրամական և նյութական վճարումները,

- շինմոնտաժային աշխատանքների իրացումից, ինչպես նաև այլ տիպի տնտեսական գործունեությունից ստացված եկամուտը,
- արժեթղթերից ստացվող եկամուտը,
- բանկերի և այլ վարկատուների վարկերը,
- համապատասխան մակարդակների բյուջեներից կապիտալ ներդրումները և լրահատկացումները,
- օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներ:

Հիմնական արտադրական ֆոնդերը կա՛մ ուղղակիորեն մասնակցում են շինարարական արտադրանքի ստեղծմանը, կա՛մ ստեղծում են անհրաժեշտ պայմաններ նրա իրականացման համար: Շինարարության հիմնական արտադրական ֆոնդերին են վերաբերում հետևյալ աշխատանքային միջոցները.

- աշխատանքային մեքենաներ և սարքավորումներ,
- տրանսպորտային միջոցներ,
- արտադրական շենքեր ու շինություններ:

Աշխատանքային մեքենաների և սարքավորումների խմբին պատկանում են՝ շինարարական մեքենաներ և սարքավորումներ, որոնք ուղղակիորեն կիրառվում են շինարարական և մոնտաժային աշխատանքներում (էքսկավատորներ, սկրեպերներ, բուլդոզերներ, վերամբարձ կռունկներ և այլն):

Ուժային մեքենաներն ու սարքավորումները ներառում են.

- էլեկտրական և ջերմային էներգիա թողարկող գեներատորներ,
- գազային գեներատորներ,
- շոգեկաթսաներ,
- շարժական էլեկտրակայաններ,
- կոմպրեսորներ,
- տրանսֆորմատորային ենթակայանների սարքավորումներ և այլն:

Շինարարական կազմակերպությունների տրանսպորտային միջոցները ներկայացված են ավտոմոբիլային, երկաթուղային տրանսպորտի տեսքով, որոնք նախատեսված են մարդկանց, բեռների, շինարարական նյութերի և կոնստրուկցիաների տեղափոխման համար: Շինարարությանը սպասարկող տրանսպորտային միջոցների կազմում ամենամեծ տեսակա-

րար կշիռն ունեն ավտոմեքենաները, լոկոմոտիվները, պլատֆորմները, վագոնները և այլն, որոնք կատարում են ինչպես տեխնոլոգիական գործընթացներ, այնպես էլ տրանսպորտային գործառույթներ։

Հիմնական արտադրական ֆոնդերին են վերաբերում նաև աշխատանքային միջոցները (որոնք ներառում են շինարարական մեքենայացված գործիքները, գրասենյակային սարքավորումներն ու կահույքը, համակարգչային տեխնիկան, տեղեկատվական միջոցները և տվյալների վերամշակման համակարգերը), որոնց արժեքային գնահատականը որոշվում է օրենսդրական կարգով սահմանված նորմատիվներին համաձայն։

Արտադրական շենքերի ու շինությունների խումբը միավորում է ինժեներաշինարարական օբյեկտները, որոնք անհրաժեշտ պայմաններ են ստեղծում շինարարատեղակայման աշխատանքների արտադրության գործընթացն իրականացնելու համար։ Արտադրական շենքերին են վերաբերում այն շինությունները, որոնք ներառում են գրասենյակներ, պահեստներ, լաբորատորիաներ, հեռախոսակայաններ, միջանցքներ, վերահսկման և կշռային կետեր, ինչպես նաև հրդեհային վերնատունը և հրշեջ մեքենաների շենքը, տրանսպորտային տնտեսության շենքը (ավտոտնակներ և այլն) և այլ կառույցներ, որոնք սպասարկում են շինարարության արտադրությանը։

Շինարարությունում կառույցներին են վերաբերում.

- կամուրջները,
- Էստակադաները,
- էլեկտրահաղորդման գծերը,
- ջրաճնշող աշտարակները,
- խճուղիները,
- երկաթուղային ամբարները,
- հոսուն նյութերի պահպանման համար նախատեսված ժամանակավոր զետեղարանները և այլն։

Արտադրական գործընթացում առանձին բաղկացուցիչների մասնակցության և աշխատանքի առարկայի վրա նրանց ազդեցության տեսանկյունից հիմնական արտադրական ֆոնդերն ստորաբաժանվում են երկու մասի. ակտիվ, որը ներառում է աշխատանքային և ուժային սարքա-

վորումներ, տրանսպորտային միջոցներ, գործիքներ և գույք, պասիվ, որին վերաբերում են օժանդակ և երկրորդական արտադրությամբ զբաղված շինությունները, որոնցում տեղաբաշխված են գրասենյակներ, պահեստներ, լաբորատորիաներ, ինչպես նաև էստակադները, ճանապարհները և այլն։

Հիմնական արտադրական ֆոնդերի կառուցվածքը վկայում է շինարարության համար նրանց յուրահատկությունների մասին, որոնք ուղղակիորեն կապված են շինարարական արտադրանքի տեխնիկատնտեսական հատկությունների հետ և նախևառաջ այն առանձնահատկության հետ, որ «Շինարարության» ճյուղի արտադրանքը ոչ շարժական է, իսկ արտադրության միջոցները ենթակա են վերատեղաբաշխման։ Այդ իսկ պատճառով շինարարության համար հիմնական արտադրական ֆոնդերի կառուցվածքի յուրահատկությունը նախևառաջ ֆոնդերի ակտիվ մասի զգալի տեսակարար կշիռն է՝ նրանց պասիվ մասի հետ համեմատած։ Դա բացատրվում է նրանով, որ արտադրական շենքերն ու շինությունները հիմնականում գոյություն ունեն օժանդակ և երկրորդական արտադրությունում և նախատեսված են արտադրական գործընթացին սպասարկելու համար, այն դեպքում, երբ շինարարական արտադրանքի արտադրությունն իրականացվում է բաց երկնքի տակ։ Հիմնական արտադրական ֆոնդերի կառուցվածքը վկայում է նաև, որ ֆոնդերի ակտիվ մասի հիմքը կազմում են շինարարական մեքենաները, ուժային ու արտադրական սարքավորումները:

Ըստ պատկանելության՝ հիմնական արտադրական ֆոնդերը ենթաբաժանվում են սեփական և ներգրավվածի: Սեփական հիմնական ֆոնդեր են կոչվում նրանք, որոնք գտնվում են շինարարական կազմակերպության հաշվեկշռում: Ներգրավվածները՝ ժամանակավոր օգտագործման համար այլ կազմակերպություններից վարձակալական կամ ծառայությունների մատուցման պայմանով վերցված հիմնական ֆոնդերն են: Ծառայությունների մատուցման նպատակով տրված հիմնական ֆոնդերը նրանք են, որոնք գտնվում են մասնագիտացված կազմակերպությունների հաշվեկշռում, բայց ներգրավված են սպասարկող անձնակազմի (էքսկավատորավար, աշտարակային ամբարձիչների մեքենավարներ, բուլդոզերավարներ) հետ շինարարատեղակայման աշխատանքներ կատարելու համար:

Կատարված աշխատանքների ծավալների վարձատրությունն իրականացվում է համաձայն փաստացի աշխատաժամանակի մասին տվյալների: Ֆոնդերի վերանորոգումը և տեխնիկական սպասարկումն իրականացնում է սեփականատերը:

Ներկայում նկատվում է միտում, ըստ որի ակտիվ հիմնական ֆոնդերի զգալի մասը լիզինգային աշխատանքների կատարման նպատակով ներգրավվում է շինարարական կազմակերպությունների կողմից:

Ըստ օգտագործման հատկանիշների՝ հիմնական ֆոնդերը ստորաբաժանվում են. գործող, որոնց վերաբերում են շինարարության գործընթացի ինչպես հիմնական, այնպես էլ երկրորդական արտադրության ժամանակ գործող աշխատանքի միջոցները, և չգործող՝այն ֆոնդերը, որոնք գտնվում են սառեցման մեջ, պաշարներում կամ մաշվածության հետևանքով դուրսգրման հոդվածում:

Հիմնական ոչ արտադրական ֆոնդերը ուղղակիորեն չեն մասնակցում շինարարական արտադրանքի թողարկմանը և նախատեսված են շինարարական կազմակերպության սոցիալ-կենցաղային պահանջների բավարարման համար: Շինարարական կազմակերպությունների ոչ արտադրական ֆոնդերը ներառում են բնակելի և կոմունալ տնտեսության օբյեկտները, մշակութակենցաղային, առողջապահական և լուսավորման սպասարկումը:

4.2.Հիմնական ֆոնդերի գնահատումը

Հիմնական ֆոնդերի վերարտադրության պլանավորման, մաշվածության չափերի որոշման, նրանց օգտագործման արդյունավետության վերլուծության համար մեծ նշանակություն ունեն հիմնական ֆոնդերի արժեքի ճիշտ հաշվարկը և հավաստի գնահատումը:

Բնական ցուցանիշներով հաշվարկն անհրաժեշտ է շինարարական կազմակերպության հիմնական արտադրական ֆոնդերի քանակի և արտադրական հզորությունների որոշման համար: Հաշվարկման այս ձևը հիմնված է հիմնական ֆոնդերի անձնագրային տվյալների վրա, որոնք արձանագրում են ձեռքբերման կամ կառուցման ժամանակը, ընդգրկում են ֆոնդերի տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև պարունակում են

տեղեկատվություն նրանց փոփոխման (վերանորոգում, նորամուծություններ, վերակառուցում և այլն) մասին։ Հիմնական ֆոնդերի հաշվարկման ժամանակ ավելի հաճախ հանդիպող բնական ցուցանիշներն են.

- շինարարական կազմակերպության հաշվեկշռում գտնվող շենքերի և շինությունների ընդհանուր և օգտակար մակերեսները,
- շինարարական մեքենաների առանձին տիպերի և չափաքանակների քանակական և ընդհանուր հզորությունը, նրանց միջին միավոր հզորությունը, ինչպես նաև մեքենաների արտադրողականության տեխնիկական և շահագործման ցուցանիշները։

Թվարկված ցուցանիշները հիմնական ֆոնդերի քանակական կազմի և նրանց գործունեության տեխնիկատնտեսական ցուցանիշների մասին պատկերացում են տալիս, սակայն այս դեպքում բացակայում է տարբեր օբյեկտների հաշվարկների համադրման հնարավորությունը և պատկերացում չի տալիս նրանց ընդհանուր մեծության մասին։

Կապված հիմնական ֆոնդերի երկարատև գործունեության, աշխատանքի ընթացքում նրանց աստիճանաբար մաշման, նրանց վերարտադրության համար անհրաժեշտ հասարակական աշխատանքի վրա կատարվող ծախսերի փոփոխության հետ՝ արժեքային արտահայտությամբ հիմնական ֆոնդերի գնահատման համար օգտագործվում են հիմնական ֆոնդերի սկզբնական արժեքը, վերականգնողական արժեքը և մնացորդային արժեքը։

Սկզբնական արժեքն արտացոլում է մեքենաների, սարքավորումների ձեռքբերման կամ շենքի կառուցման (հաշվի առնելով սարքավորումների մատակարարումն ու տեղակայումը) վրա կազմակերպության փաստացի ծախսերը ձեռքբերման տարում գործող գներով, և կարող է որոշվել հետևյալ բանաձևով՝

$$Ֆ_{ն} = Ֆ_{Փ} + Ծ_{տր}, \qquad (4.1)$$

որտեղ $Ֆ_{Փ}$-ն՝ ֆոնդերի ձեռքբերման համար կազմակերպության փաստացի ծախսերը կամ շենքերի, շինությունների նախահաշվային արժեքն է, հազ.դր., $Ծ_{տր}$-ն՝ տրանսպորտային ծախսերը և սարքավորումների տեղակայման արժեքը հազ.դր.։

Նախնական արժեքով հիմնական ֆոնդերը հաշվառվում են շինարարական կազմակերպության հաշվեկշռում: Արժեքի այս ձևն օգտագործվում է ամորտիզացիոն հատկացումների, շահավետության և ֆոնդահատուցման, ինչպես նաև հիմնական ֆոնդերի օգտագործման արդյունավետությունը բնութագրող այլ ցուցանիշների հաշվարկման համար: Ըստ նախնական արժեքի՝ հիմնական ֆոնդերի գնահատման հիմնական թերությունն այն է, որ տարբեր ժամանակներում արտադրված աշխատանքի միջոցները շինարարական կազմակերպության հաշվեկշռում հաշվառվում են տարբեր տարիների գներով: Արդյունքում անհնար է ճշգրիտ որոշել հիմնական արտադրական ֆոնդերի շարժի փոփոխությունները, հաշվարկել շինարարական կազմակերպության դրամական միջոցների պահանջն աշխատանքի միջոցների փոփոխման համար իրենց ծառայության ժամկետի վերջում: Այդ թերությունը կարելի է վերացնել՝ գնահատելով հիմնական ֆոնդերը վերականգնողական արժեքով:

Վերականգնողական արժեքը հիմնական արտադրական ֆոնդերի արժեքն է, որը բերված է հիմնական ֆոնդերի վերարտադրության տարվա գներին և պայմաններին:

Արժեքի գնահատման տվյալ ձևը թույլ է տալիս որոշել աշխատանքային միջոցների իրական արժեքը՝ հաշվի առնելով հասարակական արտադրության, տեխնիկական մակարդակի աճի և նրանց վերարտադրության ժամանակ աշխատանքի արտադրական ուժի բարձրացման ներկա պայմանները: Ըստ վերականգնողական արժեքի՝ հիմնական արտադրական ֆոնդերի գնահատումը հնարավորություն է տալիս հիմնական ֆոնդերի կառուցվածքի և կազմի ծավալների բնութագրերի մասին ստանալ համեմատվող մեծություններ, ինչպես նաև ավելի ճշգրիտ որոշել նրանց օգտագործման արդյունավետությունը: Ֆոնդերի գնահատման տվյալ տիպի կիրառումը կապված է ֆոնդերի արժեքի պարբերական վերագնահատման հետ, որը բավականին աշխատատար և համեմատաբար երկարատև գործընթաց է: Հիմնական ֆոնդերի՝ ըստ նախնական և վերականգնողական արժեքի գնահատման հետ մեկտեղ ֆոնդերի արժեքը կարող է որոշվել նրանց մնացորդային արժեքով:

Մնացորդային արժեքը (նախնական՝ Ֆն.մն. կամ վերականգնողական՝ Ֆվ.մն) արտահայտում է հիմնական ֆոնդերի արտադրվող արտադրանքի (շինարարատեղակայման աշխատանքներ) արժեքի վրա դեռ չփոխանցված արժեքը և թույլ է տալիս սահմանել, թե հիմնական արտադրական ֆոնդերի որ մասն է մաշված և հաշվառված աշխատանքների ինքնարժեքում: Մնացորդային արժեքը բնութագրում է գնահատման պահին ֆոնդերի փաստացի արժեքը և թույլ է տալիս գնահատել շինարարական կազմակերպության հիմնական ֆոնդերի որակական վիճակը:

Մնացորդային արժեքն որոշվում է հետևյալ կերպ՝

$$Ֆ_{ն.մն.} = Ֆ_{ն} - Մ, \quad (4.2)$$

$$Ֆ_{վ.մն.} = Ֆ_{վ} - Մ, \quad (4.3)$$

որտեղ Մ-ն հիմնական ֆոնդերի մաշվածությունն է:

4.3.Ֆիզիկական և բարոյական մաշվածություն

Արտադրական գործընթացում հիմնական ֆոնդերը աստիճանաբար մաշվում են և արդյունքում կորցնում են իրենց սկզբնական և սպառողական արժեքը: Տարբերվում են հիմնական ֆոնդերի ֆիզիկական և բարոյական մաշվածություն հասկացություններ: Ֆիզիկական մաշվածությունն իրենից ներկայացնում է բնակլիմայական (մթնոլորտային տեղումները, արևը, ցուրտը և այլն) և տեխնիկական (հերթափոխ, շահագործման բեռնվածությունը, տեխնիկական սպասարկման որակը և այլն) պայմանների ազդեցությունը հիմնական ֆոնդերի վրա: Հիմնական ֆոնդերի ֆիզիկական մաշվածության մեծությունը կախված է գործակիցների քանակից, այդ թվում նախագծված տեխնիկական բնութագրերի նախապատրաստման որակից և այն նյութերի հատկություններից, որոնցից դրանք պատրաստվում են և այլն: Ֆիզիկական մաշվածության մակարդակը հիմնական ֆոնդերի շահագործումից անմիջական կախվածության մեջ է գտնվում և աճում է օգտագործման հերթափոխի, աշխատանքային հերթափոխների ժամանակ ծանրաբեռնվածության հետ և այլն: Ֆիզիկական մաշվածությունը նաև կախված է սպասարկող անձնակազմի որակավորման աստիճանից, ժամանակին և որակով տարվող ընթացիկ սպասարկման ու վերանորոգման մակարդակից: Անընդհատ կուտակվելով՝ ֆիզիկական մաշվածու-

թյունը նվազեցնում է հիմնական ֆոնդերի տեխնիկական և տնտեսական ցուցանիշները, իսկ վերջնական արդյունքում բերում է նրանց սպառողական արժեքի լրիվ ոչնչացման, երբ հիմնական ֆոնդերը դարձնում է օգտագործման համար ոչ պիտանի: Ֆիզիկական մաշվածությունը բնութագրվում է երկու ցուցանիշներով.

- մաշվածության աստիճանով՝ տոկոսային արտահայտությամբ,
- արժեքային ցուցանիշով՝ դրամական արտահայտությամբ:

Հիմնական ֆոնդերի մաշվածության աստիճանը որոշվում է ֆիզիկական մաշվածության գործակցով ($Գ_մ$)՝ համաձայն հետևյալ բանաձևի.

$$Գ_մ = (Մ/Ֆ_ն)×100\%, \qquad (4.4)$$

որտեղ Մ-ն հիմնական ֆոնդերի մաշվածության գումարն է, հազ.դր., $Ֆ_ն$-ն՝ հիմնական ֆոնդերի նախնական (հաշվեկշռային) արժեք, հազ. դր.:

Արժեքային արտահայտությամբ ֆիզիկական մաշվածությանը համապատասխանում է ֆոնդերի արժեքի այն մասին, որը փոխանցվել է շինարարատեղակայման աշխատանքների ինքնարժեքի վրա:

Աշխատանքային միջոցների ֆիզիկական մաշվածությունից բացի առկա է նաև բարոյական մաշվածություն, որի դրսևորումը կայանում է. նյութական (ֆիզիկական) վիճակով դեռ պիտանի հիմնական ֆոնդերը դառնում են տնտեսապես ոչ պիտանի՝ (նույն նշանակության) նոր, ավելի արդյունավետ հիմնական ֆոնդերի համեմատությամբ: Բարոյական մաշվածությունը դրսևորվում է երկու ձևով: Բարոյական մաշվածության առաջին ձևն առաջանում է հին հիմնական ֆոնդերի արժեզրկման արդյունքում՝ շինարարությանը հիմնական ֆոնդեր տրամադրող ճյուղերում արտադրության ծախքերի նվազման պատճառով: Արդյունքում նույն կոնստրուկցիայի նոր հիմնական ֆոնդերի արժեքն ավելի ցածր է ստացվում, քան ավելի վաղ թողարկվածներինը: Այդ իսկ պատճառով շահագործման ընթացքում պատրաստի արտադրանքի (շինարարատեղակայման աշխատանքների) վրա նրանք կփոխանցեն արժեքի համեմատաբար փոքր մաս, ինչը նպաստում է նրանց առավել արդյունավետ օգտագործմանը և խթանում է հին ֆոնդերի փոխարինումը նորերով: Առաջին ձևի բարոյական մաշվածությունը ($Ֆ_մ^1$) կարող է որոշվել հետևյալ բանաձևով.

$$Ֆ_{մ}^{1} = \frac{(Ֆ_{Ն} - Ֆ_{Փ})/Ֆ_{Ն}}{100}\% : \qquad (4.5)$$

Բարոյական մաշվածության առաջին ձևի ժամանակ հիմնական ֆոնդերի սպառողական արժեքը չի փոփոխվում:

Բարոյական մաշվածության երկրորդ ձևը կապված է նոր, ավելի արտադրական և տնտեսական շինարարական տեխնիկայի երևան գալու հետ, որի կիրառումը բերում է հին մեքենաների և սարքավորումների հարաբերական օգտակարության նվազմանը և պահանջում է դրանց փոխարինում կամ նորացում: Բարոյական մաշվածության երկրորդ ձևը կարող է որոշվել հետևյալ բանաձևով՝

$$Ֆ_{մ}^{1} = Ֆ_{ն} - \left(\frac{Ֆ_{ն}}{(Ա \times Ժ_{ն})} - \frac{Ֆ_{ն}^{1}}{(Ա^{1} \times Ժ_{ն}^{1})} \right) \times Ժ_{մն} \times Ա \qquad (4.6)$$

որտեղ $Ֆ_{ն}$ և $Ֆ_{ն}^{1}$ աշխատանքի հին և նոր միջոցների նմուշների նախնական (հաշվեկշռային) արժեքներն են, հազ. դր., Ա և $Ա^{1}$ աշխատանքի հին և նոր միջոցների նմուշների տարեկան արտադրողականությունը, չափման բնական միավորներ (մ, հազ. հատ և այլն), $Ժ_{ն}$ և $Ժ_{ն}^{1}$ աշխատանքի հին և նոր միջոցների ծառայության նորմատիվային ժամկետները, տարիներով, $Ժ_{մն}$ աշխատանքի հին միջոցների ծառայության մնացած ժամանակը, տարիներով:

Բարոյական մաշվածության է ենթարկված հիմնական արտադրական ֆոնդերի ակտիվ մասը: Ընդ որում գիտատեխնիկական առաջընթացի հետևանքով շինարարական մեքենաները և սարքավորումները բարոյապես մաշվում են իրենց փաստացի ֆիզիկական մաշվածքից շուտ: Ահա թե ինչու շինարարական մեքենաների կայանի ձևավորման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել մեքենաների և սարքավորումների ծառայության ժամկետի տնտեսական նպատակահարմարությունը:

Ծառայության ժամկետների տնտեսական նպատակահարմարությունը, որը շահագործման ծախքերի հետ մեկտեղ հաշվի է առնում նոր, շինարարական տեխնիկայի նմուշների տեխնիկատնտեսական առավելությունների աստիճանը, ընդունված է համարել այն ժամկետը, որում արտադրվող արտադրանքի (շինարարատեղակայման աշխատանքների) միավորի բերված տեսակարար ծախսերը կլինեն նվազագույնը:

Ֆիզիկական և բարոյական մաշվածության արդյունքում արտադրական գործընթացում մասնակցող հիմնական ֆոնդերը աստիճանաբար կորցնում են աշխատանքային միջոցների օգտակար հատկանիշները և պահանջում են փոխարինում:

Շրջանառությունից հանվող հիմնական ֆոնդերի փոխհատուցման համար դրամական միջոցների աղբյուրներից է հանդիսանում նրանց ամորտիզացիան:

Հիմնական ֆոնդերի մաշվածքամարման աշխատանքային միջոցների ֆիզիկական և բարոյական մաշվածության աստիճանին համապատասխան արժեքի աստիճանաբար փոխանցումն է հետագա հիմնական ֆոնդերի մաշման փոխհատուցման համար դրամական միջոցներ կուտակելու նպատակով արտադրվող ապրանքի արժեքին: Շահագործման ամբողջ ընթացքում մաշվածքամարման (ամորտիզացիայի) լրիվ գումարը (Ա) որոշվում է հետևյալ բանաձևով.

$$Ա = Ֆ_{ն} - Լ, \qquad (4.7)$$

որտեղ Լ-ն հիմնական ֆոնդերի լիկվիդային արժեքն է, հազ. դր.:

Համապատասխանաբար մաշվածքամարման տարեկան գումարը $Ա^{տար}$ կկազմի՝

$$Ա^{տար} = \frac{Ֆ_{ն} - Լ}{Ժ_{ծառ}}, \qquad (4.8)$$

որտեղ $Ժ_{ծառ}$-ը մաշվածքամարման հատկացումների հաշվարկման համար ընդունված հիմնական ֆոնդերի ծառայության ժամկետն է:

Պրակտիկայում մաշվածքամարման գումարը մաշվածքամարման հատկացումների ձևով մտնում է շինարարատեղակայման աշխատանքների ինքնարժեքի մեջ, որոնք իրենցից ներկայացնում են մաշվածքի չափի դրամական արտահայտություն, որը համապատասխանում է հիմնական ֆոնդերի մաշվածքի աստիճանին:

Մաշվածքամարման հատկացումների չափը որոշվում է ըստ սահմանված նորմերի: Մաշվածքամարման նորման մաշվածքի տարեկան գումարի տոկոսային հարաբերությունն է հիմնական ֆոնդերի նախնական (հաշվեկշռային) արժեքին:

Մաշվածքամարման գոյություն ունեցող նորմերը սահմանված են միայն հիմնական ֆոնդերի ամբողջովին վերականգնման համար և չեն ներառում ընթացիկ և կապիտալ վերանորոգումների պարբերաբար անցկացման ծախսերը։

Մաշվածքամարման տարեկան նորման ($Ն^{Ա}$) հիմնականում կախված է հիմնական ֆոնդերի արժեքից և ծառայության ժամկետներից կարող է որոշվել հետևյալ բանաձևերով.

$$Ն^{Ա} = \frac{Ա^{տար}}{Ֆ_{ն}} \times 100\% \qquad (4.9)$$

կամ

$$Ն^{Ա} = \frac{Ֆ_{ն} - Լ}{Ֆ_{ն} Ժ_{ծառ}} \times 100\% : \qquad (4.10)$$

Շինարարական կազմակերպության հաշվեկշռի վրա գտնվող բոլոր հիմնական ֆոնդերի (միջոցների) մաշվածքամարումը, անկախ այն բանից, թե գտնվում են նրանք շահագործման մեջ կամ պահեստում, ամեն ամիս ավելացվում է տարեկան նորմայի 1/12-ի չափով։ Մեքենաների, սարքավորումների և տրանսպորտային միջոցների մաշվածքամարումն ավելացվում է ծառայության նորմատիվ ժամկետի ընթացքում կամ այն ժամկետի ընթացքում, որում նրանց սկզբնական (հաշվեկշռային) արժեքը լիովին կփոխանցվի արտադրանքի արտադրության ծախքերին (ինքնարժեքին)։ Մյուս բոլոր հիմնական ֆոնդերում մաշվածքամարման հատկացումներն արվում են նրանց ծառայության փաստացի ժամանակահատվածում։ Բացի այդ, համաձայն մաշվածքամարման հատկացումների կարգի, նախատեսված է նաև, որ ոչ լրիվ մաշվածքամարման դեպքում ֆոնդերի չամորտիզացված արժեքը ենթակա է փոխհատուցման՝ կազմակերպության տրամադրության տակ գտնվող շահույթի հաշվին, որն օգտագործվում է հենց այնպիսի նպատակների համար, ինչպիսին է մաշվածքամարման հատկացումները։

Մաշվածքամարման հատկացումների քաղաքականության համար նոր տեսակետ է հանդիսանում կազմակերպությունների և տնտեսությունների համար արագացված մաշվածքամարման իրավունքի ներմուծումը, որը պետք է իրականացվի համաձայն ընդունված կարգի։ Արագացված նորմայի ներմուծման դեպքում տարեկան մաշվածքամարման հատկացումների

նորման ավելանում է ավելի քան երկու անգամ և պետք է համաձայնեցված լինի սահմանված կարգի հետ: Արագացված մաշվածքամարման կանոնն ազդում է միայն մեքենաների, սարքավորումների և տրանսպորտային միջոցների վրա: Արագացված մաշվածքամարումը չի վերաբերվում այն տրանսպորտային միջոցներին, որոնց ծառայության ժամկետը սահմանվել է՝ ելնելով փաստացի ծանրաբեռնվածությունից (օրինակ՝ ավտոմեքենաների համար փաստացի վազքը): Կան նաև այլ սահմանափակումներ: Սահմանված կանոնների խախտման դեպքում լրացուցիչ հավելագումարների արագացված մաշվածքամարումը արտադրության և շրջանառության ծախքերից բացառվում է: Այսպիսի մոտեցումը կապված է մի կողմից արագացված մաշվածքամարումը բերում է արտադրանքի (աշխատանքի) ինքնարժեքի աճին, իսկ մյուս կողմից՝ իջեցնում է կազմակերպության շահույթը, որն էլ բերում է գանձվող հարկերի գումարի, հետևաբար նաև բյուջեի եկամտային մասի նվազմանը, իսկ վերջինս բյուջետային պակասուրդի ժամանակ ցանկալի չէ:

Հիմնական ֆոնդերը աշխատունակ վիճակում պահելու համար իրականացվում է նրանց ընթացիկ և կապիտալ վերանորոգում: Ընթացիկ վերանորոգման ժամանակ փոխվում կամ վերականգնվում են մեքենաների և սարքավորումների առանձին հանգույցները, ինչպես նաև վերանորոգվող շենքերի և շինությունների տարրերը և կոնստրուկցիաները: Մեքենաների և սարքավորումների կապիտալ վերանորոգում է համարվում այն, որի ժամանակ իրականացվում է ագրեգատի մշակում, բոլոր մաշված տարրերի և հանգույցների փոխարինում կամ վերականգնում, վերանորոգված սարքավորման հետագա հավաքում և ստուգում: Կապիտալ վերանորոգման գործընթացում հնարավոր է բարոյապես հնացած հիմնական ֆոնդերի նորացում, որն ուղղված է նրանց աշխատանքի կատարելագործմանը, տնտեսական ցուցանիշների բարելավմանը և տեխնիկական մակարդակի բարձրացմանը: Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգումն այն վերանորոգումն է, որի դեպքում մաշված տարրերն ու կոնստրուկցիաները փոխարինվում են նորերով, որոնք ավելի ամուր և տնտեսավետ են, որոնք լավացնում են վերանորոգվող օբյեկտի շահագործման հնարավորությունները:

Վերանորոգման բոլոր տիպի ծախսերը կազմակերպությունների կողմից (անկախ վարչական ենթակայությունից և կազմակերպչաիրավական ձևերից) ներառվում են արտադրման և իրացման ծախսերի կազմում իրենց փաստացի մեծությամբ՝ առանց նախնական պլանավորման: Այսպիսի մոտեցման տնտեսագիտական իմաստը կայանում է հետևյալում. *որքան քիչ են վերանորոգման ծախսերը, այնքան բարձր է կազմակերպության շահույթը:* Այսպիսով, վերանորոգման ծախսերի փոխհատուցման ընդունված կարգը կոչված է կատարելու խթանիչ դեր կազմակերպությունների և կազմակերպությունների միջոցների ծախսումներում:

Կազմակերպությունների և կազմակերպությունների հիմնական ֆոնդերի վերանորոգումն իրականացվում է հատուկ վերանորոգման ֆոնդի հաշվին, որը նրանց կողմից ստեղծվում է ինքնուրույն: Ելնելով վերանորոգումների քանակությունների ու ձևերի և կազմակերպության (կազմակերպության) ֆինանսական վիճակի մասին տեղեկատվությունից՝ ինքնուրույն են որոշվում նաև վերանորոգման ֆոնդի ստեղծման նպատակահարմարությունը, նրա մեծությունը, նրանում նորմատիվ հատկացումները: Այս ֆոնդի միջոցների ծախսումը ունի խիստ նպատակային նշանակություն, իսկ մնացորդը չի հանվում շրջանառությունից, այլ մնում է ֆոնդի կազմում հաջորդ տարվա համար:

4.4.Հիմնական ֆոնդերի արդյունավետության վրա ազդող գործոնները

Հիմնական արտադրական ֆոնդերի օգտագործման լավացումը շատ բանով կախված է հիմնավորված ցուցանիշների համակարգից, որը բնութագրում է ֆոնդերի օգտագործման արդյունավետությունը: Հիմնական ֆոնդերի արդյունավետության գնահատման համար օգտագործվում է ցուցանիշների համակարգ, որն ընդգրկում է ընդհանուր (արժեքային) և մասնակի (բնական) ցուցանիշներ:

Ընդհանուր ցուցանիշները բնութագրում են բոլոր հիմնական արտադրական ֆոնդերի ամբողջ համախմբի օգտագործման մակարդակը, իսկ մասնակի ցուցանիշները՝ հիմնական ֆոնդերի առանձին տարրերը (շինարարական մեքենաների կայանը, տրանսպորտային միջոցները և այլն): Ընդհանուր ցուցանիշներից ավելի լայն կիրառում ունի ֆոնդահատուցման

ցուցանիշը, որն արտացոլում է հիմնական արտադրական ֆոնդերում նյութականացված աշխատանքի օգտագործման արդյունավետությունը և բնութագրում է հիմնական ֆոնդերի արժեքի 1000 դրամին ընկնող արտադրանքի քանակը:

Ֆոնդահատուցման ցուցանիշները որոշվում են հետևյալ բանաձևով.

$$Ֆ_{հատ} = Ն_{շտա} / Ֆ_{ա}, \qquad (4.11)$$

որտեղ $Ն_{շտա}$-ն՝ նախահաշվային գներում շինարարատեղակայման աշխատանքների տարեկան ծավալն է, հազ.դր., $Ֆ_{ա}$-ն՝ հիմնական արտադրական ֆոնդերի միջին տարեկան արժեքը՝ հազ.դր.:

Հարկ է նշել, որ ֆոնդահատուցման ցուցանիշը թույլ չի տալիս գնահատել կազմակերպության տրամադրության ներքո գտնվող հիմնական ֆոնդերի օգտագործման աստիճանը: *Ֆոնդահատուցման ցուցանիշի մեծությունն ուղիղ համեմատական է աշխատանքի արտադրողականության մակարդակին և հակադարձ համեմատական է նրա ֆոնդազինվածության մակարդակին:* Այդ իսկ պատճառով արդյունավետ է համարվում շինարարության ճյուղի այնպիսի զարգացումը, որի դեպքում աշխատանքի արտադրողականության աճը գերազանցում է գործող շինարարական կազմակերպությունների հիմնական ֆոնդերով հագեցվածության մակարդակը: Այլ կերպ ասած, շինարարական կազմակերպությունների հիմնական ֆոնդերով հագեցվածության աճի դեպքում պետք է տեղի ունենա պատրաստի արտադրանքի միավորի վրա ընկնող կենդանի աշխատանքի ծախսերի նվազեցում: Ֆոնդահատուցման ցուցանիշի մեծության վրա էապես ազդում են նաև մի շարք գործոններ, որոնք հիմնական արտադրական ֆոնդերի օգտագործման արդյունավետության բարձրացման ոլորտում քիչ են կախված շինարարական կազմակերպությունների աշխատանքներից: Այդպիսի գործոններ են համարվում կատարվող աշխատանքների ծրագրում կազմի կառուցվածքի առաջընթացը, պաշարների գների մակարդակի փոփոխությունը և մի շարք այլ գործոններ:

Ֆոնդահատուցման ցուցանիշը կարելի է նաև հաշվարկել հետևյալ բանաձևով.

$$Ֆ_{հատ} = Շ/Ֆ, \qquad (4.12)$$

որտեղ Շ-ն՝ կազմակերպության տարեկան շահույթն է, հազ.դր., Ֆ-ն՝ արտադրական ֆոնդերի (հիմնական ֆոնդերի և շրջանառու միջոցների) միջին տարեկան արժեքն է, հազ.դր:

Այս ձևով հաշվարկված ֆոնդահատուցման ցուցանիշը բնութագրում է արտադրական ֆոնդերի շահութաբերությունը (եկամտաբերությունը) և շինարարական կազմակերպությանը հնարավորություն է տալիս գնահատել դրանց օգտագործման որակական կողմը: Սակայն շինարարությունում ֆոնդահատուցման ցուցանիշի որոշման այս մոտեցումն ունի կիրառման սահմանափակ ոլորտ, քանի որ տեղական շինարարական կազմակերպություններից մեծամասնությունում օգտագործվում են ներգրավված շինարարական մեքենաների և տրանսպորտային միջոցների կայանը:

Ֆոնդահատուցման հակառակ ցուցանիշը ֆոնդատարությունն է, որը ցույց է տալիս, թե հիմնական արտադրական ֆոնդերի արժեքի որ մասն է ընկնում կատարված ծավալի աշխատանքների 1000 դրամի վրա.

$$Ֆ_{տար} = \frac{Ֆ_ա}{Ն_{շտա}}: \qquad (4.13)$$

Վերջին տարիներին ֆոնդահատուցման ցուցանիշի աճն ու ֆոնդատարության ցուցանիշի նվազումը կարելի է բացատրել հիմնական ֆոնդերի ծավալով, նրանցով շինարարական արտադրության հագեցվածության մակարդակի բարձրացման ցուցանիշով, ինչպես նաև երկրի տնտեսության շուկայական հարաբերությունների անցման հետ կապված նրանց զգալի թանկացմամբ:

Շինարարական կազմակերպությունների հիմնական արտադրական ֆոնդերի զինվածության մակարդակը բնութագրվում է մի շարք ցուցանիշներով, այդ թվում՝ աշխատանքի մեքենահագեցվածության աստիճանով: *Աշխատանքի մեքենազինվածության ցուցանիշն որոշվում է հետևյալ բանաձևով.*

$$Մ_ա = Ֆ_ա / Թ, \qquad (4.14)$$

որտեղ Ֆա-ն հիմնական արտադրական ֆոնդերի ակտիվ մասի միջին տարեկան արժեքն է՝ հազ.դր, Թ-ն՝ առավել ծանրաբեռնված հերթափոխում աշխատողների միջին ցուցակային թվաքանակը՝ մարդ:

Հիմնական ֆոնդերի օգտագործման արդյունավետությունը բնութագրող մասնակի ցուցանիշներին են պատկանում ըստ ժամանակի և արտադրողականության մեքենաների և սարքավորումների օգտագործման ցուցանիշները: Բոլոր մասնակի ցուցանիշները կարելի է բաժանել երկու կարգի՝ մեքենաների և սարքավորումների օգտագործման էկստենսիվությունը բնութագրող ցուցանիշներ և դրանց ինտենսիվությունը բնութագրող ցուցանիշներ:

Հիմնական ֆոնդերի ակտիվ մասի օգտագործման էկստենսիվությունը բնութագրող ցուցանիշներից է մեքենաների՝ ժամանակի ընթացքում շահագործման գործակիցը.

$$Գ_{ժշ} = Ժ_{տ.իր.} / Ժ_{տն(պլ)}, \qquad (4.15)$$

որտեղ Ժտ.իր-ը տարվա ընթացքում աշխատանքի փաստացի (իրական) ժամանակն է, ժամ, Ժտն(պլ)-ը՝ տարվա ընթացքում աշխատանքի նորմատիվային (պլանային) ժամանակն է, ժամ:

Սակայն այս գործակիցը պատկերացում չի տալիս դրանց ծանրաբեռնվածության և հզորությունների օգտագործման մասին:

Մեքենաների կայանի օգտագործման ինտենսիվությունն արտացոլող ցուցանիշների թվին առաջին հերթին հարկ է դասել որոշակի ժամանակահատվածի համար մեքենաների արտադրման նորմերի կատարման ցուցանիշը (Գան).

$$Գ_{ան} = Ծվ_{իր} / Ծվ_{ն(պլ)}, \qquad (4.16)$$

որտեղ Ծվիր-ը՝ արտադրության փաստացի (իրական) ծավալն է բնական չափման միավորներով, Ծվն(պլ)-ը՝ նորմատիվային (պլանային) արտադրանք, բնական չափման միավորներով:

Ընդհանրացված մասնակի ցուցանիշ կարելի է համարել մեքենաների և սարքավորումների ծանրաբեռնման ամբողջական գործակիցը *(Գինտ)*, որը բնութագրում է որոշակի ժամանակահատվածում որոշակ մեքենայի կամ սարքավորման փաստացի կատարված և նախատեսվող աշխատանքների ծավալների հարաբերությունը և որոշվում է հետևյալ բանաձևով.

$$Գ_{ինտ} = Գ_{ժշ} \times Գ_{ան}: \qquad (4.17)$$

Շինարարական կազմակերպության աշխատանքի մասին տվյալները վկայում են, որ շինարարական արտադրության հիմնական ֆոնդերի

պահուստները անչափ շատ են: Դրանց իրականացումը պետք է կատարվի երկու ճանապարհով.

- հիմնական ֆոնդերի օգտագործման ժամանակի ավելացում (էքստենսիվ ճանապարհ),
- հիմնական ֆոնդերի օգտագործման միավոր ժամանակում թողարկվող արտադրանքի մեծացում (ինտենսիվ ճանապարհ):

Ըստ ժամանակի գործոնի՝ հիմնական արտադրական ֆոնդերի օգտագործման լավացման վրա ազդող գործոնների թվին կարելի է դասել հիմնական ֆոնդերի աշխատանքների հերթափոխերի ավելացումը, շինարարական կազմակերպություններում ներհերթափոխային պարապուրդների նվազեցումը, շինարարական տեխնիկայի աշխատանքի օրացուցային ժամանակի լավագույն օգտագործման ապահովումը:

Հիմնական ֆոնդերի աշխատանքային ժամերի ավելացմանը կարելի է հասնել նաև մեքենաների վերանորոգման և տեխնիկական սպասարկման ժամանակի ծախսերի կրճատման հաշվին և այլն:

Հիմնական արտադրական ֆոնդերի (նրանց ակտիվ մասի) օգտագործման ինտենսիվությունը իր հերթին կարող է ապահովվել հետևյալ միջոցառումների իրականացման արդյունքում.

- շինարարատեղակայման աշխատանքների արտադրության և կազմակերպման առաջավոր մեթոդների ներդրում,
- շինարարական կազմակերպությունների կողմից կառուցվող շենքերի կամ շինությունների հավաքվելիության աստիճանի բարձրացում,
- աշխատանքի գիտական կազմակերպման ներդրում,
- մեքենաների կառավարման գործընթացների մեքենայացում և ավտոմատացում,
- շինարարական տեխնիկայով ապահովվող աշխատողների որակավորման բարձրացում և այլն:

Շինարարական մեքենաների արդյունավետության բարձրացման կազմակերպչական նախադրյալներ են համարվում գործիքներով և հարմարանքներով ապահովման բարձրացումը, անհրաժեշտ որակյալ պահեստային մասերի, նյութերի և կոնստրուկցիաների մատակարարման կարգավորման համակարգը:

ԳԼՈՒԽ 5


Շինարարական կազմակերպությունների շրջանառու միջոցները

5.1.Շրջանառու միջոցների կազմը և ձևավորման աղբյուրները

Արտադրատնտեսական գործունեություն իրականացնելու համար շինարարական կազմակերպությունները իրենց ենթակայության ներքո պետք է ունենան ոչ միայն հիմնական ֆոնդեր, այլև շրջանառու միջոցներ:

Շրջանառու միջոցները շինարարական կազմակերպության կողմից շրջանառու ֆոնդերում և շրջանառության ֆոնդերում երաշխավորված (հանած ամորտիզացիոն հատկացումները) դրամական միջոցների ամբողջությունն են, որոնք շրջապտույտի ընթացքում նպաստում են դրանց շարժին և ապահովում են շինարարական արտադրանքի արտադրության և շրջանառության գործընթացի հաճախականությունը (տե՛ս Գծապատկեր 5.1)*:*

Շրջանառու միջոցները հանդիսանում են շինարարական կազմակերպության ընթացիկ և (մասամբ) կապիտալ ծախսերի ֆինանսավորման աղբյուր և կազմված են շրջանառու նյութական և ֆինանսական ակտիվներից:



Գծապատկեր 5.1: *Շրջանառու միջոցների կազմը շինարարությունում*

Նյութական ակտիվների կազմի և մեծության վերաբերյալ տեղեկատվությունը պարունակվում է շինարարական կազմակերպության հաշվեկշռի ակտիվի «Պաշարներ և ծախսեր» բաժնում, իսկ ֆինանսական ակտիվների վերաբերյալ տվյալները՝ հաշվեկշռի ակտիվի «Դրամական միջոցներ, հաշվարկներ և այլ ակտիվներ» բաժնում:

Շրջանառու միջոցներն անհրաժեշտ են կազմակերպություններին (անկախ սեփականության ձևից) նյութական արժեքների պաշարների ձևավորման, անավարտ արտադրության ծախսերի ծածկման և այլ նպատակների, ինչպես նաև հաշվարկների իրականացման համար:

Կազմակերպության շրջանառու ֆոնդերը շրջանառու միջոցների այն մասն են, որոնք գործում են արտադրության ոլորտում: Մյուս մասը, որոնք գտնվում են շրջանառություն, կազմում են շրջանառության ֆոնդերը:

Շրջանառու ֆոնդերը՝ արտադրական ֆոնդերի այն մասն են, որոնք, որպես կանոն, ամբողջությամբ օգտագործվում են մեկ արտադրական փուլում, ընդ որում կորցնում են իրենց նախնական նյութաիրային ձևը, և իրենց արժեքն ամբողջովին փոխանցում են շենքերի և շինությունների կառուցման շինարարատեղակայման աշխատանքների ինքնարժեքին:

Օրինակ՝ հիմնային բլոկները՝ կախված իրենց օգտագործումից, իրենց արժեքը ամբողջովին փոխանցում են շենքի հիմքի պատրաստման հետ կապված աշխատանքների ինքնարժեքին, աղյուսը կամ պատի պանելները՝ պատող կոնստրուկցիաների (պատերի) տեղադրման հետ կապված աշխատանքների ինքնարժեքին և այլն: Արտադրությունում օգտագործվող նյութերի, դետալների, կոնստրուկցիաների համեմատաբար հաճախակի փոխարինման հետևանքով դրանց անվանում են շրջանառու ֆոնդեր: Շրջանառու ֆոնդերի կազմի մեջ մտնում են արտադրական պաշարները և արտադրության գործընթացում մասնակցող միջոցները:

Արտադրական պաշարները աշխատանքի առարկաներ են, որոնք նախատեսված են շինարարական արտադրության անխափան աշխատանքի ապահովման համար, սակայն դեռ ներառված չեն արտադրական գործընթացում: Արտադրական պաշարները ներառում են հիմնական նյութերը, դետալները և կոնստրուկցիաները, օժանդակ նյութերը, վառելիքը, սակավարժեք և արագամաշ իրերը:

Հիմնական նյութերն աշխատանքի արտադրողականության գործընթացում ուղղակի օգտագործվողներն են, ինչպես նաև շինարարական հրապարակներում կոնստրուկցիաների, դետալների պատրաստման համար: Հիմնական նյութերի կազմում են ներառված ցեմենտը, անտառանյութը, ավազը, խիճը, մետաղը, մետաղական նյութերը (մեխեր, հեղույսներ, պնդօղակներ, մետաղյա իրեր և այլն), սանիտարատեխնիկական նյութերը (խողովակներ, կցորդիչներ, վերելակներ և այլն), տանիքային նյութերը (ռուբերոիդ, տոլ, տանիքային երկաթ և ալն) և այլ նյութեր:

Շինարարական դետալներն ու կոնստրուկցիաները իրենցից ներկայացնում են պատրաստի հավաքովի տարրեր, որոնցով մոնտաժվում (տեղակայվում) են շենքեր և շինություններ: Դետալներին են պատկանում դռների և պատուհանների շրջանակները, ճարտարապետական տարրերը և այլն: Կոնստրուկցիաների շարքին են դասվում ֆերմաները, սյուները, պատի պանելները, աստիճանամարշերն ու աստիճանահարթակները և այլն:

Օժանդակ նյութերը ուղղակիորեն ներառված չեն կառուցվող օբյեկտների կազմի մեջ: Դրանք անհրաժեշտ են շինարարության արտադրական գործընթացների սպասարկման համար: Դրանք այն նյութերն են, որոնք կիրառվում են շինարարական տեխնիկայի և սարքավորումների շահագործման գործընթացում (քսուքային նյութեր և այլն) կամ սպասարկում են աշխատանքների արտադրության գործընթացը (օրինակ՝ պայթուցիկ նյութեր): Արտադրական պաշարների այս բաղադրիչ մասում ներառված են նաև մեքենաների և սարքավորումների պահեստամասերը, գույքային տարաները (տակառներ, տոպրակներ, տուփեր և այլ տեսակի տարաներ), որոնք օգտագործվում են շինարարության համար ստացվող նյութերի և վառելիքի փաթեթավորման համար:

Սակավարժեք և արագամաշ իրերը (ՍԱԻ)՝ շրջանառու ֆոնդերի այն մասն են, որոնց մեջ մտնում են.

- մեկ տարուց պակաս ծառայության ժամկետ ունեցող իրեր՝անկախ նրանց արժեքից,
- հատուկ գործիքներ և հարմարանքներ, փոխարինող սարքավորումներ՝ անկախ նրանց արժեքից,

- հատուկ հագուստ և կոշկեղեն, ինչպես նաև հանրակացարանների համար նախատեսված անկողնային իրեր՝ անկախ նրանց արժեքից և ծառայության ժամկետից:

Սակավարժեք և արագամաշ իրերը (ՍԱԻ) իրենց տնտեսական բնույթով մոտ են հիմնական ֆոնդերին, քանի որ իրենց արժեքը փոխանցում են արտադրվող արտադրանքին առանձին մասերով՝ ըստ մաշվածության աստիճանի: ՍԱԻ-ն ձեռք է բերվում նույն ձևով, ինչպես և նյութերը: Այդ իսկ պատճառով ՍԱԻ-ի վերագրումը շրջանառու ֆոնդերին և պաշարներին պայմանական է, քանի որ դրանց մեծ մասը գտնվում է ոչ թե պահեստներում որպես պաշար, այլ գտնվում է շահագործման մեջ: Այս կարգը ընդունված է սակավարժեք և արագամաշ իրերի հաշվառումն ու պլանավորումը պարզեցնելու նպատակով, քանի որ նրանց տեսականին բավականին բազմազան է:

ՍԱԻ-ն ըստ իրենց կազմի և գործառութային նշանակության, ստորաբաժանվում են.

- ընդհանուր օգտագործման գործիքներ և հարմարանքներ, կտրող, հղկիչ, հարվածային, փականագործային հավաքովի, չափիչ և այլ գործիքներ և հարմարանքներ, որոնք ունեն համապիտանի կիրառություն և կապված չեն աշխատանքների որոշակի ձևի կատարման հետ: Հատուկ նշանակության գործիքներ և հարմարանքներ, կտրող, չափիչ և այլ գործիքներ և հարմարանքներ, որոնք կիրառվում են որոշակի տիպի աշխատանքների արտադրության դեպքում,
- փոխարինվող սարքավորումներ՝ մեքենաների և սարքավորումների մասեր են, որոնք օգտագործվում են մաշված մասերի փոխարինման համար առանց վերանորոգման,
- սակավարժեք տնտեսական գույք՝ այն առարկաներն են, որոնք գործածվում են տնտեսական կարիքների (գրասենյակային կահույք, ժամացույցներ և այլնի) համար,
- հատուկ հագուստ և հատուկ կոշկեղեն՝ արտադրության վնասակար նյութերից անհատական պաշտպանության առարկաներ կամ բանվորին և նրա հագուստը վաղաժամ մաշվածությունից զերծ պահող առարկաներ (ձեռնոցներ, ակնոցներ, գոգնոցներ և այլն),

- անկողնային իրեր՝ հանրակացարաններում օգտագործվող բարձեր, բարձի երեսներ, դոշակներ, սավաններ, որոնք գտնվում են շինարարական կազմակերպության հաշվեկշռում:

Արտադրական պաշարները, մուտք գործելով արտադրության գործընթաց, վերածվում են արտադրության գործընթացի միջոցների և անվանվում են արտադրության գործընթացի ֆոնդեր:

Արտադրության գործընթացի շրջանառու ֆոնդերին են վերաբերում համաձայն շինարարատեղակայման աշխատանքների անավարտ արտադրությունը, օժանդակ արտադրությունը, ինչպես նաև ապագայում կատարվող ծախսերը:

Շինարարատեղակայման աշխատանքների անավարտ արտադրությունը շինարարական արտադրության նյութական, տեխնոլոգիապես անավարտ այն մասն է, առանց որի գործընթացն անընդհատ չի կարող իրականացվել: Շինարարատեղակայման աշխատանքների անավարտ արտադրության կազմի մեջ են մտնում անավարտ աշխատանքներ կոնստրուկտիվ տարրերի և շինարարատեղակայման աշխատանքների այն մասերի վերաբերյալ, որոնք չեն կարող ներառվել ավարտված աշխատանքների ընդունման ակտերում և վճարվել հաշվարկների գոյություն ունեցող կարգին համապատասխան պատվիրատուի կողմից կատարված աշխատանքների դիմաց:

Ապագայում կատարվող ծախսերի նպատակն է արտադրական գործընթացի նախապատրաստումը և նախատեսված է անխափան շինարարական արտադրության ապահովման համար: Վերջինիս կազմում ներառված են, օրինակ, ժամանակավոր ոչ տիտղոսային շենքերի և շինությունների (կենցաղային շինություններ, ճաշարաններ և այլն) շինարարության ծախսերը, մեքենաները շինարարական հրապարակ բերման և տեղակայման, կոնստրուկցիաների և նյութերի փորձարկման, հողային շերտերի հետ կապված ծախսերը և այլն:

Այս ծախսերի յուրահատկությունն այն է, որ տվյալ հաշվետու ժամանակաշրջանում դրանք իրականացվում են միաժամանակ, սակայն շինարարատեղակայման աշխատանքների ինքնարժեքին են փոխանցվում առանձին մասերով, քանի որ կապված են ոչ միայն ընթացիկ, այլև ապագա

ժամանակաշրջանի արտադրության հետ: Շրջանառու ֆոնդերի այս խմբում է ներառված նաև շինարարական կազմակերպության հաշվեկշռում գտնվող կազմակերպությունների անավարտ արտադրությունը:

Յուրաքանչյուր շինարարական կազմակերպություն տնտեսական գործունեություն է իրականացնում ոչ միայն արտադրության, այլև շրջանառության ոլորտում իրացնելով պատրաստի արտադրանք, աշխատանքներ, ծառայություններ և գնելով անհրաժեշտ նյութատեխնիկական պաշարներ: Այդ իսկ պատճառով, շրջանառու ֆոնդերից բացի, շրջանառու միջոցների կազմում են գտնվում նաև շրջանառության ֆոնդերը, որոնք ներառում են միջոցներ հաշվարկներում և դրամական միջոցներ: Հաշվարկներում միջոցներին վերաբերվում են կատարված աշխատանքների դիմաց պատվիրատուներին ներկայացված հաշիվներում գրանցված այն գումարները, որոնց վճարման ժամանակամիջոցը դեռ չի սկսվել: Այդ գումարների ձևավորման պատճառը կայանում է նրանում, որ պատրաստի շինարարական արտադրանքի իրացումը որոշակի ժամանակ է պահանջում, որի ընթացքում նախօրոք ծախսված միջոցները գտնվում են պատվիրատուների հետ հաշիվների մարման փուլում: Այս միջոցներին են վերաբերվում նաև ապրանքների և ծառայությունների, տրված կանխավճարների, շինարարական կազմակերպության կողմից ստացված մուրհակների դիմաց կուտակված դեբիտորական պարտքը, հաշվետու անձանց մոտ գտնվող գումարները և այլն:

Նույն հոդվածի մեջ են մտնում մատակարարներին տրվող պարտքերի գումարներն ապրանքների և ծառայությունների, տրված մուրհակների, աշխատավարձի վճարման համար ստացված կանխավճարների դիմաց՝ բյուջեի և ապահովագրական կազմակերպությունների հետ հաշիվների մարման նպատակով: Պարտքերի թվարկված գումարները շինարարական կազմակերպության պարտավորություններն են, որոնք էլ հանդիսանում են շինարարական կազմակերպության կրեդիտորական պարտքը:

Դրամական միջոցները կազմակերպության դրամարկղում գտնվող կանխիկ դրամական միջոցների գումարն են, բանկի հաշվարկային, արտարժութային և այլ հաշիվներում պահվող ազատ դրամական միջոցները, ինչպես նաև արժեթղթերը (բաժնետոմսեր, պարտատոմսեր,

խնայողական հավաստագրեր, մուրհակներ) և շինարարական կազմակերպության այլ դրամական միջոցները:

Շրջանառու միջոցների առանձին տարրերի միջև հարաբերությունը ցույց է տալիս դրանց կառուցվածքը: Շրջանառու միջոցների կառուցվածքը սովորաբար արտահայտվում է ծախսերի ամբողջ արժեքում նրանց յուրաքանչյուր տարրի տոկոսային պարունակությամբ: Այն կախված է կատարվող աշխատանքների բնույթից, դրանց աշխատատարությունից և նյութատարությունից, աշխատանքների մեքենայացման, շինարարության հավաքովի լինելու աստիճանից, պատվիրատուների հետ կատարված աշխատանքների դիմաց հաշիվների մարման ձևերից և մի շարք այլ գործոններից:

Վերջին ժամանակներս կապալային շինարարական կազմակերպությունների շրջանառու միջոցների ձևավորման աղբյուրների կառուցվածքը ենթարկվել է բազմաթիվ փոփոխությունների, և ներկայում առավել մեծ տեսակարար կշիռ ունեն վարձու միջոցները, այդ թվում բանկերի վարկերը և կրեդիտորական պարտքերը:

Շինարարական կազմակերպության շրջանառու միջոցները՝ ըստ ձևավորման աղբյուրների, բաժանվում են սեփական և վարձու միջոցների: Սեփական շրջանառու միջոցները նախատեսված են արտադրական պաշարների ստեղծման, անավարտ արտադրության աշխատանքների ավարտման և շինարարական կազմակերպության բնականոն ու անխափան աշխատանքի ապահովման նպատակով կատարված ծախսերի նվազագույն պահանջը բավարարելու համար:

Սեփական շրջանառու միջոցների աղբյուր են հանդիսանում կանոնադրական կապիտալը, շահույթը, ինչպես նաև լրացուցիչ և պահուստային կապիտալը: *Կանոնադրական կապիտալը կազմակերպությունների ստեղծման ժամանակ նրանց գույքում հիմնադիրների կողմից կատարված դրամական ներդրումների ամբողջությունն է:* Նախատեսված է ստեղծվող կազմակերպության գործունեության ապահովման համար՝ սահմանադրական փաստաթղթով (կազմակերպության կանոնադրությամբ) սահմանված չափով: Շահույթը բնորոշում է կազմակերպության գործունեության ֆինանսական արդյունքը և օգտագործվում է որպես աշխատանքների

ծավալի ընդլայնման կամ արտադրության պայմանների փոփոխման դեպքում սեփական շրջանառու միջոցների լրացման աղբյուր:

Լրացուցիչ կապիտալը ձևավորվում է հիմնական ֆոնդերի վերագնահատման (ավելացման նպատակով), իրավաբանական և ֆիզիկական անձանցից տարբեր ակտիվների անհատույց ստացման, ինչպես նաև սեփական արժեթղթերի վաճառքի հաշվին: Նախատեսված է կազմակերպության սեփական միջոցների ձևավորման համար:

Պահուստային կապիտալը ձևավորվում է կազմակերպության շահույթի հաշվին և նախատեսված է չնախատեսված կորուստների ու վնասների ծածկման (այդ թվում և շրջանառու միջոցների կազմում), ինչպես նաև արտոնյալ բաժնետոմսերի շահաբաժինների վճարման համար, այն դեպքում, երբ այդ նպատակների համար բավականաչափ շահույթ չկա:

Շրջանառու միջոցների կարևոր ներքին աղբյուր են հանդիսանում կայուն պասիվները, որոնց թվին են պատկանում աշխատողների նվազագույն փոխանցվող պարտքը, պարտադիր սոցիալական, բժշկական ապահովագրման հիմնադրամներին, թոշակառուների հիմնադրամին և բնակչության զբաղվածության հիմնադրամին փոխանցվող հատկացումների պարտքը, ենթակապալառուներին, նյութատեխնիկական ռեսուրսների մատակարարներին տրվող պարտքը, ինչպես նաև հարկերի, գանձումների և բյուջեի վճարումների պարտքերը և պարտքերի այլ տեսակներ:

Փոխառու միջոցներ են կոչվում այն միջոցները, որոնք ներգրավվում են շինարարական կազմակերպությունների կողմից ֆինանսավորման տարբեր աղբյուրներից:

Այս միջոցները ոչ թե հաստատվում են որպես կազմակերպության միջոցներ, այլ ժամանակավորապես մասնակցում են նրա շրջապտույտում: Հիմնականում կարճաժամկետ բանկի վարկն է կազմակերպության տարբեր կարիքների համար, այդ թվում նյութերի ձեռքբերման, աշխատավարձի վճարման և այլ նպատակների համար՝ պարտադիր վերադարձման և որոշակի վարձավճարի պայմանով: Վարկի տոկոսադրույքը սահմանվում է առևտրային բանկերի կողմից հաշվի առնելով ՀՀ ԿԲ կողմից ընդունված միջին տոկոսադրույքը:

Վարկի ձևավորման ժամանակ շինարարական կազմակերպությունը բանկին պետք է ներկայացնի փաստաթուղթ, որը հիմնավորում է փոխառու միջոցների անհրաժեշտությունն ու չափը: Դրանք կարող են լինել պայմանագրեր մատակարարող կազմակերպությունների հետ, ստացված նյութական պաշարների, կատարված աշխատանքների և մատուցված ծառայությունների հաշիվներ և այլն: Վարկավորված միջոցները հատուկ բացված վարկավորման հաշվից փոխանցվում են նյութական ռեսուրսներ մատակարարողների և աշխատանքներ իրականացնողների հաշվարկային հաշիվներին:

Վարկի և վարկի տոկոսի մարման ժամկետները և պայմանները սահմանվում են շինարարական կազմակերպության և բանկի միջև պայմանագրի կնքման ժամանակ: Վարկի վերադարձման և տոկոսների վճարման ժամկետների խախտման դեպքում սահմանվում են տուգանքային պատժամիջոցներ, դրանց չափը սահմանվում է պայմանագրի կնքման ժամանակ:

Շինարարական կազմակերպությունների շրջանառու միջոցների ձևավորման համար նախատեսված փոխառու միջոցների թվին են պատկանում նաև իրավաբանական և ֆիզիկական անձանցից պարտք վերցված գումարները:

5.2. Շրջանառու միջոցների նվազագույն պահանջարկի հաշվարկը

Շրջանառու միջոցները, գտնվելով անընդհատ շարժման մեջ, արտադրության ոլորտից անցնում են շրջանառության ոլորտ, այսինքն՝ շրջապտույտ են գործում:

Շրջանառու միջոցների առանձին տարրերը ժամանակի յուրաքանչյուր պահին գտնվում են շրջապտույտի բոլոր փուլերում, արտադրական պաշարների կազմում, անավարտ արտադրությունում, ինչպես նաև արտադրանքի շրջանառության և իրացված արտադրանքի հաշվարկների փուլում: Շրջանառու միջոցների շրջապտույտի սխեման միևնույնն է արտադրության բոլոր ձևերի, այդ թվում և շինարարության համար:

Շրջանառու միջոցների արժեքի շարժը կարող է ներկայացվել հետևյալ տեսքով.

$$Դ \rightarrow Ա_{աշխ} \rightarrow Ա \rightarrow ԱնԱ \rightarrow Պ_{արտ} \rightarrow Դ, \qquad (5.1)$$

որտեղ Դ-ն՝ դրամն է, $Ա_{աշխ}$-ն՝ արտադրության համար նախատեսված աշխատանքի առարկաները, Ա-ն՝ արտադրություն, ԱնԱ-ն՝ անավարտ արտադրություն, $Պ_{արտ}$-ն՝ պատրաստի արտադրանք:

Շրջապտույտի առաջին փուլում շրջանառու միջոցների շարժը իրականացվում է ըստ $Դ \rightarrow Ա_{աշխ}$ բանաձևի: Կատարվում է դրամական միջոցների աշխատանքների արտադրության համար նախատեսված հիմնական նյութերի, բաղադրատարրերի, կոնստրուկցիաների, օժանդակ նյութերի և այլնի տեսքով:

Ընդ որում՝ միջոցները դրամական ձևից վերածվում են ապրանքայինի արտադրական պաշարների տեսքով:

Շրջապտույտի երկրորդ փուլում շրջանառու միջոցները գտնվում են արտադրության ոլորտում, որտեղ տեղի է ունենում շինարարա-տեղակայման աշխատանքների արտադրության համար նախատեսված աշխատանքի առարկաների արտադրական սպառման գործընթաց: Շրջանառու միջոցների շարժը իրականացվում է $Ա_{աշխ} \rightarrow Ա \rightarrow ԱնԱ \rightarrow Ա_{աշխ} \rightarrow Պ_{արտ}$ բանաձևով: Այն սկսվում է աշխատանքի առարկաների անմիջականորեն արտադրության գործընթաց ներմուծմամբ և ավարտվում է պատրաստի արտադրանքի թողարկմամբ:

Երրորդ փուլում ($Պ_{արտ} \rightarrow Դ$) տեղի է ունենում միջոցների անցում արտադրությունից շրջանառության ոլորտ, իրականացվում է պատրաստի արտադրանքի իրացում, որը համապատասխանում է միջոցների՝ ապրանքայինից դրամական ձևի փոխակերպմանը:

Արտադրության ավարտման և արտադրանքի իրացման գործընթացի ավարտը՝ դա շինարարական կազմակերպության հաշվին իրացված արտադրանքի դիմաց համապատասխան համարժեքի ստացումն է որոշակի դրամական գումարի տեսքով:

Անխափան արտադրական գործընթացի ապահովման համար շինարարատեղակայման կազմակերպությունների տրամադրության տակ պետք է լինեն արտադրական պաշարներ, աշխատանքների անավարտ արտադրություն, դրամական միջոցներ: Քանի որ դրանց պահանջարկը արտադրության և շրջանառության տարբեր փուլերում փոփոխվում է, ապա փոխվում է նաև շրջանառու միջոցների ծավալը: Առանձին կազմա-

կերպությունների ֆինանսատնտեսական շահերը առավելագույնս կբավարարվեն այն դեպքում, երբ շրջանառու միջոցների պահանջարկի ավելացման ժամանակահատվածներում հնարավոր կլինի լրացուցիչ միջոցների ներգրավում, և հակառակը, միջոցների պահանջարկի նվազեցման դեպքում շրջանառությունից դուրս մղվածը կազմակերպությունները կարող են օգտագործվել այլ նպատակների համար:

Այդ իսկ պատճառով յուրաքանչյուր շինարարական կազմակերպության համար (անկախ սեփականության ձևերից) կարևոր է որոշել շրջանառու միջոցների նվազագույն անհրաժեշտ չափը, որը պետք է բավարար լինի շինարարության անխափան գործընթացի իրականացման և օբյեկտների ու արտադրական հզորությունների ժամանակին գործարկման համար՝ արդյունավետ օգտագործելով նյութական, աշխատանքային և ֆինանսական պաշարները:

Շրջանառու միջոցների զգալի ավելցուկն անհրաժեշտ նվազագույն պահանջարկի նկատմամբ պատճառ է դառնում նյութերի, ոչ արտադրական ծախսերի համար հատկացված միջոցների պաշարների անհիմն գոյացման համար: Շրջանառու միջոցների պակասի դեպքում շինարարական կազմակերպությունը չի կարողանում ժամանակին փակել մատակարարների, ծառայողների և բանվորների, բյուջեի ու արտաբյուջետային ֆոնդերի և այլ հաշիվներ:

Շրջանառու միջոցների անհրաժեշտ քանակի հաշվարկը իրականացվում է անմիջականորեն շինարարական կազմակերպությունում: Շրջանառու միջոցների պահանջարկը անհրաժեշտ է սահմանել ամեն տարի պլանավորվող տարվա և յուրաքանչյուր եռամսյակի վերջում: Շուկայական հարաբերությունների պայմաններում շրջանառու միջոցների նվազագույն պահանջարկի որոշումը և նորմավորումը խորհրդատվական բնույթ են կրում:

Շինարարական կազմակերպությունների նորմատիվային պահանջարկը, որպես օրենք, հաշվարկում են՝ ըստ նյութական արժեքների արտադրական պաշարների, անավարտ արտադրության, ապագա ժամանակաշրջանի ծախսերի և դրամական միջոցների:

Շրջանառու միջոցների անհրաժեշտ քանակության որոշումը տարրերի մեծամասնությամբ դա շրջանառու միջոցների նորմերի հաշվարկն է ըստ նրանց առանձին բաղադրիչների՝ արտահայտված հարաբերական մեծություններով (օրեր, տոկոսներ և այլն), և շրջանառու միջոցների չափի որոշումն է դրամական արտահայտությամբ՝ շինարարական կազմակերպության գործունեության որոշակի պայմաններից ելնելով:

Առավել աշխատատար և բարդ է շրջանառու միջոցների չափի որոշումը արտադրական պաշարների ստեղծման և շինարարատեղակայման աշխատանքների անավարտ արտադրության համար:

Արտադրական պաշարների ձևավորման համար հատկացվող շրջանառու միջոցների հաշվարկման գործընթացը սկսվում է բոլոր տեսակի նյութական պաշարների տարեկան տեսականու և ծախսի որոշմամբ՝ բնական և արժեքային արտահայտությամբ:

Հիմնական նյութերի, կոնստրուկցիաների, բաղադրատարրերի ծախսը որոշվում է ըստ նյութերի խմբերի (աղյուս, պատի պանելներ, ավազ և այլն), իսկ առանձին խմբերում՝ ըստ տեսակների և տարատեսակների: Օրինակ՝ կարմիր, սիլիկատային, երեսապատման աղյուսներ և այլն: *Շրջանառու միջոցների նորմատիվը (Ն) յուրաքանչյուր հիմնական նյութի համար որոշվում է հետևյալ բանաձևով.*

$$Ն = Ծ_և \times Օ, \qquad (5.2)$$

որտեղ Ծև-ն հիմնական նյութերի մեկօրյա ծախսն է՝ ըստ շինարարատեղակայման աշխատանքների արտադրության ծախսերի նախահաշվի, մլն.դր., Օ-ն՝ պաշարի չափաբաժինը, օրեր:

Նյութերի մեկօրյա ծախսը դրամական արտահայտությամբ որոշվում է՝ ըստ աշխատանքների արտադրության նախահաշվի՝ տարեկան ծախսի գումարը բաժանելով 360 օրվա վրա:

Շրջանառու միջոցների չափաբաժնի հաշվարկման դեպքում հաշվի են առնվում հետևյալ նորմագոյացուցիչ գործոնները.

- տրանսպորտային պաշար,
- նախապատրաստական,
- ընթացիկ,
- ապահովագրական պաշար:

Տրանսպորտային պաշարը հաշվի է առնում վճարման պահանջի կատարման ժամկետից մինչև շինարարական կազմակերպության պահեստ բեռի ստացման ժամկետը ընկած ժամանակահատվածը:

Նախապատրաստական պաշարի չափաբաժինը ներառում է ստացված նյութերի ընդունման, բեռնաթափման, տեսակավորման, պահեստավորման, կոմպլեկտավորման, լաբորատոր ստուգման համար անհրաժեշտ ժամանակամիջոցը և որոշվում է ըստ սահմանված չափաբաժինների կամ ըստ այդ գործողությունների կատարման համար անհրաժեշտ ժամկետների մասին տվյալների:

Ընթացիկ (պահեստային) պաշարը նախատեսված է երկու հերթական մատակարարարումների միջև ընկած հատվածներում արտադրական գործընթացի անխափան իրականացման համար: Ընթացիկ պաշարի չափը կախված է միջին օրական ծախսից և մատակարարումների հաճախականությունից: Որքան հաճախ են մատակարարվում նյութերը շինարարական հրապարակ, այնքան պետք է փոքր լինի ընթացիկ պաշարը շինարարատեղակայման աշխատանքների անփոփոխ ծավալի դեպքում: Ընթացիկ պաշարի չափը սովորաբար ընդունվում է երկու մատակարարումների միջև ընկած ժամանակահատվածի միջին տևողության 50%-ի չափով:

Ապահովագրական (երաշխավորող) պաշարն անհրաժեշտ է մատակարարումների ժամանակ, տրանսպորտի աշխատանքում և մատակարարման ժամկետների խախտման դեպքում հնարավոր խափանումների հետևանքների վերացման համար: Երաշխավորվում է ապահովագրական պաշարի չափաբաժինը ըստ օրերի սահմանել ընթացիկ (պահեստային) պաշարի համար շրջանառու միջոցների չափաքանակի 30-50%-ի չափով:

Շրջանառու միջոցների պահանջարկը օժանդակ նյութերի համար կարող է հաշվարկվել նախորդ տարվա միջին փաստացի պաշարի (օրերով) և ընթացիկ տարվա մեկօրյա ծախսի (ըստ նախահաշվում աշխատանքների արտադրության ծախսերի) արտադրյալի միջոցով:

Շրջանառու միջոցների պահանջարկը արագամաշ և սակավարժեք առարկաների համար սահմանվում է, որպես կանոն, նրանց արժեքի 60%-ի չափով:

Շինարարատեղակայման աշխատանքների անավարտ արտադրության համար շրջանառու միջոցների չափը կարող է հաշվարկվել ըստ անավարտ արտադրության պլանային մնացորդի գումարի, պլանավորվող տարվա այն եռամսյակի վերջում, որտեղ այն նվազագույնն է: *Պլանային մնացորդի որոշման համար կարելի է օգտագործել հետևյալ բանաձևը՝*

$$\text{ԱնԱ}_{\text{պ}} = \text{ԱնԱ}_{\text{ս}} + \text{Ծվ}_{\text{շտա}} - \text{ՊՕ}_{\text{պ}}, \qquad (5.3)$$

որտեղ ԱնԱպ-ն շինարարատեղակայման աշխատանքների անավարտ արտադրության մնացորդն է պլանավորվող տարվա համապատասխան եռամսյակի սկզբում, Ծվշտա-ն՝ շինարարատեղակայման աշխատանքների ծավալը պլանավորվող տարվա համապատասխան եռամսյակում, ՊՕպ-ն՝ պատրաստի օբյեկտների գործարկումը պլանավորվող տարվա համապատասխան եռամսյակում:

Անավարտ արտադրության համար շրջանառու միջոցների չափը կախված է շինարարության տևողությունից, կառուցվող օբյեկտների նախահաշվային արժեքից, աշխատանքների տարեկան ծրագրից, ծախսերի ավելացման աստիճանից և մի շարք այլ գործոններից:

Ապագա ժամանակամիջոցի ծախսերի համար շրջանառու միջոցների նվազագույն պահանջարկը կարելի է որոշել հետևյալ բանաձևով.

$$\text{Ն}_{\text{ած}} = \text{Մ}_{\text{օ}} + \text{Ծ}_{\text{պ}} - \text{Ծ}_{\text{գ}}, \qquad (5.4)$$

որտեղ Մօ-ն միջոցների գումարն է ապագա ժամանակամիջոցների ծախսերի համար, որը ներդրվում է պլանավորված տարվա սկզբում, Ծպ-ն՝ ապագա ժամանակամիջոցի ծախսեր պլանավորված տարում, և որոնք ենթակա են ապագայում վերագրվելու աշխատանքների ինքնարժեքին, Ծգ-ն՝ ապագա ժամանակամիջոցի ծախսեր, որոնք ենթակա են գրանցման աշխատանքների ինքնարժեքին պլանավորված ժամանակահատվածում:

Կարելի է նաև կիրառել պարզեցված բանաձև.

$$\text{Ն}_{\text{ած}} = \text{Ծվ}_{\text{շտա}} \times \text{Գ}_{\text{ած}}, \qquad (5.5)$$

որտեղ Ծվշտա-ն շինարարատեղակայման աշխատանքների ծավալն է պլանավորված տարում, Գած-ն՝ նախորդ տարվա շինարարատեղակայման աշխատանքների նկատմամբ ապագա ժամանակամիջոցների ծախսերի տեսակարար կշիռը հաշվի առնող գործակից:

Ընդհանուր կազմակերպության համար աշխատանքի կայունությունը ապահովող շրջանառու միջոցների նվազագույն պահանջարկը հավասար է պահանջարկների գումարին ըստ շրջանառու միջոցների առանձին տարրերի:

5.3.Շրջանառու միջոցների օգտագործման արդյունավետությունը

Շրջանառու միջոցների օգտագործման արդյունավետության կարևորագույն ցուցանիշ է հանդիսանում շրջանառելիության ցուցանիշը, որը բնութագրում է նրանց շրջապտույտի արագությունը և արտացոլում է շրջանառու միջոցների չափի, շինարարատեղակայման աշխատանքների ծավալի և դնրանց կատարման ժամանակի փոխկապակցվածությունը:

Շրջանառու միջոցների շրջանառելիությունը բնորոշվում է ժամանակի պլանային հատվածում դրամական միջոցների լրիվ շրջապտույտի պարբերաշրջանների քանակով:

Շրջանառու միջոցների շրջանառելիության արագացումը վկայում է շինարարական կազմակերպության շրջանառու միջոցների յուրաքանչյուր դրամին համապատասխանող պատրաստի արտադրանքի թողարկման և իրացման ավելացման մասին: Որքան արագ են միջոցները կատարում շրջապտույտ, այնքան փոքր է դրանց գումարը, որն անհրաժեշտ է միևնույն ծավալի շինարարատեղակայման աշխատանքների կատարման և օբյեկտների ու արտադրական հզորությունների շահագործման համար: Այդ իսկ պատճառով շինարարությունում ներդրված շրջանառու միջոցների օգտագործման արդյունավետությունը մեծմասամբ որոշվում է շինարարությունում արտադրական պարբերաշրջանի տևողությամբ:

Շրջանառու միջոցների օգտագործման աստիճանը կարելի է որոշել՝ օգտագործելով նրանց շրջանառելիության ցուցանիշները, այն է՝ շրջանառելիության գործակիցը (միջոցների շրջապտույտների թիվն որոշակի ժամանակահատվածի ընթացքում) և մեկ շրջապտույտի միջին տևողությունը օրերով:

Շրջանառելիության գործակիցը՝ ըստ ժամանակի, հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$Գ_{շրջ} = Հ/ԾՄ, \qquad (5.6)$$

որտեղ Հ-ն աշխատանքների հանձնման հասույթն է, որը հավասար է պայմանագրային գնով շինարարատեղակայման աշխատանքների ծավալին գումարած ոչ պայմանագրային գնով փոխհատուցումներ և արտոնություններ, ինչպես նաև որոշակի ժամկահատվածում նյութերի ու ծառայությունների իրացման հասույթ; ՇՄ-ն՝ շրջանառու միջոցների միջին մեծությունը նույն ժամանակահատվածում:

Շրջանառելիության գործակիցը ցույց է տալիս շրջանառու միջոցների շրջապտույտների թիվը որոշակի ժամանակահատվածում կամ շրջանառու միջոցների 1000 դրամին համապատասխանող արտադրանքի ծավալը դիտարկվող ժամանակամիջոցում:

Պլանավորված ժամանակահատվածի (տարի, եռամսյակ, ամիս) վերջում շրջանառելիության գործակցի նվազումը դիտարկվող ժամանակահատվածի սկզբում հաշվարկված գործակցի համեմատ վկայում է շրջանառու միջոցների շրջապտույտի դանդաղեցման մասին, և հակառակը: *Մեկ շրջապտույտի միջին տևողությունը ($Տ_{միջ}$), ընդունված հաշվարկային ժամանակահատվածում, արտահայտվում է այդ ժամանակամիջոցում օրերի թվի և շրջանառելիության գործակցի մեծության հարաբերությամբ և որոշվում է հետևյալ բանաձևով.*

$$Տ_{միջ} = Ժ_{հ} / Գ_{շրջ}, \quad (5.7)$$

որտեղ $Ժ_{հ}$-ն հաշվարկային ժամանակամիջոցի տևողությունն է, օրերը, $Գ_{շրջ}$-ն՝ շրջանառելիության գործակիցը:

Շրջապտույտի տևողությունը բնորոշում է այն ժամանակահատվածը, որի ընթացքում շրջանառու միջոցները կանցնեն շրջապտույտի բոլոր փուլերով: Այն ցույց է տալիս, թե քանի օրից են շրջանառու միջոցները վերադառնում կազմակերպություն աշխատանքների, ծառայությունների իրացումից ստացված հասույթի ձևով: *Շրջանառու միջոցների շրջանառելիությունը յուրաքանչյուր փուլում որոշվում է հետևյալ բանաձևով՝*

$$Տ^{÷}_{միջ} = Տ_{միջ} \times Բ/100, \quad (5.8)$$

որտեղ $Տ_{միջ}$-ը շրջանառության առանձին փուլերում միջոցների կանգ առնելու տևողությունն է, օրեր, Բ-ն՝ շրջանառու միջոցների կամ խմբերի բաժնեմասը, %:

Շրջանառու միջոցների օգտագործման ցուցանիշների հաշվարկման ժամանակ դրանց առկայությունն որոշվում է՝ ելնելով տվյալ ժամանակամիջոցի սկզբում և վերջում փաստացի մնացորդներից, որոնք բերված են կազմակերպության հաշվեկշռի ակտիվի երկրորդ և երրորդ բաժիններում:

Շրջանառու միջոցների օգտագործման արդյունքը շրջանառու միջոցների շրջանառելիության նկատմամբ գտնվում է կախվածության մեջ: Միջոցների շրջանառելիության արագացումը նշանակում է դրանց մի մասի դուրս գալը շրջանառելիությունից: Այն կարող է լինել բացարձակ, երբ նվազում է միջոցների պահանջվող գումարը, և հարաբերական, երբ շրջանառու միջոցների անփոփոխ չափերի դեպքում մեծանում է շինարարատեղակայման աշխատանքների ծավալը:

Շրջանառու միջոցների շրջանառելիությունն արագացնող կարևոր միջոցառում է համարվում աշխատանքների հաշվարկման համակարգի բարելավումը:

Նախահաշվային, ֆինանսական և պայմանագրային օրինաչափությունների պահպանումը ևս կարևոր գործոն է հանդիսանում շրջանառու միջոցների օգտագործման արդյունավետության բարձրացման համար: Շրջանառու միջոցների շրջանառելիության արագացման վրա զգալիորեն ազդում է տեխնոլոգիայի և աշխատանքների կազմակերպման կատարելագործումը, որը կապահովի արտադրության և աշխատաժամանակի կորուստների վերացումը:

Շրջանառու միջոցների շրջանառելիությունը հնարավոր է արագացնել՝ կրճատելով մատակարարից դեպի սպառող շղթայի վրա նյութերի առկայության տևողությունը, նվազեցնելով ընթացիկ և ապահովագրական պաշարները, բացառելով գերնորմատիվային պաշարների ոչ հիմնավորված կուտակումը, կիրառելով բեռնման և բեռնաթափման աշխատանքների ավտոմատացումը: Շրջանառու միջոցների շրջանառելիության արագացման համար անհրաժեշտ է կրճատել անավարտ արտադրությունը:

Շուկայական տնտեսության պայմաններում շրջանառու միջոցների օգտագործման արդյունավետությունը բնութագրող նշված ցուցանիշների հետ մեկտեղ անհրաժեշտ է նաև դիտարկել շրջանառու միջոցների չափի և կառուցվածքի ազդեցությունը շինարարական կազմակերպության վճարունակության և ֆինանսական վիճակի վրա:

Շրջանառու միջոցների կառուցվածքն ուղղակի ազդեցություն է գործում այն կազմակերպության վճարունակության վրա, որից կախված է վարկերի և պարտապանների կողմից տրամադրվող այլ փոխառու միջոցների ստացման հնարավորությունը: Եթե կազմակերպությունն իր շրջանառությունում ցանկանում է ունենալ փոխառու միջոցներ, այն պետք է ապահովի վճարունակության այնպիսի բարձր մակարդակ, որը բավարար կլինի փոխառու միջոցների տրամադրման վերաբերյալ վարկատուի կողմից որոշում ընդունելու համար:

Վճարունակության գնահատման համար օգտագործվում են հիմնականում երկու ցուցանիշ.

- բացարձակ իրացվելիության գործակից,
- ծածկման ընդհանուր գործակից:

Նրանցից յուրաքանչյուրի հաշվարկը կատարելիս օգտագործում են շրջանառու ակտիվների և կարճաժամկետ պարտավորության առանձին տարրերի կամ ընդհանուր գումարի վերաբերյալ տվյալներ:

Բացարձակ իրացվելիության գործակիցը իրենից ներկայացնում է դրամական միջոցների և կարճաժամկետ ֆինանսական ներդրումների գումարի հարաբերությունը կազմակերպության կարճաժամկետ պարտավորությունների գումարին:

Ծածկման ընդհանուր գործակիցը ցույց է տալիս, թե քանի անգամ են կազմակերպության շրջանառու ակտիվները գերազանցում կարճաժամկետ պարտավորությունների գումարը:

Այս գործակիցը պետք է մեկից մեծ լինի: Այդ դեպքում կազմակերպությունը պարտքերի մարումից հետո անխափան աշխատանքի շարունակման համար ունենում է բավականաչափ շրջանառու ակտիվներ: Կազմակերպությունների վճարունակության բարձրացման եղանակները կախված են շրջանառու ակտիվների (միջոցների) բնույթից: Վճարունակության մեծացումը կարող է ապահովվել շրջանառու միջոցների ձևավորման աղբյուրներում սեփական շրջանառու միջոցների բաժնեմասի մեծացման և փոխառու միջոցների բաժնեմասի համապատասխանաբար նվազեցման հաշվին: Վճարունակության բարձրացման մեկ այլ եղանակ է հանդիսանում շրջանառու ակտիվների որոշ մասի ուղղումը ուղղակիորեն պարտ-

քերի մարմանը՝ սեփական շրջանառու միջոցների անփոփոխ մնալու դեպքում:

Շինարարական կազմակերպության ֆինանսական վիճակի (հաշվապահական հաշվեկշռի կառուցվածքի որակի) գնահատման համար կիրառվում է ընթացիկ իրացվելիության գործակիցը և շրջանառու միջոցներով ապահովվածության գործակիցը:

Ընթացիկ իրացվելիության գործակիցն արտադրական պաշարների, պատրաստի արտադրանքի, դրամական միջոցների, դեբիտորական պարտքի և այլ շրջանառու ակտիվների (հաշվեկշռի ակտիվի II և III բաժինները) տեսքով կանխիկ շրջանառու միջոցների փաստացի արժեքի հարաբերությունն է ժամկետային պարտավորություններին, որոնք կարող են լինել բանկի կարճաժամկետ վարկեր, բազմաթիվ կրեդիտորական պարտքեր և այլն (հաշվեկշռի պասիվի II բաժինը):

Ընթացիկ իրացվելիության գործակիցը բնութագրում է կազմակերպության ընդհանուր ապահովվածությունը շրջանառու միջոցներով, որոնք անհրաժեշտ են արտադրատնտեսական գործունեության իրականացման և ժամկետային պարտավորությունների ժամանակին մարման համար:

Սեփական միջոցներով ապահովվածության գործակիցը իրենից ներկայացնում է սեփական միջոցների աղբյուրների ծավալի (հաշվեկշռի պասիվի առաջին բաժնի «Ընդամենը») և հիմնական միջոցների ու այլ արտաշրջանառու ակտիվների փաստացի արժեքի (հաշվեկշռի ակտիվի առաջին բաժնի «Ընդամենը») տարբերության և շրջանառու ակտիվների փաստացի արժեքի (հաշվեկշռի ակտիվի երկրորդ և երրորդ բաժինների «Ընդամենի»շ գումարը) հարաբերությունը:

Կազմակերպության հաշվեկշռի կառուցվածքը կարելի է համարել անբավարար, իսկ կազմակերպությունն անվճարունակ՝ պայմաններից որևէ մեկի բավարարման դեպքում.

- ընթացիկ իրացվելիության գործակցի արժեքը հաշվետու ժամանակամիջոցի վերջում փոքր է 2-ից,
- սեփական միջոցներով ապահովված գործակցի արժեքը ժամանակի միևնույն պահին փոքր է 0,1-ից:

ԳԼՈՒԽ 6

Շինարարության նյութատեխնիկական ապահովումը

6.1.Շինարարության նյութատեխնիկական ապահովման խնդիրները

Շուկայական պայմաններում շինարարության նյութատեխնիկական ապահովվածության համակարգը կենտրոնացած է արդյունաբերական կազմակերպության և շինարարական արդյունաբերության, տրանսպորտային և էներգետիկ կազմակերպությունների, գիտահետազոտական, նախագծային, կրթական և այլ հաստատությունների, տնտեսության և այլ ցանցերի վրա: Ապրանքային շուկայում գնահատելով շինարարական նյութերի իրավիճակը՝ կարելի է հաստատել, որ կազմակերպություններն աշխատում են արդյունաբերական գործունեության բավականին ազատ պայմաններում, որը հաստատված է օրենքով: Այսինքն՝ ունեն մուտք գրեթե բոլոր պաշարներին, առքուվաճառքի ժամանակ ազատ են գործընկերների ընտրության հարցում, ինքնուրույն են տնօրինում ստացված եկամուտը, իրենք են ընտրում իրենց զարգացման ուղղությունը:

Շինարարության նյութատեխնիկական պաշարները բաժանվում են երեք խմբի (տե՛ս Գծապատկեր 3.1).

- արտադրական,
- ոչ արտադրական,
- բնական:

Շինարարական կազմակերպությունների նյութատեխնիկական ապահովվածության նպատակն է.

- ժամանակին ապահովել շինարարական կազմակերպություններին անհրաժեշտ պաշարների պահանջվելիք որակը և քանակը,
- բարելավել օգտագործվող պաշարները՝ աշխատանքի արտադրողականության բարձրացում, դրամական միջոցների վերադարձ, շինարարական գործընթացների համաչափության ապահովում, երկրորդական պաշարների լրիվ օգտագործում և այլն,
- շինարարական արտադրության կազմակերպչատեխնիկական մակարդակի հետազոտում և շինմոնտաժային աշխատանքների


որակ թե՛ իրենց կազմակերպությունում և թե՛ մրցակիցների շրջանում:

Վերը թվարկված նպատակներին հասնելու համար անհրաժեշտ է անընդհատ կատարել հետևյալ աշխատանքները.

- կատարել մատակարարողների (շինարարական նյութեր, կոնստրուկցիաներ, արտադրանք, կիսաֆաբրիկատներ և այլն), մարքեթինգային հետազոտում,
- պահանջվող նյութատեխնիկական պաշարների նորմավորում,
- կազմակերպչատեխնիկական միջոցառումների մշակում՝ չափաբաժնի իջեցման և նյութատեխնիկական պաշարների նորմատիվ սպառման նպատակով,
- շինարարական արտադրության նյութատեխնիկական ապահովման նպատակով ուղիների և ձևերի փնտրում,
- նյութական հաշվեկշռման մշակում,
- շինարարական արտադրության նյութատեխնիկական ապահովվածության պլանավորում,
- շինարարական նյութերի, կոնստրուկցիաների, արտադրանքի, կիսաֆաբրիկատների և այլ նյութերի ապահովվածության կազմակերպում,
- նյութատեխնիկական պաշարների հսկողություն և հաշվառում,
- շինարարական արտադրության մնացորդների հավաքման և վերամշակման կազմակերպում,
- նյութատեխնիկական պաշարների արդյունավետ կիրառման վերլուծություն,
- նյութատեխնիկական պաշարներից օգտվելու բարելավման և դրան նպաստող աշխատանքների խթանումը:

Կախված այս գործառույթներից՝ որոշված են նյութատեխնիկական ապահովվածության համապատասխան ծառայությունները: Դրանք են.

- նյութատեխնիկական մատակարարման ծառայություն, որը պետք է ժամանակին ապահովի և կարգավորի արդյունաբերական գործընթացի համար նախատեսված հումքի, կիսաֆաբրիկատների, կոմպլեկտավորված բաղադրատարրերի մատակարարումը,



Գծապատկեր 6.1: *Նյութատեխնիկական պաշարների կազմը*

- նյութերի, վառելիքի, հումքի և պատրաստի արտադրանքի պահեստավորման ու պահպանման ծառայություն, որն ապահովվում է պահեստային տնտեսությամբ՝ հանդիսանալով մատակարարման և վաճառքների համակարգի արդյունաբերատեխնիկական բազան,
- արդյունաբերատեխնիկական ծառայություն, որը համակարգում է պատրաստի արտադրանքը: Այն շատ կարևոր է, քանի որ շենքերի և շինությունների կառուցումը պահանջում է հավաքովի տարրերի ըստ օրացույցային գրաֆիկի ճիշտ մատակարարում,
- գործիքավորված տնտեսության և տեխնիկական սարքավորումների ծառայություն: Այն պետք է արտադրությունն ապահովի գործիքներով, հարմարանքներով, տեխնոլոգիական սարքավորումներով և այլն,

- վերանորոգման մեխանիկական արտադրության ծառայություն, որը պետք է ապահովվի նորոգակայանի մեծ և բարդ սարքավորումների աշխատունակ իրավիճակը,
- տրանսպորտային գործընթացների ծառայություն, որը ապահովվում է արդյունաբերական գործընթացի բնականոն գործունեության համար մեծ քանակով բեռների տեղափոխումը ինչպես ներքին, այնպես էլ նրա մեջ չմտնող շինարարական հրապարակներում:

6.2. Նյութատեխնիկական պաշարների մատակարարման կազմակերպումը

Շուկայական պայմաններում շինարարական կազմակերպությունը կապված է շատ կազմակերպությունների հետ որպես սպառող՝ գնման շուկաների միջոցով, և որպես արտադրող՝ հումքերի շուկաների միջոցով: Շինարարության նյութատեխնիկական ապահովվածությունը վարում է ուղղակի պայմանագրեր տարբեր մատակարարների հետ: Նրանք մտնում են նյութատեխնիկական ապահովվածության համակարգի կազմի մեջ, որն ընգրկում է.

- պետական կարիքների համար նյութատեխնիկական պաշարների մատակարարում,
- տեխնոլոգիական սարքավորումների, շինարարական նյութերի, կոնստրուկցիաննների, արտադրանքների, կիսաֆաբրիկատների մեծածախ առևտուր,
- վերը նշված ռեսուրսների արևտուրը իրականացվում է շինանարարական բորսայի, առևտրի տների և միջնորդող ձեռնարկությունների համակարգի միջոցով:

Տեխնոլոգիայի և շինարարական արտադրության կազմակերպման զարգացված ձևերը պահանջում են մատակարարումների ըստ կոմպլեկտայնության և ժամանակին շինմոնտաժային աշխատանքի նյութատեխնիկական պաշարներով ապահովվածության պայմանների խիստ կատարում:

Արդյունաբերատեխնոլոգիական կոմպլեկտավորման կառավարման գլխավոր խնդիրն է հանդիսանում մեկ ամբողջական գործընթացի մեջ

նյութերի և բաղադրատարրերի նախապատրաստման կապի, կիսաֆաբրիկատների պատրաստման ապահովումը:

Արդյունաբերատեխնոլոգիական կոմպլեկտավորման կառավարման կազմակերպման ձևերը տարբեր են և կախված են շինարարական օբյեկտների առանձնահատկություններից, նրանց տարածքային տեղաբաշխումից աշխատանքի տեսքից ու ծավալից և այլն: Արդյունաբերատեխնոլոգիական կոմպլեկտավորման կառավարումը ըստ տրեստի հանձնարարության, հանդես է գալիս որպես նյութական պաշարների պատվիրատու, որոնք անհրաժեշտ են շին-մոնտաժային պլանավորված աշխատանքները կատարելու համար և պայմանագրային հարաբերության մեջ են մտնում տրանսպորտային կազմակերպությունների հետ:

Արդյունաբերատեխնոլոգիական կոմպլեկտավորման կառավարման գործառույթների մեջ են մտնում տրեստի հասցեում ընդգրկված նյութական պաշարները, նրանց պահեստավորումն ու պահպանումը, ոչ տիպիկ բաղադրատարրերի և կոնստրուկցիաների պատրաստումը, շինմոնտաժային համակարգերը կազմակերպությանը հասցնելը:

6.3.Նյութատեխնիկական պաշարների ապահովման ձևերը և մեթոդները

Շինարարության մատակարարմանը վերաբերող բոլոր հարցերը պետք է դիտարկել համակարգված և ամբողջությամբ, քանի որ կոնստրուկցիաները, դետալները և այլ նյութերը, էներգետիկ պաշարները, տեխնոլոգիական սարքավորումներն, որոնք հասնում են շինարարական հրապարակներ, կախված են բաց թողնվող արտադրանքների մրցակցությունից:

Շինարարական արտադրության կազմակերպումն իր մեջ ընդգրկում է նյութատեխնիկական ապահովվածություն, էներգետիկա, վերանորոգում, տրանսպորտային և պահեստային տնտեսություն, որակի հսկողություն: Այս գործընթացի հիմնական խնդիրներն են.

- տվյալ շինարարական արտադրությունը նյութատեխնիկական պաշարներով կառավարման համակարգերով ապահովվելու որոշում,
- դիտարկվող շինարարական արտադրությունում գործունեության նպատակների որոշում,

- խնդրի ձևակերպումը և նպատակների իրագործման աշխատանք,
- գործոնների սահմանում և ստեղծված ծառայությունների գործունեության ցուցանիշներ,
- ծառայությունների աշխատանքի ռազմավարական և օպերատիվ ծրագրերի մշակում և հարցում,
- իրագործվող ծրագրերի հսկողություն և մոտիվացիայի ապահովում,
- տրված ծառայության աշխատանքների արդյունավետության հետազոտում:

Ժամանակակից պայմաններում տարածված են պաշարներով ապահովվածության հետևյալ ձևերը.

1. ապրանքահումքային բորսաների միջոցով,
2. անմիջական կապեր,
3. աճուրդներ, մրցույթներ,
4. հովանավորություն,
5. սեփական արտադրություն և այլն:

Այս ձևերի սահմանման համար պետք է նայել մատակարարի վստահությունը:

Մատակարարաների հետ պայմանագրերի կնքման ժամանակ պետք է հաշվի առնել նրանց քանակը և որակը ապահովող հատկանիշները, առանձնապես մատակարարման ժամկետը և այլն:

Նյութատեխնիկական ապահովվածությունը հանդիսանում է կազմակերպված կապերի և պայմանագրերի վրա հիմնված արտադրության միջոցների բաշխման ձև, որը կնքված է մատակարարի և սպառողի միջև:

6.4.Նյութատեխնիկական ապահովման լոգիստիկական համակարգերը

Շինարարական համակարգի՝ ամբողջությամբ և նրա բաղադրատարրերի կազմով ուսումնասիրումը թույլ է տալիս ենթադրել, որ շինարարությունը դասվում է այն համակարգին, որը ներառում է փոխկապակցված և փոխպայմանական հոսքերի ամբողջություն: Հիմնականում դրանցից են տեղեկատվության հոսքը, նյութատեխնիկական ու ֆինանսական պաշարները և այլն:

Շենքերի ու կառույցների շինարարության ժամկետի կրճատման և բարձր որակի արդյունքի հասնելու համար առաջին հերթին պահանջվում է նշված և այլ տնտեսական հոսքերի ռացիոնալիզացում և օպտիմալացում:

Շինարարությունը, որպես համակարգ, ընդունվում է առաջին հերթին նյութատեխնիկական ապահովածության միջոցով: Որպեսզի կառուցվի ցանկացած շենք և կառույց, անհրաժեշտ են նախագծով նախատեսված բավարար քանակությամբ շինարարական նյութեր, կոնստրուկցիաներ և արտադրանքներ, հումքեր և տեխնոլոգիական սարքավորումներ և այլն: Փորձը ցույց է տվել, որ նման խնդիրների լուծման համար կիրառվում է լոգիստիկան:

Լոգիստիկան գիտություն է մինչև արդյունաբերական կազմակերպություն հումքերի և նյութերի պլանավորման, փոխադրման, կառավարման և հսկողության, ներգործարանային պայմաններում հումքի վերամշակման, պատրաստի արտադրանքը սպառողին իր հետաքրքրություններին և պահանջներին համապատասխան հասցնելու, ինչպես նաև համապատասխան տեղեկատվությունը փոխանցելու, պահելու և մշակման մասին: Հետազոտման հիմնական օբյեկտներն են հանդիսանում.

- լոգիստիկական ծախսերը,
- տեղեկատվության հոսքը,
- լոգիստիկական համակարգը,
- լոգիստիկական գործառույթը,
- լոգիստիկական նպատակը,
- լոգիստիկական գործունեությունները,
- նյութական հոսքը և այլն:

Լոգիստիկական համակարգի սահմաններում լուծվում են մի շարք խնդիրներ: Շինարարական լոգիստիկական համակարգը պետք է դիտարկել լոգիստիկական համակարգի ընդհանուր տեսության ենթատեքստում:

Ըստ հոսքերի տեսքի՝ լոգիստիկական համակարգը կարելի է բաժանել՝ նյութական, ֆինանսական, տեղեկատվական հոսքերի և աշխատանքային պաշարների հոսքերի:

Նյութական հոսքերի լոգիստիկական համակարգերը, կամ այլ կերպ ասած՝ նյութական լոգիստիկական հոսքերը միջնորդավորում են նյութական պաշարների բոլոր տեղաշարժերը: Համապատասխան ըստ շինարարական արտադրության փուլերի լոգիստիկայի տարբերակման՝ կարելի է դիտարկել այնպիսի լոգիստիկական համակարգեր, ինչպիսին են.

- գնվող լոգիստիկ համակարգեր, որոնք կազմակերպում են նյութատեխնիկական պաշարների գնումները և արտադրության տեխնոլոգիայի կոմպլեկտավորումը,
- ձեռնարկատիրական լոգիստիկ համակարգեր, որոնք կազմակերպում են շինարարական կազմակերպության պաշարների հոսքերը շինարարական կոնստրուկցիաների արտադրության ընթացքի նախագծակոնստրուկցիոն և շինմոնտաժային աշխատանքների համար,
- լոգիստիկ բաշխման համակարգեր, որոնք կազմակերպում են սպառողին առաջարկվող պատրաստի նյութերի, աշխատանքի և ծառայության խմբավորումը, ինչպես նաև դրան զուգահեռ ֆինանսների, տեղեկատվության և աշխատանքային պաշարների խմբերը,
- տրանսպորտապահեստային լոգիստիկ համակարգեր, որոնք կազմակերպում են ապրանքների և ներքին պահոցային խմբերի ստեղծումը:

Լոգիստիկական համակարգերի ձևավորման գործընթացը բարդ է, եթե այդ լոգիստիկական շղթայի մեջ թվով շատ տնտեսապես անկախ օբյեկտներ են մտնում: Այս իմաստով շատ բարդ են ներկայացվում մակրոլոգիստիկական, քան միկրոլոգիստիկական համակարգերը:

Լոգիստիկ գործունեությունը հիմնվում է երեք հիմունքների վրա՝

- տեխնիկական՝ որպես բոլոր տեխնիկական միջոցների և սարքավորումների, այդ թվում նաև հարակից նյութական պաշարների ամբողջություն,

- տեղեկատվական՝ որպես բոլոր վիճակագրական և դինամիկական տեղեկությունների ամբողջություն, որոնք վերաբերվում են նյութական և ոչ նյութական խմբավորումների շարքերին,
- կազմակերպության և բնագավառի էկոնոմիկա:

Լոգիստիկան ընդգրկում է ինչպես արտադրության ոլորտը, այնպես էլ նյութական փոխանակման ոլորտը: Լինելով վերջնական օգտագործման պաշարների խոշորագույն սուբյեկտներից մեկը՝ շինարարական համակարգին ամենաշատը այն պետք է հետաքրքրի ավելի նպատակահարմար օգտագործման տեսանկյունից: Այսպիսի խնդիրների լուծումը ունի իր առանձնահատկությունը: Շինարարական աշխատանքների գործընթացին անհրաժեշտ մեքենաների և սարքավորումների համար ամենաարդյունավետ միջոցն է հանդիսանում լիզինգի ձեռքբերումը:

Շինանյութերի և կապիտալ շինարարության բնագավառի շուկան ներկայացնում է տնտեսության մասը, որտեղ ստեղծվում են այնպիսի պայմաններ, որոնք բավարար են լոգիստիկական քաղաքականության առաջխաղացման համար:

Շինարարությունում նյութական խմբավորումը ավարտվում է այն ժամանակ, երբ սկսվում է հիմնական ֆոնդերի ստեղծման գործընթացում նյութական պաշարների օգտագործումը: Արդյունաբերությունում նյութական խմբավորումները չեն ավարտվում պատրաստի արտադրանքի ստեղծումով, այլ նրա շարժը փոխակերպվում է մեկ այլ արտադրության: Այդ պատճառով լոգիստիկայի կիրառումը չի տարածվում աշխատանքի արդյունքի վրա: Նյութական խմբավորումները անընդհատորեն փոխում են իրենց տարածական ուղղությունը մի օբյեկտից մյուսը կամ տարածությունում ճյուղավորվում են միաժամանակ մի քանի օբյեկտների վրա: Այստեղից հետևում է, որ նույն նյութը արտադրողները պետք է օգտագործեն տարբեր լոգիստիկական որոշումներ, որը, սակայն, չի բացառում նրանց համընկնումը: Շինարարական համակարգերի առջև կանգնած է նրանց ձեռքբերման և ռացիոնալ օգտագործման համար արդյունավետ ձևերի ընտրության խնդիրը: Լիզինգի զարգացումը մեծ դեր է խաղում այս խնդիրների լուծման հարցում:

Շինարարության համակարգում լոգիստիկայի արդյունավետությունը:

Ընդհանուր ծախսերի աճի միտման ավելացումը, շինանյութերի ինքնարժեքի ավելացումը, ինչպես նաև մրցակցության մակարդակը հաստատում են աշխատանքում լոգիստիկական համակարգի ներդրման հրատապությունը: Շինարարական համակարգը հանդիսանում է կապալային և մասնագիտացված շինարարական կազմակերպությունների, շինանյութերի և շինարարական արդյունաբերության կազմակերպությունների, նախագծի, կրթական հաստատությունների, հասարակական կազմակերպությունների և այլնի ամբողջությունը: Այս կազմակերպություններն ունեն իրենց լոգիստիկ ծախսերը, որոնք իրենցից ներկայացնում են աշխատանքային, նյութական, ֆինանսային և տեղեկատվական պաշարների ծախսեր: Այս կազմակերպությունների ծախսերը, այդ թվում նաև լոգիստիկ, շատ տարբեր են և նրանց կարելի է դիտարկել ծախսերի հետևյալ խմբերով՝

- գնման,
- արտադրության,
- վաճառքի:

Լոգիստիկ ծախսերի բազմազանությունը, վերջիններիս գործառույթների հետ կապերի բարդությունը, հիմնարար գիտական հետազոտությունների և գործնական առաջարկների ոչ բավարար լինելը դժվարացնում են շինարարական արտադրության կառավարումը:

Լոգիստիկայի գծով մենեջերի խնդիրը հանդիսանում է լոգիստիկայի շղթայի ամեն մի օղակում հանդիպող ծախսերի ուսումնասիրում: Մենեջերը պետք է կարողանա գնահատել ծախսերը և մրցակիցների գործունեության արդյունավետությունը, և դրանք համեմատի սեփական ցուցանիշների հետ: Դրա համար կարող են օգտագործվել ֆունկցիոնալ արդյունավետությունը բնութագրող հետևյալ հիմնական ցուցանիշները.

- ծախսերի բացարձակ գումարը, որն օգտագործվում է լոգիստիկ ծախսերի գնահատման ժամանակ,
- լոգիստիկ ծախսերի չափը՝ ըստ ընդհանուր և առանձին հատվածների՝ հաշվի առնելով լոգիստիկ ծախսերի գումարի կապը վաճառքի հետ՝ տոկոսներով,

- տնտեսումը, այսինքն՝ որոշակի արդյունքի հասնելը քիչ ծախսերի հաշվին,
- օգտագործվող պաշարներից օգտվելու արդյունավետությունը,
- ծախսաքանակը, որը բնութագրում է լոգիստիկ ծախսերի քանակը՝ ֆունկցիոնալ մասնաճյուղի տեսանկյունից:

Լոգիստիկ ծախսերը հանդես են գալիս որպես շինարարական համալիրի կազմակերպությունը կառավարող գործիք: Լոգիստիկ համակարգի ֆունկցիոնալ արդյունավետության կարևոր գնահատականն է շահույթը, որում պատկերված է բոլոր լոգիստիկ գործունեությունների արդյունքները:

Այսպիսով, ընդհանրացնող ցուցանիշը կարելի է ներկայացնել հետևյալ տեսքով՝

$$Ա = \sum_{i}^{Գ}\sum_{j}^{Ֆ}\sum_{k}^{Պ} Ծվ_{ijk} - \sum Ծվ_{ընդ}, \qquad (6.1)$$

որտեղ Ա-ն արդյունավետությունն է, $Ծվ_{ijk}$–ն՝ լոգիստիկ ծառայությունների ծավալը i–րդ գործունեության, j-րդ ֆունկցիայի,k-րդ պատվերի, $\sum Ծվ_{ընդ}$ -ն՝ լոգիստիկ գործունեության ընդհանուր ծախսերը, Գ-ն՝ լոգիստիկ գործունեության քանակը, Ֆ-ն՝ լոգիստիկ ֆունկցիաների քանակը, Պ-ն՝ սպառողների պատվերների ծառայությունների քանակը:

ԳԼՈՒԽ 7

Աշխատանքային ռեսուրսները շինարարությունում

7.1.Աշխատանքի արտադրողականության գործոնները

Գործոնները շարժող ուժեր են, պատճառներ, ազդող կամ խթանող ինչ-որ գործընթացներ են: Կախված արտադրության բնույթից և ազդելու աստիճանից՝ գործոնները կարող են միավորվել հետևյալ խմբերում. նյութատեխնիկական, կազմակերպչականտնտեսական, սոցիալ-հոգեբանական, բնակլիմայական, քաղաքական, սեփականության գործոններ:

Նյութատեխնիկական գործոնները կապված են օգտագործվող նոր տեխնիկայի, ժամանակակից տեխնոլոգիայի, նոր տիպի միջոցների և նյութերի հետ: Արտադրության խնդրի լուծումն այստեղ հասնում է կատարելության, եթե.

- սարքավորումները ժամանակակից լինեն,
- հին տեխնիկան փոխարինվի ավելի հզոր արտադրողականությամբ նոր տեխնիկայով,
- արտադրության մեխանիզացիայի աստիճանը բարձրացնելով՝ տեղամասերում և գործարաններում ձեռքի աշխատանքի մեխանիզացիան, ներդրումներ փոքր մեխանիզացիոն միջոցներով, աշխատանքի կազմակերպվածությամբ,
- արտադրության ավտոմատացմամբ,
- նոր տեխնոլոգիայի ներդրմամբ,
- նոր տիպի հումքի կիրառմամբ, ժամանակակից նյութերով:

Գիտատեխնիկական առաջընթացը պետք է դիտարկել աշխատանքի արտադրողականության բազմակողմանի աճի գլխավոր աղբյուրը: Արտադրական գործընթացում գիտատեխնիկական առաջընթացի ներդրումները բերում են ժամանակակից պայմանների փոխհատուցման՝ առաջին հերթին նորամուծության և տեխնիկական վերազինման միջոցներով:

Նյութատեխնիկական գործոններն ավելի կարևոր են, քանի որ ապահովում են հանրային աշխատանքի տնտեսումը:

Կազմակերպչատնտեսական գործոնները որոշվում են աշխատանքի, արտադրության և կառավարման կազմակերպման մակարդակով: Դրանց

են վերաբերում արտադրության վարչական կազմակերպվածության կատարյալ լինելը՝ վարչական ապարատի կառուցվածքը, արտադրության կառավարման ցանցը, արտադրության վարչական ցանցում ներդրումների և զարգացման ճկունությունը:

Սոցիալ-հոգեբանական գործոններն որոշվում են աշխատանքային կոլեկտիվների որակով, նրանց սոցիալ-ժողովրդագրական կազմով, պատրաստվածության աստիճանով, աշխատանքային ակտիվությամբ, բաժանմունքներում և ամբողջ կազմակերպություններում կառավարման ոճով, որն էլ ձևավորում է բարոյահոգեբանական մթնոլորտ:

Բնակլիմայական գործոնները նշանակալի ազդեցություն են ունենում շինարարության ընթացքի վրա այն ուժով, որ բացառապես շինարարական աշխատանքների մեծամասնությունը կատարվում են բաց տարածությունում: Այս գործոնները հարկավոր է հաշվի առնել շինարարական գործընթացն սկսելուց առաջ:

Քաղաքական և օրենսդրական գործոնները կարգավորում են հարկման, ներդրումների, լիցենզավորման, մաքսային և այլ գործընթացները, որոշում բոլոր ճյուղերում ժողովրդական տնտեսության զարգացման ուղղությունը:

Սեփականության գործոն: Ժամանակակից պայմաններում երկրի տնտեսագիտական կառուցակարգի հիմնովին փոփոխությունը կապված է աշխատանքում արտադրանքի արդյունքի միջոցների սեփականության ձևի փոփոխության հետ, շինարարության տնտեսությունը (ինչպես կիրառական գիտական ուսմունք) նույնպես կարող է փոփոխության ենթարկվել: Սա բերում է կազմակերպության և մրցակցության վրա հիմնված նոր տնտեսական փոխհարաբերությունների՝ տալով մարդուն օտարացնելով արտադրական միջոցներից նախապայման:

Բոլոր թվարկված գործոնները խիստ կապված և փոխկապված են միմյանց հետ: Նրանց կարելի է ուսումնասիրել ամբողջությամբ: Սա անհրաժեշտ է նրա համար, որպեսզի ավելի ճիշտ գնահատենք յուրաքանչյուր գործոնի ազդեցությունը, քանի որ նրանց գործողություններն անգնահատելի են: Մի մասը տալիս է ակնհայտ աշխատանքային աճ, իսկ մյուսների ազդեցությունը համարվում է անցողիկ:

Աշխատանքի արտադրողականության ռեզերվների օգտագործումը՝ ըստ խմբերի, բաժանվում է՝ ընթացիկի և հեռանկարայինի:

Ընթացիկ պահուստները կարող են օգտագործվել մոտակա ժամանակաշրջանում և, որպես կանոն, չեն պահանջում նշանակալի, միաժամանակյա ծախս: Սրանց թվին կարելի է դասել սարքավորման ավելի լավ օգտագործումը, խոտանի լիկվիդացումը կամ սահմանափակումը, աշխատավարձի վճարման ավելի իրական և արդյունավետ համակարգի կիրառում, աշխատանքի կազմակերպման կատարելագործումը և նրա նորմավորումը:

Աշխատանքի արտադրողականության հեռանկարային պահուստները հաճախ պահանջում են արտադրանքի վերակառուցում, նոր տեխնոլոգիայի ներդրում և այլն, դրա համար անհրաժեշտ են լրացուցիչ կապիտալ ներդրումներ և որոշակի ժամանակում աշխատանքների իրականացում:

Ելնելով արտադրողականության սահմանման բովանդակությունից՝ հատկապես ատրադրանքի աճի համար կատարված ծախսը կարող է բարձրանալ հետևյալ չորս դեպքերում.

- երբ արտադրանքի ծավալը մեծանում է, իսկ ծախսերը՝ նվազում (դասական դեպքում),
- ապրանքի ծավալը ավելի արագ է մեծանում, քան ծախսը,
- ապրանքի ծավալը մնում է անփոփոխ, իսկ ծախսերը նվազում են,
- ապրանքի ծավալն ավելի դանդաղ է փոքրանում, քան ծախսերը:

Արտադրողականության աճի ապահովման կառավարման ռազմավարությունը պետք է ընտրվի վերոնշյալ իրավիճակներից:

7.2. Աշխատանքի արտադրողականության գնահատումը

Հայտնի է, որ տնտեսական աճն որոշվում և չափվում է երկու եղանակով.

- ինչպես իրական համախառն ազգային արդյունք (ՀԱԱ) ավելացում կամ մաքուր ազգային արդյունքի (ՄԱԱ) ավելացում որոշակի ժամանակահատվածում,
- ինչպես ինչ-որ ժամանակահատվածում մեկ շնչին համընկնող իրական ՀԱԱ կամ ՄԱԱ ավելացում:

Իր հերթին, իրական ՀԱԱ որոշվում է որպես աշխատածախսը (մարդ/ժամում), բազմապատկելով աշխատանքի արտադրողականությամբ (իրական վերամշակման ժամը մեկ զբաղվածությամբ և այլն):

ՀԱԱ = մարդ/ժամը աշխատածի թիվը x աշխատանքի արտադրողականությամբ:

Այսպիսով, ուղիղ կախվածություն կա աշխատանքի արտադրողականության բարձրացման և համախառն ազգային արդյունքի միջև, իսկ հետևաբար, կապված է նաև տնտեսական աճի հետ:

Անհրաժեշտ է նշել աշխատանքի արտադրողականության գործոնի նշանակությունը իրական ՀԱԱ աճում: Արևելքի և հայրենական մասնագետների գնահատմամբ, աշխատանքի արտադրողականության աճի չափանիշները ՀԱԱ աճի հիմնական գործոնն են:

ՀԱԱ-ի իրական աճի վրա ազդող գործոններն են՝

- աշխատածախսի ավելացումը,
- աշխատանքի արտադրողականության բարձրացումը.
  1. տեխնիկական առաջընթաց,
  2. կապիտալ ծախսեր,
  3. մասնագիտական և կրթական պատրաստվածություն
  4. տնտեսագիտությունը՝ պայմանավորված արտադրանքի մասշտաբով,
  5. պաշարների ճիշտ տեղաբաշխում:

Ինչպես նախապես նշվել է, ներկայիս ճգնաժամային իրավիճակի հիմնական խնդիրներից է հանդիսանում աշխատանքի արտադրողականության կտրուկ անկումը: Միակ հիմնական պատճառը ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերում, հատկապես շինարարության մեջ, արտադրողականության կրճատումն է: Շուկայական մասնագիտացման սկզբից արտադրության նվազեցումը կապված է եղել գլխավորապես նախկին տնտեսության քայքայման հետ: Շինարարությունում իրավիճակն ավելի ցավալի է, քանի որ շինարարությունում մասնակցում են հիմնական սարքավորումներ պատրաստող տասնյակ, իսկ մեծ շինարարություններում՝ հարյուրավոր նախագծաուսումնասիրական, գիտահետազոտական, շինարարական և մոնտաժային մեծ կազմակերպություններ, ինչպես

նաև գործարաններ, շինարարամոնտաժային սարքավորումներ և շինարարական նյութեր մատակարարողներ, բանկեր և այլ տնտեսագիտական օղակներ, որոնց ներդրումները անհրաժեշտ են շինարարությունում:

Ներկայումս շրջանառության միջոցների անբավարարությունն առաջացնում է վճարունակ պահանջարկի նվազման միտում: Ավելանում են արդյունաբերական արտադրանքների անփոխհատույց գործարքները, այդ թվում նաև կրճատվում են աշխատատեղերը: Բացի դրանից՝ հատկապես շինարությունում, արագ տեմպերով, կրճատվում են ֆիզիկական աշխատանքի քանակը նրանց անհարմարվետության պատճառով:

Արտադրության և տնտեսության ներկայիս վիճակի էական պատճառներից մեկը, արտադրության, ճյուղային և միջճյուղային տարածքային համալիրների, ժողովրդական տնտեսության կառավարման զգալի վատթարացքումն է: Աշխատողները, շուկայական հարաբերությունների ներդրման սկզբնական շրջանում չէին կարողանում նոր պայմաններում կառավարել արտադրությունը: Նրանք պետք է լուծեին շատ խնդիրներ, որոնց մասին նախօրոք տեղեկացված չեն եղել:

Մասնավորեցումը թույլ է տալիս կազմակերպությանն ինքնուրույն լուծելու իր խնդիրները: Սեփականատերը իրավունք ունի իր արտադրանքը գնահատել, որոշել աշխատակազմի թիվը, նշանակել վճարումները: Այժմ կառավարող աշխատողները ձեռք են բերել առանձնակի փորձ, բայց այնուամենայնիվ կառավարման չափանիշը և առանձին արտադրությունը և ամբողջ ժողովրդական տնտեսությունը մնում է ծայրահեղ ցածր վիճակում և պահանջում է հատուկ միջոցառումներ՝ վերականգնելու կառավարման կարևորագույն պարամետրերը: Նախևառաջ անհրաժեշտ է անհապաղ վերանայել և հաստատել արտադրողականության բարձրացման պետական ծրագրերը՝ տնտեսության կայունացման և աճի այլ ծրագրերի հետ միասին: Այս միջոցներն իրականացնելու համար պահանջվում են հսկայական նյութական ծախսեր, միայն թե առանց նրանց անհնար է կայունացնել տնտեսական դրությունը:

Առավել հեշտ է աշխատանքի արտադրողականության նվազումը բացատրել նրանով, որ իրականացվող արտադրության նվազումը չի ուղեկցվում աշխատողների թվի կրճատմամբ, այսինքն՝ արդյունաբերա-

արտադրողականության անձնակազմի թվաքանակի կրճատմամբ: Իրականանում է, այսպես կոչված, թաքնված կամ ծածուկ գործազրկության արագ կուտակում:

Բայց ընդհանուր հաշվարկով ծածուկ գործազրկության կուտակումը կարող է լինել անհնարին, եթե աշխատավարձերի ցածրացում չլիներ: Էժանագին աշխատանքը չի կարող լինել բարձր որակի արտադրություն, ապահովել նյութական և այլ արտադրական ռեսուրսների տնտեսական և ռացիոնալ օգտագործումը: Այս ամբողջը բերում է արտադրության աստիճանական անկման, նրա արտադրության ծավալի և որակի հետագա անկման:

Առաջին հայացքից ընդունված աշխատավարձերի բարձրացման մասին պետական օրենքներն ուղղված են տվյալ խնդիրների լուծմանը, բայց հիմք կա ենթադրել, որ այս խնդիրը միայն կրկնապատկվում է: Նախ՝ արտադրանքի շարունակական անկման պայմաններում ոչինչ է գնաճի դեպքում, իսկ վերջին հաշվարկով, դա չի հանգեցնի աշխատավարձերի նվազեցման: Վերջին տարիների փորձը ցույց է տալիս, որ ամենից արագ բյուջետային ոլորտ է անցնում իրական աշխատավարձը: Երկրորդ՝ ամենագլխավոր, թերությունն այս դեպքում այն է, որ այն նյութական ոլորտում բերում է աշխատավարձերի՝ անխուսափելի և շուտափույթ աճի՝ դարձյալ աշխատանքի արդյունավետության հետ առանց ինչ-որ կապի: Իսկ քանի որ աշխատավարձի բազային չափանիշը նյութական արտադրության մեջ նկատելիորեն բարձր է, ապա կարճ ժամանակահատվածում նշված անհամամասնության մեծանում է էլ ավելի ծանրաբեռնված տեսակով:

Աշխատավարձի կառավարման գոյություն ունեցող ներկայիս կառուցվածքը (աճի պահպանումը) հարկերի տեսքով աշխատավարձի վճարման ժամանակ նորմատիվային ծախսերի բարձրացման տեսքով, չի կատարում ոչ մի խթանող գործառույթ, այլ կատարում է բացառապես ֆիսկալ՝ բյուջեում հարկերի ավելացման դեր:

Կազմակերպությունը, որպեսզի պահպանի իր աշխատողներին, առաջնորդվում է այնպիսի վճարման կարգով, որքան կարելի է վճարել: Այսպիսով, աշխատավարձը արդեն չի կարողանում արժեզրկման պայմաններում ապահովել որակյալ աշխատուժի կապը կազմակերպու-

թյան և աշխատանքի արդյունավետության հետ, սակայն դրանով հանդերձ շարունակում է ապահովել բնակչության գոյատևությունը: Կառավարությունը փորձում է լուծել միանգամից երկու խնդիր, սակայն արդյունքում ոչ մեկն էլ չի կարողանում: Այս դրությունից դուրս գալու ելքը աշխատավարձի վճարման կարգի խնդրի լուծումն է. արդյունավետ աշխատանքի համար խելացի աշխատողներին պետք է վարձատրեն արժանավայել: Միաժամանակ պետք է խթանել նոր աշխատանքային տեղերի ստեղծումը՝ ապահովելով ազատ աշխատանքային ռեսուրսների զբաղվածությունը: Եթե սկզբնական քայլերը դադարեցվում են հասարակության մենթալիտետի, քաղաքական ուղղվածության և մասշտաբային անգործության դեմ քաղքական պայքարի բացակայության պատճառով, ապա երկրորդը՝ ներդրման համար միջոցներ և գործող մեթոդներ բացակայության պատճառով:

Ներկայում շինարարությունում հրատապ է դարձել արդյունավետ օգտագործել աշխատանքային պաշարները, ամեն մի շինարարական օբյեկտում աշխատանքի կազմակերպման համար կառավարման գործընթացը հսկում են ՇԿ-ները:

Վերլուծելով երկրի տնտեսական փոփոխությունները՝ եկել ենք մեկ հետևության, որ կազմակերպություններն ունեն մի շարք թերություններ.

- ինչպես բանվորների, այնպես էլ կառավարողների աշխատանքի ձևակերպում մասնագիտությամբ, ընտրությամբ, կադրերի բաշխմամբ,
- առանձին աշխատողների անձնական որակներով, արդյունքներով թերագնահատելը կամ գերագնահատելը, որը անարդարացի բարձրացնում էր ոմանց և վիրավորում մյուսներին,
- աշխատողների անհամաչափ ծանրաբեռնվածությունը, որն բերում էր բարոյահոգեբանական անբավարարության,
- բանվորի զբաղեցրած աշխատանքի անհամապատասխանությունը, ինչը ոչ ռացիոնալ աշխատանքի բաժանման հետևանք է,
- աշխատանքի արդյունքների համար պատասխանատվության մակարդակի նվազումը,
- իրենց գիտելիքները ճիշտ ներկայացնելու բացակայությունը:

Մինչ փոփոխությունների անհամապատասխանությունը համարվել է և այն, որ հաստիքների հետ տարված աշխատանքը ընթացել է աշխատուժի ընտրությամբ:

Նպատակն այն է, որ եթե ձեզ հաջողվել է գտնել կարևոր մարդկանց, ապա նրանք կարող են իրականացնել պիտանի աշխատանքներ: Ներկա պայմաններում համապատասխան մարդկանց գտնելը միայն գործի սկիզբն է:

Այն դեպքում, երբ աշխատանքային պաշարների կազմակերպման մեծ մասը իրենից ներկայացնում էր նյութական օբյեկտները, որոնց արժեքը ժամանակի ընթացքում նվազում էր մաշվածության պատճառով մարդկային արժեքն տարիների ընթացքում կարող է և պետք է ավելանա:

Այսպիսով, ինչպես կազմակերպության բարօրության համար, այնպես էլ ղեկավարությունն իր աշխատողների բարօրության համար պետք է մշտապես աշխատի հաստիքների բարձրացման նպատակով:

Հաջողված ծրագրերը՝ հաստիքների նորացման, ավելի բարձր հնարավորությունների, ուժեղացված հնարավորությունն աշխատանքի լիարժեք կատարման համար պետք է ընկած լինի կազմակերպության աշխատանքի հիմքում:

Աշխատողների արտադրողականության բարձրացման առաջին քայլը պետք է լինի մասնագիտական համախմբումը և սոցիալական կազմա-կերպվածությունը կոլեկտիվում:

Նորից ներկայանալով կոլեկտիվին՝ աշխատողը պետք է ունենա տարրական կողմնորոշում, ինչպես նաև վստահ պետք է լինի իր փորձում, գիտելիքներում, հմտությամբ, չափանիշներում, վերաբերմունքով տվյալ աշխատավայրում և կոլեկտիվում, որտեղ պետք է ինքը աշխատի: Ծանո-թացման միջոցառման իրականացման ժամանակ կարևոր է նոր ընդունվող աշխատողների փաստաթղթերը տեղափոխել կազմակերպության կադրա-յին ծառայություն: Կարգադրության մեջ դրա հետ կարող են իրականացնել տվյալ նպատակի համար հատուկ պատրաստված տեղեկատուներ, ինստրուկտուրային նյութեր, այլ միջոցներ և եղանակներ: Ծանոթացման աշխատանքի հիմնական մասում նոր ընդունվող աշխատողներն առաջին օրը և առաջին շաբաթը պետք է մուտք գործեն կոլեկտիվ, բայց

ծանոթացումը և ադապտացումը այդ ընթացքում չի վերջանում, այլ շարունակվում է որոշ ժամանակ: Կոլեկտիվ մուտք գործած աշխատողի որակյալ աճի համար աշխատողին հարկավոր է ուսումնասիրել այն գործոնները, որոնք կարող են ազդեցություն ունենալ իր թույլ կողմերի համար, իհարկե՝ հաշվի առնելով իր աշխատատեղի առանձնահատկությունները: Շինարարական կազմակերպությունը էկոնոմիկայի բազմատուրքային պայմաններում առաջ է բերել նշանակալի կադրերի ազատում շինարարական կազմակերպության պետական սեփականությունից մասնավոր պահանջով իրենց շինարարական կազմակերպության ոչ պետական ձևով սեփականության: Դրանց մեջ կազմակերպությունները լինում են սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության, լրացուցիչ պատասխանատվությամբ ընկերություն, վստահության վրա հիմնված ընկերակցություն և լիակատար ընկերակցություն: Աշխատանքային շուկայում շինարարական մասնագիտությունների հետ միաժամանակ հետևում են շատ շինարարության մասնագետների արտադրության համար նախատեսված վնասված օբյեկտների վերակառուցում, ինչպես նաև անհատական բնակելի շենքերի շինարարաության մասնագետների, շինարար դիզայներների սակավաթվություն:

Աշխատանքի արդյունավետության բարձրացման հաջորդ ճանապարհը, որը կարելի է առաջարկել, աշխատանքային գործունեության կառուցակարգի ձևավորումն է և աշխատանքային մոտիվի ուղղվածության կատարելագործումը: Որպեսզի աշխատողների մոտ հետաքրքրություն առաջանա, կազմակերպության գործունեության արդյունքներում և նրա կառուցվածքների մեջ կարևոր է օգտագործել աշխատանքի ձևավորման արդյունավետության կառուցակարգի: Հիմնական գործոններից մեկը արդյունավետության վրա ազդող մոտիվացիոն կառուցակարգն է, որն էլ համարվում է աշխատանքի արդյունքներում պարգևատրում: Այստեղ առաջանում է իրար հակասող իրավիճակ. մի կողմից հարկավոր աշխատանքային երաշխիք, իսկ մյուս կողմից փոփոխությունների մասը պետք է լինի բավարար, որպեսզի աշխատողներին հետաքրքրի արտադրանքի վերջնական արդյունքը:

Պահուստային աշխատանքային վճարումների սահմանը պետք է որոշվի ֆինանսական իրավիճակի տարբերակները հաշվի առնելով, տեխնիկական, կազմակերպչական և այլ հատկանիշները, ինչպես նաև աշխատանքային շուկայում աշխատուժերի պահեստային գինը:

Հետագայում շինարարությունում աշխատանքային պաշարների արդյունավետ օգտագործման համար առաջարկում են հետևյալ ճանապարհները.

- աշխատանքային ընտանիքների ընդարձակում՝ հանդիսանալով դաստիարակչական լրացուցիչ աճի գործոն,
- շինարարական աշխատանքներում արտադրանքի դիվերսիֆիկացիոն մեթոդի արդյունավետ կիրառում,
- կառուցակարգի կատարելագործում սոցիալական մրցակցության մեջ, լոկալ չափանիշներով համայնքներում, ճյուղում և հանրապետությունում:

Աշխատանքի արտադրողականության չափման մեթոդներ:

Ունեցած պահուստների գնահատման համար, աշխատանքի արտադրողականության չափման չափանիշները տարբեր կազմակերպություններում բերում է նրանց միջև ճիշտ արտադրական դինամիկայի:

Շինարարական աշխատանքի արտադրողականության մակարդակն որոշվում է երկու հիմնական ցուցանիշներով՝միավոր ժամանակում մշակված ապրանքի քանակով և միավոր արտադրանքի արտադրման համար ժամանակի ծախսով:

Աշխատանքի արտադրողականությունը որոշվում է տարբեր ձևերով՝ կախված այն բանից, ինչպիսի միավորներով են չափվում ապրանքի ծավալը և աշխատանքային ծախսերը: Չափման մեթոդներն են.

1. <u>Ապրանքի արտադրման ծավալ</u> (աշխատանք, ծառայություն)՝
   1.1. բնական,
   1.2. նորմատիվային,
   1.3. արժեքային՝ համախառը, ապրանքային, պայմանական մաքուր, մաքուր ապրանք:
2. <u>Աշխատանքային ծախսեր</u>՝
   2.1. մարդ/ժամ,

2.2. մարդ/օր,

2.3. անձնակազմի միջին ցուցակային թվաքանակը:

Դիտարկենք վերոնշյալներից յուրաքանչյուրը:

Աշխատանքի արտադրողականության *բնական մեթոդը* թույլ է տալիս որոշել կա՛մ ամբողջությամբ, կա՛մ մեկ աշխատողի կատարած մասնագիտորեն մշակված արտադրանքը, բնական ցուցանիշներով կատարած աշխատանքը (շարը՝ մ^3, կառույցը՝ մ^3, հրապարակը՝ մ^2):

Բնական մշակումը համարվում է աշխատանքի արտադրողականության ավելի օբյեկտիվ և վստահելի ցուցանիշ: Մշակման ցուցանիշները բնական չափորոշիչներով թույլ են տալիս որոշել և համեմատել առանձին բրիգադների կատարած աշխատանքները, պլանավորել նրանց թվաքանակը, մասնագիտական և որակավորված կազմը, զուգորդել շինարարությունում նույնատիպ աշխատանքների աստիճանը, միատեսակ աշխատանքների չափը տարբեր օբյեկտներում: Չնայած այսպիսի աշխատանքներն էլ անթերի չեն:

Նորմատիվ մեթոդ: Աշխատանքի արտադրողականության այս մեթոդը ցույց է տալիս փաստացի աշխատանքի ծախսի կապն այլ աշխատանքի աճի ծախսի հետ, որը նախատեսված է չափաբաժնով, բնութագրում է աշխատողի վերամշակած արտադրանքը:

Չափաբաժնային ցուցանիշներն իրենցից ներկայացնում են աշխատանքի աճի չափաբաժինը (մարդ/օր), բազմապատկելով 100%-ով: Այս մեթոդը հնարավորություն է տալիս որոշել կա՛մ նորմատիվային ժամանակի կրճատման աստիճանը, կա՛մ մշակման չափաբաժնի չափը:

Արժեքային մեթոդը համարվում է ավելի քիչ տարածված մեթոդ, այստեղ ապրանքի քանակը հաշվում են ըստ նախահաշվային արժեքի կամ պայմանագրային գնի:

Այս մեթոդով բնութագրվող աշխատանքի արտադրողականության մակարդակը՝ նախահաշվային արժեքով չափում են շինարարամոնտաժային աշխատանքը՝ հիմնվելով հիմնական կամ օժանդակ աշխատողի արտադրանքի վրա, այսինքն՝ շինարարաարտադրական անձնակազմի վրա տվյալ կազմակերպությունում:

Արժեքային ցուցանիշը համարվում է շինարարական կազմակերպության աշխատանքային արտադրողականության մակարդակը համընդհանրացնող ցուցանիշ:

Համախառն արտադրանքի արժեքի ցուցանիշը, որի հիման վրա երկար տարիներ պլանավորել և հաշվարկել են արտադրանքի աճը, հետաքրքրական է այնքանով, որ արտադրանքը տարբեր կազմակերպություններում և տարբեր տարիներին հաշվարկվել են նույն գներով: Չնայած ապրանքի արժեքն արտացոլվում է ոչ միայն աշխատանքի ծախսերում, այլ հումքի ձեռք բերման, նյութերի, կիսապատրաստվածքների և այլնի հիման վրա:

Ապրանքային արտադրանքի արժեքի ցուցանիշն անկախ է անավարտ արտադրանքի աճի ազդեցությունից, բայց պահպանում է մյուս թերությունները, որոնք բնորոշ են համախառն արտադրանքի ցուցանիշներին:

Տեսականորեն ավելի լիարժեք տպավորություն ստանալով ապրանքի մասին տալիս է մաքուր արտադրանքի ցուցանիշը նորից ստեղծված արժեքը, քանի որ նրա վրա չեն ազդում հումքի ծախսերը, նյութերը, գնված կիսաֆաբրիկատները, և այն ազատված է մաշվածքամարման արժեքից.

$$ՄԱ = Ա + Շ, \qquad (7.1)$$

որտեղ Ա-ն՝ աշխատողների աշխատավարձն է, իսկ Շ-ն՝ կազմակերպության շահույթը:

Մաքուր ապրանքը ճիշտ բնութագրում է արժեքը, եթե ապրանքն իրացվում է շուկայական գներով: Բայց մեր իրականության մեջ ավելի շատ ազդեցություն են թողնում մոնոպոլ գները, որոնք ազատում են կազմակերպության ներդրումը նոր արժեքներ կազմելու և վերականգնելու, մաքուր ապրանքի արժեքը դառնում է հիմնախնդիր:

Պայմանական-մաքուր ապրանքի ցուցանիշներն իրենց մեջ ընդգրկում են աշխատավարձը և շահույթը, ինչպես նաև հիմնական միջոցների ամորտիզացիոն հատկացումները, այսինքն՝ անցած աշխատանքի մասը:

$$ՄԱ = Ա + Շ + Ա_ա, \qquad (7.2)$$

որտեղ Ա-ն՝ աշխատողների աշխատավարձի գումարն է՝ հավելագրումներով, Շ-ն՝ կազմակերպության շահույթը, Աա-ն՝ մաշվածքամարման հատկացումների գումարն է:

Այս ցուցանիշի դրական դերը այն է, որ բնութագրելով նորից տված արժեքը, այն համարվում է համադրելի: Այնպես որ տվյալ ցուցանիշը կախված չէ աշխատանքի նյութատարողությունից, բացառվում է թողարկված ապրանքի բաժանումը «ձեռնտուի» և «անձեռնտուից»: Բացի դրանից՝ ձևավորվող արտադրանքի ցուցանիշների վրա ազդում է կոոպերատիվների աճը, ինչպես նաև ապրանքի կրկնակի հաշվարկը: Վերջինս քիչ նշանակություն չունի արտադրությունում: Աշխատանքային ծախսերի ավելի ճշգրիտ անդարադառնում է վերամշակված քանակով մարդ-ժամերին: Բայց նրանց հաշվարկը աշխատատար է:

Մարդ-օրերը ավելի քիչ ճշգրիտ արդյունք է աշխատածախսի, համեմատած մարդ-ժամերի, քանի որ նրանք հաշիվ չեն առնում ներհերթափոխային պարապուրդները:

Աշխատակազմի միջցուցակային թվաքանակը համեմատելով մարդ-օրերի հետ՝ հաշվի չի առնվում ողջօրյա պարապուրդները, բայց այնուամենայնիվ, այս ցուցանիշներն օգտագործվում են տարվա հաշվարկներում, այնպես ինչպես սա ապահովվում է այլ արտադրանքի արժեքի համադրմամբ: Ժամային և օրային աշխատանքների ցուցանիշներում օգտագործում են ներարտադրական վերլուծություն:

Աշխատանքի արտադրողականության-աշխատարողությանն այլ ցուցանիշը իրենից ներկայացնում է կենդանի աշխատանքի գումարների ծախսը արտադրանքի միավորի վրա: Դրա համար ամբողջ արտադրանքը բաժանվում է թողարկված ապրանքի աճին ինչ-որ ժամանակահատվածում: Աշխատատարության ցուցանիշը չի ենթարկվում ոչ մի կողմնակի ազդեցության: Դրա համար էլ ապրանքի փաստացի աշխատատարությունն ավելի ճիշտ է, քան աշխատանքի արժեքի ցուցանիշը, որն էլ բնութագրում է ցուցանիշների և աշխատանքի արտադրողականության դինամիկան:

Աշխատանքի պլանավորման և վերլուծության նպատակով հաշվի են առնում արտադրողականությունն առանձին գործընթացներում, արտադրանքներում, աշխատանքում:

Տեխնիկական աշխատատարությունը (S_1) որոշվում է աշխատանքի ծախսերով՝ հիմնականում գործավարձով և ժամանակավոր աշխատող-

ներով: Այն հաշվարկվում է արտադրական գործընթացներով, բաղադրատարրերով, գծերով և պատրաստի արտադրանքով:

Աշխատատրության ծառայությունը ($АС_2$) իրենից ներկայացնում է օգնական աշխատողների հատուկ գործամասերի և բոլոր աշխատողներին օգնող գործամասերի, արտադրությունում զբաղվածության ծառայության ծախսեր: Նրա հաշվարկն իրականանում է յուրաքանչյուր գործընթացում, արտադրության կամ համամասնական տեխնոլոգիական աշխատատարրության արտադրության ժամանակ: Արտադրական աշխատատարությունն ($АС_3$) առանձնանում է տեխնոլոգիական և սպասարկման աշխատատարությամբ, այսինքն՝ այն աշխատանքի ծախսերը, որոնք կատարում են հիմնական և օժանդակ բանվորները միավոր աշխատանքի համար:

Կառավարման աշխատատարությունը ($АС_4$) կուտակվում են ղեկավարների աշխատանքային ծախսերից, մասնագետների, ծառայողների ծախսերից: Այսպիսի ծախսերի մի մասը, որոնք անուղղակիորեն կապված են պատրաստվող ապրանքի հետ, ծախսերի մյուս մասը, որոնք անուղղակիորեն կապված չեն պատրաստվող ապրանքի հետ, դրանց են վերաբերում համեմատաբար արտադրության աշխատատարությունը:

Ավելի լավ է օգտվել արտադրանքի լիարժեք աշխատատարությունից, միացնելով բանվորների աշխատանքային ծախսերը, բոլոր կատեգորիայի աշխատողներին (մարդ-ժամ), որը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$АС = АС_1 + АС_2 + АС_3 = АС_4 + АС: \qquad (7.3)$$

Թվարկված հնարավորություններից կախված՝ առանձնացվում են նորմատիվային, փաստացի, պլանավորված աշխատատարություններ:

Աշխատատարության ցուցանիշներն անհրաժեշտ են աշխատանքի արտադրողականության չափանիշները հաշվարկելու համար: Արդյունավետության գնահատականը որոշվում է նոր տեխնիկայի օգտագործման գործընթացով, ինչպես նաև շինարարամոնտաժային աշխատանքների մեխանիզացիայի արդյունավետությամբ:

Նրանց օգտագործում են շինարարությունում աշխատանքային պաշարներով՝ ըստ պահանջի:

Աշխատանքի արտադրողականության չափման մեթոդները պետք է հաճախակի կատարելագործվեն, որպեսզի աշխատանքի ծախսերի համար

գտնվեն ավելի արդյունավետ գնահատումներ, հաշվի պետք է առնեն կոնկրետ էկոնոմ նպատակները և նպատակաուղղված պետք է լինի այս կամ այն գործոնների իրագործմանը:

Ժամանակակից էկոնոմիկական մեթոդների ժամանակ, այն պայմանները, որոնք կառաջարկվեն շուկայական էկոնոմիկայով, կբերեն այնպիսի չափումների փնտրտուքի, որոնք կարտահայտեն կապերը ծախսերի և արդյունքների միջև, հաշվի առնելով տնտեսական հաշվարկները ոչ միայն առանձին աշխատակիցների, այլև ընդհանուր նպատակներում: Արդյունքների որակում օգտագործում են շահույթը, եկամուտը, իսկ ծախսը՝ աշխատանքի վճարման ֆոնդը:

Անցումը շուկայական էկոնոմիկայի տեսակին պահանջում է վերանայել մոտեցումները աշխատանքի արտադրողականության:

Անհրաժեշտ է գնահատել բոլոր դրական և բացասական գործոնները, որոնք կուտակվել են, գիտության և պրակտիկայի գծով, շատ տարիների ընթացքում: Նպատակահարմար է վերանայել արտադրողականության ոչ միայն տեխնիկատնտեսական դրության պարունակությունը:

Տեխնիկատնտեսական բովանդակությունն որոշվում է արտադրանքի կապի գործոնով: Ավելացնելով տեխնոլոգիայի հնարավորությունները՝ տեխնիկան և նյութերը իրացվում են աշխատանքի կազմակերպման գործընթացում: Աշխատանքը կարող է լինել արդյունավետ, եթե նրա կազմակերպումը իրականացվում է արտադրանքի կազմակերպման և կառավարման ընդհանուր համակարգի հետ, բայց այս պայմանը ոչ միշտ է իրականացվում:

Արտադրանքի կազմակերպումն իրականում աշխատանքի առարկայական տարրերի գործառույթի ապահովումն է, իսկ կառավարման կազմակերպումը աշխատանքային հարաբերությունների գործառույթն է: Անհրաժեշտ է աշխատանքային գործունեությունը կազմակերպել համախմբված աշխատավայրում, կառուցվածքային միավորումներում և ընդհանուր կազմակերպություններում՝ աշխատանքի կազմակերպման նեղ հասկացությունից անցնելով տեխնոլոգիական գործունեության:

Ներկա ժամանակներում ոչ բոլոր օբյեկտներում կան վերանայված ծրագրեր աշխատանքի կազմակերպման, կառավարման մասին: Այս

պատճառով աշխատանքի կազմակերպման և արտադրության կառավարման համաչափությունը, ինչպես նաև կազմակերպությունում աշխատողների թվաքանակը, նույն պայմաններում աշխատող, նույն տեսակի ապրանքներ արտադրողը հաճախ նկատելիորեն առանձնանում են:

Ակտիվացնելով մարդկային գործոնները և արագացնելով գիտատեխնիկական առաջընթացը՝ սա փոխկապակցված խնդիրներ են արտադրանքի զարգացման գործոններում:

Աշխատանքի արդյունավետության խնդիրը լուծելով՝ չի կարելի հաշվի չառնել սոցիալական գործոնի ուժեղանալու դերը: Միայն այս դեպքում կարող են գտնվել ճիշտ լուծումներ փոխկապակցման խնդիրների՝ ապահովել բարձրորակ արտադրանք, մրցակցային ապրանքների իրացում, ծառայությունը սրա հետ միաժամանակ ընդլայնել: Մարդկային աշխատանքն առաջարկում է մարդու գերակայության նշանակությունն աշխատանքի ժամանակ, հնարավորությունը նոր տեխնոլոգիայի օգտագործման, շրջակա միջավայրի պահպանման պայմաններում: Անթույլատրելի է ծայրահեղ ցածր պայմաններում աշխատանքի բաժանումը, անհրաժեշտ է թույլ տալ աշխատողին ազատ գործելու, որպեսզի կարողանան իրենց դրսևորել ամբողջ կարողություններով, բացահայտել մասնագիտությունը, մասնակցել կառավարմանը, ապահովել տեխնոլոգիայով:

Շուկայական հարաբերությունների պայմաններում հարկավոր է ապահովել ճկուն ձևեր, բարձրակարգ մասնագետների ուշադրությունը գրավելու համար: Հատուկ նշանակություն ունի յուրաքանչյուր աշխատողին գնահատելը ոչ միայն մասնագիտական իմացության տեսանկունից, այլև որպես անհատ, որի ընդունակություններն ու պահանջարկներն անհրաժեշտություն են: Այսպիսով, աշխատանքային գործունեության կազմակերպումը գործնականորեն անբաժան են աշխատանքի ներքին շուկայի ձևավորումից:

Կազմակերպությունում աշխատանքային գործունեության կազմակերպումը սերտորեն կապված է ձեռնարկատիրության զարգացման հետ, որն առնաձնանում է աշխատողների նախաձեռնողականության և ակտիվության բարձր աստիճանով, սեփական գործի համար ռիսկի գնալու նրանց

պատրաստակամությամբ: Ձեռնարկատիրությունն ստեղծում է զբաղվածության նոր միջոցներ:

7.3. Պետության դերը աշխատանքի շուկայի կարգավորման գործում

Աշխատանքային շուկան իրականացնում է երկու հիմնական սոցիալ-տնտեսական գործառույթ՝ մարդկային պաշարների բաշխում այլընտրանքային զբաղվածության ձևով (մասնագիտությամբ, ճյուղայնությամբ, տարածքով, կազմակերպությամբ) և եկամուտների ներդրման եղանակով, աշխատավարձի՝ որպես խթանի և որպես աշխատանքի համար պարգևատրման բաշխում: Աշխատանքային շուկայի այդ գործառույթների իրականացումը պետք է համապատասխանի արդյունավետությամբ, պետության տնտեսական աճով, սոցիալական արդարությամբ և վերջապես ապահովել հավասարության բոլոր հնարավորությունները աշխատատեղերի ու մասնագիտական պատրաստության համար:

Աշխատանքային շուկան, եթե այն կառուցվում է տարերայնորեն, թույլ է տալիս որոշել տնտեսական արդյունավետության խնդիրը, սակայն սոցիալական արդարության և աշխատատեղերի հասանելիության երաշխավորումը շուկայում պետք է կարգավորի պետականորեն:

Աշխատանքային շուկայի կարգավորման ռազմավարական սկզբունքները կայանում են նրա ենթարկվածությունը հասարակության զարգացման, էկոնոմիկայի, հասարակության սոցիալ-քաղաքական հավասարակշռության ապահովման, հասարակության յուրաքանչյուր առողջ անդամի համար ստեղծված էկոնոմիկական պայմաններում բարեկեցության արժանի մակարդակի և կյանքի հատվածում հաշմանադամության, ընտանիքի սոցիալական և այլ գործոնների ազդեցության պատճառներով բարեկեցիկ աշխատանքի տեղավորման և երաշխավորման պահանջներին:

Աշխատանքային շուկայի նպատակային գործառույթն է կարգավորել աշխատուժի մեծ պահաջարկի և առաջարկի արդյունավետությունը հետևյալ կերպ.

- համագործակցել սոցիալական հավասարության ճանապարհով՝ լավացնելով զբաղվածության հնարավորությունները, և առաջին հերթին այն բնակչության զբաղվածության համար, որոնք ապրում են անբարենպաստ պայմաններում,
- զարգացնել աշխատանքային պաշարները, տնտեսության աճի հնարավորությունները,
- կարգավորել զբաղվածությունը, էկոնոմիկական աճին զուգընթաց ստեղծել բարեկեցիկ պայմաններ անբարենպաստ պայմաններում գտնվող աշխատուժի համար:

Սոցիալ-աշխատանքային հարաբերությունները պետությանը տալիս են հատուկ կազմակերպությունները, աշխատանքային շուկայի ինստիտուտները: Դրանց թվին են պատկանում ՀՀ աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարությունը, Բնակչության զբաղվածության պետական ծառայությունը, մարզային և տեղական մարմինները, կազմակերպություններում անձնակազմի վարչական ծառայությունները, ինչպես նաև վարձու աշխատողների ընդհանուր կազմակերպությունները, աշխատանքային կառույցների ոչ պետական ծառայությունները և այլն:

Այս ինստիտուտների հիմնական խնդիրն այն է, որ նվազագույնի հասցնել բաժնետիրական ծախսերը, եթե խոսքը վերաբերում է աշխատանքային շուկայի ձևավորմանը, ժամանակավոր կրճատել ծախսերը, նյութական, ֆինանասական պաշարները, մինչև գտնվեն համապատասխան աշխատատեղեր, իսկ գործատուներին՝ համապատասխան աշխատողներ: Դրա համար էլ այս ինստիտուտների գլխավոր դերն աշխատանքային շուկայում հանդիսանում է «շուկայի անթափանցիկության» հաղթահարումը, տեղեկատվության անկատարությունը, որոնք առաջարկվում են գործատուներին և աշխատողներին,

քանի որ հենց տեղեկատվության բացակայություն է բերում բաժնետիրական ծախսերի աճին: Այս ձևերի տարածումը ավելի քիչ է անդրադառնում այս գործառույթների մակրո և միկրո չափանիշների վրա:

Աշխատանքային շուկայի կարգավորման աստիճանը գլխավորապես կախված է պետության սոցիալական գործունեությունից: Այսպես, աշխատանքային շուկայի «շվեդական» ձևը պետությանն առաջադրում է ամենակարևոր դերը ազգային եկամուտների տեղաբաշխման գործում, բնակչության կյանքի մակարդակի բարձրացման չափանիշներում, մասնագիտական և աշխատանքային վերապատրաստմանը:

Սոցիալական գործառույթները, որոնք իր վրա է կրում պետությունը, ձևավորում են աշխատանքային շուկայի ուղղվածություն ու ձևերը:

Աշխատանքային շուկայի կարգավորման պետական միջոցները նպատակաուղղված են տարբերակել հետևյալ կերպ.

Օբյեկտների գործողություններով: Այս դերը կարող են ստանձնել բնակչությունը և առանձին խմբավորումները, աշխատողները և իրենց խմբերը: Կախված հատուկ ուղղվածությունից՝ օբյեկտներն իրենք կարող են բաժանել գործողությունների միջոցները կամ հատուկ միջոցներ կիրառել: Այդ ժամանակ էլ կարող են հանդես գալ որպես աշխատանքային շուկայի կարգավորողներ, հատկապես վճարման, աշխատանքի շարունակական լինելու, աշխատանքի պայմանների թելադրման համար և այլն:

Գործողությունների ուղղվածությամբ: Այս ձևերին վերաբերում են՝

- միջոցներ, որոնք աշխատանքի շուկայում մեծացնում (փոքրացնում) են առաջարկը,
- միջոցներ, որոնք աշխատանքի շուկայում մեծացնում (փոքրացնում) են պահանջարկը,

- միջոցներ, որոնք աշխատանքի շուկայում ազդում են կառուցվածքի վրա,
- միջոցներ, որոնք աշխատանքի շուկայում նպաստում են առաջարկի և պահանջարկի առավել համապատասխանեցմանը:

Գործողությունների ձևերով շուկայի կարգավորման միջոցները կարելի է բաժանել ուղղակիի և անուղղակիի, որի դեպքում, ինչպես ուղղակիի, այնպես էլ անուղղակիի ազդեցությունն արդյունավետ է աշխատանքային շուկայի բոլոր կողմերի վրա:

Գործունեության բնութագրով աշխատանքային շուկայի ձևավորման վրա կարող է տարբերակվել սահմանափակաման, արգելման, պաշտպանման միջոցով:

Շուկայի ձևավորման ժամանակ բովանդակությամբ նախախնամությունը կարող է տրվել տնտեսագիտական մեթոդին կամ վարչական բնույթին: Էկոնոմիկական մեթոդի դեպքում ձևավորումը կարող է կրել աշխատատեղերի նպատակահարմարություն, ընդհանուր աշխատանքի կազմակերպում, նոր աշխատատեղերի համար ներդրումների մասնագիտացում, փոքր գործարարության օգնություն: Վարչական միջոցը կարող է ձևավորել աշխատանքային շուկան հետևյալ կերպ.

- կրճատել թոշակային տարիքը,
- նվազեցնել շարունակական աշխատանքային օրը,
- սահմանափակել աշխատատեղերի թիվը մեկ անձի համար,
- համատեղելիության հնարավորությունների համատեղելիություն և այլն:

Ազդեցության չափանիշի միջոցը շուկայի պետական ձևավորման համար կարելի է առանձնացնել պետականի, մարզայինի, ներֆիրմայինի, մասնաճյուղայինի:

Ֆինանսավորման աղբյուրներով. պետբյուջետային, ոչ բյուջետային միջոցներ, զբաղվածության ֆոնդի միջոցներ, առևտրային կազմակերպության միջոցներ և այլն:

Պրակտիկան աշխատանքային շուկայի օգտագործվող մեթոդների հիման վրա ձևավորել է երկու քաղաքականություն՝ ակտիվ և պասիվ:

Պասիվային քաղաքականությունն ենթադրում է պետական հոգածություն աշխատողների, գործատուների դրության համար: Պետությունն աշխատանքային շուկայի բոլոր մասնակիցներին ներկայացնում է առանձնակի երաշխիքներ.

- աշխատողներին՝ աշխատատեղերի պահպանում, աշխատավարձերի վճարում, սոցապահովագրություն, թոշակավորում և այլն,
- գործատուներին՝ արտադրվող ապրանքի աճի պլանավորված պահանջարկ, ժամանակին հումքի և նյութերի մատակարարում, հաստատուն գներ և նպատակայի ֆինանսավորուում:

Պասիվային քաղաքականության մեջ պետք է ընդգծել հետևյալ միջոցները.

- փնտրվող աշխատանքի գրանցում,
- անաշխատունակության չափերի որոշում,
- գործազրկության համար կազմակերպված կառուցակարգ,
- գործազուրկների և նրանց ընտանիքի անդամներին ոչ դրամական օգնության իրականացում:

Ակտիվային քաղաքականությունը շուկայում ուղղված է մարդու մրցունակության աճին և աշխատատեղերի համար կրթության, վերապատրաստման մղվող պայքարին, ինքնակրթության համատեղության, առանձնահատուկ աշխատանքային գործունեության ճանապարհով մղվող պայքարին. դրան հետևում է, որ յուրաքանչյուր առողջ մարդը ինքը պետք է հոգա իր ընտանիքի գոյատևման միջոցները (դա իր պարտքն է), իր ընտանիքի բարեկեցիկ կյանքի ապահովման պատասխանատվությունը նրա ուսին է, իսկ պետությունը միայն միջնորդ է, որն էլ տրամադրում է նրան այդ հնարավորությունը:

Աշխատելու և իրականացնելու ակտիվ քաղաքականությունը աշխատանքային շուկայի վրա կարևոր ազդեցություն է թողնում երեք գործոններով.

- միջազգային աշխատանքային չափորոշիչներով վերականգնելով այնպիսի հիմնական իրավունքներ, ինչպիսին զբաղվածության ազատ ընտրությունն է, հնարավորությունների և կարողությունների հավասարությունը, միավորման ազատությունը և այլն,
- առաջացած սոցիալ-աշխատանքային համագործակցության ձևեր, քանի որ լայնորեն նկատվում է այն փաստը, որ ցանկացած քաղաքականություն, այդ թվում և ակտիվայինը, ունեն հաջողության ավելի մեծ հնարավորություն, եթե ապահովում են ճանաչելիություն և աջակցություն ձեռնարկատերերին, աշխատողներին և մյուս հետաքրքրված սոցիալական խմբերին, որոնք ներկայացնում են գործազուրկներին,
- բազմատեսակ պայմաններ, որոնք բնութագրում են տարբեր երկրների աշխատանքային շուկան, ինչպես նաև առանձին մարզերի շուկան երկրի ներսում:

Ակտիվային քաղաքականությունն աշխատանքային շուկայի ձևերով միջոցների խումբ է՝ նպատակաուղղված գործազուրկներին ակտիվ աշխատանքի վերադարձման, որոնց պետք է ցուցաբերել.

- աշխատանք գտնելու օգնություն,
- մասնագիտական վերապատրաստման համար միջամտություն,
- ինքնազբաղվածության զարգացում,
- մասնագիտական խորհրդատվություն:

ԳԼՈՒԽ 8

Շինարարական կազմակերպության արտադրանքի ինքնարժեքը

8.1.Շինմոնտաժային աշխատանքների վրա իրականացվող ծախսերի կազմը

Շուկայական տնտեսության պայմաններում՝ անկախ կազմակերպա-իրավական ձևից, ձեռնարկատիրական գործունեության գլխավոր նպատակներից մեկն է հանդիսանում (այդ թվում նաև «շինարարության» բնագավառում) շահույթը՝ որպես արտադրության զարգացման, արտադրության սեփականատերերի և պետական պահանջարկի բավարարման համար ֆինանսական պաշարների աղբյուր: Շահույթը, ինչպես հայտնի է, որոշվում է արտադրանքի իրացումից ստացված գումարի և նրա արտադրության և իրացման ծախսերի տարբերությամբ, այսինքն՝ նրա ինքնարժեքով:

Արտադրանքի ինքնարժեքը, որն արտահայտում է կազմակերպության ամբողջ ծախսերը դրամի ձևով արտահայտված տնտեսական ցուցանիշներից մեկն է, որը կապված է ապրանքի արտադրման և իրացման հետ: Ինքնարժեքի հիմքում ընկած է շինարարական կազմակերպության տեխնիկական հագեցվածության մակարդակը, հիմնական ֆոնդերի, նյութերի, էներգիայի, աշխատուժի օգտագործման աստիճանը, աշխատանքի կազմակերպման մեթոդների և արտադրության ղեկավարման կատարելագործումը:

Ինքնարժեքն արտահայտում է ընթացիկ ծախսերի մեծությունը և ունի արտադրական բնույթ, ապահովվում է հասարակ վերարտադրության գործընթացը կազմակերպության համար: Ինքնարժեքը հանդիսանում է արտադրության պահանջվող գործոնների տնտեսական փոխհատուցում:

Հետևաբար, արտադրանքի արտադրության ծախսերի կրճատման համար կազմակերպության ջանքերը անդրադառնում են արտադրությունից տնտեսական վերադարձի և կազմակերպության մրցունակության աճի վրա:

Շինարարամոնտաժային աշխատանքի ինքնարժեքը շինարարական կազմակերպությունների աշխատանքների տնտեսական ցուցանիշների կարևորագույն գործոնն է:

Շինարարամոնտաժային աշխատանքի ապրանքի արտադրության և ծառայությունների, շինարարական կազմակերպության այլ տեսքի գործունեության ինքնարժեքի որոշումը հաշվապահական հաշվառման խնդիրներից է:

Հետևաբար, ինքնարժեքը կարևորագույն ցուցանիշ է, որը ազդում է շինարարական կազմակերպությունների գործունեության ընդհանուր ֆինանսական արդյունքի վրա:

Շինարարությունում օգտագործվում է շինարարամոնտաժային աշխատանքի ինքնարժեքի նախահաշվային (որոշված նախահաշվում), պլանային (նախատեսված շինարարական կազմակերպության կողմից՝ կոնկրետ պայմանների հաշվառմամբ) և փաստացի (իրականորեն դասավորված շինարարական հրապարակի վրա) ցուցանիշներ:

Շինարարամոնտաժային աշխատանքի ինքնարժեքը ընդգրկում է նյութերի, վառելիքի, էներգիայի ձեռքբերման, վարձու աշխատավորների աշխատավարձի և այլ ծախսեր:

Բոլոր ծախսերը՝ կախված աշխատանքի ինքնարժեքում իրենց ներառման միջոցներից, լինում են ուղղակի և վերադիր: Շինարարական արտադրության ծախսերի առավել մասը կազմում են ուղղակի ծախսերը, որոնք որոշվում են աշխատանքի ծավալի հիման վրա՝ նախատեսված նախահաշվով և նախահաշվային նորմաներով և գնահատմամբ: Ուղղակի ծախսեր ասելով հասկանում ենք այն ծախսերը, որոնք կապված են շինարարական արտադրության աշխատանքի հետ, որոնք կարելի է ուղղակի և անմիջականորեն ներառել կոնկրետ շինարարական օբյեկտների ինքնարժեքում: Ուղղակի ծախսերի կազմում մտնում են՝

- աշխատողների աշխատավարձը,
- նյութերի, դետալների և սարքավորումների արժեքը,
- շինարարական մեքենաների և սարքավորումների շահագործման ծախսերը:

Վերադիր ծախսեր ասելով հասկանում ենք այն, որոնք կապված են կազմակերպության հետ և շինարարական արտադրության աշխատանքի ղեկավարման հետ: Վերադիր ծախսերը համախումբ ծախսերն են, որոնք ամբողջությամբ կապված են կազմակերպության գործունեության հետ, որոնք չեն կարող վերաբերել անմիջապես հաշվառման որոշ օբեկտներին կամ արտադրանքի բացթողմանը և ցուցաբերված ծառայություններին: Ուղղակի ծախսերի հետ միասին նրանք կազմում են շինարարամոնտաժային աշխատանքների նախահաշվային ինքնարժեքը:

Շինարարամոնտաժային արտադրության և ծառայությունների ծախսերը բաժանվում են՝ ընթացիկ և միաժամանակյա ծախսերի: Ընթացիկ ծախսերը հանդիսանում են արտադրության ծախսերը՝ կախված աշխատանքների ծավալից և կատարվող աշխատանքներից, բացթողնվող արտադրանքների և ցուցաբերվող ծառայությունների քանակներից: Միաժամանակյա են անվանում այն ծախսերը, որոնք առաջանում են պարբերաբար և միանգամյա:

Կախված շինարարամոնտաժային արտադրության աշխատանքների ծավալներից, բաց թողնվող ապրանքներից և ցուցաբերված ծառայություններից ընթացիկ ծախսերը իրենց հերթին բաժանվում են երկու մասի՝ մշտական և փոփոխական:

Հաստատուն ծախսերը՝ անկախ արտադրության աշխատանքի ծավալի, արտադրանքի և ծառայությունների հետ ունեցած կապից, հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում մնում են անփոփոխ: Մասնավորապես նրանց կարող են վերաբերվել. հիմնական միջոցների մաշվածքամարման պահումները՝ մշտական նորմատիվների սկզբնական արժեքի ավելացման դեպքում, որոնք հաշվարկված են՝ ելնելով հիմնական միջոցների ծառայությունների ժամկետից, ոչ նյութական ակտիվների մաշվածությունը, հիմնական միջոցների վարձակալության վճարումը և այլն:

Այն ծախսերը, որոնք կախված աշխատանքների ծավալից, արտադրանքից և ծառայություններից, ավելանում են կամ պակասում, պատկանում են փոփոխական ծախսերին: Նրանց բացառապես պատկանում են օգտագործված նյութերի արժեքը, անձնակազմի աշխատավարձի ծախսերը, որոնք հաշվարկված են՝ ելնելով շինարարամոնտաժային աշխատանքների ծավալի միավորի գնահատումից և այլն:

Առանձին ծախսեր, որոնք չեն կարող վերաբերել ո՛չ մշտական և ո՛չ էլ փոփոխական ծախսերին, քանի որ նրանք երկու խմբերից էլ տարրեր են ընդգրկում: Նման ծախսերն ընդունված է անվանել պայմանական-հաստատուն և պայմանական-փոփոխական՝ կախված նրանից, թե որ ծախսերն են նրանցում գերակշռում՝ մշտական, թե փոփոխական: Օրինակ՝ հիմնական միջոցների վերանորոգման ծախսերը հանդիսանում են համալիր ծախսեր, որոնք ընդգրկում են ինչպես հաստատուն ծախսեր (օժանդակ աշխատողների աշխատավարձը, վարձը տարիֆով և դրույքով), այնպես էլ փոփոխական (օգտագործվող նյութերի ծախսերը և այլն):

Շինարարական աշխատանքների, ինչպես նաև արտադրանքի և ծառայությունների ինքնարժեքում չպետք է մտնեն այն ծախսերը, որոնք կապված չեն նրանց կատարման հետ:

Ուղղակի ծախսերը (ՈՒԾ) որոշվում է հետևյալ բանաձևով.

$$ՈՒԾ = Ն + ԱԾ + Ա, \qquad (8.1)$$

որտեղ Ն-ն շինարարական աշխատանքների կատարման ժամանակ անմիջականորեն օգտագործվող նյութերի, դետալների, շինարարական սարքավորումների, վառելիքի, ջրերի, էլեկտրաէներգիայի արժեքներն են: Նյութական պաշարների ձեռքբերման արժեքն որոշվում է գործող գներով՝ առանց հարկի: ԱԾ-ն՝ արտադրության աշխատողների աշխատավարձի տրման ծախսերն են, Ա-ն՝ շինարարական մեքենաների և սարքավորումների պահպանման և շահագործման ծախսերը, որոնք ընդգրկում են մաշվածքամարման հատկացումները՝ շինարարական մեքենաների և սարքավորումների ամբողջական վերականգման համար:

Վերադիր ծախսերը ներառում են.

- վարչական-տնտեսական ծախսերը, որոնք նախատեսված են վարչական-տնտեսական անձնակազմի աշխատավարձի համար, անհրաժեշտ սոցիալական հատկացման համար (պետական սոցիալական և բժշկական ապահովագրություն, թոշակների ապահովում և այլն),
- շինարարական հրապարակների աշխատանքների կազմակերպման ծախսերը, այդ թվում նաև այն ծախսերը, որոնք կապված են սակավարժեք և արագամաշ գործիքների և արտադրական գույքերի վերանորոգման հետ,

- շինարարության աշխատակիցների սպասարկման ծախսերը, այդ թվում նաև նոր կադրերի վերապատրաստման, անհրաժեշտ սանիտարահիգենիկ ծախսերը, աշխատանքի և տեխնիկայի անվտանգության ապահովման ծախսերը և այլն,
- այլ վերադիր ծախսեր, շինարարական կազմակերպության գույքի պարտադիր ապահովագրության վճարներ, բանկային վարկեր, գովազդների համար նախատեսված ծախսերը, հասարակայնության հետ կապեր,
- ծախսեր, որոնք չեն մտնում վերադիր ծախսերի մեջ, բայց կապված են նրանց հաշիվների հետ:

8.2.Շինմոնտաժային աշխատանքների նախահաշվային ինքնարժեքը և դրա որոշման կարգը

Շինարարական կազմակերպության սեփական ուժերով կատարված շինարարամոնտաժային աշխատանքների ինքնարժեքն որոշվում է հետևյալ բանաձևով.

$$Ի_{ն} = ՈՒԾ + ՎԾ, \qquad (8.2)$$

որտեղ ՈւԾ-ն ուղղակի ծախսերն են, ՎԾ-ն՝ վերադիր ծախսերը:

Շինարարամոնտաժային աշխատանքների նախահաշվային ինքնարժեքն որոշվում է նախագծային կազմակերպությամբ նախագծային փաստաթղթերի անհրաժեշտ համակարգի կազմավորման ժամանակ՝ ըստ նախահաշվային նորմաների և նրա վճարման պահին ընթացիկ գներով:

Նախահաշվային ինքնարժեքը շինարարամոնտաժային աշխատանքների նախահաշվային ինքնարժեքի հաշվարկի համար բազա է, այն թույլ է տալիս շինարարական կազմակերպությանը կանխատեսել իրենց ապագա ծախսերի մակարդակը, իսկ պատվիրատուին՝ գնահատել առավելագույնը, որոնցում կարելի է իրականացնել գործարք կապալային շինարարական կազմակերպության հետ:

Նախահաշվային ինքնարժեքը հանդիսանում է հիմնական ցուցանիշը, ըստ որի հարկման պետական օրգանները վերահսկում են շինարարական կազմակերպության կոնկրետ գործարքի շահութաբերությունը:

8.3.Շինմոնտաժային աշխատանքների պլանային և փաստացի ինքնարժեքը

Շինարարամոնտաժային աշխատանքների պլանային ինքնարժեքն իրենից ներկայացնում է որոշակի շինարարական կազմակերպության ծախսերի մեծության կանխատեսումը շինարարամոնտաժային աշխատանքների որոշ համակարգերի կատարման ժամանակ: Պլանային ինքնարժեքի նպատակն է որոշել շինմոնտաժային աշխատանքների ծախսերի մեծությունը պայմանագրային ժամկետում արտադրական պաշարների արդյունավետ օգտագործմամբ:

Հաշվարկային (պլանային) ինքնարժեքը շինարարական կազմակերպության կողմից օգտագործվում է շահույթի և իր արտադրական ու սոցիալական զարգացման հնարավորության որոշման համար:

Շինարարամոնտաժային աշխատանքների պլանային ինքնարժեքը շինարարական կազմակերպությունների կողմից վարվում է ինքնուրույն և հանդիսանում է իրենց գործարար պլանի կառուցվածքային մասը, իրականանում է տեխնիկատնտեսական ծախսերի կիրառմամբ: Որպես կանոն՝ տեխնիկատնտեսական հաշվարկը անցկացվում է՝ ելնելով աշխատանքների, կոնստրուկտիվ տարրերի ֆիզիկական ծավալից և դրանց արժեքից, որոշվում է նախագծանախահաշվային փաստաթղթերի և պայմանագրային գնի հիման վրա: Ընդ որում՝ հաշվարկներում հաշվի են առնվում շինարարական կազմակերպության աշխատանքների հստակ պայմաններ, տեխնոլոգիական և կազմակերպչական պայմաններ, նախորդ տարում ծախսերի մակարդակի հետազոտման արդյունքները, տնտեսական արդյունավետության բարձրացման հնարավորությունը:

Շինարարական աշխատանքների պլանային ինքնարժեքի կարգն ու մեթոդները յուրաքանչյուր շինարարական կազմակերպություն կարող է որոշել ինքնուրույն՝ ելնելով իրենց գործունեության պայմաններից: Ընդ որում՝ պլանային ինքնարժեքը կարող է հաշվարկվել ինչպես առանձին օբյեկտներում, այնպես էլ կապալային պայմանագրով և նույնիսկ ամբողջական արտադրական ծրագրով:

Շինարարամոնտաժային աշխատանքների պլանային ինքնարժեքը կարող է որոշվել տեխնիկատնտեսական հաշվարկով՝ ըստ ծախսերի

շարադրանքի տեխնիկական և կազմակերպչական մակարդակի միջոցառումների պլանների հիման վրա:

Ըստ «Նյութեր» հոդվածի՝ ծախսերը հաշվարկվում են՝ ելնելով իրենց պահանջարկից, որը որոշված է նախագծա-նախահաշվային փաստաթղթում, իրենց արժեքով՝ հաշվի առնելով առաքման ծախսերը մինչև մերձօբյեկտային պահեստները և մթերող պահեստային ծախսերը: Ըստ «Աշխատավարձի ծախսերը» հոդվածի՝ ծախսերը որոշվում են՝ ելնելով նախագծային պահանջարկի աշխատողների աշխատանքի, տարիֆների, դրույքների, արտոնությունների և փոխհատուցումների ծախսերից, կազմակերպության ֆինանսական հնարավորությունից:

Ըստ «Շինարարական մեքենաների և սարքավորումների պահպանման և շահագործման ծախսերը» հոդվածի՝ ծախսերը հաշվարկվում են՝ ելնելով իրենց աշխատանքի նախագծային պահանջարկի ժամանակից մեքենա-հերթափոխում (մեքենա-ժամում) և մեքենա-հերթափոխ արժեքի պլանային հաշվարկից: Ըստ «Վերադիր ծախսեր» հոդվածի՝ ծախսերն որոշվում են պլանավորված ժամանակամիջոցում այդ նախահաշվային ծախսերի հիման վրա շինարարական կազմակերպության մեթոդիկայով ընդունված չափերով:

Արտադրության տեխնիկական և կազմակերպչական մակարդակի բարձրացման միջոցառումները մշակվում են օբյեկտների հոդվածներում: Նրանք պետք է ապահովեն կատարված աշխատանքների արժեքի նվազեցումը նախագծանախահաշվային փաստաթղթերով հաստատվածի համեմատ ավելի մատչելի շինարարական նյութերի, առաջադիմական շինարարական սարքավորումների, շինարարական տեխնիկայի ընդունման հաշվին և արտադրության ավելի կատարյալ տեխնոլոգիայի, արտադրության կազմակերպության կատարելագործման, աշխատանքային պաշարների օգտագործման բարելավման հաշվին և այլն:

Պլանային ինքնարժեքը ($Ի_{պլ}$) հանդիսանում է հաշվարկային մեծություն և կարող է որոշվել հետևյալ բանաձևով.

$$Ի_{պլ} = ՆԱ_{շմա} - ՊԿ - ԻԻ + Փ, \qquad (8.3)$$

որտեղ $ՆԱ_{շմա}$-ն շինարարամոնտաժային աշխատանքների նախահաշվային արժեքն է, ՊԿ-ն՝ պլանային կուտակումը, ԻԻ-ն՝ ինքնարժեքի իջեցումը

դրամական արտահայտությամբ, Փ-ն՝ գների և տարիֆների ավելացման հետ կապված փոխհատուցումը՝ համեմատած նախահաշվին:

Շինարարական աշխատանքների պլանային ինքնարժեքի հաշվարկի կարգը՝ ըստ ծախսերի, կազմի և արտադրության նախահաշվի, ծախսերը կարող են կազմվել ըստ ծախսերի տարրերի հաշվարկով: Ծախսերը, ըստ «Նյութական ծախսեր» տարրի, որոշվում են՝ ելնելով նյութական պաշարների պահանջարկից, որոնք անհրաժեշտ են արտադրության աշխատանքների համար, և նրանց արժեքի, որոնք ներառում են առաքման ծախսերը մինչև մերձօբյեկտային պահեստները և մթերող-պահեստային ծախսերը:

Ծախսերը՝ ըստ «Աշխատավարձի ծախսեր» տարրի, որոշվում է՝ ելնելով աշխատավարձի վճարման այն գումարից, որոնցում հաշվառված են խթանվող, փոխհատուցվող և այլ վճարումները: Ծախսերը, ըստ «Սոցիալական անհրաժեշտության հատկացման» տարրի, որոշվում է օրենսդրության նորմերի, պետական ապահովագրության պարտադիր հատկացման մարմինների, թոշակառուների ֆոնդի, զբաղվածության և բժշկական ապահաովագրության պետական ֆոնդերի հիման վրա:

Ծախսերը, ըստ «Հիմանական ֆոնդերի մաշվածքամարում» տարրերի, որոշվում են՝ ելնելով տարեկան միջին արժեքից ինչպես սեփական, այնպես էլ վարձակալային հիմնական արտադրական ֆոնդերով, որոնց վրա ավելացվում է մաշվածքամարման հատկացման միջին նորմաները: «Այլ ծախսեր» տարրի ծախսերի որոշման ժամանակ անցկացվում են հաշվարկներ ըստ յուրաքանչյուրի տեսքի՝ ելնելով աշխատանքների պլանային ծավալից, որոնցից կախված փոփոխվում են այդ ծախսերի մեծությունը, հաշվարկներ գործող նորմերի և նորմատիվների հիման վրա:

Շինարարամոնտաժային աշխատանքների փաստացի ինքնարժեքը այն ծախսերի գումարն է, որոնք ստեղծված են կոնկրետ շինարարական կազմակերպության կողմից՝ արտադրության ստեղծված պայմաններում տրված համալիր աշխատանքների կատարման համար:

Շինարարամոնտաժային աշխատանքների փաստացի ինքնարժեքի հաշվառման նպատակն է փաստացի ծախսերի ժամանակին, ամբողջական և ստույգ արտահայտումը, որոնք կապված են արտադրության հետ և ըստ

շինարարության տեսքի և օբյեկտների պատվիրատուին հանձնված աշխատանքի հետ, ինչպես նաև օգտագործվող նյութական, աշխատանքային և ֆինանսական պաշարների հսկողության հետ:

Շինարարական աշխատանքների ինքնարժեքի հաշվառման տվյալներն օգտագործվում են արտադրության ներարտադրական պաշարների կատարման համար անհրաժեշտ հետազոտման ընթացքում, ինչպես նաև շինարարական կազմակերպությունների և իրենց բաժնեմասերի գործունեության փաստացի ֆինանսական արդյունքների որոշման ժամանակ:

Շինարարամոնտաժային աշխատանքների արտադրության ծախսերի հաշվառումը վարվում է շինարարական կազմակերպության հաշվապահության կողմից մեծմասամբ պատվիրելու մեթոդով, որի դեպքում հաշվառման օբյեկտ հանդիսանում է առանձին պատվեր, որը բացում է շինարարության յուրաքանչյուր օբյեկտ համապատասխան պայմանագրի և ամփոփվում պատվիրատուի հետ: Յուրաքանչյուր պատվերի համար անցկացվում է ծախսերի հաշվառում աճող ընդհանրացումով մինչև կատարվող աշխատանքների ավարտը: Այս մեթոդը ներկա պահին համարվում է հիմնական:

Շինարարական կազմակերպությունների համար, որոնք կատարում են արտադրության միատեսակ ընթացքներ (օրինակ՝ ճանապարհային շինարարություն) կամ վարում են շինարարության միատեսակ օբյեկտների աննշան երկարատևությամբ (օրինակ՝ սեփական քոթեջներ), թույլատրվում է ըստ նորմատիվների օգտագործվող պաշարների որոշակի ժամանակաշրջանում կատարվող ծախսերի մեթոդը: Այդ դեպքում պատվիրատուին հանձնված շինարարական աշխատանքների ինքնարժեքն որոշվում է հաշվարկային ճանապարհով կատարված աշխատանքների փաստացի ծախսերի տեսակարար կշռից, որոնք գտնվում են թերի շինարարական արտադրությունում, և նրանց պայմանագրային արժեքից (հանձնվող աշխատանքների պայմանագրային արժեքին):

Արտադրության ծախսերի հաշվառումն իրականացվում է առաջնային հաշվառման փաստաթղթերի հիման վրա, որը կազմված է պարտադիր պատճենահանումով և ապահովող հաշվառումով ըստ շինարարական օբյեկտների և աշխատանքների տեսքի:

8.4.Շինմոնտաժային աշխատանքների ինքնարժեքի իջեցման ուղիները

Շինարարական կազմակերպության ինքնարժեքի մակարդակը որոշում է հենց ինքը՝ արտադրող կազմակերպությունը: Արտադրության ծախսերի ինքնարժեքի հիմքում ընկած են օբյեկտային գործոններ՝ հումքի, սարքավորումների, աշխատուժի պահանջարկ և այդ պաշարների գների կազմավորման մակարդակը:

Միաժամանակ արտադրանքի ինքնարժեքի վրա էականորեն ազդում է այդ պաշարների ռացիոնալ և արդյունավետ օգտագործումը:

Շինարարամոնտաժային աշխատանքների ինքնարժեքի նվազմանը կարելի է հասնել հետևյալ կերպ.

- արտադրական տեխնիկայի օգտագործումը (պակասեցնել վառելիքի և էլեկտրաէներգիայի, շինարարական մեքենաների և սարքավորումների վերանորոգման և տեխսպասարկման ծախսերը),
- շինարարական կազմակերպության, տրանսպորտի աշխատանքային հերթափոխի փոփոխությունը, շինարարական հրապարակում փոխադրման զբաղվածությունը, արդյունավետ տեխնոլոգիայի ներդրումը,
- շինարարական արտադրության վերակառուցման տնօրինումը,
- նյութերի տնտեսումը ռացիոնալ մատակարարման, պահպանման և սպառման հաշվին:

Գոյություն ունեն ավելի ճկուն ու փակ գործոններ, որոնք պահանջում են գիտական մեթոդիկայի, լայնածավալ տեղեկատվության բազաների, էկոնոմիկական բարձրորակ ղեկավար կադրերի ուշադրությունը.

- ռացիոնալ տեմպերի, շինարարության ժամկետների ընտրությունը,
- արտադրանքների թողարկման անվանացուցակի օպտիմալացումը, աշխատանքների տեսակները,
- ռացիոնալ մակարդակի օգտագործման արտադրության հզորության որոշումը,
- շինարարական մեքենաների նորոգման քաղաքականությունը,
- պատվերների արդյունավետ պորտֆելի ընտրությունը,

- հումքերի, նյութերի, սարքավորումների պաշարների օպտիմալացմանն տնօրինումը,
- արհեստավարժ մարքեթինգ:

Ավանդական գործոնները գնահատվում են հետևյալ կերպ.

1. *Շինանյութերի, դետալների, սարքավորումների ծախսերի պակասեցման հաշվին ինքնարժեքի իջեցումը (Իհ) կարելի է որոշել հետևյալ բանաձևով.*

$$Իհ = Ուեո\left\{\left[1-\left(100-Ուեծ\right)\right]\frac{100-Ուեգ}{100\times100}\right\}, \qquad (8.4)$$

որտեղ Ուեո-ն նյութական պաշարների ծախսերի տեսակարար կշիռն է (կամ առանձին տեսքի նյութեր, կոնստրուկտիվ բաղադրատարրեր և այլն) բոլոր շինարարամոնտաժային աշխատանքների նախահաշվային արժեքին(%), Ուեծ-ն՝ նյութերի, սարքավորումների, դետալների ծախսերի չափաբաժինների իջեցման տոկոսը, Ուեգ-ն՝ նյութերի, դետալների, սարքավորումների գների իջեցման տոկոսը (կամ նրանց առանձին տեսակների):

2. *Շինարարական մեքենաների և սարքավորումների բարվոք օգտագործման ժամանակ արտադրության մեծացման հաշվին ինքնարժեքի իջեցումը (Իա) կարելի է հաշվել հետևյալ բանաձևով.*

$$Իա = \frac{Մշծ\times\square\times ՄԱ}{\left(100+ՄԱ\right)100}, \qquad (8.5)$$

որտեղ Մշծ-ն մեքենաների շահագործման ծախսերի մակարդակն է նախահաշվային (բազային) ինքնարժեքում(%), α-ն՝ պայմանական-մշտական մասերի բաժինը շինարարական մեքենաների շահագործման ծախսերում(%), ՄԱ-ն՝ մեքենաների արտադրման պլանավորված մեծացումը(%):

Բանաձևը կարելի է օգտագործել ծախսերը գնահատելու համար ինչպես աշխատանքների արտադրական ծրագրման նպատակով, այնպես էլ, օրինակ, ինքնարժեքի փոփոխության գնահատման ժամանակ առանձին մեքենաների փոխարինման դեպքում:

3. Ինքնարժեքի իջեցումը աշխատանքի արտադրողականության բարձրացմամբ շինարարության հավաքականության ավելացման հաշվին ($Շ_{հա}$) որոշվում է հետևյալ բանաձևով.

$$Շ_{հա} = \frac{Ծվ_{բարձ} + Ու_{բ}\left[1 - \sum_{1}^{n}\left(1 - Ա_{պլ}\right)\right]}{Ծվ_{պլ}}, \qquad (8.6)$$

որտեղ $Ծվ_{պլ}$-ն շինարարամոնտաժային աշխատանքների ծավալն է՝ ըստ պլանային ժամանակաշրջանում նախահաշվային արժեքի, $Ծվ_{բարձ}$-ն՝ շինարարամոնտաժային աշխատանքների ծավալը ըստ հավաքականի մակարդակի բարձրացման ծավալով՝ նախահաշվային արժեքով (դրամ), $Ու_{բ}$-ն՝ ծախսերի տեսակարար կշիռն՝ ըստ «Հիմնական աշխատավարձը» հոդվածի բազիսային ժամանակահատվածում աշխատանքի ինքնարժեքում, n-ն՝ հավաքականության ավելացման համար նախատեսված միջոցառումների քանակը, $Ա_{պլ}$-ն՝ աշխատանքային ծախսերի տեսակարար կրճատումը հավաքականության ավելացման հաշվին միավոր չափումով(%):

Անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել «Վերադիր ծախսերի կրճատումը» տարրին: Այդ նպատակով կազմվում է վերադիր ծախսերի իրական նախահաշիվ և կատարվում է այդ նախահաշվի համադրումը վերադիր ծախսերի չափերով: Վերադիր ծախսերի մշակման ժամանակ հաշվի է առնվում դրանց կրճատումը՝ ըստ նախահաշվի առանձին հոդվածների կազմակերպչաարտադրական և տնտեսական միջոցառումների տնտեսման հաշվառմամբ: Ընդ որում՝ հավելյալ աշխատավարձը որոշվում է աշխատանքի պլանի տվյալների հիման վրա, իսկ սոցիալական ապահովագրության ծախսերը՝ ելնելով աշխատավարձի ֆոնդից և սոցիալական ապահովագրության համար սահմանված հաշվարկների հատկացումից, բժշկական սպասարկման ծախսերը որոշվում են հատուկ հաշվարկների հիման վրա, ժամանակավոր հարմարանքների մաշվածությունը հաշվարկվում է ելնելով մաշվածության համար սահմանված նորմերից: Վերադիր ծախսերի նախահաշիվ կազմելու հավելյալ հիմնավորման համար անցկացվում է վերադիր ծախսերի տնտեսման հաշվարկ դրանց պայմանական-մշտական մասի աստիճանաբար նվազման հաշվին՝ կապ-

ված շինարարամոնտաժային աշխատանքների ծավալի աճի և շինարարության երկարատևության կրճատման հետ:

Շինարարության տևողության կրճատումն առաջացնում է վերադիր ծախսերի կրճատման մեծությունը, որն որոշվում է հետևյալ բանաձևով.

$$Ճ_S = Գ_S ԱԻ_{վճ}(1 - S_{պԼ}/S_Ն), \quad (8.7)$$

որտեղ Գs-ն վերադիր ծախսերի կազման պայմանականփոփոխական մասը, ԱԻվճ-ն՝ վերադիր ծախսերի մեծության աշխատանքի ինքնարժեքը տոկոսներով, Տպլ և Տն-ն՝ շինարարության համապատասխանաբար պլանային և նորմատիվային տևողության:

Արտադրման ածը նախահաշվի համեմատ նվազեցնում է վերադիր ծախսերի մեծությունը, որն որոշվում է հետևյալ բանաձևով.

$$Ճ_S = Գ_ա ԱԻ_{վճ}(1 - Ա_{պԼ}/Ա_{Նախ}), \quad (8.8)$$

որտեղ Գա-ն վերադիր ծախսերի մասի որոշման գործակիցն է՝ կախված արտադրողականությունից Ապլ-ն՝ ըստ պլանի մեկ աշխատողի միջին արտադրողականությունը, Անախ-ն՝ ըստ նախահաշվի մեկ աշխատողի միջին արտադրողականությունը:

Աշխատողների հիմնական աշխատավարձի տեսակարար կշռի փոքրացումից վերադիր ծախսերի մակարդակի իջեցումը կարելի է որոշել հետևյալ բանաձևով.

$$Ճ_{աշ} = Գ_{աշ} ԱԻ_{վճ}(1 - Ա_{պԼ}/Ա_{Նախ}), \quad (8.9)$$

որտեղ Գաշ-ն վերադիր ծախսերի մասի որոշման գործակիցն է՝ կախված հիմնական դուրս գրված աշխատավարձի զանգվածից, Ապլ-ն՝ ըստ պլանի դուրս գրված աշխատավարձի զանգվածը, Անախ-ն՝ ըստ նախահաշվի դուրս գրված աշխատավարձի զանգվածը:

Գs, Գա, Գաշ գործակիցները, որոնք կան վերջին երեք բանաձևերում, որոշվում են յուրաքանչյուր շինարարական կազմակերպության համար՝ ելնելով նրա առանձնահատկություններից:

Շինարարական արտադրությունում հնարավոր է շինարարմոնտաժային աշխատանքների ինքնարժեքի իջեցման այլ միջոցների փոփոխություն, հատկապես ինչպես պրակտիկորեն, այնպես էլ տեսականորեն:

ԳԼՈՒԽ 9

Շահույթը և շահութաբերությունը շինարարությունում

9.1.Շինարարական կազմակերպության եկամուտը

ՀՀ հաշվապահության և հաշվապահական հաշվառման դրույթներին համապատասխան՝ շինարարական կազմակերպության եկամուտը ընդունվում է տնտեսական արդյունքների մեծացմամբ, որն ակտիվների (դրամական միջոցներ և այլ Գույք) և (կամ) պարտավորությունների մարման արդյունքում մեծացնում է այդ կազմակերպության կապիտալը, բացի մասնակիցների ավանդներից:

Այսպիսի իրավիճակում շինարարական կազմակերպության համար որպես եկամուտ չի ճանաչվում այլ ֆիզիկական և իրավաբանական անձանց մասնակցությունը.

- արժեքի վրա հարկերի գումարի ավելացումը և համանման պարտադիր վճարները,
- շինարարական արտադրանքի (աշխատանք, ծառայություն) օրենքով սահմանված բարեգործական վճարները,
- ավանսներ՝ շինարարական արտադրանքի (աշխատանք, ծառայություն) վճարների հաշվին,
- գրավ, եթե պայմանագրով նախատեսված է գույքը գրավ հանձնել գրավատուին,
- փոխառուների տրամադրած փոխառությունների և վարկերի մարում:

Շինարարական կազմակերպության եկամուտի բնույթը կախված է ստացման պայմաններից և կազմակերպության գործունեության ուղղվածությունից, որը բաժանվում է.

- սովորական ձևի գործունեությունից ստացված եկամուտներ,
- գործառնական եկամուտ,
- արտահիրացման եկամուտ:

Կազմակերպության տնտեսական օգուտը (եկամուտը)՝ կազմակերպության համախառը եկամուտն է, որն իրենից ներկայացնում է

շինարարական արտադրանքի իրացման դրամական մուտքերը (հասույթը), նյութական ծախսերը հանելուց հետո:

Շինարարական կազմակերպության համար սովորական ձևի գործունեությունից ստացված եկամուտը հանդիսանում է պատվիրատուի օբյեկտի հանձնումից համակարգով կամ նրանց հերթականությամբ ընդունումը կախված շինարարամոնտաժային աշխատանքների կատարումից, մատուցված ծառայությունների և շինարարական նյութերի իրացման, դետալների և կոնստրուկցիաների նյութական ծախսերի հանելուց հետո:

Շինարարական կազմակերպության գործառնական եկամուտը հանդիսանում է.

- մուտքեր, որոնք կապված են կազմակերպության ակտիվների ժամանակավոր օգտագործման վճարների տրամադրման հետ,
- այլ կազմակերպության կանոնադրական կապիտալում մասնակցության հետ կապված մուտքեր,
- կազմակերպության համատեղ գործունեության արդյունքում ստացված շահույթ,
- հիմնական միջոցների և այլ ակտիվների, արտադրանքների և ապրանքների վաճառքից ստացված մուտքերը,
- կազմակերպության կողմից տրամադրված դրամական միջոցների օգտագործումից ստացված տոկոսների մուտքեր, ինչպես նաև կազմակերպությանը պատկանող բանկում գտնվող դրամական միջոցների տոկոսների մուտքերը:

Շինարարական կազմակերպության արտահիրացման եկամուտ՝

- պայմանագրի պայմանների խախտումից տույժերի, տուգանքների տուժավճարների ստացումից եկամուտներ,
- ակտիվների անհատույց կերպով, այդ թվում պայմանագրի ներումից ստացվող եկամուտները
- հաշվետու տարում հայտնաբերված նախորդ տարիների շահույթը,
- կրեդիտորական և դեբիտորական պարտքի գումարները՝ համաձայն հայցային վաղեմության ժամկետ ունենալու,
- կազմակերպությանը փոխհատուցված վնասների մուտքերը,

- դրամական միջոցներ՝ ստացված արժութային դրական տարբերությունների դասընթացերի արդյունքում և այլ արժույթների գործընթացներում,
- ակտիվների գնահատման լրացուցիչ գումարները և այլ արտահրացվելի եկամուտներ:

Շինարարական կազմակերպության եկամտի մեծության վրա ազդում են գործոններ, որոնք ինչպես անկախ են, այնպես էլ գտնվում են կախման մեջ կազմակերպության ջանքերից: Կազմակերպության ազդեցության ոլորտից դուրս գտնվում են շուկայի կառուցվածքը, պահանջվող նյութերի, հումքի և վառելիքաէներգետիկ պաշարների, ամորտիզացիոն հատկացումների նորմերի գների մակարդակը:

Շինարարական կազմակերպության եկամուտը կախված է այնպիսի գործոններից, ինչպիսիք են՝ իրականացվող արտադրանքի (աշխատանք, ծառայություն) գների մակարդակը, տնտեսության մակարդակը, ղեկավարների իրազեկվածությունը, արտադրանքի մրցունակությունը, արտադրանքի որակը, աշխատանքի և արտադրության կազմակերպումը, նրա արտադրողականությունը, ֆինանսական և արտադրական պլանավորման դրությունը և արդյունավետությունը:

Կազմակերպության շահույթի վրա բոլոր թվարկված գործոնները ևս ազդում են անուղղակի՝ իրականացվող արտադրանքի և ինքնարժեքի ծավալների միջոցով, ուստի վերջնական ֆինանսական արդյունքը պարզելու համար անհրաժեշտ է շինարարական արտադրությունում համատեղել իրականացվող արտադրանքի ծավալների արժեքը և օգտագործվող պաշարների և ծախսերի արժեքները:

Շուկայական հարաբերությունների պայմաններում կազմակերպությունները պետք է ձգտեն ստանալ մեծ չափերի ծավալով շահույթ, որը թույլ կտա ամուր պահել իր դիրքերը շուկայում, բայց և մրցակցության պայմաններում ապահովելով նրա արտադրանքի դինամիկ աճը: Վերջնական արդյունքում ենթադրում է շահույթի ձևավորման աղբյուրի իմացությունը և գտնել մեթոդներ դրանց ճիշտ օգտագործման նպատակով:

9.2.Շահույթի տեսակները շինարարությունում

Շուկայական տնտեսության պայմաններում շինարարական կազմակերպության տնտեսական զարգացման ձևը շահույթն է, որը հանդիսանում է կազմակերպության աշխատանքի արդյունավետության ցուցանիշը, նրա կենսագործունեության աղբյուրը:

Շահույթի աճն ստեղծում է կազմակերպության համար ֆինանսական հիմքը՝ ապահովելով արտադրական գործունեությունը սեփական ֆինանսական պաշարներով, իրականացնելով լայնածավալ վերարտադրություն և բավարարել աշխատակազմի սոցիալական ու նյութական պահանջները: Կազմակերպության շահույթի հաշվին կատարվում են բյուջեի, բանկերի և այլ կազմակերպությունների ու հիմնարկների առջև պարտականությունները:

Ներկա պայմաններում ժողովածուների ցուցանիշներում շինարարական կազմակերպության գործունեության ֆինանսական արդյունքի բնութագրումը հանդիսանում է հաշվեկշռային շահույթը կամ վնասը:

Հաշվեկշռային շահույթը (Շհ) ձևավորվում է ֆինանսական արդյունքներից, արտադրանքի (աշխատանք, ծառայություն) իրացումից, ապրանքներից և այլ նյութական արժեքներից (հիմնական ֆոնդեր, ոչ նյութական ակտիվներ, նյութական շրջանառու միջոցներ և այլ ակտիվներ) սահմանվելով որպես իրացված հասույթի ու ծախսերի գումարի կամ իրացված արտադրանքի (աշխատանք, ծառայություն) ինքնարժեքի և այլ նյութական արժեքների, ինչպես նաև արտահիրացման գործունեությունից եկամուտների միջև տարբերություն, որոնք նվազեցվում են այդ գործարքների հետ կապված ծախսերի գումարի չափով.

$$Շ_հ = Շ_{ահ} + Շ_գ + Շ_օ + ԱԻ + Ծ_{աԻ}, \qquad (9.1)$$

որտեղ Շահ-ն պատվիրատուին ավարտված աշխատանքների հանձնումից ստացված շահույթն է, Շգ-ն՝ գույքի իրացումից ստացված շահույթը, Շօ-ն՝ օժանդակ արտադրությունների արտադրանքի իրացումից ստացված շահույթը, Աի-ն՝ արտահիրացման եկամուտ (վնաս), Ծաի-ն՝ արտահիրացման գործունեությունից գոյացող ծախսեր:

Շինարարական կազմակերպության շահույթի հիմնական զանգվածը իրենից ներկայացնում է պատվիրատուին կատարված աշխատանքների

հանձնումից ստացված շահույթը, որը կախված ներդրումային գործունեության փուլերից, կարող է լինել նախահաշվային, պլանավորված և փաստացի:

Նախահաշվային շահույթը նախագծային փաստաթղթերի կազմման գործընթացում նախատեսված շահույթն է:

Նախահաշվային շահույթը՝ շինարարամոնտաժային կազմակերպության միջոցների գումարն է, որն անհրաժեշտ է առանձին (ընդհանուր) ծախսերի մարման, արտադրության զարգացման, սոցիալական ոլորտների և նյութական խթանման համար: Շինարարությունում նախահաշվային նորմային բնորոշ է պլանային կուտակումներ անվանումը: Պլանային կուտակումը որոշվում է նորմատիվային մեթոդում ընդունված բազային հաշվարկների տոկոսով:Այժմ ընդունված է բազային փաստացի մեծության միջոցներ՝ շինարար-աշխատողների աշխատավարձի, ինչպես նաև շինարարական մեքենաները և սարքավորումները սպասարկող աշխատողների աշխատավարձի կամ շինարարամոնտաժային աշխատանքների նախահաշվային արժեքը: Նախահաշվային շահույթի մակարդակը որոշվում է աշխատավարձի մեծության 50%-ի չափով կամ շինարարամոնտաժային աշխատանքների 11%-ի չափով, այսինքն՝ շինարարամոնտաժային կազմակերպությանը ապահովում է հնարավորություն նվազագույն չափով դրամական միջոցներով՝ անհրաժեշտության դեպքում նրանց հաջող գործելու համար, ուղղված շահութահարկի վճարման համար, արտադրության զարգացման իրականացում, աշխատողների աշխատանքի խթանում և այլ նպատակներ:

Շուկայական հարաբերությունների զարգացման պայմաններում, կախված տնտեսության զարգացման մակարդակից, պլանային կուտակումների նորմատիվային որոշումը կարող է ժամանակաշրջանի ընթացքում փոփոխվել:

Պլանային շահույթի ներքո հասկանում ենք շինարարական կազմակերպությունների գործարար-պլանների մշակման գործընթացում որոշվող շահույթը: Կատարված շինարարամոնտաժային աշխատանքների պլանային շահույթը գումարվում է հետևյալ բաղկացուցիչներում՝ պլանային կուտակումների գումար նախահաշվում նախատեսված և շինարարա-

մոնտաժային աշխատանքների ինքնարժեքի իջեցումից ստացված պլանային տնտեսման ծախսեր, հիմնական արդյունքի նախատեսումը կազմակերպչատեխնիկական միջոցառումների մշակումից: *Պլանային շահույթի (Շպլ) մեծությունն որոշվում է արտադրության կատարման (հանձման) աշխատանքներից՝ համաձայն հետևյալ բանաձևի՝*

$$Շ_{պլ} = П_կ + П_տ + Ф, \qquad (9.2)$$

որտեղ Պկ-ն պլանային կուտակումներ են (նախահաշվային շահույթ), Պտ-ն՝ օբյեկտի շինարարության ընթացքում շինարարամոնտաժային աշխատանքների ինքնարժեքի իջեցումից ստացված պլանային տնտեսումը, Ф-ն պատվիրատուի կողմից ստացված փոխհատուցում:

$$Շ_{պլ} = (Ա_{նա} + Ф) - Ա_{նի}, \qquad (9.3)$$

որտեղ Անա-ն աշխատանքների նախահաշվային արժեքն է, Անի-ն՝ աշխատանքների նախահաշվային ինքնարժեք:

Պլանային շահույթը կարող է որոշվել ինչպես ըստ առանձին օբյեկտների և կատարված աշխատանքների, այնպես էլ շինարարամոնտաժային կազմակերպության համար:

Շինարարական կազմակերպության ընդհանուր պլանային շահույթը հաշվարկվում է՝ որպես պատվիրատուների սեփական ուժերով կատարված աշխատանքների հանձնումից, օժանդակ տնտեսությունից ստացված շահույթի գումար: *Պատվիրատուներին ավարտված աշխատանքների հանձնումից ստացված փաստացի շահույթը (Շф) որոնվում է որպես դրանց իրացումից (պայմանագրային գնով) ստացված հասույթի՝ առանց ԱԱՀ-ի, և դրանց արտադրության և շահագործման հանձման ծախսերի տարբերություն.*

$$Շ_{Ф} = Գ_{պ} - ԱԱՀ - Ի_{Ф}, \qquad (9.4)$$

որտեղ Գպ-ն պայմանագրային գինն է, ԱԱՀ-ն՝ ավելացված արժեքի հարկը, Իф-ն՝ կատարված աշխատանքների փաստացի ինքնարժեքը:

Հասույթը՝ որպես ֆինանսական ցուցանիշ, բնութագրում է արտադրության պարբերաշրջանի կատարումը, կազմակերպության արտադրական միջոցների ավանսների վերադարձը դրամական կանխիկություն և շրջանառու միջոցների նոր շրջապտույտի սկիզբ: Շինարարական կազմա-

կերպության հասույթը պատվիրատուին հանձնված աշխատանքների պայմանագրային գինն է առանց ավելացված արժեքի հարկի:

Յուրաքանչյուր շինարարական կազմակերպություն ինքնուրույն է սահմանում հասույթի որոշման մեթոդները, դրանք են.

- ըստ շինարարական կազմակերպության դրամարկղում կամ հաշվարկային հաշվի վրա աշխատանքների և ծառայությունների կատարումից միջոցների ստացման,
- ըստ աշխատանքների կատարման և կապալի պայմանագրում նախատեսված փաստաթղթերի ստորագրման:

Այս կամ այն տարբերակի ընտրությունը կախված է տնտեսության պայմաններից և գործընկերների փոխհարաբերությունների բնույթից ու շինարարական կազմակերպության ինքնուրույն իրականացումից:

Կազմակերպության կողմից իրացվող արտադրանքների և ծառայությունների շահույթը օժանդակ արտադրություններում որոշվում է որպես այդ արտադրանքի արժեքի միջև տարբերությունը, վաճառքի գնից առանց ԱԱՀ-ի և նրա ինքնարժեքից:

Հաշվեկշռային շահույթի հաշվարկման գործընթացում հաշվի են առնվում շինարարական կազմակերպության եկամուտներն ու ծախսերը, որոնք կապված չեն իրագործման գործընթացի հետ՝ ըստ այսպես կոչված արտահիրացման գործառնությունների: Դրանք են՝

- այլ կազմակերպությունների գործունեությունում բաժնեմասային մասնակցությունից, գույքը վարձակալության հանձնումից ստացված եկամուտներ, բաժնետոմսերի դիվիդենդներ,
- եկամուտներ՝ ըստ շինարարական կազմակերպությանը պատկանող բաժնետոմսերի, պարտատոմսերի և այլ արժեթղթերի,
- տնտեսական պայմանագրերի խախտման համար ստացված (և հատուցված) տնտեսական պատժամիջոցներ,
- ընդհատված պայմանագրերով օբյեկտների, սառեցված կազմակերպությունների պահպանման արդյունքում ստացված վնասներ,
- տարերային աղետների հետևանքով չապահովագրված կորուստներ,
- արտադրական պաշարների էժանացումներ,

- վնասներ դեբիտորական պարտքի դուրսգրման հետևանքով,
- նախորդ տարիների շահույթը՝ ներկայացված հաշվետու տարում,
- մեղավորների բացակայության դեպքում կողոպուտներից ստացված վնասներ,
- շինարարական կազմակերպության դրամական միջոցների օգտագործման համար կուտակված միջոցներ:

9.3.Շահույթի բաշխումը և շահութաբերությունը շինարարությունում

Շինարարական կազմակերպության շահույթի բաշխման սկզբունքը կարելի է ներկայացնել հետևյալ կերպ՝

- կազմակերպության սոցիալ-տնտեսական գործունեության արդյունքում ստացված շահույթը բաշխվում է պետության և կազմակերպության միջև,
- շահույթը անցնում է համապատասխան պետական բյուջե հարկերի և վճարների ձևով: Հարկերի կազմը և դրույթները, նրանց հաշվարկման կարգը և բյուջե վճարումը սահմանվում է օրենսդրությամբ,
- հարկային պարտավորությունների կատարումից հետո կազմակերպության տրամադրության տակ մնացած շահույթը անվանվում է մաքուր շահույթ, և նրան առաջին հերթին ներդրումը ուղղվում է հիմնական և շրջանառու կապիտալի աճի համար, նախորդ տարիների վնասի ծածկման և պահուստային ֆոնդերի հատկացմանը, ինչպես նաև դիվիդենտների վճարման, սոցիալական բնույթի եկամուտների և ծախսերի համար:

Շուկայական հարաբերությունների զարգացման պայմաններում պետությունը չի սահմանում ինչ-որ նորմատիվ շահույթի բաշխման համար, բայց ներկայացված հարկային արտոնությունների միջոցով խթանում է շահույթից կապիտալի ներդրումներ ուղղել արտադրական և ոչ արտադրական բնույթի օբյեկտներում, բարեգործական նպատակներով, բնապահպանական միջոցառումների ֆինանսավորման, օբյեկտների ու սոցիալական ոլորտի հիմնարկների պահպանմանը ուղղված ծախսեր և այլն: Մաքուր շահույթի բաշխումը ներֆիրմային պլանավորման ուղղվածություններից մեկն է:

ՀՀ օրենսդրությանը և իրենց կանոնադրական փաստաթղթերին համապատասխան՝ շինարարական կազմակերպությունները ձևավորում են պահուստային ֆոնդ, որի հաշվին շահույթի չբավարարման դեպքում վճարվում են շահաբաժիններ, փոխհատուցվում են վնասներ, իսկ կազմակերպության լուծարման դեպքում՝ մարվում են կրեդիտորական պարտքերը:

Այն բանից հետո, երբ շահույթի մի մասը ներմուծվում է պահուստային ֆոնդ, սեփականատերը (սեփականատերերի կոլեկտիվը կամ բաժնետերերի ժողովը) որոշում է շահույթի բաշխման հետագա կարգը շինարարական կազմակերպության ռազմավարությանը համապատասխան:

Ֆոնդերում կուտակված միջոցների հաշվին իրականացվում են հետևյալ ծախսերը՝

- արտադրական նշանակության օբյեկտների շինարարությունը, վերակոնստրուկտավորում, հիմնական և օժանդակ արտադրությունների տեխնիկական վերազինում,
- սարքավորումների նորացումը, շինարարական մեքենաների, տրանսպորտային միջոցների և արտադրության այլ միջոցների ձեռքբերում,
- նորագույն տեխնիկաների և տեխնոլոգիաների յուրացումը շինարարամոնտաժային աշխատանքների արտադրությունում,
- գիտահետազոտական, նախագծային, կոնստրուկտորական և տեխնոլոգիական աշխատանքների համար ծախսեր,
- բնակելի շենքերի և սոցիալ-մշակութային ոլորտի օբյեկտների շինարարություն,
- կապիտալ բնույթի բնապահպանական միջոցառումների իրականացում,
- օժանդակ տնտեսության զարգացում,
- Բանկերում երկարաժամկետ փոխառությունների և նրանց տոկոսների մարում,
- այլ կազմակերպությունների կանոնադրական կապիտալում սահմանված ավանդների ներդրում,

- կազմակերպության մեջ մտնող ընկերությունների ուղղաձիգ ինտեգրալային հատկացումներ,
- այլ կազմակերպությունների արժեթղթերի ձեռքբերման և արժեթղթերի թողարկման ու բաժանման հետ կապված ծախսեր,
- այլ ծախսեր կապված շահույթի մեծացման համար:

Պահանջվող ֆոնդի միջոցները ծախսվում են տարբեր սոցիալական նշանակության վճարների համար: Մասնավորապես դրանց թվին են դասվում՝

- կազմակերպության աշխատանքների միանվագ նյութական խրախուսման, պարգևատրումների հետ կապված ծախսեր,
- ծախսեր՝ կապված անվճար սննդի արժեքի փոխհատուցման, բուժման, մշակութային-առողջարանային միջոցառումներ աշխատողների և նրանց ընտանիքների համար,
- ուսուցման, բարձրագույն ուսումնական հաստատությունների օգնության ցուցաբերում, հասարակական սննդի օբյեկտների պահպանման համար, առողջապահության, մշակույթի, հանգստի և սպորտի հետ կապված ծախսեր,
- շինարարական կազմակերպության հաշվեկշռի պահպանության ներքո գտնվող առողջապահական հիմնարկների, ազգային կրթության, մշակույթի և սպորտի, նախադպրոցական հիմնարկների հետ կապված ծախսեր,
- միավորումների, ասոցիացիաների, կոնցեռնների և ղեկավարման այլ բարձրադիր մարմինների կառավարման ապարատի պահպանման հատկացումներ,
- սահմանված նորմայից դուրս աշխատողը շինարարամոնտաժային աշխատանք է կատարում շարժական և շրջագայության բնույթի գործունեությամբ, արտադրական աշխատանքները հերթափոխով են ապա փոխհատուցվում են,
- սահմանված նորմայից դուրս գործուղման ծախսերի հատուցում,
- շինարարական կազմակերպության անձնակազմի ապահովագրում (բացի պարտադիր սոցիալական ապահովագրումից և բժշկական ապահովագրումից),
- այլ սոցիալական ծախսեր:

Շինարարական կազմակերպության աշխատանքների արդյունավետության ընդհանրացված ցուցանիշի մակարդակը հանդիսանում է շահութաբերության ցուցանիշը:

Շինարարական կազմակերպությունների շահութաբերությունը բնութագրելիս օգտագործվում է ոչ միայն շահույթի չափը, այլև հարաբերական ցուցանիշները, այդ թվում շահութաբերության մակարդակը:

Շինարարական արտադրությունում տարբերում են շահութաբերության մակարդակներ՝ նախահաշվային, պլանային և փաստացի: *Շահութաբերության նախահաշվային մակարդակը (Շհն) հաշվարկվում է պլանային կուտակումների (Պկ) և օբյեկտի նախահաշվային արժեքի (Ան) հարաբերությամբ.*

$$Շհ_{ն} = \left(\frac{Պ_{կ}}{Ա_{ն}} \right) \times 100 : \qquad (9.5)$$

Շահութաբերության պլանային մակարդակն որոշվում է հետևյալ բանաձևով.

$$Շհ_{պլ} = \left(\frac{Շ_{պ}}{Գ_{պ}} \right) \times 100, \qquad (9.6)$$

որտեղ Շպ-ն պլանային շահույթն է, Գպ-ն՝ օբյեկտի շինարարության պլանային գինը:

Շինարարության ավարտից և հաշվարկների իրականացումից հետո որոշվում է օբյեկտի փաստացի շահութաբերությունը (Շհփ).

$$Շհ_{Փ} = \left(\frac{Շ_{Փ}}{Գ_{Փ}} \right) \times 100, \qquad (9.7)$$

որտեղ Շփ-ն օբյեկտի հանձման փաստացի շահույթն է՝ հաշվի առնելով տնտեսումները և փոխհատուցումները, Գփ-ն՝ օբյեկտի շինարարության փաստացի գինը:

Շինարարական կազմակերպությունների աշխատանքային փորձում օգտագործվում են շահութաբերության մի շարք ցուցանիշներ՝ կախված սահմանված նպատակներից: Ավելի հաճախ կիրառվող ցուցանիշներից են հանդիսանում կազմակերպության ակտիվների շահութաբերության ցուցանիշը, արտադրանքի (աշխատանք, ծառայություն) իրացման շահութաբերությունը և սեփական կապիտալի շահութաբերությունը:

Կազմակերպության բոլոր ակտիվների շահութաբերությունը հաշվարկվում է մաքուր շահույթի կազմակերպության ակտիվների միջին տարեկան արժեքի վրա բաժանմամբ:

Շահութաբերության իրականացումը հաշվարկվում է շահույթի բաժանումը արտադրանքի իրացման ծավալի վրա: Տարբերում են շահութաբերության իրականացման երկու հիմնական ցուցանիշ՝ իրացումից համախառն շահույթի հաշվարկ և մաքուր շահույթի հաշվարկ: Առաջին ցուցանիշը արտացոլում է գնագոյացման քաղաքականության և կազմակերպության հնարավորությունները իրացվող արտադրանքի ինքնարժեքի կարգավորման փոփոխությունները: Բայց ամենակարևոր շահութաբերության ցուցանիշը մնում է իրացվող արտադրանքինը (աշխատանք, ծառայություն), որը որոշվում է որպես հարկերը վճարումից հետո մաքուր շահույթի հարաբերությունը շինարարական իրացվող արտադրանքի (աշխատանք, ծառայություն) ծավալին:

Սեփական կապիտալի շահութաբերությունը հաշվարկվում է՝ մաքուր շահույթի հարաբերությամբ սեփական միջոցների միջին տարեկան գումարին: Նա թույլատրում է որոշել սեփականատիրոջ ներդրումներում օգտագործված կապիտալի արդյունավետությունը և տվյալ ցուցանիշը համեմատել այդ միջոցները այլ արժեթղթերում ներդնելուց ստացվող եկամտի հնարավորության հետ:

Շահավետությունը ընդհանրացնող ցուցանիշ է, որի վրա ազդում են ինչպես էքստենսիվ, այնպես էլ ինտենսիվ գործոններ: Էքստենսիվ գործոններին է պատկանում շահույթի զանգվածի աճը, որը տեղի է ունենում աշխատանքների ծավալների մեծացման և գների մակարդակի վրա սղաճի ազդեցության հաշվին: Առավել կարևոր ինտենսիվ գործոններն են՝ աշխատանքի և արտադրության կազմակերպման կատարելագործումը, տեխնիկական առաջընթացը, շինարարության ժամկետների կրճատումը, շինարարատեղակայման աշխատանքների որակի բարձրացումը և այլն:

ԳԼՈՒԽ 10

Հաշվապահական հաշվառումը շինարարությունում

10.1. Հաշվապահական հաշվառման էությունը, սկզբունքները և խնդիրները

Համաձայն «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի բոլոր կազմակերպությունները, անկախ կազմակերպչա-իրավական կառուցվածքից և սեփականության ձևից, պարտավոր են վարել հաշվապահական հաշվառում և ներկայացնել հաշվապահական հաշվետվություն՝ հաստատված կազմակերպության մասնակիցների կամ գույքի սեփականատերերի, ինչպես նաև համապատասխան պետական մարմինների կողմից: Քաղաքացիները, ովքեր ձեռնարկատիրական գործունեություն են իրականացնում առանց իրավաբանական անձի ձևավորման, պետք է հարկային մարմիններին ներկայացնեն եկամուտների և ծախսերի մասին հաշվետվություն, ինչը հնարավոր չէ ճիշտ կազմել առանց հաշվապահական հաշվառման:

Տնտեսավարող բոլոր սուբյեկտները (այդ թվում և ձեռնարկատերերը, ովքեր իրականացնում են իրենց գործունեությունն առանց իրավաբանական անձի ձևավորման) վարում են գույքի և տնտեսական գործառնությունների հաշվապահական հաշվառում:

Տնտեսական հաշվառումը իրենից ներկայացնում է տեղի ունեցող տնտեսական գործառնությունների քանակական և որակական բնութագրերի արտացոլում, որի նպատակն է կազմակերպության արդյունավետ կառավարումը: Վարչական որոշումների հիմնավորման, իրացման և գնահատման համար անհրաժեշտ են տեխնոլոգիական, տեխնիկական, տնտեսական և սոցիալական տեղեկատվություն:

Կախված տվյալների բնութագրերից, նրանց ստանալու մեթոդներից և խմբավորման եղանակներից՝ հաշվապահական հաշվառումը ընդունված է ստորաբաժանել հետևյալ խմբերի՝

- օպերատիվ,
- վիճակագրական,
- հաշվապահական:

Օպերատիվ հաշվառումը նախատեսված է տեղի ունեցող տնտեսական գործունեության արագ և օպերատիվ արտացոլման համար, բնութագրվում է հաշվառման տվյալների կարճ և արագ ստացումով: Հաշվառումը կատարվում է առանց որևէ համակարգի ընդունման, տվյալները հաղորդվում են բանավոր (որպես կանոն, փաստաթղթերով չեն հիմնավորվում) և ծառայում են կազմակերպության ամենօրյա ընթացիկ ղեկավարման և կառավարման համար: Օրինակ՝ կանխիկ նյութական պաշարներ, հերթափոխին կատարված աշխատանքների ծավալը:

Վիճակագրական հաշվառումը կապված է արտադրական և ոչ արտադրական ոլորտներում և ողջ տնտեսության մեջ զանգվածային սոցիալ-տնտեսական երևույթների արտացոլման հետ: Օրինակ՝ կազմակերպության աշխատողների ցուցակը հունվարի 1-ին:

Հաշվապահական հաշվառումը իրենից ներկայացնում է համակարգերի ամբողջություն, տեղեկատվության ընդհանրացում և գրանցում՝ արտահայտված դրամով, կազմակերպության պարտականությունները և դրանց շարժը, տնտեսական գործունեության բոլոր տեսակների համընդհանուր, անընդհատ և փաստաթղթային հաշվառումը: Տնտեսական գործունեություն ասելով՝ հասկանում ենք կազմակերպությունում որևէ գործունեության իրականացման հետ կապված ցանկացած դրամական շարժ, այսինքն՝ ֆինանսատնտեսական կազմակերպության գործունեության առկայությունը, որը ձևակերպված է համապատասխան փաստաթղթերով, որոնք ունեն հաշվառման համար անհրաժեշտ տվյալները (ապրանքի, աշխատանքի, ծառայությունների անվանում, գործունեության ժամկետը կողմերի անվանում, որոնք իրականացնում են տրված տնտեսական գործունեությունը, հաշվարկային ցուցանիշներ՝ բնական, աշխատանքային, դրամական):

Տնտեսական գործունեության հաշվառումը կատարվում է հետևյալ ճանապարհով.

- ամբողջ սկզբնական տեղեկատվության հավաքում և գրանցում՝ առաջնային հաշվառումով փաստաթղթերի հիման վրա,
- տեղեկատվության դասակարգում, որոնք պահպանվում են առաջնային հաշվառման փաստաթղթերում,
- տեղեկատվության ընդհանրացում առաջնային փաստաթղթերի հիման վրա:

Հաշվառումն անհրաժեշտ է հաշվապահական հաշվետվություն կազմելու համար, և արտադրատնտեսական և ֆինանսական գործունեության կազմակերպություններում հետազոտություն իրականացնելու համար: Հաշվապահական հաշվառման տվյալները կրում են տեղեկատվության մեծ մասը, որոնք անհրաժեշտ են շինարարական կազմակերպության կառավարման հիմնական գործառույթների՝ ծրագրավորման հսկողության և հետազոտման իրականացման համար: Այսպիսով, հաշվապահական հաշվառումը կազմակերպության վարչական համալիրի մի մասն է:

Պարտադիր հաշվառումն ամբողջ գույքի, արտադրական պաշարների, ծախսերի (շինարարական արտադրության ծախսերը), կատարված շինարարամոնտաժային աշխատանքների ծավալի, մատուցված ծառայությունների, պարտքերի և պարտավորությունների, ունեցած ֆոնդերի, դրամական միջոցների (դրամով կամ արտարժույթով), ինչպես նաև կազմակերպության ակտիվների ու պասիվների, հետևաբար՝ ողջ ֆինանսատնտեսական գործունեության արտացոլումն է:

Անընդհատությունը (ժամանակի ընթացքում) պահանջում է մշտական հետազոտություն և համապատասխան գրանցում փաստաթղթերում՝ կազմակերպության նյութական արժեքների, դրամական միջոցների, հաշվարկների, պարտականությունների և դրանց շարժի մասին:

Փոխադարձ կապը՝ տնտեսական գործունեությունների պատկերումն է հաշվապահական հաշվառման մեջ, որը փաստացի ինքնուրույն է կատարում կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեությունը: Կողմնակի կազմակերպությունների ծառայություննեի համար վճարումից հետո պակասում է ոչ միայն կազմակերպության պարտքը նրանց հանդեպ, այլ նաև կանխիկ դրամական միջոցները հաշվարկային հաշիվներում:

Հաշվապահական հաշվառման կազմակերպման ժամանակ մեծ նշանակություն ունի կազմակերպության գործունեության հաշվառման ցուցանիշի օգտագործումը: Գոյություն ունեն երեք տեսակի հաշվառման ցուցանիշներ՝

- դրամական,
- բնական,
- աշխատանքային:

Հաշվապահական հաշվառման մեջ օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

- սկզբնական հաշվառում՝ առաջնային փաստաթղթերի լրացում տնտեսական գործունեության կատարման ժամանակ: Դա հանդիսանում է հիմք՝ սինթետիկ և անալիտիկ հաշվառումների համար,
- վերլուծական հաշվառում՝ տեղեկատվության մանրամասն հաշվառում՝ գույքի, պարտավորությունների, տնտեսական գործունեության յուրաքանչյուր սինթետիկ ներքին հաշվարկի մասին,
- սինթետիկ հաշվառում՝ գույքի, պարտավորությունների և տնտեսական գործունեությունների սկզբնական հաշվառման տվյալների համակարգումն է՝ ըստ տնտեսական հատկանիշների, որոնք մտնում են հաշվապահական հաշվառման սինթետիկ հաշվարկների մեջ,
- հաշվապահական հաշվառման հաշվարկների ծրագիր՝ բոլոր հաշվեկշռային հաշվարկների համակարգված թվարկումը, որոնք օգտագործվում են հաշվապահական հաշվառման համակարգի մեջ,
- հաշվապահական հաշվետվություն՝ ցուցանիշների միակ համակարգը, որը կազմված է հաշվապահական հաշվառման տվյալների հիման վրա և պատկերում է կազմակերպության գույքային ու ֆինանսական իրավիճակն ու նրա տնտեսական գործունեության ֆինանսական արդյունքները հաշվետու ժամանակաշրջանում,
- հաշվապահական հաշվեկշիռ՝ գույքի տնտեսական խմբավորման և ընդհանրացման միջոց՝ ըստ կազմի, տեղաբաշխման և նրա ձևավորման աղբյուրների, որոնք արտահայտված են դրամական արժեքներով՝ որոշված ժամանակահատվածում,
- ակտիվներ՝ տնտեսական միջոցները, որոնց վրա կազմակերպությունը վերահսկողության իրավունք է ստացել իրականացվող տնտեսական գործունեության արդյունքում և որոնք կազմակերպությանը պետք է բերեն տնտեսական արդյունավետության բարձրացման: Ապագա տնտեսական արդյունավետությունը ակտիվների պոտենցիալ հնարավորությունն է, որը նպաստում է դրամական միջոցների ուղղակի կամ անուղղակի հոսքին,

- պարտավորությունը՝ կազմակերպության հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ գոյություն ունեցող պարտքն է, որն հանդիսանում է նրա տնտեսական գործունեության հետևանքը և արտացոլում է հաշվարկները, որոնցով պետք է կատարվի ակտիվների արտահոսքը: Պարտավորությունը կարող է առաջանալ պայմանագրի կամ իրավական նորմերի գործողության ժամանակ, ինչպես նաև գործնական շրջանառության ժամանակ: Պարտավորությունների մարումը սովորաբար ենթադրում է համապատասխան ակտիվների արտահոսք՝ դրամական միջոցների վճարման կամ այլ ակտիվների փոխանցման տեսքով: Պարտավորությունների մարումը կարող է տեղի ունենալ նաև պարտավորության փոփոխությամբ՝ մի տեսքից մյուսը, օր.՝ պարտավորության փոխակերպումը կապիտալի:
- կապիտալը՝ սեփականատիրոջ ներդրումն է և կազմակերպության գործունեության շահույթը՝ կուտակված ժամանակի ընթացքում: Կազմակերպության ֆինանսական իրավիճակը որոշելու ժամանակ կապիտալի մեծությունը դիտարկվում է որպես ակտիվների և պարտավորությունների միջև տարբերություն,
- եկամուտը՝ հաշվետու ժամանակամիջոցի ընթացքում տնտեսական արդյունավետության բարձրացումն է կամ պարտավորությունների նվազումը, որոնք բերում են կապիտալի ավելացմանը: Եկամուտներին են վերաբերում շինարարական աշխատանքների, ծառայությունների իրացումից ստացված հասույթը, տոկոսները և ստացվող շահաբաժինը, վարկերի վճարումը և այլ ծախսեր,
- ծախսը՝ հաշվետու ժամանակամիջոցի ընթացքում տնտեսական արդյունավետության նվազումն է կամ պարտավորությունների առաջացումը, որոնք բերում են կապիտալի նվազմանը: Սպառմանն են վերաբերում ծախսերը՝ կապված շինարարական աշխատանքների, ծառայությունների իրականացման, աշխատողների աշխատավարձի, մաշվածքամարման հատկացումների, ինչպես նաև կորուստների հետ,

Հաշվապահական հաշվառման հիմնական խնդիրներն են.

- տեղեկատվության ամբողջական և ստույգ ձևակերպում՝ կազմակերպության գործունեության մասին, ինչպես նաև գույքային իրավունքները՝ ներքին և արտաքին օգտագործման համար (սեփականատերերի, վարկառուների, ներդրողների, ղեկավարների կողմից),
- օրենսդրության պահպանման հսկողության համար անհրաժեշտ տեղեկատվության ապահովում՝ տնտեսական գործողությունները և դրանց նպատակահարմարությունը, գույքի և պարտավորությունների կախվածությունն ու շարժը, ինչպես նաև նյութական, աշխատանքային և ֆինանսական պաշարների օգտագործումն իրականացնելու համար,
- տնտեսական գործունեության բացասական արդյունքների կանխումը և տնտեսական պահեստների ձևավորումը, որոնք ապահովում են կազմակերպության ֆինանսական կայունությունը:

Հաշվապահական հաշվառման հիմնական խնդիրները վկայում են տեղեկատվության առաջնայնության մասին, որը ձևակերպվում է հաշվապահական հաշվառման համակարգում: Հաշվապահական հաշվառումն ու հաշվապահական հաշվետվությունը առաջին հերթին կոչված են ապահովելու սեփականատերերի և կառավարիչների պահանջարկը, ինչպես նաև ներդրողների և վարկառուների համար տրամադրել անհրաժեշտ ֆինանսական տեղեկատվություն:

Հարկային օրենսդրության հսկողության նպատակով հարկային հաշվետվության ստեղծումը հանդիսանում է հաշվապահական հաշվառման համար երկրորդական խնդիր: Այն ձևակերպվում է հաշվապահական հաշվառման տվյալների հիման վրա, որը կազմված է հատուկ այդ նպատակի համար և, հետևաբար, տարբերվում է հաշվապահական հաշվետվության տեղեկատվությունից:

Խնդիրները, որոնք լուծում են հաշվապահական և հարկային հաշվետվությունները, էապես տարբերվում են, իսկ դա նշանակում է, որ տարբերվում են նաև հաշվետվությունների ցուցանիշները: Հաշվապահական հաշվետվությունը կազմավորվում է հաշվառման ընդհանրացվող տեղեկատվության բազայի հիման վրա: Հարկային հաշվետվությունն

ամբողջանում է այն տվյալներից, որոնք արձանագրված են հաշվապահական հաշվառման հաշվարկներում:

Հաշվապահական հաշվառման տեսանկյունից օրենսդրության հիմնական նպատակն է ապահովել միատեսակ գույքի հաշվառումը, պարտավորության և տնտեսական կազմակերպությունների մասին, ինչպես նաև կազմակերպելու և ներկայացնելու համադրված և ստույգ տեղեկատվություն գույքային իրավունքի, կազմակերպության եկամուտների և ծախսերի մասին:

Հաշվապահական հաշվառման կառավարման հիմնական կանոնները հետևյալն են.

- գույքի, պարտավորության և տնտեսական գործողությունների հաշվապահական հաշվառումը կատարվում է ՀՀ արժույթով՝ դրամով,
- գույքը, որը հանդիսանում է կազմակերպության սեփականությունը, համարվում է անջատված այլ իրավաբանական անձի գույքից, որը գտնվում է տվյալ կազմակերպությունում,
- կազմակերպությունների հաշվապահական հաշվառումը կատարվում է անընդհատ՝ սկսած նրա գրանցումից, մինչև վերակառուցումը կամ լուծարումը՝ ըստ հերթականության, որն հաստատված է ՀՀ օրենսդրությամբ,
- կազմակերպությունը գույքի, պարտավորության և տնտեսական գործողությունների հաշվապահական հաշվառումը կազմակերպում է կրկնակի գրանցման եղանակով՝ հաշվապահական հաշվառման փոխկապակցված հաշվարկներում ընդգրկելով հաշվարկների աշխատանքային ծրագրերը, որոնք մշակվում և հաստատվում են կազմակերպության կողմից՝ հաշվապահական հաշվառման հաշվարկների ծրագրման հիման վրա, որը հաստատված է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից,
- բոլոր տնտեսական գործողությունները և գույքագրման արդյունքներն ենթարկվում են ժամանակին գրանցման՝ առանց որևէ բացթողման կամ բռնագրավման,

- հաշվապահական հաշվառման մեջ կազմակերպություններն ապրանքների արտադրման և կապիտալ ներդրումների համար կատարվող ընթացիկ ծախսերը դիտարկում են առանձին,
- փաստագրված գույքերը, պարտավորությունները և տնտեսական գործունեության այլ փաստերը, հաշվապահական հաշվառման և հաշվապահական հաշվետվության ցուցակների կազմակերպումը իրականացվում է հայոց լեզվով: Առաջնային հաշվառման փաստաթղթերը, որոնք կազմված են այլ լեզուներով, պետք է անհապաղ թարգմանվեն հայերեն,
- հաշվապահական հաշվառման կառավարման համար կազմակերպությունում կազմավորվում է հաշվառման քաղաքականություն, որը կատարում է գույքային միավորների անջատում և ապահովում կազմակերպության գործունեության անընդհատությունը, ինչպես նաև տնտեսական գործունեության փաստերի ժամանակավոր որոշումը,
- տնտեսական գործունեության փաստերը պատկերված են հաշվապահական հաշվառման և հաշվետվության այն ժամանակահատվածում, որում, անկախ փաստային ժամանակի, կատարվել են դրամական միջոցների ընդունում կամ մուծում՝ կապված այդ փաստերի հետ: Օրինակ՝ կազմակերպության աշխատողների աշխատավարձի ավելացումը վերաբերում է արտադրության ծախսերին կամ տվյալ ժամանակամիջոցի վերածմանը, որում այն ավելացել է՝ անկախ աշխատավորների ավելացված գումարի մուծման փաստացի ժամանակից,
- կազմակերպությունների կողմից ձևակերպված հաշվառման քաղաքականությունը պետք է համապատասխանի պահանջվող օբյեկտիվությանը, ամբողջականությանը, օպերատիվությանը, զգուշությանը, ձևի առաջնայնության պահպանմանը, հաշվառման տնտեսությանը:

Հաշվառման տվյալների օբյեկտիվությունն արտահայտվում է բոլոր տնտեսական գործողությունների ստույգ փաստաթղթերի հիմնավորման

ժամանակ՝ գույքագրման իրավունքի պահպանման, դրամական գնահատման, ընթացիկ ծախսերի հաշվառման ժամանակ:

Հաշվառման ամբողջականությունն ու պարզությունը պետք է արտացոլվի հաշվարկային տեղեկատվության ներկայացման ժամանակ, որն անհրաժեշտ է արտադրության կառավարման համար, բացառությամբ կրկնվող և ոչ պետական ցուցանիշներից: Հաշվարկային տեղեկատվությունը պետք է լինի առավելապես հասանելի, կառավարելի՝ կազմակերպության մասնագետների, նրա բաժնետերերի, կազմակերպիչների, մասնակիցների և կազմակերպության ունեցվածքի սեփականատերերի համար:

Հաշվառման օպերատիվությունը հանդիսանում է ժամանակին ներկայացվող հաշվային տվյալները՝ արտադրության կառավարման համար և հաշվետվություն կազմելու համար:

Զգուշության պահանջը նշանակում է կորուստների (ծախսեր) և պարտքերի հաշվառման ավելի մեծ պատրաստակամություն, քան հնարավոր եկամուտների և ակտիվների: Այսպիսի կորուստները ծածկելու համար նախատեսվում է հատուկ պահուստ ձևավորում, օրինակ՝ կասկածելի պարտքերի պահուստ: Դրանք կարող են ստեղծվել ֆինանսական տարվա ընթացքում անցկացվող գույքագրման հիման վրա:

Ծրագրվող, նորմատիվ և հաշվարկային ցուցանիշների համադրությունն անհրաժեշտ է ծախսերի պաշարների չափաբաժինների հսկողության համար, օրինակ՝ ըստ հետևյալ ցուցանիշների՝ արտադրության աշխատանքի, շինարարամոնտաժային աշխատանքի ինքնարժեքի, պայմանագրերի կատարման, աշխատանքների ծրագրավորման և այլն: Սակայն, անհրաժեշտ է նկատի ունենալ, որ ամբողջական համադրության ցուցանիշների շարքը կարող է և չլինել այդպիսին, ինչպես շինարարական ապրանքների արտադրության փաստացի ծախսերի կազմում կարող են մտնել չծրագրված, ոչ արդյունաբերական ծախսեր և կորուստներ խոտաններից:

Հաշվառման տնտեսավարումը բնութագրվում է հետևյալ ցուցանիշներով՝ կազմակերպության աշխատակիցների քանակով, հաշվապահության աշխատակիցների աշխատանքի ավտոմատացման մակարդակով,

որն որոշում է տեխնիկական միջոցների արժեքի հարաբերությամբ հաշվապահական հաշվառման գծով մասնագետների միջին ցուցակային թվաքանակին: Հաշվառման ծախսերի մակարդակն որոշվում է ծախսված միջոցները հարաբերելով արտադրվող ապրանքների ծավալին:

10.2. Հաշվապահական հաշվառման առարկան ու մեթոդները

Հաշվապահական հաշվառման առարկա են կազմակերպությունների ակտիվները, դրանց գոյացման աղբյուրները, դրանց կազմում տեղի ունեցող փոփոխությունները, տնտեսական գործունեության գործընթացները և դրանց հետևանքները: Ակտիվները ու աղբյուրները գտնվում են մշտական շրջանառության մեջ: Դրամական միջոցները վերածվում են շինանյութերի, կոնստրուկցիաների, արտադրանքների, որոնք գտնվում են մարդու ներգործության ներքո և աշխատանքի միջոցները վերածվում են պատրաստի արտադրանքի, որոնք կատարվում են շինարարական աշխատանքերի մի ողջ համալիրի միջոցով: Դրանք իրականանում են կանխիկ կամ ոչ կանխիկ ճանապարհով: Այս գործողությունների ընթացքում առաջանում են հաշիվներ մատակարարների, կառուցապատողների, աշխատավորների, կենսաթոշակային ֆոնդերի, սոցապահովագրական հաստատությունների, բյուջեի և այլնի գծով: Այլ կերպ ասած, տեղի է ունենում միջոցների մշտական շրջանառություն:

Տնտեսական գործողությունները, որպես հաշվապահական հաշվառման օբյեկտ, կազմված են այնպիսի գործողություններից, ինչպիսիք են՝ նյութերի, արտադրության միջոցների ձեռքբերում, աշխատուժի ներգրավում, արտադրություն և իրացում (վաճառք):

Բոլոր տնտեսական գործողությունները պետք է գտնվեն հաշվապահական հաշվառման համընդհանուր պատկերման մեջ: Շինարարական արտադրության գործողությունների նախապատրաստման հաշվառման արդյունքում, ծրագրման և հաշվետվության ցուցանիշների համադրության ժամանակ դրսևորվում է պաշարների տնտեսական, իսկ իրացման հաշվառման ժամանակ՝ կազմակերպության գործունեության ֆինանսական արդյունքը (շահույթը կամ կորուստը):

Կազմակերպության ցանկացած տնտեսական միջոց կարելի է դիտարկել երկու տեսանկյունից: Մի կողմից, թե ինչ կառուցվածք ունեն այդ միջոցները (գույքի կազմը), որ ոլորտում են տեղաբաշխված (արտադրություն, առևտուր և այլն) և ինչ գույքային պատասխանատվության ներքո են գտնվում: Մյուս կողմից, ինչպիսի աղբյուրների հաշվին են այդ գույքերը ձեռք բերվել կամ կազմավորվել:

Կազմակերպության տնտեսական միջոցները ներգրավվում են հետևյալ դրույթները.

- *<u>հիմնական միջոցները</u>*՝ շենքերը, շինարարական մեքենաներն ու սարքավորումները, բարդ գործիքները, տրանսպորտային միջոցները, գույքը օգտագործվում է և՛ գործում, և՛ տնտեսական գործունեության մեջ երկարաժամկետ (տարուց ավելի), մաշվում են աստիճանաբար, ինչը թույլ է տալիս կազմակերպությանը ներգրավել շինարարական աշխատանքների ինքնարժեքի մեջ իրենց արժեքը մասերով, ծառայության նորմատիվային ժամկետի ընթացքում՝ նորմաների վերականգմանը ամորտիզացիայի ավելացման միջոցով,
- *<u>ոչ նյութական ակտիվները</u>* երկարաժամկետ ներդրման օբյեկտներ են, որոնք ունեն արժեքային գնահատում, բայց չեն հանդիսանում արժեքավոր իրեր (իրավունք օգտվելու հողերից, ջրերից, այլ բնական պաշարներից, վկայագրեր, հայտնագործություններ և այլ գույքային իրավունքներ, այդ թվում նաև արդյունաբերական և իմացական սեփականություն): Հաշվի են առնվում ծառայության նորմատիվ ժամկետի ընթացքում արտադրության ծախսերում արտադրության նորմերի կարգավորումը,
- *<u>շրջանառու միջոցները</u>*՝ շինությունները, կոնստրուկցիաները, դետալները, ապրանքները, վառելիքը և այլն, ամբողջությամբ օգտագործվում են շինարարական արտադրության մեկ պարբերա-շրջանում, այդ իսկ պատճառով իրենց արժեքով ընդգրկվում են կատարվող շինարարական աշխատանքների արժեքի մեջ: Այս առանձնահատկությունը պահանջում է կազմակերպության կողմից շրջանառու միջոցների մշտական վերականգնում, նյութական

արժեքների ձեռքբերում: Շրջանառու միջոցների խմբերին են պատկանում շինանյութերը, կոնստրուկցիաները, արտադրանքները, կիսաֆաբրիկատները, կատարված շինարարամոնտաժային աշխատանքի արժեքը, բայց որը չի ընդունվել կառուցապատողի կողմից (ձեռքի գործիքները և այլն),

- *դրամական միջոցները*՝ դրամական միջոցների կանխիկ գումար է կազմակերպության դրամարկղում, դա կազմակերպության ազատ դրամական միջոցներն են, որոնք պահպանվում են բանկային հաշիվներում,
- *միջոցները հաշիվներում* (պարտքեր կազմակերպությանը)՝ կատարված աշխատանքների ու ծառայությունների դիմաց դեբիտորական պարտքն է, վճարված կանխավճարները, ստացված մուրհակները և այլն,
- *հեռացնող միջոցները* հնարավոր են կազմակերպության կողմից ստացված եկամուտի դեպքում՝ որպես աշխատանքի ֆինանսական արդյունք: Դրանք ավելացված հարկերն են և այլ վճարումները՝ եկամտից դեպի բյուջե կամ եկամուտ, որն օգտագործվում է հատուկ նշանակության ֆոնդերի կազմավորման համար:

Կազմակերպության բոլոր տեսակի տնտեսական միջոցները ներկայացնում են հաշվեկշռի ակտիվը:

Կազմակերպության սեփական միջոցների աղբյուրները.

- *կանոնադրական կապիտալ*՝ հիմնադիրների (սեփականատերերի) ներդրումների ամբողջությունը գույքային ունեցվածքում՝ արտահայտված դրամով (հիմնական միջոցների արժեքը, ոչ նյութական ակտիվները, շրջանառու և դրամական միջոցները) կազմակերպության կազմավորման ժամանակ՝ որոշված սահմանված փաստաթղթերով: Լրացուցիչ կապիտալը՝ որպես սեփական միջոցների աղբյուր, կազմավորվում է հիմնական միջոցների վերագնահատման հաշվին, ինչպես նաև սեփական արժեթղթերի վաճառքի տարբերության հաշվին (վաճառքի գնի մեծացումը իրենց անվանական գնի դիմաց),

- *<u>պահուստային կապիտալը</u>* կազմվում է կազմակերպության շահույթի հաշվին և նախատեսված է չնախատեսված կորուստները ու վնասները ծածկելու համար կամ հիմնադիր դիվիդենտների վճարման համար, որոնք ունեն արտոնյալ բաժնետոմսեր՝ շահույթի ոչ բավարար լինելու դեպքում,
- *<u>շահույթ</u>*՝ կազմակերպության ծախսերի դիմաց եկամուտների գումարի գերազանցումն ստացված տարվա սկզբից մինչև հաշվետու ժամանակամիջոցը՝ շինարարական աշխատանքների իրացումից, նյութական արժեքներից, հիմնական միջոցներից ներգրավելով ոչ իրացվող եկամուտների գերազանցումը ծախսերի դիմաց,
- *<u>չբաշխված շահույթը</u>*՝ շահույթ, որը մնում է կազմակերպության տրամադրության ներքո՝ բյուջեում շահույթի և տուգանքների վճարումից հետո, որը դեռ բաշխված չէ ընկերության, հաշվեկշռի կազմման ամսաթվի դրությամբ,
- *<u>առաջիկա ծախսերի պահուստները</u>* նախատեսված են կազմակերպության ընթացիկ ծախսերի փոխհատուցման համար, օրինակ հիմնական միջոցների կապիտալ վերանորոգման համար և այլն: Կազմակերպության տրված պահուստներով կարգախումբը կարող է կազմել պահուստներ՝ կասկածելի պարտքերով և այլն: Կազմավորվում են ինքնարժեքի կամ շահույթի հաշվին մինչև նրա հարկադրումը համապատասխան գործող օրենսդրությամբ՝ սահմանադրված փաստաթղթերով և կազմակերպության հաշվառման քաղաքականությամբ,
- *<u>նպատակաուղղված ֆինանսավորումը</u>* միջոց է ստացված բյուջեից, ոչ բյուտջետային ֆոնդերի մյուս կազմակերպություններից և ֆիզիկական անձանցից՝ նպատակային ուղղվածության միջոցառումների իրականացման համար: Վերջիններս վերադարձման ենթակա չեն:

Փոխառության միջոցները կազմավորվում են հետևյալ միջոցների հաշվին.

- *<u>բանկային վարկեր</u>*՝ դրամական միջոցներ են (կարճաժամկետ և երկարաժամկետ), որոնք ստանում են բանկից տարբեր նպատակ-

ների համար (շինարարական տեխնիկայի, նյութերի ձեռք բերման և աշխատավարձերի վճարման համար)՝ տրամադրված գումարի պարտադիր վերադարձմամբ (տոկոսադրույքով),

- փոխառության գումար, որն ստացվում է պարտքով իրավաբանական կամ ֆիզիկական անձանցից,
- հաշիվները և այլ վարկային պարտքերը (կազմակերպության պարտքեր)՝ մատակարարների պարտքերի գումարները՝ նյութերի, կոնստրուկցիաների, ապրանքների և վճարված պարտամուրհակի ծառայությունների համար, ստացված ավանսների, կազմակերպության անձնակազմի դիմաց՝ բյուջեյով և պետական ոչ բյուջետային ֆոնդերի հաշվարկով՝ ըստ սոցիալական ապահովագրության, թոշակների ապահովման և այլն:

Տնտեսական միջոցների բոլոր քննարկված աղբյուրները (սեփական և փոխառու) կազմում են հաշվեկշռի պասիվային մասը:

Հաշվապահական հաշվառման խնդիրները լուծվում են տարբեր միջոցների և եղանակների կիրառմամբ, որոնց անվանում են հաշվապահական հաշվառման մեթոդներ: Այն ընդգրկում է առանձին տարրեր, որոնցից կարևորներն են՝

- փաստաթղթերը,
- գնահատումը,
- կրկնակի գրանցումը,
- հաշվեկշիռը,
- հաշվետվությունը,
- գույքագրումը,
- հաշվարկը:

Այս տարրերերից յուրաքանչյուրի օգտագործումը համապատասխանեցվում է՝ ըստ իրավիճակի և կարգի՝ մշակված և հաստատված օրենքով:

Փաստաթղթերը իրենցից ներկայացնում են ցանկացած տնտեսական գործողության անընդհատ և համատարած արձանագրման միջոց: Փաստաթղթերում կամ տեխնիկական կրիչների վրա տեղեկատվությունն ուղղված է արտադրական գործողությունների պահպանմանը, որոնց տվյալները հետագայում ենթարկվում են տնտեսական խմբավորման և

ընդհանրացման: Գործողության փաստագրական ձևակերպումը կարևորագույն միջոց է տնտեսական միջոցների օգտագործման օրինականությունը, պահպանվածությունը և նպատակահարմարությունը հսկելու համար:

Բոլոր տնտեսական գործողությունները, որոնք կատարվում են կազմակերպությունում, պետք է ձևակերպվեն արժանահավատ փաստաթղթերով: Այս փաստաթղթերը ծառայում են որպես առաջնային հաշվառման փաստաթղթեր, որոնց հիման վրա վերահսկվում է հաշվապահական հաշվառումը:

Առաջնային հաշվառման փաստաթղթերը ընդունվում են հաշվառման, եթե դրանք պահպանում են հետևյալ պարտադիր ռեկվեզիտները.

- փաստաթղթի անվանումը,
- փաստաթղթի ձևակերպման ամսաթիվը,
- կազմակերպության անվանումը, որի անունով ձևակերպվել է փաստաթուղթը,
- տնտեսական գործողությունների պահպանումը,
- տնտեսական գործողությունների ցուցանիշները՝ բնական և դրամական արտահայտությամբ,
- պաշտոնական անձերի անվանումը, որոնք պատասխանատու են տնտեսական գործողությունների և նրա ձևակերպման ճշտության համար,
- նշված անձերի անձնական ստորագրությունները:

Փաստաթղթերը, որոնցով ձևակերպվում են տնտեսական գործողությունները՝ ստորագրվում են կազմակերպության ղեկավարների և գլխավոր հաշվապահի կամ այս ամենի համար լիազորված անձանց կողմից:

Առաջնային հաշվառման փաստաթղթերը պետք է կազմված լինեն գործողության կատարման պահին, իսկ եթե դա հնարավոր չէ, ապա անմիջապես նրա ավարտից հետո:

Ժամանակին և որակով ձևակերպված առաջնային հաշվառման փաստաթղթերը, հաստատված ժամանակում նրանց փոխանցումը հաշվապահական հաշվառման մեջ պատկերելու համար, ինչպես նաև նրանցում պահպանվող տվյալների ստույգությունն ապահովում են այն անձինք, ովքեր կազմում և ստորագրում են այս փաստաթղթերը:

Դրամարկղային և բանկային փաստաթղթերը փոփոխման ենթակա չեն: Մնացած առաջնային հաշվառման փաստաթղթերը փոփոխել հնարավոր է միայն տնտեսական գործողության մասնակիցների համաձայնությամբ, որն էլ պետք է հաստատված լինի այն անձանց ստորագրությամբ, որոնք ստորագրել են այդ փաստաթղթերը՝ վերափոխման ենթարկելու նշված ամսաթվով:

Տնտեսական գործողությունների հսկողությունն ու տվյալների մշակման կարգավորումն իրականացնելու համար առաջնային հաշվառման փաստաթղթերի հիման վրա կազմվում են ամփոփիչ հաշվառման փաստաթղթեր (ցուցակներ), որոնք կարող են կազմվել տեղեկատվության թղթե կամ տեխնիկական կրիչներով: Վերջինի դեպքում կազմակերպությունը պարտավոր է պատրաստել իր հաշվին այդպիսի փաստաթղթերի կրկնօրինակը թղթերով՝ տնտեսական գործողությունների մյուս մասնակիցների համար կամ էլ այն անդամների պահանջով, ովքեր իրականացնում են օրենսդրության համապատասխանեցում:

Հաշվապահական հաշվառման ռեգիստրները նշվում են հատուկ գրքերում (մատյաններում), առանձին էջերի և քարտերի վրա: Տնտեսական գործողությունները պետք է պատկերվեն հաշվապահական հաշվառման ռեգիստրների վրա ժամանակագրական հաջորդականությամբ և խմբավորվեն՝ ըստ համապատասխան հաշվապահական հաշվառման հաշիվների: Տնտեսական գործողությունների պատկերման ճշտությունը հաշվապահական հաշվառման ռեգիստրներում ապահովում են անձիք, որոնք կազմում և ստորագրում են այն:

Հաշվառման ռեգիստրների պահպանման ժամանակ պետք է ապահովված լինի նրանց պահպանումը չվավերացված վերափոխումներից: Հաշվառման ռեգիստրներում սխալների ճշտումը պետք է լինեն հիմնավորված և անձանց ստորագրությամբ հաստատված, որոնք կատարում են փոփոխություններ՝ նշված ամսաթվով:

Հաշվապահական հաշվառման ռեգիստրների և ներքին հաշվապահական հաշվետվության պահպանումը հանդիսանում է առևտրային գաղտնիք: Անձինք, ովքեր ստանում են մուտք դեպի տեղեկատվություն՝ պահպանված հաշվապահական հաշվառման ռեգիստրներում և ներքին

հաշվապահական հաշվետվությունում պարտավոր են պահպանել առևտրային գաղտնիքը: Դրանց տարածման համար նրանք կրում են պատասխանատվություն՝ սահմանված օրենսդրությամբ:

Հաշվառման մեջ հետագա արտացոլման և փաստաթղթերով հաստատված տարատեսակ տնտեսական գործողությունների ընդհանրացման համար դրանք պետք է գնահատել: Գնահատականը կայանում է դրամական չափման միջոց: Գնահատման գործողությունում բնական և աշխատանքային ցուցանիշները, որոնք պահպանվում են փաստաթղթերում, փոխարինվում են դրամական արժեքով՝ սակագնային հաշվարկների և պաշտոնական դրույքների օգնությամբ:

Գնահատումից հետո հաշվապահական հաշվառման յուրաքանչյուր օբյեկտի ամբողջական տվյալներն ստանալու համար բոլոր գործողությունները ընդհանրացվում են և խմբավորվում որոշակի հերթականությամբ: Այդ նպատակով օգտվում են հաշվապահական հաշվարկների միջոցներից: Հաշվարկների վրա գրանցվում են միջոցների և դրանց աղբյուրների իրավիճակը, ինչպես նաև փոփոխությունը հաշվառման օբյեկտներում, որոնք տեղի են ունենում տնտեսական գործողությունների արդյունքում: Յուրաքանչյուր հաշվառման օբյեկտին, այսինքն՝ յուրաքանչյուր տեսքի տնտեսական գործընթացների, միջոցների և դրանց աղբյուրների կարգի համար բացում են առանձին հաշիվ (օրինակ՝ հաշիվները «Նյութերը», «Աշխատանքի վճարման հաշիվները անձնակազմի հետ», «Կանոնադրական կապիտալը» և այլն): Դրանով էլ հաշիվները ծառայում են հաշվառման օբյեկտների խմբավորման համար՝ դրանց տնտեսական պահպանման միատեսակության սկզբունքով: Հաշիվը ունի երկկողմանի աղյուսակի ձև «դեբետ» և «կրեդիտ» նշումներով (տե՛ս Աղյուսակ 10.1):

Աղյուսակ 10.1

Հաշիվ _____

(հաշվի անվանումը)

Դեբետ	Կրեդիտ

Հաշվապահական հաշվառման մեջ տարբերում են ակտիվային, պասիվային և ակտիվապասիվային հաշիվներ:

Ակտիվային հաշիվները նախատեսված են տնտեսական միջոցների հաշվառման համար պասիվայինները տնտեսական միջոցների աղբյուրների հաշվառման համար։

Հաշիվների գրառումն սկսում են տնտեսական միջոցների սկզբնական սալդոյի նշումներով, կամ նրանց աղբյուրներով։ Ընդ որում ակտիվներում սկզբնական մնացորդները պատկերվում են դեբետով, իսկ պասիվներում՝ կրեդիտի հաշվով։

Իսկ դրանից հետո հաշիվների վրա պատկերվում են բոլոր գործողությունները, որոնք առաջացնում են սկզբնական մնացորդների փոփոխություն։ Գումարները, որոնք մեծացնում են սկզբնական մնացորդները, գրանցվում են մնացորդների կողմի վրա, իսկ գումարները, որոնք նվազեցվում են սկզբնական մնացորդները, գրանցվում են հակառակ կողմում։ Հետևաբար, ակտիվի ավելացումը կպատկերվի դեբետի հաշվով, իսկ պակասեցումը՝ կրեդիտով, պասիվայինի դեպքում հակառակը, ավելացումը՝ կրեդիտի հաշվով, պակասեցումը՝ դեբետով։ Եթե բոլոր գործողությունների գումարները գումարենք, որոնք գրանցված են հաշիվների կողմերում, ապա ստացվում է հաշիվների շրջանառությունը։

Ընդհանուր գումարը, որը գրանցված է դեբետի հաշվին, կոչվում է դեբետային, իսկ կրեդիտի հաշվով՝ կրեդիտային շրջանառություն։

Վերջին մնացորդը (վերջին սալդոն)՝ ըստ հաշվարկի, որոշում են սկզբնական մնացորդին ավելացնելով հաշվարկի նույն կողմի շրջանառությունը և ստացված ընդհանուրից հանելով հակառակ կողմի շրջանառությունը։ Վերջին մնացորդը գրանցում են հենց այն նույն կողմում, որտեղ և սկզբնական մնացորդը։ Հետևաբար, ակտիվ հաշիվներում վերջին սալդոն հաստատելու համար սկզբնական սալդոյին ավելացվում են շրջանառությունը՝ ըստ դեբետի և հանում են շրջանառությունը՝ ըստ կրեդիտի։ Նոր մնացորդը գրանցվում են՝ ըստ դեբետի հաշվարկի։

Պասիվ հաշիվներում վերջնական սալդոն որոշելու համար սկզբնական մնացորդին ավելացնում են շրջանառությունը՝ ըստ կրեդիտի և հանում են շրջանառությունը՝ ըստ դեբետի։ Նոր մնացորդը պատկերում են՝ ըստ կրեդիտային հաշիվների։ Եթե սկզբնական մնացորդ չի եղել, ապա սալդոն գտնում են հաշվետվության ընթացքի վերջում՝ հանելով մեծ շրջանառու-

թյունից փոքրը և գրանցելով հաշվի այն կողմում, որի վրա պատկերված է մեծ շրջանառության գումարը (տե՛ս Աղյուսակ 10.2)։

Աղյուսակ 10.2

Ակտիվ		Պասիվ	
Դեբետ	Կրեդիտ	Դեբետ	Կրեդիտ
Սկզբնական սալդո			Սկզբնական սալդո
Ավելացում (+)	Նվազեցում (-)	Նվազեցում (-)	Ավելացում (+)
Վերջին սալդո			Վերջին սալդո

Բացի տնտեսական միջոցների (ակտիվ) և դրանց աղբյուրների հաշվառման համար հաշիվներից հաշվապահական հաշվառման մեջ գոյություն ունեն հաշիվներ, որոնց վրա պատկերվում են միաժամանակ և՛ տնտեսական միջոցները, և՛ դրանց աղբյուրները՝ ակտիվապասիվային հաշիվ։

Ակտիվապասիվային հաշիվները լինում են երկու տեսակի՝ միակողմանի սալդոյով (դեբետային կամ կրեդիտային) և երկկողմանի սալդոյով (դեբետային և կրեդիտային միաժամանակ)։ Միակողմանի սալդոյի հաշվին են պատկանում «Շահույթ և կորուստ» հաշիվը։ Եթե կազմակերպության եկամտի գումարը գերազանցում է ծախսերի գումարին, ապա նրանց միջև եղած տարբերությունը ցույց է տալիս շահույթը, այդ պատճառով հաշվարկի սալդոն կլինի կրեդիտային (եկամուտը հանդիսանում է միջոցների աղբյուրները և պատկերվում են պասիվների հաշվեկշռում)։ Եթե, հակառակը, շահույթների գումարը փոքր է ծախսերի գումարից, ապա նրանց միջև եղած տարբերությունը ցույց է տալիս կորուստը, և հաշվարկի սալդոն կլինի դեբետային։

Ակտիվապասիվային հաշիվներին՝ երկկողմանի լայնածավալ սալդոյով, վերաբերում են «Հաշվարկները տարբեր պարտապաններով և վարկատուներով» հաշիվը։ Այդ հաշվի դեբետով սալդոն նշանակում է պարտապանների պարտք, իսկ սալդոն ըստ կրեդիտի՝ վարկատուների հաշիվները միավորվում են մեկ հաշվում այն պատճառով, որպեսզի չբացեն տարբեր հաշիվներ, կազմակերպությունների և հաստատությունների

համար, որոնք կարող են լինել տարբեր ժամանակներում պարտապաններ և վարկատուներ:

Հաշվարկները, որոնցում տնտեսական միջոցները, դրանց աղբյուրները և տնտեսական գործողությունները պատկերվում են ընդհանրացված տեսքով, կոչվում են սինթետիկ («Հիմնական միջոցները», «Նյութերը», «Կանոնադրական կապիտալը» և այլն):

Այն վարում են միայն դրամական արտահայտմամբ: Տնտեսական գործողության օպերատիվ ղեկավարման համար միայն սինթետիկ հաշվառման օգնությամբ ստացված տեղեկատվությունն անբավարար է: Օրինակ՝ բացի հիմնական միջոցների ընդհանուր գումարի տվյալներից անհրաժեշտ է ունենալ տեղեկություն կոնկրետ հիմնական միջոցների տեսքի մասին (շենքեր, սարքավորումներ, մեքենաներ և այլն): Բացի կազմակերպության անձնակազմի հանդեպ պարտքերի ընդհանուր գումարի տվյալներից, անհրաժեշտ են տեղեկություններ յուրաքանչյուր աշխատողի պարտքի մասին առանձին: Մանրամասն, մասնատված (վերլուծական) տվյալները հաշվապահական հաշվառման օբյեկտների մասին ստանալու համար օգտագործվում են վերլուծական հաշիվները: Հաշվառումը, որը իրականանում է վերլուծական հաշիվների վրա, կոչվում է վերլուծական:

Վերլուծական հաշիվները լրացնում են սինթետիկին՝ դրանք մանրամասնելու նպատակով: Սինթետիկ և վերլուծական հաշիվների միջև գոյություն ունի հետևյալ ուղիղ կապը՝ սինթետիկ հաշվի մնացորդները և շրջանառությունները պետք է լինեն հավասար բոլոր վերլուծական հաշիվների մնացորդներին և շրջանառություններին: Յուրաքանչյուր տնտեսական գործողություն՝ գրանցված սինթետիկ հաշվի դեբետով կամ կրեդիտով, պատկերվում են հենց նույն գումարով՝ համապատասխան մի քանի վերլուծական հաշիվների դեբետով կամ կրեդիտով:

Տնտեսական գործողությունների պատկերումը կատարվում է կրկնակի գրանցման մեթոդով: Այս մեթոդի էությունն այն է, որ յուրաքանչյուր տնտեսական գործողությունների գումարի գրանցմամբ միաժամանակ մի հաշվի դեբետով և մեկ այլ հաշվի կրեդիտով: Կրկնակի գրանցումն ապահո-

վում է տնտեսական գործողությունների ճիշտ պատկերման հանդեպ հսկողությունը:

Կրկնակի գրանցման մեթոդի օգտագործումը ունի մեծ վերահսկողական նշանակություն, այնպիսին, ինչպիսին պահանջում է պարտադիր հավասարակշռման ընդհանուր գրառումը հաշիվների վրա: Դա իրականանում է յուրաքանչյուր հաշվետվության ընթացքի ավարտին, երբ շրջանառության գումարները հաշվարկվում են բոլոր հաշիվների դեբետով և կրեդիտով՝ անկախ իրենց տեսքից: Նրանք պետք է լինեն հավասար, անհավասարությունը վկայում է սխալի մասին, որը թույլ է տրված գրանցումներում կամ հաշիվներում: Հաշիվների միջև փոխադարձ կապի՝ պատկերված տրված գործողությունում, կոչվում է հաշիվների թղթակցություն (անցկացում), իսկ այդ կապը կոչվում է թղթակցության հաշիվներ: Ընթացիկ հաշվառման տեղեկատվությունն ամսվա ընթացքում դառնում է մեկուսի շատ հաշիվների սինթետիկ և վերլուծական հաշիվներից: Այսպիսի տեսքով այն դժվար է կարդալ և հասկանալ: Հաշվառման տեղեկատվության ընդհանրացման համար օգտագործվում են տարբեր միջոցներ: Այդպիսի միջոցներից մեկն է հանդիսանում շրջանառու տեղեկագրերի կազմումը: Ըստ հաշվի՝ շրջանառու տեղեկագրերը բաժանվում են սինթետիկ և վերլուծական հաշվառումների:

Աղյուսակ 10.3

Հաշվի կոդ	Հաշվի անվանում	Սալդոն ամսվա սկզբին, հազար դրամ		Շրջանառությունը ամսվա ընթացքում, հազար դրամ		Սալդոն ամսվա վերջին, հազար դրամ	
		Դեբետ	Կրեդիտ	Դեբետ	Կրեդիտ	Դեբետ	Կրեդիտ
1	2	3	4	5	6	7	8
10	Նյութեր	100	-	200	180	120	-
50	Դրամարկղ	4	-	70	73	1	-
84	Չբաշխված շայույթ	-	100	50	-	-	50
70	Անձնակազմի Աշխատավարձի հաշվառումը	-	80	80	90	-	90
	….	….	….	….	….	….	…..
	Արդյունքը	320	320	780	780	240	240

Բերված ձևից երևում է, որ շրջանառու տեղեկագրում կան երեք զույգ հավասարություն:

3 և 4 խմբերի արդյունքների հավաստիությունը կապված է այն բանի հետ, որ միջոցը, նրանց գումարը պետք է համապատասխան լինի աղբյուրների գումարին:

5 և 6 խմբերի արդյունքների հավասարությունը ելնում է կրկնակի գրանցման մեթոդից, եթե կա խզում 5 և 6 խմբերի արդյունքների միջև, ապա դա վկայում է հաշվապահական հաշվառման հաշիվների գրանցման ժամանակ թույլ տված սխալների մասին:

7 և 8 խմբերի արդյունքների հավասարությունը բխում է միջոցների և նրանց աղբյուրների հավասարությունից:

Վերլուծական հաշվառման հաշիվներով տարբերվում են երեք տեսակի շրջանառության հաշվառման ձևեր:

Առաջին տեսակն օգտագործում են գույքի հաշվառման վերլուծական հաշիվների համար, այսինքն, երբ օգտագործվում են քանակական կամ բնական ցուցանիշ, այլ կերպ ասած, երբ կատարվում է բնաարժեքային հաշվառում:

Այսպիսի շրջանառու տեղեկագրերում նախատեսվում է այունակների քանակի, արժեքի և գումարի պատկերման համար: Այս շրջանառու հաշվառման արդյունքային ցուցանիշները՝ գումարային արտահայտմամբ, համադրվում են սկզբնական մնացորդի գումարների հետ՝ համապատասխան սինթետիկ հաշվով: Արդյունքների հավասարության բացակայումը վկայում է կանխիկ սխալների մասին, որն անհրաժեշտ է հայտնաբերել և հեռացնել:

Աղյուսակ 10.4

Վերլուծական հաշվառման հաշիվների շրջանառու հաշվառում

Հ/Հ	Հաշվի անվանումը	Չափման միավորը	Միավորի գինը	Մնացորդը ամսվա սկզբին		Շրջանառությունը մեկ ամսում, հազար դրամ				Մնացորդը ամսվա վերջում	
						Գնումը		Սպառումը			
				Քանակը	Գումարը	Քանակը	Գումարը	Քանակը	Գումարը	Քանակը	Գումարը
	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
	Լինոլեում	մ³	60	100	6000	2000	120000	1900	114000	200	12000
	Ցեմենտ	տ	500	5	2500	30	15000	32	16000	3	1500
	….	…	…	….	….	…	…..	….	….	… …	…...
	Արդյունքը	-	-	-	10000	-	200000	-	195000	-	15000

Աղյուսակ 10.5

Վերլուծական հաշվառման հաշվի շրջանառու տեղեկագիրը սինթետիկ հաշվարկ 70-ին «Անձնակազմի աշխատավարձի հաշվարկները մարտին 20__թ.»

Հաշվեցուցակի համարը	Ազգանուն, անուն, հայրանուն	Սալդո 01.03.20__թ	Շրջանառությունը մարտ ամսին, դրամ		Սալդո 01.04.20__թ
			Դեբետ	Կրեդիտ	
1	2	3	4	5	6
9.	Գեղամյան Բ. Դ.	10000	Պահում և վճարում	Ավելացում 12000	12000
10.	Հովհաննիսյան	10000	10000	15000	15000
….	Ռ.Ա.	…..	10000	…..	…..
	….		…..		
	Ընդամենը	149000	149000	161000	161000

Ավտոմատացման ժամանակ, սովորաբար, սինթետիկ հաշվառման տվյալները հաջորդում են վերլուծական հաշվառման տվյալներին, այսինքն՝ վերջինը նախորդում է առաջինին:

Ամսվա վերջին տարբեր արժեքներով նյութերի ընդունման ժամանակ հաշվում են միջին գինը: Ուշադրություն են դարձնում սալդոյին և ընդունելու արդյունքին՝ մնացորդը գումարած մեկ ամսվա ընդունածը: Արդյունքում ստանում են ամսվա միջին գինը: Այսպիսի հաշվարկը՝ անհրաժեշտության դեպքում, կարելի է կազմել ցանկացած պահին:

Շրջանառու տեղեկագրի մյուս ձևը լինում է պարտավորության հաշվառման հաշիվների համար և ուրիշների, որոնցով չկա անհրաժեշտություն պատկերել քանակը, այսինքն՝ հաշվառումը վարվում է միայն դրամական արտահայտությամբ:

Երրորդը՝ շրջանառու տեղեկագրի առանձնահատուկ ձևը լինում է պարտապաններով և վարկատուներով վճարների հաշվառման հաշվարկով:

Այսպիսի անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով, որ մի քանի կազմակերպությունների պարտքը կարող է լինել կրեդիտային, իսկ մյուսներինը դեբետային: Ավելին, նույն կազմակերպության մնացորդը ամսվա սկզբին կարող է լինել դեբետային, իսկ ամսվա վերջին՝ կրեդիտային, և հակառակը: Բայց խոսքը գնում է նույն սինթետիկ 76 հաշվի մասին «Վճարները տարբեր պարտապաններով և վարկատուներով» (տե՛ս Աղյուսակ 10.6):

Աղյուսակ 10.6

Շրջանառու տեղեկագիրը՝ ըստ սինթետիկ հաշվարկի «Վճարները տարբեր պարտապաններով և վարկատուներով»

Հ/Հ	Կազմակերպությունները	Սալդոն ամսվա սկզբին, հազար դրամ		Շրջանառությունը ամսվա ընթացքում, հազար դրամ		Սալդոն ամսվա վերջին, հազար դրամ	
		Դեբետ	Կրեդիտ	Դեբետ	Կրեդիտ	Դեբետ	Կրեդիտ
1	2	3	4	5	6	7	8
1.	Հարավարևմտյան շրջանի Վէգ	300	-	800	1000	100	-
2.	Պալյոտ ԲԸ	100	-	150	300	-	50
3.	ԵԲԿ գործարան հ7	-	50	120	200	-	130
…	…..	….	….	…..	….	….	…..
	Ընդամենը	400	50	1070	1500	100	180

Արդյունքի փաստաթղթերում սալդոն այսպիսի հաշվարկով անհրաժեշտ է ցույց տալ լայնածավալ՝ դեբետային սալդոն ակտիվում, կրեդիտայինը՝ պասիվում: Արգելվում է այսպիսի հաշվարկի սալդոն բերել հավաքված տեսքով, այսինքն՝ տարբեր տեսքի պարտքերի միջև տարբերությունը:

Հավաքված տեսքով սալդոն՝ ըստ 76 հաշվարկի, տրված օրինակում կազմվում է 80.000դ. կրեդիտով:

Սակայն հաշվեկշռում՝ ելնելով ասպիսի շրջանառու տեղեկագրերի ցուցանիշներից, սալդոն պետք է բերվի վերջնական տեսքի, այսինքն՝ 100.000դ. ակտիվում որպես պարտապանների պարտք, 180.000դ. պասիվում որպես վարկատուների պարտք:

Հաշվապահական հաշվեկշիռը, միջոց է կազմակերպությունների տնտեսական խմբավորման և ընդհանրացվող պատկերման գնահատման արժեքավորման՝ ըստ իրենց տեսքի և աղբյուրների ձևավորման, սահմանված ամսաթվին (սովորաբար ամսի 1-ին):

Նրանում միջոցների ընդհանուր գումարը մշտապես հավասար է աղբյուրների ընդհանուր մեծությանը: Հաշվեկշիռը իրենից ներկայացնում է երկկողմանի աղյուսակ, որում հաշվեկշռի ձախ մասը (ակտիվ) միշտ հավասար է աջ մասին (պասիվ): Հաշվեկշռի ընդհանուր մեծությունը (ակտիվի կամ պասիվի) անվանում են հաշվեկշռի արժույթ: Հաշվեկշռի ձախ մասում ցույց է տրվում կազմակերպության միջոցները կամ գույքը՝ ըստ նրա կառուցվածքի (հաշվեկշռի ակտիվը), իսկ աջ մասում պատկերվում է ֆինանսական պաշարները (հաշվեկշիռի պասիվը): Ակտիվ բառը լատիներենից թարգմանված նշանակում է գործնական, պասիվ՝ ոչ գործնական:

Կազմակերպությունների հսկողության համար հաշվեկշիռը կազմում են ամեն ամիս (բանկերում՝ ամեն օր), պետական մարմինները այն ներկայացնում են եռամսյակը մեկ:

Կազմակերպությունների գործունեության ծավալից կախված՝ ամեն օր կարող է իրականացվել բազմաթիվ տնտեսական գործողություններ: Այդ բոլորը ազդում են գույքի մեծության և նրա կազմավորման աղբյուրների վրա: Տնտեսական գործողությունների ազդեցության ներքո կատարվող

բոլոր փոփոխությունները բերում են նրան, որ միաժամանակ ինչ-որ բան փոքրանում է կամ վայրկեանական մեծանում, կամ կրճատվում են և՛ միջոցները, և՛ դրանց աղբյուրները:

Բազմազան տնտեսական գործողությունները, որոնք կատարվել են կազմակերպությունում, չպետք է առաջացնեն դժվարություն հաշվապահների համար՝ թղթակցության հաշիվները կազմելիս, քանի որ բոլոր նրանց կարելի է միավորել չորս խմբում:

Տնտեսական գործողությունների թղթակցային հաշիվների ձևակերպման հմտություններ ձեռք բերելու նպատակով, ծանոթ լինելով հաշվեկշռի կազմին, քննարկենք նրա փոփոխությունը՝ տնտեսական գործողությունների ազդեցության ներքո:

Առաջին տիպի տնտեսական գործողությունները ցուցաբերում են փոփոխություն միայն հաշվեկշռի ակտիվում, այսինքն՝ նրա մի հրամանը մեծանում է, մյուսը փոքրանում՝ տնտեսական գործողությունների գումարով: Հաշվեկշռի արդյունքը չի փոփոխվում:

Օրինակ՝ համաձայն ծախսերի դրամարկղների՝ օրդերի գործուղման համար հատկացվում է 420000 դրամ: Նշանակում է, հաշվեկշռում «Դրամարկղ» հրամանով գումարը կփոքրանա, իսկ «Այլ պարտապաններ» հրամանով կմեծանա:

Համապատասխանաբար, այս տնտեսական գործողությունը կգտնի հետևյալ պատկերումը հաշիվներում՝ «Դրամարկղ» հաշվով գումարը փոքրանում է, նշանակում է կրեդիտավորվում է «Դրամարկղ» հաշիվը, իսկ «Վճարները առհաշիվներով անձանց հետ» հաշիվը (մեծանում է պարտքը) դեբետագրվում է: Թղթակցող հաշիվները կունենան հետևյալ տեսքը.

71 հաշվի դեբետը՝ «Վճարները առհաշիվներով անձանց հետ» 420000 դրամ

50 հաշվի կրեդիտը՝ «Դրամարկղ» 420000 դրամ

Առաջին տիպի գործողություններից են բոլոր այն գործողությունները, որոնք կատարվում են շինարարական արտադրության գործընթացում՝

- նյութական արժեքների օգտագործման ժամանակ,
- պարտապանների պարտքերի մարման,

- դրամարկղում վճարման հաշիվներով դրամական միջոցների կանխիկի ստացման ժամանակ և այլն:

Տնտեսական գործողության երկրորդ տիպը ցուցաբերում է փոփոխություն միայն հաշվեկշռի պասիվում, նրա հրամանագրերից մեկը մեծանում է, մյուսը՝ փոքրանում, այսինքն՝ ձևափոխվում են տնտեսական միջոցների աղբյուրները: Հաշվեկշռի արդյունքը չի փոխվում:

Օրինակ՝ փոխատու հաշվով ստացված վարկի հիման վրա պարտքերը մարելու համար մատակարարներին ուղարկված է 840.000 դրամ: Հաշվեկշռում «Կարճաժամկետ փոխառություններ և վարկեր» հրամանով գումարը մեծանում է, իսկ «Վարկային պարտքը մատակարարներին» հաշիվը՝ փոքրանում: Համապատասխանաբար, «Վճարները կարճաժամկետ վարկերով և փոխառություններով» հաշիվը մեծանում է՝ կրեդիտավորվում է, իսկ «Վճարները մատակարարներով և կապալառուներով» հաշիվը փոքրանում է՝ դեբետացվում է: Թղթակցության հաշիվը կունենա հետևյալ տեսքը.

60 հաշվի դեբետը՝ «Վճարները մատակարարներով և կապալառուներով» 840.000 դրամ,

66 հաշվի կրեդիտը՝ «Վճարները կարճաժամկետ վարկերով և փոխառություններով» 840.000 դրամ:

Երկրորդ տիպի գործողություններին պատկանում են բոլոր տնտեսական գործողությունները՝ չբաշխված շահույթի հաշվին ավելացվող վճարով, աշխատավարձի պահումներով և այլն:

Երրորդ տիպի տնտեսական գործողությունները ցուցաբերում են փոփոխություն հաշվեկշռի ակտիվում և պասիվում միաժամանակ՝ նրանց հրահանգների մեծացման կողմը:

Օրինակ՝ մատակարարների վճարման փաստաթղթերի և հրահանգների ընդունման հիման վրա մուտք է արվում նյութեր 360.000 դրամ գումարով: Հաշվեկշռի ակտիվի «Պաշարներ» և հաշվեկշռի պասիվի «Վարկային պարտքը մատակարարներին» հրամանները մեծանում են: Հաշվեկշռի արդյունքը նույնպես մեծանում է այդ գումարով:

Համապատասխանաբար, թղթակցող հաշիվը կունենա հետևյալ տեսքը.

10 հաշվի դեբետը՝ «Նյութեր» 360.000 դրամ,

60 հաշվի կրեդիտը՝ «Վճարները մատակարարներով և կապալառուներով» 360.000 դրամ:

Այս տիպի գործողություններին են պատկանում հիմնադիր վճարման հաշիվների միջոցների ավելացումը, հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների մաշվածքամարումը, սոցիալական ապահովագրության պահպանումը, աշխատավարձի և արտադրանքի ինքնարժեքի հաշվի պարգևավճարի ավելացումը, վարկերի ստացումը, պատվիրատուների կողմից ավանսների ստացումը և այլն:

Չորրորդ տիպի տնտեսական գործողությունները առաջացնում են փոփոխություն հաշվեկշռի ակտիվում և պասիվում միաժամանակ՝ հրահանգների պակասման հարցում:

Հաշվեկշռի արդյունքը նույնպես պակասում է՝ տնտեսական գործողությունների գումարի չափով:

Օրինակ՝ վճարման տեղեկագրերի և սպառվող դրամարկղային հրամանի հիման վրա տրվել է աշխատողներին աշխատավարձ 300.000 դրամ: Հաշվեկշռի ակտիվի «Դրամարկղ» հրամանը և հաշվեկշռի պասիվի «Կազմակերպության անձնակազմի հանդեպ ունեցած պարտքը» հրամանը պակասում են: Հաշվեկշռի արդյունքը նույնպես պակասում է տնտեսական գործողության գումարի չափով: Թղթակցող հաշիվը կունենա հետևյալ տեսքը.

70 հաշվի դեբետը՝ «Անձնակազմի աշխատավարձի վճարումը» 300.000 դրամ,

50 հաշվի կրեդիտը՝ «Դրամարկղ» 300.000 դրամ:

Այս տիպին են վերաբերում բոլոր տեսակի վարկատուների պարտքերի վճարման գործողությունները (բյուջեին, վարձատուներին, մատակարարներին, աշխատողներին, ծառայողներին և այլն):

Տնտեսական գործողությունների պատկերման ճշտությունը՝ հաշվապահական հաշվառման հաշիվների վրա, պարբերաբար ստուգվում է գույքագրման օգնությամբ, որն իրենից ներկայացնում է միջոցների և նրա աղբյուրների առկայության ստուգման միջոց, ինչպես նաև վճարման իրավիճակը պարտապանների և վարկատուների հետ: Այլ կերպ ասած, կազմակերպության հաշվապահական հաշվառման և հաշվապահական

հաշվետվության ստույգ տվյալների ապահովման համար պարտավոր են անցկացնել գույքերի և պարտավորության գույքագրում, որոնց մուտքում ստուգվում և փաստաթղթերով հաստատվում են դրանց առկայությունը, իրավիճակը և գնահատականը:

Գույքագրման կանոնակարգն և ժամկետներն որոշվում է կազմակերպության ղեկավարության կողմից, բացառությամբ այնպիսի դեպքերի, երբ գույքագրման անցկացումը պարտադիր է:

Գույքագրման անցկացումը պարտադիր է,

- գույքը վարկով հանձնելու, գնման և վաճառքի ժամանակ, ինչպես նաև պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների (այսուհետև ՏԻՄ) համատեղ կազմակերպության փոխակերպման ժամանակ,
- տարեկան հաշվապահական հաշվետվություն կազմելուց առաջ,
- նյութական պատասխանատու անձանց փոխարինման ժամանակ,
- հափշտակման, չարաշահման կամ գույքի վնասման փաստերի հայտնաբերման ժամանակ,
- տարերային աղետների, հրդեհների կամ այլ արտակարգ իրավիճակների ժամանակ,
- կազմակերպության վերակառուցման կամ լուծարման ժամանակ,
- այլ դեպքերում, որոնք նախատեսված են ըստ ՀՀ օրենսդրության:

Գույքագրման տարածման ժամանակ փաստացի գույքի առկայության և հաշվապահական հաշվառման տվյալների միջև դրսևորումը պատկերվում է հաշվապահական հաշվառման հաշիվների վրա հետևյալ հերթականությամբ.

- գույքի ավելցուկը մուտքագրվում է և համապատասխան գումարը գրանցվում է կազմակերպության ֆինանսական արդյունքի վրա, իսկ բյուջետային կազմակերպությունների մոտ՝ ֆինանսավորման (ֆոնդերի) ընդլայնման վրա,
- բնական վնասի չափի սահմաններում գույքի անբավարար լինելը և նրա անպիտանելությունը ընկած է արտադրության ծախսերի վրա, իսկ չափից դուրսը՝ մեղավոր անձանց հաշվին: Եթե մեղավոր անձինք չեն հաստատվել կամ դատարանը հրաժարվել է նրանց

վնասների բռնագանձում կատարել, ապա վնասները՝ գույքի անբավարարությունից և նրա արժեզրկումից, դուրս են գրվում կազմակերպության ֆինանսական արդյունքների վրա, իսկ բյուջետային կազմակերպություններում՝ ֆինանսավորման նվազեցման վրա: Փաստաթղթերով հիմնավորված տվյալները՝ արտահայտված դրամական տեսքով, խմբավորված են հաշվապահական հաշվառման հաշիվներով ընդունված կրկնակի գրառմամբ և ստուգված գույքագրության օգնությամբ, և ծառայում են որպես հիմք հաշվարկումների համար:

Կալկուլացիան աշխատանքի միջոցների և ապրանքների ինքնարժեքի հաշվելու միջոց է, ինչպես նաև կատարված շինարարական աշխատանքների: Այն ներկայացնում է որպես ծախսերի ընդհանուր գումարի հաշվարկ, որը պատկանում է կալկուլացիայի օբյեկտային և ապրանքի կամ նրա ընդհանուր ծավալի ինքնարժեքի միավորի հաստատմանը: Կալկուլացիան օգտագործում են պայմանագրային գների հաստատման համար: Կալկուլացիայի ժամանակ հաշվում են ինքնարժեքը ձեռք բերված շինանյութերի, կոնստրուկցիաների, արտադրանքների, կատարված շինարարական աշխատանքների:

Կատարված շինարարական աշխատանքների, ապրանքանյութական պաշարների փաստացի ինքնարժեքի հաշվումը ծառայում է կազմակերպության տնտեսական գործունեության ֆինանսական արդյունքի որոշման համար՝ շահույթը կամ եկամուտը:

Ընդհանրացված տվյալները կազմակերպության գործունեության և ֆինանսական իրավիճակի մասին պահպանվում է հաշվապահական հաշվետվությունում: Այն բացի հաշվեկշռից՝ կազմված է աղյուսակային շարքից և ծառայում է կազմակերպության տնտեսական գործունեության օպերատիվ ղեկավարման համար, հսկողությունից՝ գույքի պահպանման համար, տնտեսական վերլուծության և կազմակերպության գործունեության գնահատման համար:

Հաշվետվությունը կազմելու համար տվյալները, այդ թվում՝ հաշվեկշիռը, ստանում են հաշվապահական հաշիվներից: Որոշ հաշվետվական ցուցանիշներ պահում են նաև տեղեկատվություն վիճակագրության և

օպերատիվ հաշվառման վերաբերյալ: Հաշվապահական հաշվետվության կազմումը և քննարկումը կազմակերպության հաշվառման աշխատանքների ավարտական փուլն են:

Բոլոր կազմակերպությունները՝ անկախ կազմակերպչաիրավական վիճակից և սեփականության ձևից, պարտավոր են սինթետիկ և վերլուծական հաշվառումների հիման վրա կազմել հաշվապահական հաշվետվություն:

Կազմակերպության տարեկան հաշվապահական հաշվետվությունը, բացառությամբ բյուջետային կազմակերպությունների հաշվետվության, կազմված են.

- հաշվապահական բալանսից՝ ձև N1,
- հաշվետվություն շահույթների և եկամուտների մասին՝ ձև N2,
- հաշվետվություն կապիտալի փոփոխության մասին՝ ձև N3,
- հաշվետվություն դրամական միջոցների շարժի մասին՝ ձև N4,
- գործադրումը հաշվապահական բալանսին՝ ձև N5,
- բացատրական գրառումներ,
- աննկդրային եզրակացությունը, որը հաստատում է կազմակերպության հաշվապահական հաշվետվությունը, եթե կազմակերպությունը համապատասխան օրենքներով անցնում է հարկային դաշտ:

Բյուջետային կազմակերպությունների հաշվապահական հաշվետվության կազմը որոշվում է ֆինանսների նախարարության կողմից: Կազմակերպության հաշվապահական հաշվետվության ձևը, դրանց լրացումների կարգի մասին հրահանգը նույնպես հաստատված է ֆինանսների նախարարության կողմից:

Մյուս հաստատությունները, որոնք իրականացնում են հաշվապահական հաշվառման կարգավորումը, հաստատում են՝ իրենց իրավասության սահմաններում, բանկերի հաշվապահական հաշվետվության ձևերը, ապահովագրական և այլ կազմակերպությունների և նրանց լրացումների կարգի մասին կանոնակարգեր՝ չհակասելով ֆիանսների նախարարության նորմատիվ ակտերին:

Տարեկան հաշվապահական հաշվետվության բացատրական գրառումը պետք է ներառի իրական տեղեկատվություն կազմակերպության

մասին, նրա ֆինանսական վիճակի, հաշվետվության և դրան նախորդող տարիների տվյալների համադրության, հաշվապահական հաշվետվության գնահատման և էական հրամանի մեթոդների մասին: Բացատրական գրառման մեջ պետք է նշվի հաշվապահական հաշվառման կանոնների կիրառման փաստերի մասին այնպիսի դեպքերում, երբ դրանք չեն թույլատրում ստույգ պատկերել կազմակերպության գործունեության գույքային իրավիճակը և ֆինանսական արդյունքները՝ համապատասխան հիմնավորմամբ:

Այլապես հաշվապահական հաշվառման կանոնների չկիրառումը կդիտվի որպես շեղում դրանց կատարումից և կհամարվի հաշվապահական հաշվառման մասին օրենսդրության խախտում: Բացատրական գրառման մեջ հաշվետվությունում հայտարարվում է փոփոխություն հաջորդ տարվա հաշվետվության համար: Հաշվապահական հաշվետվությունը հաստատվում է կազմակերպության ղեկավարների և գլխավոր հաշվապահի կողմից:

Հաշվետու տարին բոլոր կազմակերպությունների համար հանդիսանում է հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ներառյալ: Նոր կազմավորվող կազմակերպության համար առաջին հաշվետու տարին համարվում է նրա պետականորեն գրանցման ամսաթվից մինչև այդ տարվա դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածը:

Տնտեսական գործողությունների մասին տվյալները ընդգրկում են առաջին հաշվետվության տարվա հաշվապահական հաշվետվությունը: Ամսական և եռամսյակային հաշվետվությունները կազմավորվում են հաշվետու տարվա սկզբից:

Բոլոր կազմակերպությունները, բացառությամբ բյուջետայինի, ներկայացնում են տարեկան հաշվապահական հաշվետվությունը՝ համապատասխան հիմնադիր փաստաթղթերով, հիմնադիրներին, կազմակերպության մասնակիցներին, ինչպես նաև պետական վիճակագրական տարածքային հաստատություններին՝ իրենց գրանցման տեղեկանքով: Մյուս հաստատությունների, բանկերի և այլ օգտատերերի հաշվապահական հաշվետվությունը ներկայացվում է համապատասխան օրենսդրությամբ:

Կազմակերպությունները, բացառությամբ բյուջետայինի, պարտավոր են ներկայացնել եռամսյակային հաշվապահական հաշվետվությունը մինչ եռամսյակին հաջորդող ամսվա 20: Ընթացիկ տարվա հաշվապահական հաշվետվությունը պետք է կազմված լինի ըստ նախատեսված կարգի՝ հաստատված կազմակերպությունների հիմնադիր փաստաթղթերով:

Բյուջետային կազմակերպությունները ամսական, եռամսյակային և տարեկան հաշվապահական հաշվետվությունը ներկայացնում են բարձրակարգ հաստատությանը նշված ժամանակում:

Կազմակերպությունների հաշվապահական հաշվետվության ներկայացման օրը որոշվում է նրա փոստային ուղղարկման կամ փաստացի պատկանելիությամբ փոխանցման օրով:

Հաշվապահական հաշվետվության հրապարակայնությունը նրա հրատարակումն է թերթերում և ամսագրերում, որը հասանելի է հաշվետվությունից օգտվողներին, կամ էլ գրքույկների և այլ հրապարակումների տարածումը, որտեղ ներկայացված է հաշվապահական հաշվետվությունը, ինչպես նաև նրա փոխանցումը պետական տարածքային մարմիններին՝ հետաքրքրվող օգտատերերին ներկայացնելու համար:

Բաց բաժնետիրական ընկերությունները, բանկերը և այլ վարկային կազմակերպությունները, ապահովագրական կազմակերպությունները, աճուրդները, ներդրումային և այլ հիմնադրամները, որոնք ստեղծվում են մասնավոր, հասարակական և պետական միջոցների հաշվին, պարտավոր են հրապարակել տարեկան հաշվապահական հաշվետվությունն այդ տարվա հունիսի 1-ից ոչ ուշ:

Կենսաթոշակային հիմնադրամը, սոցիալական ապահովագրության հիմնադրամը, դրանց ներկայացուցչությունը և տարածաշրջանային սուբյեկտների մասնաճյուղերը, ինչպես նաև այնպիսի կազմակերպություններ, որոնք հաստատված են օրենքներով, պարտավոր են հրապարակել եռամսյակային հաշվապահական հաշվետվությունը:

Կազմակերպությունները պարտավոր են պահպանել հաշվառման փաստաթղթերը, հաշվապահական հաշվառման ցուցակը և նախատեսված ժամանակամիջոցում հաշվապահական հաշվետվությունը, որոնք հաստատվել են համապատասխան կազմակերպության կանոններով:

Կազմակերպության հաշվառման փաստաթղթերի, հաշվապահական հաշվառման ցուցակների և հաշվապահական հաշվետվության նկատմամբ պատասխանատվությունը կրում է կազմակերպության ղեկավարությունը:

Կազմակերպության ղեկավարները և այն անձինք, ովքեր պատասխանատու են կազմակերպության և հաշվապահական հաշվառման վարման համար, հաշվապահական հաշվառման վարման կանոններից խուսափելու, հաշվապահական հաշվետվության աղավաղման և նրա ներկայացման ու հրապարակաման ժամկետների խախտման դեպքում ենթարկվում են վարչական կամ քրեական պատասխանատվության՝ համապատասխան օրենսդրությամբ:

10.3 .Հաշվապահական հաշվառման կազմակերպչական առանձնահատկությունները շինարարությունում

Կապիտալ շինարարությունում հաշվապահական հաշվառման առարկան տնտեսական գործունեություն է կապալային, շինմոնտաժային, նախագծային կազմակերպությունների և կառուցապատողների կողմից, այսինքն՝ կազմակերպությունների, որոնք իրականացնում են կապիտալ ներդրումներ: Կապիտալ ներդրումներն իրենցից ներկայացնում են դրամական միջոցներ, որոնք ուղղված են նոր շինարարությանը, վերակառուցմանը, գործող կազմակերպությունների ընդլայնմանը և տեխնիկական վերազինմանը, ինչպես նաև սարքավորումների արդիականացման ծախսերին: Կապիտալ վերանորոգման ծախսերը հաշվառման են ենթարկվում կապիտալ ներդրումից առանձին:

Հաշվապահական հաշվառման մեջ կապիտալ ներդրումներն ստորաբաժանվում են հետևյալ կերպ՝

- շինարարական աշխատանքներ,
- սարքավորումների մոնտաժային աշխատանքներ,
- հորատման աշխատանքներ,
- արտադրական սարքավորումներ և տնտեսական գույք,
- նախագծահետազոտական աշխատանքներ,
- այլ կապիտալ աշխատանքներ և ծախսեր:

Կառուցապատողը վարում է կապիտալ ներդրման և նրանց ֆինանսավորման աղբյուրների հաշվառում: Կապալային կազմակերպությունը հաշվառման է ենթարկում շինարարական արտադրության ծախսերը, շինարարական արտադրանքի իրացումը և աշխատանքների կատարման փուլերը: Կապալային կազմակերպությունները ստորաբաժանվում են գլխավոր կապալառուների (ըստ գլխավոր կապալառուի պայմանագրի շինարարական մոնտաժային աշխատանքների ԾՄԱ) ամբողջ համալիրի կատարման պատասխանատու և ենթակապալառուների (ըստ պայմանգրի գլխավոր կապալառուների հետ մասնագիտացված ԾՄԱ կատարողներ):

Շինարարական կազմակերպության կազմում կարող են մտնել օգնական և օժանդակ տնտեսություններ (օրինակ՝ արտադրամաս, որը պատրաստում է շինարարական կոնստրուկցիաներ, ավտոտրանսպորտների տեղամաս, բնակելի-կոմունալ տնտեսություն և այլն), այդ պատճառով հաշվապահական հաշվառման մեջ առանձին պետք է պատկերվի օգնական և օժանդակ արտադրության հիմնական արտադրության արդյունքները (կապալային ԾՄԱ): Շինարարական կոնստրուկցիաների, ապրանքների, նյութերի արտադրությունը և կողմնակի կազմակերպություններին դրանց իրացումը հանդիսանում է արդյունաբերական գործունեություն: Խոշոր շինարարական կազմակերպությունների հիմնական գործունեության երկու տիպի՝ շինարարական և արդյունաբերական, արտադրությունների կապակցումը հաշվապահական հաշվառման համար հանդիսանում է կարևոր առանձնահատկություն: Կապիտալ շինարարության մյուս առանձնահատկությունը երկարաժամկետ բնույթի կապիտալ ներդրումների յուրացման (կառուցապատողների ֆինանսական միջոցների շեղումը շինարարական օբյեկտներից) և շինարարության երկարատևության մեջ է (շինարարական արտադրանքի պատրաստումը) արդյունաբերության և տնտեսության այլ բնագավառների համեմատ:

Մյուս առանձնահատկությունն այն է, որ տրվում է հնարավորություն կիրառելու շինարարական աշխատանքների հանձնումից հետո եկամուտի որոշման երկու մեթոդներից մեկը և, հետևաբար, հիմնական գործունեության ֆինանսական արդյունքի դրսևորումը: Կապալառուն իրավունք ունի որոշել եկամուտը կամ շինարարական օբյեկտի ավարտից հետո, կամ

աշխատանքի առանձին փուլերի կատարման չափով: Ընդ որում՝ կապալառուն հաշվառման մեջ կարող է օգտագործել նշված երկու մեթոդներն էլ միաժամանակ՝ կատարված տարբեր պայմանագրերով (պատվիրատուի և կապալառուի միջև, գլխավոր կապալառուի և ենթակապալառուի):

Կապիտալ շինարարության պայմանագրերի կատարման ժամանակ կապալառուները պետք է կարողանան ապահովել տեղեկատվության ձևակերպումը հաշվապահական հաշվառման օբյեկտների ըստ հետևյալ հատկանիշների.

- հաշվետվության ընթացքում հաշվառման օբյեկտների կապալային աշխատանքի կատարման ծախսերը և շինարարության պայմանագրի կատարման սկիզբը,
- հաշվապահական օբյեկտի անավարտ արտադրանքը, այդ թվում կատարված աշխատանքների վճարումները, որոնք կատարվում են ընդգրկված կազմակերպությունների կողմից ըստ պայմանագրի,
- եկամուտները, որոնք ստանում են պատվիրատուները՝ ըստ պայմանագրի իրենց հանձնած օբյեկտներից,
- աշխատանքների ֆինանսական արդյունքները,
- կառուցապատողների ստացված ավանսները՝ կատարված աշխատանքների դիմաց:

Գործող նորմատիվային փաստաթղթերի վերլուծումը, որը վերաբերվում է շինարարական գործընթացի կողմերի փոխհարաբերությանը, հաշվապահական հաշվառման պատկերման և գործունեության հարկադրման կանոնները թույլ են տալիս գլխավոր կապալառուին առանձնացնել հաշվապահական հաշվառման վարման երեք տարբերակ՝

- գլխավոր կապալառուի հաշվեկշռում անավարտ շինարարությունը հաշվի է առնվում փաստացի ծախսերով՝ մինչև նրա ավարտը,
- գլխավոր կապալառուի հաշվեկշռում անավարտ շինարարությունը հաշվի է առնվում պայմանագրային արժեքով՝ ընդունված կառուցապատողների կողմից, մինչև նրա ավարտը,
- կառուցապատողին հանձնված աշխատանքի չափով գլխավոր կապալառուն դուրս է գրում կատարված աշխատանքների արժեքը

հաշվեկշռից և ձևակերպում է ֆինանսական արդյունքը ամբողջական հարկադրման համար:

Շինարարական կազմակերպության ծախսերը խմբավորվում են ուղղակի և անուղղակի (վերադիր) ծախսերի ճիշտ համապատասխան նախահաշվի գնահատման ծախսերի խմբավորման շարադրանքով: Դա հնարավորություն է տալիս իրականացնել հսկողությունը շինարարության նախահաշվով արժեքի պահպանմանը, որոնց հիման վրա հաշվի է առնվում օբյեկտի պայմանգրային արժեքը:

Նաև գոյություն ունի որոշակի առանձնահատկություն հետագա գործընթացի ծախսերի հաշվառման՝ վերադիր ծախսերի և ապագայում կատարվելիք ծախսերի պահուստների ժամանակ:

Շինմոնտաժային աշխատանքների արտադրության ծախսերի հաշվառման նման առանձնահատկություններն այլ տեսքի գործունեությունների համեմատ թույլ են տալիս առանձնացնել հաշվապահական հաշվառման առանձին կարգապահություն:

10.4. Հաշվապահական հաշվառումը շինարարական կազմակերպությունում

Կազմակերպության հաշվապահական հաշվառման քաղաքականություն ասելով հասկանում ենք իրենց կողմից ընտրված հաշվապահական հաշվառման վարման միջոցների ամբողջականությունը, սկզբնական հետազոտումը, արժեքային չափումը, տնտեսական գործունեության փաստերի ընթացիկ խմբավորումը և արդյունքի ընդհանրացումը:

Հաշվապահական հաշվառման վարման միջոցներին են պատկանում տնտեսական գործունեության փաստերի խմբավորման մեթոդները և գնահատականը, ակտիվներն ու պասիվները, ակտիվների արժեքների մարումը, կազմակերպության փաստաթղթերի շրջանառության և գույքագրման ընդունումը, հաշվապահական հաշվառման հաշիվների ընդունման միջոցները, տեղեկատվական համակարգերը և այլ համապատասխան միջոցները, մեթոդները և ընդունումները:

Հաշվառման քաղաքականությունը ձևավորվում է գլխավոր հաշվապահի կողմից, որը հաստատում է կազմակերպության ղեկավարը:

Հաշվառման քաղաքականության ձևավորման ժամանակ ուշադրություն է դարձվում հետևյալ ենթադրություններին.

- *կազմակերպության գույքային անջատումը՝* կազմակերպության ակտիվները և պասիվները լինում են անջատված սեփականատերերի ակտիվներից ու պարտավորություններից և անջատված այլ կազմակերպությունների ակտիվներից և պարտավորություններից,
- *կազմակերպության գործունեության անընդհատությունը՝* կազմակերպությունը շարունակում է իր գործունեությունը տեսանելի ապագայում և մտադրված չէ կանգնեցնել իր գործունեությունը կամ լուծարվել,
- *հաշվառման քաղաքականության ընդունման հաջորդականությունը:* Կազմակերպության կողմից ընտրված հաշվառման քաղաքականությունը կիրառվում է հաջորդաբար մի հաշվառման տարուց մյուսը,
- *տնտեսական գործունեության փաստերի ժամանակավոր որոշումը*,
- *կազմակերպության տնտեսական գործունեության փաստերը* վերաբերում են այն հաշվետվության ժամանակամիջոցին, որում իրենք տեղի են ունեցել՝ անկախ ընդունման փաստացի ժամանակի կամ դրամական միջոցների վճարման, որոնք կապված են այդ փաստերի հետ:

Կազմակերպության հաշվառման քաղաքականության մեջ փոփոխությունները կարող են տեղի ունենալ կազմակերպության վերակազմավորման ժամանակ (միավորման, բաշխման, վերամիավորման), սեփականատերերի փոխվելու ժամանակ, օրենսդրության փոփոխության կամ հաշվապահական հաշվառման նորմատիվ կառավարման համակարգում:

Շինարարական կազմակերպության հաշվառման քաղաքականության բացման ժամանակ ուշադրություն են դարձնում հետևյալ տարրերի և մեթոդների վրա: Հիմնական միջոցների հաշվառումով.

- հիմնական միջոցների վերագնահատման կարգը,

- կազմակերպությունների և իրենց կապիտալ վերանորոգման սեփական միջոցների ընթացիկ պահպանման ծախսերի հաշվառման կարգը,
- կազմակերպության սեփական հիմնական միջոցների գնահատման դուրսգրման լրացուցիչ մեթոդների օգտագործումը,
- սեփական հիմնական միջոցների մաշվածքամարման նորմաների պահպանման համար նվազող գործակցի օգտագործումը,
- կազմակերպությունների վարձակալված հիմնական միջոցների ընթացիկ պահպանման և վերանորոգման, ինչպես նաև նրանց նկատմամբ կապիտալ բնույթի աշխատանքների ծախսերի հաշվառման կարգը:

Ոչ նյութական ակտիվների հաշվառումով.

- ոչ նյութական ակտիվների օգտակար օգտագործման ժամկետը, որով այն կարող է հաստատվել,
- ոչ նյութական ակտիվների օգտակար օգտագործման ժամկետը, որով այն չի հաստատվում,
- ոչ նյութական ակտիվների տեսքերը, որոնցով մաշվածքամարումը չի ավելացվում:

Ֆինանսական ներդրման հաշվառումով.

- ֆինանսական ներդրման գնահատման կարգը պետական արժեթղթերում,
- ֆինանսական ներդրման գնահատումը բաժնեմասում՝ գնանշված աճուրդում:

Ապրանքանյութական պաշարների հաշվառումով.

- առանձին տեսքի արժեքների սկզբնական հաշվառման ձևերը,
- մթերող-պահեստային ծախսերի բաշխման կարգը,
- արժեքների գնահատման մեթոդներն իրենց շարքից դուրս գալու ժամանակ,
- արժեքների գնահատման կարգն ու մեթոդները տարվա վերջին:

Շինարարական աշխատանքների ինքնարժեքի հաշվառումով.

- հաշվառման կազմակերպում,

- հիմնական շինարարական արտադրության օբյեկտների հաշվառումը՝ աշխատանքի համալիրները, շինարարության օբյեկտները, շինարարության տեղամասը և այլն,
- հաշվառման օբյեկտների ծախսերի հաշվառման մեթոդ՝ ցուցադրված կամ ծախսերի կուտակման ճանապարհով որոշակի ժամանակի ընթացքում,
- շինարարական աշխատանքի ինքնարժեքի վերլուծական և սինթետիկ հաշվապահական հաշվառման ձևերը,
- ծախսերի գնահատականը և կազմը, այդ թվում նաև շինարարական աշխատանքների ինքնարժեքը,
- ընթացիկ և միանվագ ծախսերի դասակարգումը,
- հետագա ընթացիկ ծախսերի կազմի որոշումը և դրանց դասավորման կարգը,
- ծախսերի կազմի որոշումը՝ ըստ հաշվառման օբյեկտի; ուղղակի ծախսերը, աշխատանքի ամբողջական փաստացի ինքնարժեքը,
- ինքնարժեքի խմբավորումը տարրերով և ծախսերի շարադրանքով,
- նյութերի գնահատման մեթոդներն աշխատանքի ինքնարժեքի վրա՝ իրենց արժեքի դուրսգրման ժամանակ,
- կատարված աշխատանքների համար աշխատավարձի համակարգերի հաստատումը՝ ընդգրկելով պարգևատրումները և վարձատրումները,
- հաշվառման կարգը և ծախսերի դասավորումը և շինարարական մեքենաների ու սարքավորումների շահագործումը,
- ընդհանուր տնտեսական ծախսերի դասավորման կարգը այն դեպքերում, երբ դրանք ներառվում են օբյեկտի շինարարական ինքնարժեքում՝ համեմատականորեն ուղղակի ծախսերի, աշխատավարձի ծախսերի և այլն,
- կատարված աշխատանքների գնահատումների՝ որոշված մեթոդը ամբողջական պատրաստի օբյեկտի համար պատվիրատուներին վճարելու ժամանակ՝ փաստացի ինքնարժեք կամ պայմանագրային արժեք,

- աշխատողներին փոխհատուցված ծախսերի նորմայի որոշումը, որոնց չափը սահմանափակվում է հարկադրման բազաների որոշման ժամանակ (գործուղման և ներկայացվող ծախսերը, ծախսերի փոխհատուցումը սեփական ավտոտրանսպորտի պահպանման համար՝ ծառայողական նպատակների օգտագործման ժամանակ),
- շինարարության անավարտ արտադրության գնահատումը,
- անավարտ շինարարության գնահատումը շինարարության ամբողջական պատրաստի օբյեկտի համար՝ պատվիրատուներին վճարելու ժամանակ,
- ծախսերի որոշման մեթոդները, որոնք ստացվում են պատվիրատուներին հանձնած աշխատանքներից և օբյեկտներից՝ հաշվառման ծախսերի կուտակման մեթոդների վարման ժամանակ կամ շինարարության օբյեկտների առանձին փուլերով պատվիրատուին հանձնելու ժամանակ:

<u>Շինարարական մեքենաների և սարքավորումների պահպանումով և շահագործումով</u>.

- շինարարական մեքենաների և սարքավորումների պահպանման և շահագործման ծախսերի հաշվառման կարգը,
- շինարարական մեքենաների պահպանման ծախսերի դասավորման կարգը ըստ դրանց օգտագործման օբյեկտների,
- շինարարական սարքավորումների պահպանման ծախսերի դասավորման կարգը ըստ դրանց օգտագործման օբյեկտների,
- ներքին տնտեսական տեղափոխման ծախսերի դասավորման կարգը:

<u>Վերադիր ծախսերի հաշվառումով</u>.

- ծախսերի կազմը, այդ թվում նաև մշտական և փոփոխական,
- հիմնական արտադրության վերադիր սպառումների դասավորման կարգը,
- օժանդակ արտադրության վերադիր ծախսերի դասավորման կարգը,
- մշտական վերադիր ծախսերի դասավորման կարգը,

- ըստ ծախսերի կիրառվող լիմիտները ու նորմաները, որոնց վրա հարկային օրենսդրությամբ հաստատված են սահմանափակումները՝ հարկադրման շահույթի նպատակների համար,
- կազմակերպության վճարումների հաշվառման կարգը՝ իր կառուցվածքային բաժնեմասերով, վերջին ծախսերի փոխհատուցման մասում:

Ապագա ժամանակաշրջանի և նախատեսվող ծախսերի պաշարների հաշվառումով.

- հետագա ընթացիկ սպառումների կազմը և արտադրության ծախսերում դրանց դուրսգրման կարգը,
- սպասվող սպառումների պահուստային կազմը, դրանց կազմավորման և օգտագործման կարգը:

Աշխատանքի կատարման և օբյեկտների հանձնումից ստացված գումարի հաշվառումով.

- իրացումից և գործարքի պարտավորությունից ստացված գումարի գնահատման մեթոդը՝ ըստ պայմանագրի գների, պայմանական դրամական միավորներով,
- կատարված աշխատանքի ծավալի որոշման ձևը, և որպես հետևանք, շինարարական պայմանագրով ստացված գումարները՝ աշխատանքի փուլերով կամ ամբողջական պատրաստի օբյեկտներով (կազմակերպությունը կարող է օգտագործել այս երկու մեթոդները միաժամանակ),
- աշխատանքի պայմանագրով սահմանված արժեքի գնահատումը,
- ստացված գումարների որոշման փուլային մեթոդը և կատարված աշխատանքի ֆինանսական արդյունքը,
- իրացումից ստացված գումարների որոշման մեթոդը՝ կախված սեփականության հանձման իրավունքի ժամկետից,
- լրացուցիչ եկամուտների գումարի հաշվառումը, որոնք առաջացնում են հետաձգում վճարումներում և այլ պատճառներ:

Կանոնադրական կապիտալի հաշվառումով.

- կանոնադրական կապիտալի ձևավորման կարգը և ներդրման գնահատումը,

- մասնակիցների հեռացման կարգը և իրենց հասանելի ներդրման չափերի որոշումը:

Պահուստային կապիտալի հաշվառումով.

- մաքուր շահույթի բաշխման կարգը,
- պահուստային կապիտալի կազմավորման կարգը և նրա օգտագործման կարգը, բացի այն դեպքերից, երբ այն կազմավորվում է այնպիսի կարգով, որը հաստատված է օրենսդրությամբ:

Չբաշխված շահույթի կամ հատուկ նշանակության ֆոնդերի հաշվառումով.

- մաքուր շահույթի բաշխման կարգը,
- իրենց կազմավորման դեպքում հատուկ նշանակության ֆոնդերի օգտագործման կազմը և կարգը:

Լրացուցիչ կապիտալի հաշվառումով.

- շահույթի միջոցների օգտագործման հաշվին գույքի ածի պատկերման կարգը՝ որպես ֆինանսական աղբյուր,
- լրացուցիչ կապիտալի օգտագործման կարգը, որը կազմավորվում է կազմակերպության գույքի վերագնահատումից,
- այլ տեսքի լրացուցիչ կապիտալի օգտագործման կարգը:

Փոխառության միջոցների հաշվառումով.

- Տոկոսների (եկամուտների) պատկերման կարգը, որը հնարավոր է ստանալ ժամանակին,
- Պարտավորության դիսկոնտի հաշվառման կարգը:

Դասընթացային տարբերության հաշվառումով.

- ֆինանսական արդյունքի հաշվառման հաշվարկով,
- հետագա ժամանակամիջոցի շահույթի հաշվառման հաշվարկով:

Կազմակերպության հաշվառման քաղաքականության մասին հրամանի հետ միաժամանակ հաստատվում են հետևյալ ներքին փաստաթղթերը, իրավիճակները, սարքավորումները.

- հաշվապահական հաշվառման հաշվարկների աշխատանքային ծրագիրը,
- սկզբնական հաշվառման փաստաթղթերի և ներքին հաշվապահական հաշվետվության ձևերը,

- գույքագրման անցկացման կարգը և գույքերի ու պարտավորության գնահատումների մեթոդները,
- փաստաթղթերի շրջանառության, մշակման և հաշվառման տեղեկատվության գրանցման կարգը,
- ներքին հսկողության կարգն ու կանոնը՝ տնտեսական գործողությունների համար:

Հաշվապահական հաշվառման հաշվարկների աշխատանքային ծրագիրը, որը կազմված է տիպային ծրագրի հիման վրա, պետք է պահպանի ցուցակը սինթետիկ, վերլուծական հաշվարկների և ենթահաշվարկների, որոնք անհրաժեշտ են կոնկրետ կազմակերպության հաշվապահական հաշվառման վարման համար և ապահովում են բոլոր անցկացվող տնտեսական գործողությունների ժամանակին և մշտական պատկերումը:

Սկզբնական փաստաթղթերի ինքնուրույն ձևերը մշակվում և հաստատվում են այն պայմանով, երբ հնարավոր չէ ընդունել հաշվառման փաստաթղթերի տիպային ձևերը:

10.5.Հարկման տեսական հիմունքները

Հարկը պետական և հասարակական կարիքների բավարարման նպատակով պարտադիր և անհատույց վճար է, որը գանձվում է ֆիզիկական և իրավաբանական անձանցից (այդ թվում՝ ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանցից, օտարերկրյա իրավաբանական անձանցից օտարերկրյա իրավաբանական անձանց մասնաճյուղերից, ներկայացուցչություններից), ՏԻՄ-երից՝ հարկային օրենսդրությամբ նախատեսված կարգով, չափերով և սահմանված ժամկետներում:

Հարկը և վճարն անհրաժեշտ օղակ են տնտեսական համագործակցության հասարակության միջև՝ պետության առաջացման պահից: Առանց հարկերի չկա եկամուտ բյուջեում, հետևաբար, պետությունը չի կարող իրականացնել իր գործառույթները:

Հարկեր ասելով հասկանում ենք պարտադիր, համապարտադիր անհատույց վճար, որը գանձվում է կազմակերպություններից և ֆիզիկական անձանցից, որոնք ունեն սեփականության իրավունք, տնտեսական և օպերատիվ դրամական կարողություններ:

Վճարում ասելով հասկանում ենք պարտավորված մուծում՝ գանձված կազմակերպություններից և ֆիզիկական անձանցից, որոնց վճարումը համարվում է առաջին պայմաններից մեկը վճարողի և գանձվողի միջև համագործակցություն իրականացնելու համար:

Չնայած որ հարկը և վճարը իրենցից ներկայացնում են պարտադիր վճարներ, նրանց իրավունքները տարբեր են: Գանձման վճարը պետության կողմից իրականացվող, իրավաբանորեն սահմանված գործողություններից մեկն է՝ հօգուտ վճարողի, (ինչպես նաև վճարը միշտ փոխհատուցվում է): Միաժամանակ վճարման գինը հանդիսանում է տվյալ իրավաբանական գործողությունների ծախսերի քողարկող:

Հարկերի էությունը այն է, որ նրա ուղղակի, պետության օգտին բռնագրավման մեջ՝ իր բյուջեի ձևավորման համար: Վճարը պետությանը վճարն է օգտագործելու իրավունքի կամ գործունեություն իրականացնելու համար (օրինակ՝ լիցենզավորման վճար), ինչպես նաև բյուջե վճարման համարժեք ձև է: Հարկերը և վճարները գանձվում են հասարակական արտադրության գլխավոր անդամներից՝ տնտեսավարման սուբյեկտներ (կազմակերպություններ, մասնաճյուղեր), կապիտալի տիրապետողներ և աշխատող քաղաքացիներ: Հարկերի և վճարների հաշվին ձևավորվում է պետության ֆինանսական ռեսուրսները՝ կենտրոնացնելով պետության բյուջեի համախումբը (պետական, տեղական), ինչպես նաև պետության արտաբյուջետային ֆոնդերը:

Հարկը ֆինանսական հարաբերությունների մի ձև է պետության և տնտեսության օբյեկտների միջև:

Յուրաքանչյուր հարկատեսակի համար օրենքով սահմանվում է հարկատուի և հարկադրողի տարրերի հարաբերությունները: Հարկադրման տարրերն են համարվում.

- հարկադրման օբյեկտը,
- հարկային բազան,
- հարկային գույքը,
- հարկային շրջանը,
- հարկերի հաշվարկման կարգը,
- հարկային պահումները և արտոնությունները,

- հարկերի մուծումների կարգը և ժամանակը:

Հարկատուները կամ այն մարմինները, որոնք հարկադրում են իրականացնում, շինարարությունում ընդունվում են ցանկացած իրավաբանական կամ ֆիզիկական անձ, որոնք իրականացնում են ձեռնարկատիրական գործունեություն, ունեն գույք, կամ որոշ պարտականություններ, որոնց դեպքում կարող են կատարել համապատասխան հարկային վճարումներ:

Գոյություն ունեցող հարկի մի տարր է համարվում հարկադրման օբյեկտը: Յուրաքանչյուր առանձին հարկ պետք է ունենա իր հարկադրման օբյեկտը, որը չի համընկնում մյուս հարկերի օբյեկտներին:

Հարկման օբյեկտներ են հանդիսանում եկամուտները (շահույթը), աշխատավարձը, առանձին ապրանքների արժեքը, գործունեության առանձին ձևերը, արժեթղթերի հետ իրականացվող գործարքները, բնական պաշարների օգտագործումը, ֆիզիկական և իրավաբանական անձանց գույքը, գույքի փոխանցումն ու օրենսդրական ակտերով սահմանված այլ օբյեկտներ:

Շինարարական աշխատանքներ իրականացնող կազմակերպությունները համարվում են հարկադրման նպատակով կատարվող աշխատանքներ, որոնց արդյունքում նյութական արտահայտություն կարող են լինել կառուցողի իրացվելի պահանջների բավարարման համար (ներդողի՝ կազմակերպության կամ ֆիզիկական անձի):

Գործունեությունը ճանաչվում է ծառայություն, որի արդյունքում չկա նյութական արտահայտություն, իրականացնում են և օգտագործում են գործընթացը կատարելու գործողություններ:

Ապրանք է ճանաչվում ցանկացած գույք, որը նախատեսված է իրացնելու համար: Գույքի անվան տակ հասկացվում են քաղաքացիական իրավունքի օբյեկտները, որն համապատասխանում է քաղաքացիական օրենսգրքին:

Հարկային բազան իրենից ներկայացնում է արժեքային, ֆիզիկական կամ այլ հարկադրման օբյեկտի բնութագիր:

Հարկային կանխավճարը հարկային ավելացումների մեծությունն է հարկային բազայի միավորի չափման վրա:

Հարկային բազան և նրա որոշման չափը պետական և տեղական հարկերի որոշվում է պետական հարկային և ՏԻՄ-երի կողմից:

Պետական և տեղական հարկերի հարկային վարչարարությունն իրականացվում է համապատասխանաբար հարկային օրենսդրության կատարման նկատմամբ հսկողություն իրականացնող պետական լիազոր մարմնի և համայնքի հարկային ստորաբաժանումների կողմից: Պետական և տեղական հարկերի հարկային վարչարարությունը և առանձնահատկությունները սահմանվում են համապատասխան հարկերի մասին օրենքներով:

Հարկային ժամանակը հանդիսանում է օրացուցային տարին կամ առանձին հարկերի համար որոշված ժամանակահատվածը: Հարկային ժամանակը կարող է կազմված լինել մի քանի հաշվետվություններից, որի արդյունքով վճարվում է կանխավճարային գումար: Եթե կազմակերպությունը ստեղծվել է օրացուցային տարին սկսելուց հետո, ապա նրա համար առաջնային հարկային ժամանակաշրջանը հանդիսանում է պետական ռեգիստրում գրանցման պահից մինչև տվյալ տարվա վերջը:

Հարկերի հաշվարկման կարգը այն է, որ շինարարական կազմակերպությունը ինքնուրույն է հաշվարկում հարկերի գումարը, հարկային ժամանակահատվածում վճարվող գումարը՝ ելնելով հարկային բազայից, հարկային գումարից և հարկային արտոնություններից:

Հարկերի վճարման և գանձման ժամկետները սահմանված է հարկային օրենսդրությամբ: Հարկատուի գլխավոր պարտականությունն է ժամանակին վճարել օրենքով սահմանված հարկերը՝ հարկային օրենսդրությամբ նախատեսված դեպքերում սահմանված կարգով կատարելով նաև դրանց կանխավճարային մուծումները: Հարկի վճարման և գանձման ժամկետը կարող է փոփոխվել, բոլոր ենթակա հարկի գումարից կամ նրա չվճարված հարկի գումարի հատկացման տոկոսի մասից:

Հարկի գործառույթը նրա առկայությունն է գործողության մեջ, նրա միջոցների արտահայտումը: Գործառույթը ցույց է տալիս, թե ինչպես է իրականացվում տվյալ հասարակական նշանակության տնտեսագիտական կատեգորիան, որպես եկամտի արժեքի բաշխման և վերաբաշխման գործոն:

Առանձնացվում են հարկի հետևյալ հինգ գործառույթները՝

- ֆիսկալային,
- տնտեսական,
- կարգավորիչ,
- բաշխիչ (սոցիալական),
- վերահսկիչ:

Յուրաքանչյուր գործառույթ կարող է գործածվել ինքնուրույն և միաժամանակ մյուս գործառույթների հետ փոխադարձ կապի ու փոխկապվածության մեջ: Այս հանգամանքով է հիմնավորվում հարկի գործառույթների միասնական ու ամբողջական համակարգի գոյությունը:

Հարկի ֆիսկալային գործառույթը: Այն կապված է բյուջեի և տարբեր արտաբյուջետային ֆոնդերի եկամտային մասի ապահովման հետ: Այս գործառույթը բնորոշ է պետությունների ձևավորման և զարգացման բոլոր փուլերում:

Սակայն, եթե հասարակության վաղ ժամանակաշրջաններում հարկերը հանդիսանում են պետության եկամուտների ձևավորման աղբյուր, ապա հետագա զարգացման հետ մեկտեղ հարկերը, մնալով այդպիսին, վերածվում են պետական քաղաքականության գործիքի:

Ֆիսկալային գործառույթի անվանումն ուղղակիորեն առնչվում է պետական գանձարանի համալրման և դրամական միջոցների հավաքման հետ: Մյուս գործառույթների նկատմամբ այս գործառույթը համարվում է հիմնական և գերակայող, քանզի դրա միջոցով է բացահայտվում հարկի սոցիալական նշանակությունը, այն է՝ ֆինանսական միջոցների ձևավորում ու հավաքում պետության գանձարան՝ համապետական ծրագրերի կենսագործմանն ուղղելու նպատակով:

Ի սկզբանե այս գործառույթով է բնութագրվում ինչպես ցանկացած հարկատեսակ, այնպես էլ պետության հարկերի համակարգն ամբողջությամբ:

Բնականաբար, տվյալ պարագայում խոսքը պետության գոյության և սեփական գործառույթների իրագործման համար անհրաժեշտ նյութական պայմանների ստեղծման մասին է:

Հարկի ֆիսկալային գործառույթի միջոցով ստեղծվում են իրական օբյեկտիվ նախադրյալներ տնտեսական հարաբերություններում, այդ

թվում՝ տնտեսության կարգավորման ոլորտում, պետության անմիջական միջամտության ուղղությամբ: Հենց այս գործառույթն է նպաստում հարկի մյուս գործառույթների երևան գալուն և դրանց դրսևորմանը:

Նկատենք, որ հարկի ֆինանսական նպատակները էական են, բայց ոչ եզակի, քանի որ հասարակության մեջ դրանով են կարգավորվում տնտեսական հարաբերությունները:

Այսպիով, հարկերի ֆիսկալային գործառույթի էությունն այն է, որ պետության ձեռքում է կենտրոնացվում ամբողջ հարկային քաղաքականությունը: Համաձայն կենտրոնացված հարկային քաղաքականության՝ բոլոր տեսակի հարկային եկամուտները կենտրոնացվում են պետական բյուջեում, ձևավորվում են հարկային եկամուտները և կենտրոնացված ձևով օգտագործվում համապետական նշանակության խնդիրների լուծման համար: Հարկերի ֆիսկալային գործառույթի միջոցով ստեղծված ազգային եկամտի մի մասի պետականացումը օբյեկտիվ նախադրյալներ է ստեղծում տնտեսության պետական կարգավորման շրջանակների ընդլայնման համար: Դա նշանակում է, որ հարկերի ֆիսկալային գործառույթն զգալի չափով պայմանավորում է պետության տնտեսական գործառույթի նպատակային խնդիրների լուծումը, որը և հանգեցնում է հարկերի տնտեսական գործառույթի ձևավորմանը:

Հարկի տնտեսական գործառույթը: Հարկի տնտեսական գործառույթի էությունը կայանում է նրանում, որ հարկերի ձևով կազմավորված կենտրոնացված ֆոնդերը որոշիչ դեր են կատարում ընդլայնված վերարտադրության ապահովման գործում, խթանում դրա աճի տեմպերը, ներգործում կապիտալի կուտակման աճի, բնակչության գնողունակության մակարդակի վրա:

Ինչպես տեսնում ենք, հարկերի տնտեսական գործառույթի միջոցով իրականացվում է պետության տնտեսակազմակերպչական և սոցիալմշակույթային, պաշտպանության, կառավարման և իրավական այլ հարաբերությունների գծով նախատեսված խնդիրների լուծումը: Հարկերի այս գործառույթի սոցիալ-տնտեսական նշանակությունը նաև նրանումն է, որ պետության ճիշտ քաղաքականության իրականացման, այդ նպատակով հարկերի գանձման ժամանակի, հիմնավորված դրույքաչափերի սահման-

ման, հարկային օբյեկտների ու սուբյեկտների, ինչպես նաև հարկման աղբյուրների գծով օրենսդրական ու նորմատիվային ակտերի ընդունումը կարևոր ներգործություն են ունենում տնտեսության կայունացման վրա:

Հարկի կարգավորիչ գործառույթը: Հարկը տնտեսական բազիսի նկատմամբ ունի առանձնահատուկ դրսևորում, որն ուղղված է պետության հարկային քաղաքականության խնդիրների կենսագործմանը: Անգլիացի տնտեսագետ Ջոն Քեյնսի կարծիքով հարկերի գոյությունը պայմանավորված է բացառապես տնտեսական հարաբերությունների կարգավորման անհրաժեշտությամբ:

Հարկի կարգավորիչ գործառույթը՝ իբրև տնտեսական խթանումների համալիր միջոց, նպաստում է տնտեսության մեջ այս կամ այն գործընթացների զարգացմանը, ինչպես նաև՝ հարկային արտոնությունների, հարկային հաշվանցումների ու հարկային վարկի, ֆինանսական պատժամիջոցների ու հարկային դրույքաչափերի կիրառման միջոցով նպատակաուղղված ներգործություն է ունենում հասարակական վերարտադրության կառուցվածքի ու համամասնությունների վրա:

Ընդհանուր առմամբ տնտեսական այս կամ այն գործընթացների զարգացման նկատմամբ հիշյալ գործառույթը դրսևորվում է ինչպես խթանիչ, այնպես էլ հակախթանիչ ներգործությամբ:

Ժամանակակից հարկման պրակտիկայում արտոնությունների և դրանց հավասարեցված այլ կառուցակարգերի միջոցով խթանում են այնպիսի ոլորտների զարգացմանն ու ընդլայնմանը, ինչպիսիք են՝ փոքր ու միջին ձեռնարկատիրությունը, բարեգործությունը, բարձր լեռնային ու սահմանամերձ համայնքների տնտեսական գործընթացների կազմակերպումը և այլն:

Խթանիչ ներգործության միջոց կարող են համարվել նաև այն խրախուսանքները, որոնք սահմանվում են հարկային առանձին արտոնությունների տրամադրման միջոցով: Դրանք կարող են կիրառվել պետության կողմից ընդունված և առանձնահատուկ ծառայություններ մատուցած քաղաքացիների նկատմամբ:

Հարկային արտոնությունների տրամադրումը դիտվում է պետության սոցիալական քաղաքականության իրագործման համար հարմարեցված

հարկային կառուցակարգի միջոց, բայց ոչ հարկի՝ իբրև տնտեսական կատեգորիայի էության դրսևորման եղանակ:

Միևնույն ժամանակ, տնտեսական գործընթացների նկատմամբ հարկի կարգավորիչ գործառույթը կարող է ունենալ հակախթանիչ ներգործություն: Դա դրսևորվում է առանձին հարկատուների համար բարձր հարկային դրույքաչափերի կիրառումով, բարձր եկամտաբերություն ապահովող առանձին ճյուղերում,ակցիզային հարկով հարկման իրավանորմերի սահմանումով և այլն:

Հարկի կարգավորիչ գործառույթի կենսագործման կարևորագույն ոլորտներից է հասարակական վերարտադրությունը: Այսպես՝ հարկի դրույքաչափերի ու անուղղակի հարկերի համակարգի միջոցով մեծ շահութաբերություն կամ եկամտաբերություն ապահովող տնտեսավարող սուբյեկտներից ֆինանսական միջոցների մի մասն ուղղվում է վնասով աշխատող կամ ցածր շահույթ ունեցող արտադրության ճյուղերի և սակավապահովված քաղաքացիների պահանջմունքների բավարարմանը, հանքահումքային, նյութական այլ ծախսումների փոխհատուցմանը կամ միջոցների վերականգմանը և այլն: Հարկի կարգավորիչ գործառույթը կարգավորիչ ներգործություն է ունենում հասարակական վերարտադրության փուլերի՝ արտադրության, փոխանակման, բաշխման, սպառման նկատմամբ:

Հարկը չի համարվում որպես տնտեսական գործընթացների եզակի կարգավորիչը, բայց որ այդ գործընթացների վրա այն կարող է ունենալ և՛ անմիջական, և՛ անուղղակի ներգործություն է:

Հարկը ուղղակիորեն չի նպաստում հարկ վճարողի տնտեսական արդյունքի՝ եկամտի անմիջական ավելացմանը, սակայն արտադրության ծավալների մեծացումն ու արդյունավետության բարձրացումը հանգեցնում են հարկվող շրջանառության և եկամտի ծավալների ընդլայնմանը, հետևաբար և հարկի գումարի ավելացմանը:

Հարկի կարգավորիչ գործառույթն ունի վճռորոշ նշանակություն և բխում է տնտեսության մակրոտնտեսական կարգավորման քաղաքականության տարբեր ուղղությունների և, հատկապես, գիտատեխնիկական

նորամուծության ու սոցիալական ոլորտի զարգացման նպատակային խնդիրների իրականացման կարևորությունից:

Մի խոսքով՝ հարկի կարգավորիչ գործառույթը կոչված է խթանելու տնտեսական հարաբերակցություններին և արդյունավետ վերարտադրությանը: Ընդհանրապես, հարկի ֆիսկալային և կարգավորիչ գործառույթները մեկը մյուսին փոխլրացնող երևույթներ են, որոնք ապահովում են տվյալ տնտեսական կատեգորիայի սահմանման հարաբերական հավասարակշռությունը: Այդ գործառույթների փոխկապվածությամբ էլ գործնականում պայմանավորված է հարկման արդյունավետության ապահովումը:

Հարկի բաշխիչ (սոցիալական) գործառույթը: Հարկի ֆիսկալային գործառույթի հետ ավելի սերտ կապի մեջ է դրա բաշխիչ (սոցիալական) գործառույթը: Այն արտահայտում է հարկի տնտեսական էությունը՝ իբրև տնտեսական հարաբերությունների առանձնահատուկ լծակ:

Պետությունը հարկերի օգնությամբ նյութական արտադրության ոլորտի ֆինանսական միջոցները հավաքում է բյուջե և վերջինիս միջոցով դրանք վերաբաշխում ըստ սպառման խմբերի, ոլորտների կամ տարածքների: Այս գործընթացով է պայմանավորված հարկի բաշխիչ գործառույթի էության նկարագիրը: Եվ քանի որ հասարակական եկամտի բաշխումը նպատակաուղղված է սոցիալական առանձին խմբերի միջև անհավասարության հարթեցմանը կամ հավասարակշռության ապահովմանը, ուստի առանձին հեղինակների կողմից հարկի բաշխիչ գործառույթը գործածվում է նաև «սոցիալական գործառույթ» անվանումով:

Հարկի սոցիալական գործառույթը պետք է ապահովի բնակչության սոցիալապես անապահով խավի ապահովվածությունը, ինչպես նաև նպաստի բնակչության միջին ապահովվածություն ունեցող խավի ընդլայնմանն ու ապահովմանը:

Ժամանակակից շուկայական հարաբերությունների պայմաններում հարկի բաշխիչ գործառույթի սոցիալական բնույթը պահանջում է հարկային ծանրություն կրող ազգբնակչության միջոցների փոխանցում սոցիալապես այդ միջոցների կարիքն ունեցող քաղաքացիների օգտին: Այդ փոխանցումը իրականացվում է բացառապես հարկի օգնությամբ՝

նյութական արտադրության ոլորտից դեպի ոչ արտադրական ոլորտ: Դրանով «կենսապահովման կարևորագույն միջոցների բաշխումը դառնում է առավել հավասարաչափ ու համաչափ»: Եվ պատահական չէ, որ «սոցիալական» հռչակված պետություններում (Շվեդիա, Նորվեգիա, Շվեյցարիա) հարկերը դիտվում են իբրև բարձր եկամտաբերություն ունեցող ազգբնակչության կողմից ցածր եկամուտներ ունեցողներին՝ սոցիալական կայունության ապահովման դիմաց, հատկացված վճարներ:

Հարկի վերահսկիչ գործառույթը: Հարկի վերահսկիչ գործառույթի էությունը պայմանավորված է տնտեսական գործունեության տեսակների և ֆինանսական միջոցների հոսքերի նկատմամբ պետական վերահսկողության իրականացման անհրաժեշտությամբ: Այս գործառույթի գոյությամբ ու գործնական կիրառությամբ են կանխորոշում տնտեսական գործընթացների նկատմամբ հարկային հսկողության կազմակերպման ու անցկացման օբյեկտիվ պայմանները: Այս գործառույթի օգնությամբ գնահատվում է հարկային համակարգի արդյունավետությունը, իրականացվում ֆինանսական միջոցների շարժի նկատմամբ վերահսկողություն, բացահայտվում հարկաբյուջետային համակարգում պետության կոնկրետ քաղաքականության իրագործման անհրաժեշտությունը:

Նշենք, որ անհրաժեշտ վերահսկողության օբյեկտիվ նախադրյալներ կարող են ծագել այն ժամանակ, երբ առաջացել են ֆինանսական պաշարների տեղաբաշխման համար անհրաժեշտ պայմաններ, մասնավորապես՝ շահույթի կամ եկամտի ստացումը, ապրանքների առաքումը, ծառայությունների մատուցումը և այլն:

Շուկայական տնտեսությանը բնորոշ տնտեսական մրցակցության պայմաններում հարկը վերածվում է անկախ վերահսկողական լծակի: Այդ մրցակցությունից առաջին հերթին դուրս են մղվում նրանք, ովքեր պետության նկատմամբ ունեցած պարտավորությունները չեն կատարում, իսկ մյուս կողմից, պետության ֆինանսական միջոցների անբավարարությունն ազդանշում է անարդյունավետ հարկային հսկողության գոյությունը և հարկային համակարգում հայեցակարգային դրույթների վերանայման անհրաժեշտությունը:

Նման պարագայում հարկի վերահսկիչ գործառույթի միջոցով հնարավորություն է ընձեռվում համեմատելու հարկ վճարողի հարկավճարունակությունը պետության ֆինանսական պահանջմունքների հետ:

Հարկային համակարգի այս գործառույթի կարևորությունը երաշխավորվում է հարկային մարմինների կողմից, որոնք պարտավոր են հետևել հարկման տեղեկատվական նյութերի ժամանակին հավաքագրմանն, հարկային օրենսդրական դրույթների անթերի կատարմանը:

Այսպիսով՝ հարկի գործառույթները գտնվում են մեկը մյուսի հետ փոխկապակցվածության և փոխգործողության մեջ, և դրանց միասնությամբ է որոշվում հարկային հարաբերությունների, սոցիալական ու բյուջետային քաղաքականության արդյունավետությունը:

Այդ գործառույթները պետք է գտնվեն հարաբերական հավասարակշռվածության պայմաններում, քանզի դրանց փոխպայմանավորվածությամբ է ապահովում ու պահպանվում հարկային կարգապահությունն ու իրավակարգը: Յուրաքանչյուր խախտում կամ շեղում, ինչպես նաև այս կամ այն գործառույթի նկատմամբ մյուսի գերակայության ապահովում, հանգեցնում է հարկերի թերհավաքմանը, հարկման ոլորտում իրավախախտումների թվի կտրուկ մեծացմանը, տնտեսավարող սուբյեկտների տնտեսական ակտիվության անկմանը և «ստվերային» տնտեսության ու «ստվերային» դրամաշրջանառության ծավալների ընդլայնմանը:

Հարկադրման սկզբունքը ձևավորված է եղել դեռ 1776թ. Ա. Սմիթի «Բնության հետազոտումը և ազգային հարստության պատճառը» գրքում: Նրա սկզբունքներին են վերաբերվում համընդհանրությունը, արդարությունը, որոշակիությունը և հարմարավետությունը:

Ժամանակակից տեսությունը և հարկադրման փորձը զննում է սկզբունքներ, որոնց վրա ձևավորվում է պետության հարկային համակարգը երկու դիրքերից: Մի կողմից այդ սկզբունքները դրված են հիմնականում հարկերի տեսության մեջ, մյուս կողմից սկզբունքները կառուցված են հարկային կառուցակարգերում:

Հիմնական հարկերի տեսության դրությունը հիմնային են կամ բոլոր երկրների հարկային կառուցակարգում օգտագործվող սկզբունքները համընդհանուր են, որոնք կարող ենք խմբավորել հետևյալ ձևով՝

- ֆինանսական սկզբունք.
  1. չեզոքություն,
  2. բավականություն,
  3. ճկունություն,
- արտադրության սկզբունք.
  1. համընդհանուր,
  2. համաչափություն,
- հարկային կառավարման սկզբունք.
  1. որոշվելի,
  2. տնտեսող,
  3. վերահսկելի,
  4. հարմարավետ:

10.6.Հարկերի դասակարգումը

Հարկերի տնտեսագիտական դասակարգումը ծագում է դրանց կիրառման օբյեկտի՝ հարկման բազայի բնույթից և կիրառման մեթոդից՝ արտահայտելով արժեքային հարաբերություններում համարժեքների վերաբաշխման հարաբերությունները:

Հարկատեսակների սահմանման ու ներդրման, դրույքաչափերի կիրառման, հարկի օբյեկտի և այլ օբյեկտիվ տարբերակման հատկանիշների հիման վրա դրանց խմբավորումը կոչվում է հարկերի դասակարգում: Այն պայմանավորված է բազմաբովանդակ ու բազմազան հարկերի համակարգի գոյությամբ և հարկատեսակների բովանդակության ու էության վերաբերյալ ավելի հստակ պատկերացում կազմելու խնդրով:

Շուկայական տնտեսության սկզբունքով զարգացող բոլոր երկրներում՝ ըստ հարկերի գանձման եղանակի, ինչպես նաև հարկ վճարողների ու պետության փոխհարաբերության հատկանիշի հարկերը դասակարգվում են հետևյալ խմբերի՝

- ուղղակի,
- անուղղակի,
- սոցիալական ապահովագրության:

Հատկանշական է այն, որ ուղղակի հարկերը սահմանվում են հարկ վճարողի անմիջապես գույքի կամ եկամտի նկատմամբ: Այս առումով ուղղակի հարկման ժամանակ հարկային հարաբերությունները պետության և հարկ վճարողի միջև ձևավորվում են անմիջականորեն, իսկ հարկի գանձումն իրականացվում է նյութական բարիքների ձեռքբերման ու կուտակման կոնկրետ գործընթացներում: Օրինակ՝ գույքի իրացումից ստացված կամ աշխատանքի կատարման դիմաց եկամտի վճարման գործընթացում և այլն: Այս առումով արդարացի են համեմատության համար տրված այն գնահատականները, համաձայն որոնց՝ ուղղակի հարկերը համարվում են եկամտագույքային:

Այսինքն՝ կարող ենք ասել, որ ուղղակի հարկերը, այն հարկերն են, որոնք գանձվում են պետության կողմից և անմիջականորեն կապված են հարկ վճարողների եկամուտների կամ դրանց ունեցվածքի հետ:

Ուղղակի հարկերի հարկման օբյեկտ է համարվում ինչպես ֆիզիկական, այնպես էլ իրավաբանական անձանց աշխատանքային գործունեության դիմաց ստացվող եկամուտները, այդ թվում աշխատավարձը, շահույթը և այլն, ինչպես նաև հարկ վճարողների ունեցվածքի արժեքը, այդ թվում հողատարածությունը, գույքը, արժեթղթերը, արհեստագործական ունեցվածքը և այլն:

Ինչ վերաբերում է անուղղակի հարկերին, ապա դրանք դիտվում են իբրև յուրահատուկ հավելավճարներ: Այսպես, երբ պետությունը, այդ հարկերի գումարը ընդգրկելով արտադրված արտադրանքի (կատարված աշխատանքի, մատուցած ծառայության) գնի մեջ, գանձում է միմիայն դրանց շրջանառության և եկամտի շարժման գործընթացներում: Չնայած նրան, որ անուղղակի հարկի փաստացի վճարող հանդես է գալիս ապրանքի (աշխատանքի, ծառայության) իրացնողը կամ կատարողը, այնուամենայնիվ, վերջնական հարկ վճարող համարվում է այդ ապրանքի (աշխատանքի, ծառայության) սպառողը, որը ձեռք է բերում այն անուղղակի հարկով արտացոլված գնով: *Անուղղակի հարկերը վերականգվում են ավելացման ձևով շինարարամոնտաժային աշխատանքների կատարման գնով (ցուցաբերած ծառայությամբ, իրացված ապրանքով) կամ արհեստականորեն ավելացնում են ինքնարժեքը շինարարական ապրանքների կամ*

նվազեցնում են կազմակերպության ֆինանսական միջոցները: Իրականում նրանց հաշվում և վճարում են շինարարական կազմակերպությունների բյուջետային կամ արտաբյուջետային ֆոնդից, իսկ փաստացի վճարում են շինարարական արտադրանքի պահանջատուները: Կառուցապատողը վճարում է շինարարամոնտաժային աշխատանքների կատարման համար: Հարկման անուղղակիությունը պայմանավորված է հարկ վճարող-սպառողի և պետության միջև ոչ անմիջական կապի գոյությամբ:

Անուղղակի հարկերի խմբում ընդգրկված են.

- ավելացված արժեքի հարկ (ԱԱՀ),
- ակցիզային հարկ:

Հարկերի հաջորդ խումբը՝ սոցիալական ապահովագրության վճարը, գործող օրենսդրական և նորմատիվային ակտերի համաձայն, ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից վճարվում են սոցիալական ապահովագրության ֆոնդերին:

Հարկերի դասակարգման հաջորդ կարևոր և միաժամանակ տարածված տեսակներից է նորմատիվային դասակարգումը, երբ հաշվի են առնվում հարկային օրենսդրությամբ սահմանված հարկատեսակները:

Հարկերը ըստ նշանակության և օգտագործման նպատակի, բաժանվում են երկու խմբի՝

- ընդհանուր նշանակության հարկերն ամբողջությամբ ներառվում են երկրի պետական բյուջեում և օգտագործում են համապետական նշանակություն ունեցող միջոցառումների իրականացման նպատակով:
- Նպատակային նշանակության հարկերն ունեն հատուկ նշանակություն ու ներառվում են կառավարության ֆոնդերի կազմում ունեն նպատակային ուղղվածություն:

Ելնելով վարչական մարմինների գործունեության և ձևավորող հարկերի օգտագործման առանձնահատկություններից՝ հարկերը դասակարգվում են երկու խմբի՝

- պետական հարկերը գանձվում են կենտրոնական կառավարման մարմինների կողմից և հարկային օրենսդրության համաձայն՝ մուտք են լինում պետական բյուջե,

- տեղական հարկերը գանձվում են տեղական մարմինների կողմից և մուտք են արվում տեղական բյուջեներ, այդ թվում համայնքների և քաղաքների կտրվածքով ձևավորված բյուջեներ:

Ուստի կարող ենք ասել, որ պետական իշխանության մարմինների տրամադրության տակ հավաքվելու տեսանկյունից Հայաստանի Հանրապետությունում հարկերը դասակարգվում են նաև համապետականի և համայնքային նշանակության:

Հարկ է նկատել, որ պետության բյուջետային միասնական համակարգի բաղադրամաս կազմելու և պետական ու համայնքի բյուջեներին ամրագրվելու տեսակյունից հարկերը դասակարգվում են նաև ամրակցվածի և կարգավորողի:

Ամրակցված հարկի սահմանման հիմքում ընկած է այն մոտեցումը, համաձայն որի՝ տվյալ հարկատեսակն անմիջականորեն ամրագրվում է իբրև կոնկրետ բյուջեի հիմնական եկամտի աղբյուր և ամբողջությամբ մուտք է արվում տվյալ բյուջե:

Հայաստանի Հանրապետությունում ամրակցված հարկատեսակներն են համարվում ՀՀ պետական բյուջե ամբողջությամբ հավաքվող՝ ավելացված արժեքի հարկը, ակցիզային հարկը և այլն:

Ակնհայտ է, որ կարգավորող պետք է համարվեն այն հարկատեսակները, որոնք միաժամանակ և սահմանված համամասնությամբ մուտք են լինում և՛ պետական, և՛ համայնքի բյուջեներ: Հարկատեսակների այս խմբի վերաբաժանումը տարբեր բյուջեների միջև նպատակաուղղված բնույթ է կրում, քանզի այդ հանգամանքով է նախանշվում բյուջեների ֆինանսական համահարթեցումը, լուծվում են համայնքի բյուջեի պակասուրդի (դեֆիցիտի) ծածկման աղբյուրներին առնչվող հիմնախնդիրները և այլն:

Հարկման օբյեկտներ են հանդիսանում.

- շինարարամոնտաժային աշխատանքների իրացման արժեք, ապրանքի յուրացման, կատարված աշխատանքներ սեփական պահանջարկի համար: Սրանց թվին են պատկանում ԱԱՀ-ն, հարկ վաճառքի հետ (եթե ծառայությունները, աշխատանքները, ապրանքի իրացումները կատարվում են ֆիզիկական անձանց առձեռն դրամներով),

- հարկային շահույթ՝ նրանցով վճարվում են բյուջե շահույթից հարկերը և տուգանքները,
- շինարարական կազմակերպությունների գույքը՝ նրանով վճարվում են գույքահարկը,
- նյութական պաշարներ, որոնցով շինարարական կազմակերպությունը իշխում կամ օգտագործում է շինարարամոնտաժային աշխատանքների կատարման ժամանակ: Նրանցով հարկադրումային բազաները հաշվվում են պաշարային հարկերը (տրանսպորտային, հողի, ջրային, անտառային, էկոլոգիական),
- կազմակերպության աշխատողների աշխատանքի վճարման ֆոնդ: Նրանով հաշվարկում և վճարում են միասնական սոցիալական վճարները, ինչպես նաև ապահովագրական վճարներ են կատարվում չնախատեսված դեպքերի և հիվանդությունների համար,
- ընդունելություն, որը կապվում է շինարարական կազմակերպության այլ կազմակերպություններում ներդրումների մասնակցման՝ շուկայում արժեթղթերի ձեռք բերման հետ: Նրանցով են վճարվում հարկերը կապիտալ եկամուտների համար,
- շինարարական կազմակերպության աշխատակիցների եկամուտները, որոնցով վճարվում են ֆիզիկական անձանց եկամտային հարկը:

Կախված հարկատու սուբյեկտից առանձնացնում են հետևյալ ձևերը.

- հարկեր՝ գանձված ֆիզիկական անձանցից,
- հարկեր՝ գանձված իրավաբանական անձանցից,
- հարակից հարկեր, որոնք վճարվում են և ֆիզիկական, և իրավաբանական անձինք:

Ըստ բյուջեի մակարդակի, որոնցում թվարկվող հարկային վճարումները տարբերվում են.

- անշարժ հարկեր, որոնք անհետևողականորեն և ամբողջությամբ անցնում են բյուջետային կամ ներբյուջետային ֆոնդ,
- կարգավորվող հարկեր՝ տարաբնույթ հարկային վճարումները մտնում են միաժամանակ տարբեր բյուջեներ, այն չափով, որն ընդունվել է բյուջեի հաստատման ժամանակ:

Հերթականությամբ անցկացվող հարկային վճարումները բաժանվում են.

- համապարտադիր հարկեր՝ գանձվում են երկրի տարածքով,
- ընտրովի հարկեր՝ վերանայված են հարկային համակարգի հիման վրա, բայց նրանց անցկացնում և գանձում են՝ ելնելով ՏԻՄ-երի իրավասությունից:

Հարկերի վճարման ժամկետը բաժանվում է.

- շտապ հարկեր, որոնք վճարվում են ժամանակին որոշված նորմայի ակտով,
- պարբերական օրացուցային հարկեր, որոնք իրենց հերթին վերաբաժանվում են՝ տասնօրյայի, ամենամսյա, եռամսյային, վեցամսյայի, տարեկանի:

Այսպիսով՝ հարկերի դասակարգումը սոցիալական նշանակությամբ օժտված գործընթաց է, որը կոչված է ընկալելի ու հստակ պատկերացումներ կազմել հարկատեսակների էության ու բովանդակության բացահայտման կապակցությամբ:

10.7.Հարկումը շինարարական կազմակերպությունում

<u>Շրջանառության հարկ:</u> Շրջանառության հարկը օրենքով սահմանված կարգով, չափերով ու ժամկետներում առևտրային կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի և նոտարների կողմից իրականացվող գործունեության համար պետական բյուջե վճարվող՝ ավելացված արժեքի հարկին (ԱԱՀ) և(կամ) շահութահարկին փոխարինող հարկ է:

Շրջանառության հարկ վճարողներ են հանդիսանում.

- ՀՀ շրջանառության հարկ վճարողներ են հանդիսանում «Շրջանառության օրենքի» 2-րդ մասով սահմանված պայմանները բավարարող ՀՀ ռեզիդենտ համարվող առևտրային կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նոտարները, այդ թվում՝ նոր ստեղծված (պետական գրանցում ստացած կամ հաշվառված) հարկ վճարողները:
- Շրջանառության հարկ վճարողներ են հանդիսանում այն անձինք, որոնց կողմից նախորդ օրացուցային տարվա ընթացքում գործու-

նեության բոլոր տեսակների մասով մատակարարված ապրանքների և մատուցված ծառայությունների (կատարված աշխատանքների) իրացումից հասույթը՝ առանց ԱԱՀ-ի, չի գերազանցել 58.35 մլն. դրամը:

Շրջանառության հարկ վճարողներ չեն կարող համարվել՝

- «Հաստատագրված վճաների մասին» և(կամ) «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքների համաձայն հաստատագրված վճար և (կամ) արտոնագրային վճար վճարող անձինք՝ գործունեության այդ տեսակների մասով:
- Ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքներ արտադրողները և (կամ) ներմուծողները:
- Բանկերը, վարկային կազմակերպությունները, ապահովագրական ընկերությունները, ներդրումային ընկերությունները, արժեթղթերի շուկայի մասնագիտացված մասնակիցները, գրավատները, արտարժույթի առք ու վաճառքի, արտարժույթի դիլերային-բրոքերային առք ու վաճառքի գործունեություն իրականացնողները, ներդրումային ֆոնդերը, ֆոնդերի կառավարիչները, վճարահաշվարկային կազմակերպությունները, խաղատների, շահումով խաղերի կամ վիճակախաղերի կազմակերպման գործունեություն իրականացնողները, գյուղտնտեսական արտադրանք արտադրողները, աուդիտորական ընկերությունները, հաշվապահական հաշվառման ծառայություններ մատուցող կազմակերպությունները:
- Անհատ ձեռնարկատերերը, առևտրային կազմակերպությունները, նոտարները, եթե.

✓ Առևտրային կազմակերպության կանոնադրական կապիտալի 20% և ավելի փայաբաժինը պատկանում է ՀՀ այլ ռեզիդենտ հանդիսացող առևտրային կազմակերպությանը կամ անհատ ձեռնարկատեր կամ նոտար հանդիսացող ֆիզիկական անձին:

✓ Առևտրային կազմակերպության կանոնադրական կապիտալի 20% և ավելի փայաբաժինը պատկանում է այն անձին, որին միաժամանակ պատկանում է ՀՀ այլ ռեզիդենտ հանդիսացող առևտրային կազմակերպության կանոնադրական կապիտալի 20% և ավելի փայաբաժինը:

✓ Առևտրային կազմակերպությանը, անհատ ձեռնարկատիրոջը կամ նոտարին պատկանում է ՀՀ այլ ռեզիդենտ հանդիսացող առևտրային կազմակերպության կանոնադրական կապիտալի 20% և ավելի փայաբաժինը:

Հարկվող օբյեկտը.

- Շրջանառության հարկով հարկվող օբյեկտ է համարվում հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում շրջանառության հարկ վճարողի կողմից մատակարարված ապրանքների և մատուցված ծառայությունների (կատարած աշխատանքների) իրացման շրջանառությունը (իրացումից հասույթը), ինչպես նաև ստացվող այլ եկամուտները:
- Սույն օրենքի իմաստով եկամուտները ճանաչվում են «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքին համապատասխան:

Շրջանառության հարկի դյուրքաչափերը և հաշվարկումը.

- Շրջանառության հարկ վճարողները յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար շրջանառության հարկը հաշվարկում են հարկվող օբյեկտի նկատմամբ հետևյալ դյուրքաչափերով (տե՛ս Աղյուսակ 10.7).

Աղյուսակ 10.7

Եկամուտների տեսակ	Դյուրքաչափը
Առևտրական(առք ու վաճաքի) գործունեությունից եկամուտներ	1.5% կամ 5%
Արտադրական գործունեությունից եկամուտներ	3.5%
Վարձակալությունից եկամուտներ, տոկոսներ, ռոյալթիներ, ակտիվների (այդ թվում՝ անշարժ գույքի) օտարումից եկամուտներ	10%
Նոտարական գործունեությունից եկամուտներ	20%
Այլ գործունեության (եկամտունների) տեսակներից եկամուտներ	5%

- Շրջանառության հարկի հաշվետու ժամանալաշրջան է համարվում եռամսյակը:
- Հարկ վճարողները շրջանառության հարկի գումարների հաշվարկումը կատարում են ինքնուրույն, յուրաքանչյուր եռամսյակի արդյունքներով՝ «Շրջանառության հարկի մասին ՀՀ օրենքով» սահմանված դրույքաչափերով:

Եկամտային հարկ: Եկամտային հարկը հարկ վճարողների կողմից (օրենքով սահմանված դեպքերում հարկային գործակալի՝ կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ կամ նոտարի միջոցով) «Եկամտային հարկի մասին ՀՀ օրենքով» սահմանված կարգով, չափով և ժամկետներում ՀՀ պետական բյուջե վճարվող ուղղակի հարկ է:

Հայաստանի Հանրապետությունում եկամտային հարկ վճարողներ են համարվում ՀՀ ռեզիդենտ և ՀՀ ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձինք, այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերը և նոտարները:

Եկամտային հարկով հարկվող օբյեկտները.

- Ռեզիդենտի համար հարկվող օբյեկտ է համարվում ՀՀ տարածքում և նրա սահմաններից դուրս ստացման ենթակա հարկվող օբյեկտը:
- Ոչ ռեզիդենտի համար հարկվող օբյեկտ է համարվում հայաստանյան աղբյուրներից ստացման ենթակա հարկվող եկամուտը:
- Հարկվող եկամուտը հաշվետու ժամանակաշրջանում հարկ վճարողի համախառն եկամտի և սույն օրենքով սահմանված նվազեցվող եկամուտների ու ծախսերի դրական տարբերությունն է, եթե սույն օրենքով հարկվող օբյեկտի որոշման առումով այլ բան սահմանված չէ:

Եկամտային հարկի դյուրքաչափերը.

Աղյուսակ 10.8

Հարկման բազայի Ամսական մեծությունը	Եկամտային հարկի դրույքաչափը
Մինչև 150 000դրամ	Հարկվող եկամտի 23%
150 000-2 000 000 դրամ	34 500 դրամին գումարած 150000 դրամը գերազանցող գումարի 28%

2 000 000 դրամից ավելի	552 500 դրամին գումարած 2000000 դրամը գերազանցող գումարի 36%

Ավելացված արժեքի հարկ (ԱԱՀ): ԱԱՀ-ն անուղղակի հարկ է, որը վճարվում է պետական բյուջե՝ ապրանքների ներմուծման, ՀՀ տարածքում դրանց արտադրության ու շրջանառության, ինչպես նաև ծառայությունների մատուցման բոլոր փուլերում: ԱԱՀ վճարողներ են համարվում ինքնուրույն տնտեսական (ձեռնարկատիրական) գործունեություն վարող և ԱԱՀ-ով հարկվող գործարքներ իրականացնող ֆիզիկական և իրավաբանական անձինք, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող կազմակերպությունները:

Անձինք, որոնց կողմից նախորդ օրացուցային տարում իրականացված սահմանված գործարքների հարկվող շրջանառությունը չի գերազանցել 58.35 միլիոն դրամը, տվյալ օրացուցային տարում ԱԱՀ վճարող են համարվում այդ գործարքների հարկվող շրջանառությունը 58.35 միլիոն դրամը գերազանցելու պահից՝ 58.35 միլիոն դրամը (ԱԱՀ-ի շեմը) գերազանցող մասի համար:

ԱԱՀ-ով հարկվող օբյեկտ է համարվում ՀՀ տարածքում ԱԱՀ վճարողների կողմից իրականացվող սահմանված բոլոր գործարքների (գործառնությունների)ամբողջ արժեքը (շրջանառությունը), եթե օրենքով այլ բան չի նախատեսված:

ԱԱՀ-ով հարկվող գործարքներ (գործառնություններ) են համարվում՝

- Ապրանքների մատակարարումը՝ գործարք, որն իրականացվում է ապրանքների (այդ թվում՝ արտադրանքի և անշարժ գույքի) սեփականության իրավունքը՝ հատուցման դիմաց այլ անձի փոխանցելու միջոցով:
- Ծառայությունների մատուցումը՝ ապրանքների մատակարարում չհամարվող գործարք, որն իրականացվում է որևէ ձևով կատարվող հատուցման դիմաց, ներառյալ ոչ նյութական ակտիվների իրացումը: Ծառայությունների մատուցում է համարվում նաև ապրանքների և անշարժ գույքի վարձակալությունը:
- Անհատույց (մասնակի հատուցմամբ) սպառումը՝ ԱԱՀ վճարող անձանց կողմից ապրանքների անհատույց հատկացում կամ ծառա-

յությունների անհատույց մատուցում տվյալ անձանց կամ այլ անձանց կամ նրանց ապրանքների մատակարարում և ծառայությունների մատուցում՝ տվյալ գործարքների համար սովորաբար կիրառվող գներից էականորեն ցածր գներով:

- «Ներմուծում ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով ապրանքների ներմուծումը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

ԱԱՀ-ի դրույքաչափը սահմանվում է 20%՝ ապրանքների ու ծառայությունների հարկվող շրջանառության նկատմամբ:

Ապրանքների ու ծառայությունների լրիվ արժեքով հատուցման գումարի մեջ (ներառյալ 20% դրույքաչափը) ԱԱՀ-ի գումարը որոշվում է 16.67% հաշվարկային դրույքաչափով:

ԱԱՀ առանձին վճարողների, նրանց խմբերի, գործարքների և գործառնությունների առանձին տեսակների համար օրենքով կարող են սահմանվել ԱԱՀ-ը փոխարինող հաստատագրված վճարումներ:

<u>Շահութահարկ:</u> Ուղղակի հարկերի համակարգում առանձնահատուկ նշանակություն ունի շահութահարկը, որը մի կողմից հանգեցնում է հարկային մուտքերի աճին, մյուս կողմից պայմաններ ստեղծում արտադրական ներուժի ավելացման համար:

Շահութահարկը հարկ վճարողների կողմից օրենքով սահմանված կարգով և չափով պետական բյուջե վճարվող ուղղակի հարկ է: Հարկման օբյեկտ է հանդիսանում կազմակերպության համախառն շահույթը:

Հայաստանի Հանրապետությունում շահութահարկ են վճարում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտները և ոչ ռեզիդենտները, բացառությամբ Հայաստանի Հանրապետության պետական կառավարչական հիմնարկների, Հայաստանի Հանրապետության ՏԻՄ-երի, պետական ոչ առևտրային կազմակերպությունների՝ բյուջետային հատկացումների և ամբողջությամբ բյուջե փոխանցվող եկամուտների մասով և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի:

Ռեզիդենտ են համարվում Հայաստանի Հանրապետությունում ստեղծված (պետական գրանցում ստացած, հաշվառված, կանոնները գրանցած) կազմակերպությունները և պայմանագրային ներդրումային ֆոնդերը,

բացառությամբ կենսաթոշակային ֆոնդերի և ստորև նշված կազմակերպությունների առանձնացված ստորաբաժանումների:

Ոչ ռեզիդենտ են համարվում օտարերկրյա պետություններում ստեղծված կազմակերպությունները, ինչպես նաև միջազգային կազմակերպությունները և դրանց կողմից Հայաստանի Հանրապետությունից դուրս ստեղծված կազմակերպությունները:

Ռեզիդենտների համար հարկվող օբյեկտ է համարվում Հայաստանի Հանրապետության տարածքում և նրա սահմաններից դուրս ստացվող հարկվող շահույթը, իսկ ոչ ռեզիդենտների համար հարկվող օբյեկտ է համարվում հայաստանյան աղբյուրներից ստացվող հարկվող շահույթը:

Հարկվող շահույթը հարկատուի համախառն եկամտի և օրենքով սահմանված նվազեցումների դրական տարբերությունն է, իսկ ներդրումային ֆոնդերի համար՝ նրա զուտ ակտիվները: Համախառն եկամուտը հաշվետու տարում հարկատուի բոլոր եկամուտների հանրագումարն է՝ անկախ դրանց ստացման աղբյուրներից: Ըստ օրենքի՝

- Եկամուտ է համարվում հաշվետու տարվա ընթացքում ակտիվների ներհոսքը, աճը կամ պարտավորությունների նվազումը, որոնք հանգեցնում են հարկատուի սեփական կապիտալի ավելացմանը,
- Սեփական կապիտալ է համարվում ակտիվների և պարտավորությունների տարբերությունը,
- Ակտիվ է համարվում հարկատուին սեփականության իրավունքով պատկանող ցանկացած միջոցը՝ գույքը (նյութական ակտիվները), գույքային իրավունքները և գույքային իրավունքների հետ կապված անձնական ոչ գույքային իրավունքները (ոչ նյութական ակտիվները), արտարժույթը, արժեթղթերը, դեբիտորական պարտքը և այլ գույքը,
- Պարտավորություն է համարվում հարկատուի առկա պարտքը (վարկ, կրեդիտորական պարտք, հարկային պարտավորություն և այլն):

Հարկվող շահույթն որոշելիս համախառն եկամտից թույլատրվում է կատարել նախատեսված նվազեցումները (ծախսեր, կորուստներ և այլ նվազեցումներ):

Նվազեցումների միևնույն գումարը համախառն եկամտից հանվում է միայն մեկ անգամ: Հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է դրա ստացման հետ կապված անհրաժեշտ և փաստաթղթերով հիմնավորված ծախսերի չափով: Ըստ օրենքի՝

- Ծախս է համարվում հաշվետու տարվա ընթացքում ակտիվների արտահոսքը, նվազումը կամ պարտավորությունների աճը, որոնք հանգեցնում են հարկատուի սեփական կապիտալի նվազեցման:
- Անհրաժեշտ են համարվում անմիջականորեն և բացառապես ապրանքների արտադրության, ծառայությունների մատուցման, շուկայում առաջխաղացման և ապրանքների (ծառայությունների) իրացման, շինարարության (արտադրության) նախապատրաստման, յուրացման և սառեցման, գույքի պահպանման, կադրերի պատրաստման համար հարկատուի ծախսերը, ինչպես նաև եկամտի ստացման հետ կապված և դրա համար անհրաժեշտ այլ ծախսերը:

Ծախսերի թվին են դասվում, մասնավորապես.

- նյութական ծախսերը,
- աշխատանքի վարձատրության և դրան հավասարեցված այլ վճարումները,
- պարտադիր սոցիալական ապահովության վճարները,
- մաշվածքամարման մասհանումները,
- ապահովագրական վճարները,
- չփոխհատուցվող (չհաշվանցվող) հարկերը, տուրքերը և այլ պարտադիր վճարները, բնօգտագործման վճարները,
- վարկերի և այլ փոխառությունների տոկոսները, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի,
- երաշխիքների, երաշխավորությունների, ակրեդիտիվների և բանկային, ապահովագրական ու վարկային կազմակերպությունների այլ ծառայությունների համար վճարները,
- գովազդային ծախսերը,
- ներկայացուցչական ծախսերը, գործուղման ծախսերը, դատական ծախսերը, պատճառված վնասի հատուցումը, աշխատողների

հավաքման ծախսերը, հաշվետու տարում հայտնաբերված՝ դրան անմիջապես նախորդող երեք տարիներում պակաս ցույց տրված ծախսերը, հիմնական միջոցների վրա կատարված ընթացիկ ծախսերը:

Ապրանքանյութական պաշարների, աշխատանքների, ծառայությունների, հիմնական միջոցների և այլ ակտիվների ձեռքբերման փաստաթղթերի հիմնավորման նկատմամբ ներկայացվող պահանջները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Շահութահարկի գումարը հարկվող շահույթի նկատմամբ հաշվարկվում է 20% դրույքաչափով, իսկ ներդրումային ֆոնդերի համար՝ զուտ ակտիվների նկատմամբ 0.01% դրույքաչափով:

Առանձին վճարողների, նրանց խմբերի, գործունեության տեսակների համար օրենքով կարող են սահմանվել շահութահարկին փոխարինող հաստատագրված վճարներ:

<u>Գույքահարկ:</u> Շուկայական տնտեսության անցումային փուլում ուղղակի հարկերի կառուցվածքում իր առանձնահատուկ նշանակությունն ունի գույքահարկը: Գույքահարկը՝ սեփականության իրավունքով գույքահարկ վճարող անձանց պատկանող հարկվող օբյեկտ համարվող գույքի համար սահմանված կարգով և չափով համապատասխան բյուջեներ վճարվող ուղղակի հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից:

Գույքահարկ վճարող են համարվում ՀՀ-ում և օտարերկրյա պետություններում ստեղծված կազմակերպությունները, միջազգային կազմակերպությունները և դրանց կողմից ՀՀ-ից դուրս ստեղծված կազմակերպությունները, որոնց ՀՀ տարածքում պատկանում է հարկվող օբյեկտ համարվող գույքը, բացառությամբ ՀՀ պետական մարմինների, ՀՀ կենտրոնական բանկի, ՀՀ ՏԻՄ-երի և հիմնարկների:

Գույքահարկով հարկվող օբյեկտ են համարվում.

1. Շենքերը և շինությունները՝

- բնակելի նշանակության շինությունները, այդ թվում՝

➢ անհատական բնակելի տունը՝ հողամասի վրա կառուցված, իր տնտեսական շինություններով կառույցը,

- բնակարանը՝ բազմաբնակարան բնակելի շենքում ֆիզիկական անձանց բնակության համար նախատեսված, իրավունքների պետական գրանցումն իրականացնող լիազոր մարմնում առանձին ծածկագրով գրանցված և համարակալված տարածքը,
- այգետնակը (ամառանոցը)՝ այգեգործական զանգվածում հողամասի վրա կառուցված ամառանոցային շինությունը,
- բազմաբնակարան բնակելի շենքը՝ մեկից ավելի բնակարաններ, ոչ բնակելի և ընդհանուր օգտագործման տարածքներ ունեցող շինությունը,
- բազմաբնակարան շենքի ոչ բնակելի տարածքը՝ բազմաբնակարան շենքում բնակարան, հասարակական, արտադրական նշանակության շինություն չհամարվող, իրավունքների պետական գրանցումն իրականացնող լիազորված մարմնում առանձին ծածկագրով գրանցված և համարակալված տարածքը,
- ավտոտնակը՝ տրանսպորտային միջոցների կայանման համար հողամասի վրա կառուցված առանձին շինությունը,
- հասարակական նշանակության շինությունը՝ բնակչության սոցիալական սպասարկման, ինչպես նաև վարչական ու հասարակական կազմակերպությունների տեղակայման համար նախատեսված շինությունը,
- արտադրական նշանակության շինությունը՝ արդյունաբերական ու գյուղատնտեսական արտադրությունների տեղակայման և նրանց մեջ տեխնոլոգիական սարքավորումների շահագործման համար անհրաժեշտ պայմաններն ապահովող շինությունը,
- ՀՀ կառավարության սահմանված կարգով բնութագրվող անավարտ (կիսակառույց) շինությունները,
- ՀՀ օրենսդրության համաձայն նոր կառուցված, ձեռք բերված և անշարժ գույքի կադաստր վարող լիազոր մարմնի կողմից հաշվառված ու գնահատված՝ վերը նշված այն շինությունները, որոնք դեռևս չեն ստացել իրավունքների պետական գրանցում, ինչպես նաև սեփականության կամ հողօգտագործման իրավունք ունեցող անձանց կողմից այդ հողամասի վրա ինքնակամ կառուցված շենքերը և շինությունները, այդ թվում՝ բազմաբնակարան շենքերում կամ շենքերին կից ինքնակամ կառույցները:

2. փոխադրամիջոցները, այդ թվում՝

- ավտոմոբիլային տրանսպորտի միջոցը,
- ջրային փոխադրամիջոցը, ձյունագնացը, մոտոամենագնացը (քվադրոցիկլը),
- մոտոցիկլետը:

Գույքահարկով հարկման բազա է համարվում հարկվող օբյեկտի արժեքային կամ ֆիզիկական մեծությունը կամ այն բնութագրիչը, որի հիման վրա սահմանված դրույքաչափերով և կարգով հաշվարկվում է գույքահարկի գումարը: Ընդ որում՝ շինությունների հարկման բազա է համարվում սահմանված կարգով գնահատված կադաստրային արժեքը՝ արտահայտված ՀՀ դրամով:

Փոխադրամիջոցների հարկման բազա է համարվում հարկվող օբյեկտ համարվող փոխադրամիջոցի քաշող շարժիչի հզորությունը (ձիաուժ կամ կիլովատ): Փոխադրամիջոցի վրա մեկից ավելի քաշող շարժիչների առկայության դեպքում գույքահարկով հարկման բազա է համարվում բոլոր քաշող շարժիչների գումարային հզորությունը:

Գույքահարկի հաշվարկման համար կիրառվող դրույքաչափերն ունեն կոնկրետացված ուղղվածություն յուրաքանչյուր հարկվող օբյեկտի համար:

Այսպես՝ հասարակական և արտադրական նշանակության շինությունների համար սահմանվում է հարկի կայուն դրույքաչափ՝ հարկման բազայի 0.3% չափով, իսկ ավտոտնակների համար՝ հարկման բազայի 0.2% չափով:

Շինությունների համար գույքահարկը հաշվարկվում է տարեկան դրույքաչափերով (տե՛ս Աղյուսակ 10.9).

Աղյուսակ 10.9

Հարկման բազան	Հարկի դրույքաչափը
Մինչև 3մլն դրամը ներառյալ	Հարկման բազայի 0%
3մլն դրամից մինչև 10մլն դրամը ներառյալ	100 դրամ՝ գումարած հարկման բազայի 3մլն դրամը գերազանցող գումարի 0.1%
10մլն դրամից մինչև 20մլն դրամը ներառյալ	7.100 դրամ՝ գումարած հարկման բազայի 10մլն դրամը գերազանցող մասի 0.2%
20մլն դրամից մինչև 30մլն դրամը ներառյալ	27.100 դրամ՝ գումարած հարկման բազայի 20մլն դրամը գեզանցող մասի 0.4%

30մլն դրամին մինչև 40մլն դրամը ներառյալ	67.100 դրամ՝ գումարած հարկման բազայի 30մլն դրամը գերազանցող մասի 0.6%
40մլն դրամից ավելի	127.100 դրամ՝ գումարած հարկման բազայի 40մլն դրամը գերազանցող մասի 1.0%

Ավտոմոբիլային տրանսպորտի միջոցների համար գույքահարկը հաշվարկվում է հետևյալ տարեկան դրույքաչափերով՝

1. մինչև 10 նստատեղ ունեցող մարդատար ավտոմեքենաների համար, եթե հարկման բազան՝

- 1-ից 120 ձիաուժ է, ապա յուրաքանչյուր ձիաուժի դիմաց՝ 200 դրամ,
- 121-ից 250 ձիաուժ է, ապա յուրաքանչյուր ձիաուժի դիմաց՝ 300 դրամ, ինչպես նաև 150 ձիաուժը գերազանցող յուրաքանչյուր մեկ ձիաուժի համար լրացուցիչ՝ 1000 դրամ,
- 251 և ավելի ձիաուժ է, ապա յուրաքանչյուր ձիաուժի դիմաց՝ 500 դրամ, ինչպես նաև 150 ձիաուժը գերազանցող յուրաքանչյուր մեկ ձիաուժի համար լրացուցիչ՝ 1000 դրամ.

2. 10 և ավելի նստատեղ ունեցող մարդատար ավտոմեքենաների և բեռնատար ավտոմեքենաների համար, եթե հարկման բազան՝

- 1-ից 200 ձիաուժ է, ապա յուրաքանչյուր ձիաուժի դիմաց՝ 100 դրամ,
- 201 և ավելի ձիաուժ է, ապա յուրաքանչյուր ձիաուժի դիմաց՝ 200 դրամ:

Մինչև երեք տարվա վաղեմության ավտոմոբիլային տրանսպորտային միջոցների համար գույքահարկը հաշվարկվում է 100 տոկոսով: Երեք տարուց ավելի վաղեմության ավտոմոբիլային տրանսպորտային միջոցների համար գույքահարկի գումարը երրորդ տարվան հաջորդող յուրաքանչյուր տարվա համար պակասեցվում է հարկի գումարի 10 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան հարկի գումարի 50 տոկոսը: Ընդ որում՝ վաղեմության ժամկետը որոշելու համար հիմք է ընդունվում ավտոմոբիլային տրանսպորտի միջոցի թողարկման տարեթիվը:

Բեռնատար ավտոմոբիլային տրանսպորտի միջոցների վաղեմության ժամկետի 20-րդ տարին լրանալուց հետո տվյալ ավտոմոբիլային տրանսպորտի միջոցի համար գույքահարկ չի հաշվարկվում և չի վճարվում:

Փոխադրամիջոցների հարկման բազան կիլովատերով արտահայտված լինելու դեպքում գույքահարկի տարեկան գումարը որոշվում է՝ համապատասխան դրույքաչափի նկատմամբ կիրառելով 1.36 գործակից:

10.8.Աուդիտը շինարարությունում

Աուդիտորական գործունեությունը (աուդիտը) իրենից ներկայացնում է աուդիտորական ընկերությունների ձեռնարկատիրական գործունեություն՝ կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի հաշվապահական հաշվառումից ու ֆինանսական հաշվետվություններից անկախ ստուգման իրականացմամբ:

Աուդիտորական գործունեության նպատակն է հանդիսանում շինարարական կազմակերպության ֆինանանսական հաշվետվության արժանահավատության հաստատումը և ՀՀ օրենսդրության ու իրենց կողմից կատարված ֆինանանսատնտեսական գործունեության համապատասխանության ստուգումը:

Աուդիտորների խնդիրները իրենց ուղղություններով բազմազան են: Դրանցից առաջնահերթը աուդիտորական ստուգումների բարձրորակ կազմակերպումն է:

Աուդիտորական ստուգումների ժամանակ աուդիտորը պետք է որոշի ստուգվող կազմակերպության ֆինանսական հաշվետվության ցուցանիշների ստույգությունը, նրա կազմման ճշտությունը, հաստատի կամ չհաստատի նրանում ներառված տվյալների իրական լինելը:

Աուդիտը չի փոխում ֆինանսական հաշվետվության ստույգության պետական հսկողությունը, որն իրականացվում է պետական մարմինների կողմից օրենսդրությանը համապատասխան: Ղեկավարներից ոմանք գտնում են, որ աուդիտը տնտեսական գործունեության նույն ռևիզիան է: Իսկապես, ըստ մեթոդների և ընդունման աուդիտորային ստուգման անցկացումը և ռևիզիան ունեն նման հատկանիշներ, դրա հետ մեկտեղ գոյություն ունեն շատ տարբերություններ նրանց վարման մեջ: Աուդիտը և ռեվիզիան տարատեսակությունն է ֆինանանսական հսկողության (ընդհանուր մասը), իսկ տարբերությունը հետևյալն է. *Նպատակով.*

- Աուդիտը՝ ստույգ հաշվետվության մասին կարծիքների արտահայտում:
- Ռևիզիա՝ անբավարարության դրսևորում՝ նրանց հեռացման և մեղավորներին պատժելու նպատակով:

Բնութագրով.

- Աուդիտը՝ ձեռնարկատիրական գործունեություն:
- Ռևիզիա՝ իրագործվող գործունեություն, կարգադրությունների կատարում:

Փոխադարձ հարաբերությունների տեսքով.

- Աուդիտը՝ ինքնակամ համագործակցումը հաճախորդի հետ՝ պայմանագրի հիման վրա:
- Ռևիզիա՝ բարձրակարգ կամ պետական մարմինների կարգադրությունների ստիպողաբար իրականացում:

Վարչական կապերով.

- Աուդիտը՝ հորիզոնական կապերը, իրավահավասար հարաբերությամբ հաճախորդի հետ, նրանց ուղղված հաշվետվություն:
- Ռևիզիա՝ ուղղահայաց կապերն է, նշանակումները, կատարումների մասին հաշվետվության ներկայացնումն է բարձրակարգ օղակներին:

Գործնական խնդիրներով.

- Աուդիտը օգնության ցուցաբերում է հաճախորդի ֆինանսական իրավիճակի բարելավման համար, պասիվների ներգրավումն է (ներդրողներ, վարկատուներ), օգնություն և խորհրդատվություն հաճախորդին:
- Ռևիզիա՝ ակտիվների պահպանումը, չարաշահումների խափանում և պրոֆիլակտիկա:

Վճարումով.

- Աուդիտ – վճարել հաճախորդին:
- Ռևիզիա – վճարել բարձրակարգ օղակներին կամ պետական մարմիններին:

Աուդիտորական գործունեության պրակտիկայում, ինչպես և նորմատիվ փաստաթղթերում, տարբերում են ներքին և արտաքին աուդիտներ:

Ներքին աուդիտը հսկողության համակարգն է հաշվապահական հաշվառման վարման համար հաստատված կարգի պահպանման և ներքին հսկողության համակարգի ապահովության նկատմամբ, որը կազմակերպված է կազմակերպությունում նրա սեփականատերերի օգտին և կարգավորված է նրա ներքին փաստաթղթերով:

Ներքին աուդիտի գլխավոր խնդիրն է հանդիսանում շինարարական կազմակերպության տնտեսական գործունեության բոլոր տեսակների արդյունավետության վերահսկումը, ինչպես նաև կազմակերպության և նրա սեփականատերերի օրինական գույքային իրավունքների պաշտպանությունը:

Ներքին աուդիտի գործառույթները կարող են կատարել կազմակերպության հաստիքային աշխատողները, վերստուգիչ հանձնաժողովի անդամները, ինչպես նաև անկախ աուդիտորներ կամ աուդիտորական կազմակերպություններ: Ներքին աուդիտը իրականացնելու համար լիցենզիա չի պահանջվում:

Արտաքին աուդիտն անցկացնում է անկախ աուդիտորական կազմակերպությունը:

Տարբերում են նաև ֆինանսական հաշվետվության աուդիտ և հատուկ աուդիտ: Ֆինանսական հաշվետվության աուդիտը իրենից ներկայացնում է տնտեսավարող սուբյեկտի հաշվետվության ստուգումը՝ դրա արժանահավատությունը ստուգելու նպատակով: Հատուկ աուդիտը տնտեսավարող սուբյեկտների գործունեությունում հստակ հարցերի ստուգումն է՝ սահմանված նորմերի և կանոնների պահպանումով: Ելնելով աուդիտի նպատակներից՝ այն կարող է սահմանվել որպես հարկային, վարչական, գործունեության:

Բացի աուդիտորական կազմակերպությունների կողմից կատարված ստուգումներից կարող են ցուցաբերել այլ զուգընթաց աուդիտորական ծառայություններ, որոնք մոտավոր թվարկումը նախատեսված է համապատասխանեցնել «Բնութագիրը զուգընթաց աուդիտային ծառայությունների և նրանց ներկայացված պահանջները» ստանդարտին:

Մասամբ, կազմակերպված ծառայությունները՝ հաշվապահական հաշվառման վերականգնումն ու վարումը, հաշվապահական հաշվետվու-

թյան կազմումը, տնտեսական և ֆինանսական գործունեության հետազոտումը (վերջին ժամանակներում այս ծառայության վերաբերյալ պահանջարկը զգալիորեն մեծացել է, կապված այն բանի հետ, որ անկախ աուդիտորների օգնությամբ կազմակերպությունները ցանկանում են հասկանալ իրենց ֆինանսական իրավիճակի պատճառները և գտնել լճացումից դուրս գալու ելքեր), խորհրդատվական ծառայություններ ֆինանսական, հարկային և տնտեսական օրենսդրության հարցերը, հարկադրման օպտիմիզացման, տնտեսական սուբյեկտի հաշվապահական անձնակազմի ընտրության ծառայություններ, տեղեկատվական ծառայություններ, ինչպես նաև սեմինարների անցկացում որակավորման բարձրացման համար՝ տնտեսական սուբյեկտի անձնակազմի ուսուցմամբ, և ցուցաբերված այլ ծառայություններ:

Աուդիտորական ստուգումները կարող են լինել նախաձեռնող կամ պարտադիր: Նախաձեռնող աուդիտը իրականացվում է շինարարական կազմակերպության ղեկավարության որոշմամբ: Այսպիսի ստուգման բնութագիրն ու մասշտաբներն որոշում է հաճախորդը: Նախաձեռնող աուդիտի հիմնական նպատակն է հայտնաբերել հաշվապահական հաշվառման վարման անբավարարությունները, կազմել ֆինանսական հաշվետվությունը, հարկադրումը, կատարել տնտեսական սուբյեկտի ֆինանսական վիճակի հետազոտում և օգնել նրան կազմակերպելու հաշվապահական հաշվառումը և հաշվետվությունը:

Պարտադիր աուդիտը տարեկան պարտադիր աուդիտորական ստուգումն է հաշվապահական հաշվառման վարման և ֆինանսական հաշվետվության: Պարտադիր աուդիտի ծախսերը մտնում են շինարարական աշխատանքի ինքնարժեքի մեջ:

Ինչպես պարտադիր, այնպես և նախաձեռնող աուդիտը ուղեկցվում է պայմանագրային հիմունքներով, որը կայանում է աուդիտորային կազմակերպության և ստուգվող շինարարական կազմակերպության միջև:

Աուդիտորի վկայական ստանալու համար հայցողը պետք է ունենա բարձր տնտեսագետի կրթություն, վերջին 5 տարվա աշխատանքային փորձ (երեքից ոչ պակաս տարիներ), մասնագիտական աշխատանքի վերաբերյալ պահանջները սահմանում է ՀՀ կառավարությունը: Վկայականը տրվում է

լիցենզավորված մարմնի կողմից: Վկայականի երկարացման համար աուդիտորը պետք է ներկայացնի փաստաթղթերի կրկնօրինակը, որը հաստատում է աուդիտորների որակավորման բարձրացման համար տարեկան դասընթացների մասնակցության մասին:

Աուդիտորական ֆիրման կարող է անցնել աուդիտորական գործունեության իրականացմանը միայն կոնկրետ տեսքի աուդիտորական գործունության լիցենզիայի առկայության դեպքում: Լիցենզիան տրվում է «Լիցենզավորման մասին» օրենքին համապատասխան: Աուդիտորական ֆիրմայի հաստիքում պետք է լինի 5-ից ոչ քիչ աուդիտոր, որոնք ունեն աուդիտորի վկայական:

Շինարարական կազմակերպության աուդիտը պատկանում է ընդհանուր աուդիտին և այն անցկացնում են այն կազմակերպությունները, որոնք ունեն համապատասխան լիցենզիա:

Աուդիտորական գործունեության վարման հիմնական սկզբունքներն են.

- ստուգումների ժամանակ անկախությունն ու օբյեկտիվություն,
- աուդիտորի գախտնապահությունը, մասնագիտացումը, հեղինակությունը և բարեխղճությունը,
- վիճակագրական մեթոդներից և տնտեսական հետազոտումներից օգտվելը,
- նոր տեղեկատվական տեխնոլոգիաների ընդունումը,
- դիտարկվող աուդիտորական ստուգումների համար ռացիոնալ լուծումներ ընդունելու հմտություն,
- հաճախորդի նկատմամբ բարեխղճություն և օրինապահություն,
- աուդիտորի պատասխանատվությունը նրա հանձնարարության հետևանքի և աուդիտորական ստուգման արդյունքների եզրակացության:

Աուդիտորի անկախությունը պայմանավորված է նրանով, որ այն չի հանդիսանում պետական հաստատության աշխատակից, չի ենթարկվում հսկիչ-ռևիզորների հաստատություններին և չի աշխատում նրանց հսկողության տակ, պահպանում է մասնագիտացված աուդիտորական միավորման

ստանդարտները, ստուգվող կազմակերպությունների նկատմամբ չունի ոչ մի գույքային կամ անձնական հետաքրքրություն:

Օբյեկտիվությունն ապահոված է աուդիտորի բարձր մասնագիտական նախապատրաստվածությամբ, մեծ պրակտիկայի փորձով, նորագույն մեթոդական գրականության գիտելիքներով:

Համաձայն «Աուդիտորական գործունեության մասին» օրենքի՝ աուդիտորի անկախությունը, աուդիտորական կազմակերպությունները և անհատական աուդիտորները ձևակերպվում են հետևյալ կերպ.

Աուդիտը չի կարող իրականանալ.

- աուդիտորներով, ովքեր հանդիսանում են հիմնադիրներ (մասնակիցներ) աուդիտացնող անձանց, նրանց ղեկավարների, հաշվապահների և այլ անձանց, որոնք կրում են պատասխանատվություն կազմակերպության և հաշվապահական հաշվառման վարման ու ֆինանսական հաշվետվության կազմելու համար,
- աուդիտորներով, որոնք հիմնադիրների հետ միասին հանդիսանում են աուդիտացնող անձ՝ նրանց պաշտոնական անձանց, հաշվապահների և այլ անձանց, որոնք կրում են պատասխանատվություն կազմակերպության և հաշվապահական հաշվառման վարման ու ֆինանսական հաշվետվության կազմելու համար, հարազատներ (ծնողներ, ամուսիններ, եղբայրներ, քույրեր, երեխաներ, ինչպես նաև տեքրեր, քույրեր և ծնողներ),
- աուդիտորական կազմակերպությունների ղեկավարների և այլ պաշտոնական անձանց, որոնք հանդիսանում են հիմնադիրներ աուդիտացնող անձանց, նրանց պաշտոնական անձանց, հաշվապահների և այլ անձանց, որոնք կրում են պատասխանատվություն կազմակերպության և հաշվապահական հաշվառման վարման ու ֆինանանսական հաշվետվության կազմելու համար,
- աուդիտորական կազմակերպություններով ղեկավարների և այլ պաշտոնյաների, որոնք բաղկացած են հարազատներից (ծնողներ, ամուսիններ, եղբայրներ, քույրեր, երեխաներ, ինչպես նաև ամուսինների եղբայրներ, քույրեր և ծնողներ), հիմնադիրներով, նրանց պաշտոնեական անձերով, հաշվապահներով և այլ անձերով,

որոնք կրում են պատասխանատվություն կազմակերպության և հաշվապահական հաշվառման վարման ու ֆինանսական հաշվետվության կազմելու համար,

- աուդիտորական կազմակերպություններով աուդիտի ենթարկվող անձանց վերաբերյալ՝ հանդիսանալով նրանց հիմնադիրները, աուդիտի ենթարկվող անձանց վերաբերյալ, որոնց համար այս աուդիտորական կազմակերպությունները հանդիսանում են հիմնադիրներ (մասնակիցներ), ենթակա կազմակերպությունների, մանսաճյուղերի և նշված աուդիտի ենթարկվող անձանց ներկայացուցիչների վերաբերյալ, ինչպես նաև այն կազմակերպությունների վերաբերյալ, որոնք ունեն այդ աուդիտորական կազմակերպության հետ ընդհանուր կազմակերպիչ,
- աուդիտորական կազմակերպություններով և անհատական աուդիտորներով, որոնք գործում են երեք տարի և անմիջականորեն նախորդում են աուդիտորական ստուգման անցկացմանը, ծառայությունները հաշվապահական հաշվառման վերականգնելու և վարելու, ինչպես նաև ֆինանսական հաշվետվության կազմումը, ֆիզիկական և իրավաբանակ անձանց կողմից:

Վճարման և դրամական վարձատրության կարգը աուդիտորական կազմակերպությունների և անհատական աուդիտորների՝ աուդիտի անցկացման և նրան զուգընթաց ծառայությունների մատուցման համար, որոշվում է պայմանագրերով և չեն կարող լինել աուդիտի ենթարկվող անձանց կողմից արված եզրակացություններից կախված, որոնք կարող են լինել աուդիտի արդյունքում:

Գաղտնապահությունը կարևոր պահանջ է աուդիտորական գործունեության իրականացման ժամանակ: Աուդիտորը չպետք է տրամադրի տվյալներ ոչ մի հաստատությունների՝ իր կողմից ստուգվող օբյեկտի տնտեսական գործունեության մասին: Իր հաճախորդների գաղտնիքները տարածելու համար նա պետք է կրի պատասխանատվություն ըստ օրենքի, ինչպես նաև բարոյապես, իսկ եթե նախատեսված է պայմանագրով, ապա նյութական պատասխանատվությամբ ևս:

Աուդիտորը պետք է ունենա անհրաժեշտ մասնագիտական որակավորում, հոգ տանել նրա պահպանման համար՝ պատշաճ մակարդակով, պահպանել նորմատիվ փաստաթղթերի պահանջները: Աուդիտորը չպետք է ծառայություններ մատուցի հաճախորդին տնտեսության այն բնագավառում, որոնցում նա չունի անհրաժեշտ մասնագիտական գիտելիքներ:

Ստուգման արդյունքում աուդիտորը կարող է կատարել անհրաժեշտ ռացիոնալ եզրակացություններ, որոնք կօգնեն հաճախորդին աշխատանքների կազմակերպման հարցում և հաշվապահական հաշվառման վարման հարցում:

Աուդիտորի պատասխանատվությունն այն է, որ նա պատասխանատու է ստուգվող կազմակերպության ֆինանսական հաշվետվության մասին իր եզրակացության համար: Հաշվետվությունների պահպանման պատասխանատվությունը կրում է ստուգվող կազմակերպության ղեկավարությունը:

Աուդիտորական կազմակերպությունը ինքնուրույն է որոշում աուդիտի անցկացման ծավալը, ձևերը և մեթոդները: Նա իրավունք ունի ստուգելու հաշվառման ցուցակների ամբողջական ծավալը, ինչպես նաև ստանալ ստուգվող կազմակերպության պաշտոնական անձերից ծագող հարցերի բացատրությունները:

Ապացույցներ ստանալու համար ընդունում են հետևյալ աշխատանքային (մեթոդները) միջոցները.

- Հաճախորդի թվաբանական հաշվարկների ստուգումը, որը հանդիսանում է թվաբանական ճշգրտությամբ ստուգման աղբյուրներ փաստաթղթերի և հաշվապահական գրառման համար:
- Գույքագրում, որոնց ընդունումը թույլ է տալիս ստանալ ճիշտ տեղեկատվություն տնտեսվարող սուբյեկտի գույքի կանխիկության մասին և կողմնորոշված տեղեկատվություն այսպիսի գույքի իրավիճակի և արժեքի մասին:
- Առանձին տնտեսական գործողությունների հաշվառման կանոնների պահպանման ստուգում: Այս մեթոդը թույլատրում է աուդիտորական կազմակերպություններին իրականացնել հսկո-

ղությունը հաշվառման աշխատանքների համար՝ կատարված հաշվապահությունում:

- Հաստատումը: Հաշվառման հաշիվներում դրամական միջոցների մնացորդների իրականության մասին տեղեկատվության ստացման, հաշվարկների հաշիվների, դեբիտորական և կրեդիտորական պարտքերի հաշիվների համար աուդիտորական կազմակերպությունը պետք է ստանա հաստատում գրավոր ձևով անկախ (երրորդ) կողմից: Հաստատման հարցումները խորհուրդ է տրվում պատրաստել փաստաթղթի տեսքով տնտեսական սուբյեկտի ղեկավարության անունից՝ անկախ կողմերի հասցեին: Այնտեղ պետք է պահպանվի պահանջ՝ ներկայացնել անհրաժեշտ տեղեկատվություն անմիջապես աուդիտորական կազմակերպությանը:
- Անձնակազմի բանավոր հարցում, ղեկավարությունը տնտեսական սուբյեկտի և անկախ (երրորդ) կողմերի: Այս հարցումը կարող է անցկացվել աուդիտորական ստուգումների բոլոր փուլերում: Բանավոր հարցումների արդյունքները պետք է գրառվի արձանագրության տեսքով կամ կարճ կոնսպեկտով, որում պարտադիր պետք է նշված լինի ազգանունը այն աուդիտի, որը անցկացրել է հարցումը և ազգանունը, անունը, հայրանունն այն անձանց, ովքեր հարցման են ենթարկվել:
- Փաստաթղթերի ստուգում: Փաստաթղթերի ստուգումը այն է, որ աուդիտորը պետք է համոզվի նշանակված փաստաթղթի իրական լինելուն: Դրա համար խորհուրդ է տրվում ընտրել հաշվապահական հաշվառման որոշակի գրառումներ և հետևել գործողությունների պատկերմանը հաշվառման մեջ ընդհուպ մինչև սկզբնական փաստաթուղթը, որը պետք է հաստատի այդ գործողության կատարման իրականությունը և նպատակահարմարությունը:
- Հետազոտում: Հետազոտում ասելով հասկանում են գործընթաց, որի մուտքում աուդիտորը ստուգում է մի քանի սկզբնական փաստաթղթեր, պատկերումները տվյալ պատկերումները՝ տվյալ սկզբնական փաստաթղթերի սինթետիկ և վերլուծական հաշվառումների ցուցակներում, գտնում է հաշիվների եզրակացության

թղթակցությունը և համոզվում է նրանում, որ համապատասխան տնտեսական գործողությունները ճիշտ կամ սխալ են պատկերված հաշվապահական հաշվառման մեջ: Հետազոտումը թույլ է տալիս սովորել ոչ տիպային շարադրանքները և իրադարձությունները՝ պատկերված հաճախորդի փաստաթղթերում:

- Վերլուծական ընթացակարգեր: Վերլուծական ընթացակարգի տակ հասկանում են աուդիտորի ստացված տեղեկատվության զննումն ու գնահատականը, ստուգվող տնտեսական սուբյեկտի կարևոր ֆինանսական և տնտեսական ցուցանիշների զննումը այն նպատակով, որ հայտնաբերվի տնտեսական գործունեության հաշվապահական հաշվառման մեջ ոչ սովորական և սխալ պատկերումների փաստերը, ինչպես նաև այդպիսի սխալների պատճառների պարզաբանումը:
- Այլընտրանքային հաշվեկշռի նախապատրաստությունը: Կատարվող աշխատանքների պատրաստի արտադրանքների հաշվառման մեջ իրական և ամբողջական պատկերման ապացույցն ստանալու համար աուդիտորական կազմակերպությունը կարող է կազմել հաշվեկշիռ՝ օգտագործելով սպառված հումքի և նյութերի ապրանքները: Հաշվեկշիռը հումքի, հումքի նյութերի և ստացվող արտադրանքի նորմատիվ ծախսերի շեղումը և հենց դրանով համոզվել ֆինանսական արդյունքի ստույգ հաշվարկներին:

Տնտեսական սուբյեկտի հաշվապահական հաշվետվության անցկացվող աուդիտի արդյունքներով աուդիտորական կազմակերպությունը պետք է հայտնի կարծիք այդ հաշվետվության ստույգության մասին անպայման դրական ձևով, պայմանական դրական կամ բացասական աուդիտորական եզրակացության կամ աուդիտորական եզրակացությունում հրաժարվել իր կարծիքը հայտնելուց:

Աուդիտորական եզրակացությունը պետք է կազմված լինի հայերեն, արժեքային ցուցանիշները պետք է արտահայտված լինեն ՀՀ դրամով:

Անպայման դրական աուդիտորական եզրակացությունում հաշվապահական հաշվետվության ստույգության մասին աուդիտորական կազմակերպությունների կարծիքը նշանակում է, որ այդ հաշվետվությունը նախա-

պատրաստված է այնպես, որպեսզի ապահովեն բոլոր էական տեսանկյուններում պատկերումը տնտեսական սուբյեկտի ակտիվների ու պասիվների հաշվետու ամսաթվով և նրա գործունեության հաշվետվության ընթացքի ֆինանսական արդյունքները՝ ելնելով նորմատիվ ակտից, որը ղեկավարում է հաշվապահական հաշվառումը:

Պայմանական դրական աուդիտորական եզրակացությունում աուդիտորական կազմակերպությունների կարծիքը տնտեսավարող սուբյեկտի հաշվապահական հաշվետվության արժանահավատության մասին նշանակում է, որ բացառությամբ աուդիտորական եզրակացության որոշ հանգամանքների, հաշվապահական հաշվետվությունը պատրաստված է այնպես, որպեսզի ապահովի տնտեսվարող սուբյեկտի ակտիվների ու պասիվների ամբողջական պատկերումը՝ հաշվետու ամսաթվով, և նրա գործունեության ընթացքի ֆինանսական արդյունքները՝ ելնելով հաշվապահական հաշվառման վարման նորմատիվ ակտերից:

Բացասական աուդիտորական եզրակացությունում աուդիտորական կազմակերպությունների կարծիքը տնտեսավարող սուբյեկտի հաշվապահական հաշվետվության արժանահավատության մասին նշանակում է, որ կապված որոշ հանգամանքների հետ այդ հաշվետվությունը պատրաստված է այնպես, որ այն ամբողջապես չի պատկերում տնտեսավարող սուբյեկտի ակտիվները ու պասիվները՝ հաշվետու ամսաթվով, ինչպես նաև նրա գործունեության ֆինանասական արդյունքները: Աուդիտորական կազմակերպության հրաժարականը աուդիտորական եզրակացությունում տնտեսավարող սուբյեկտի հաշվապահական հաշվետվության արժանահավատության մասին իր կարծիքը արտահայտելուց նշանակում է, որ որոշ հանգամանքների արդյունքում աուդիտորական կազմակերպությունը չի կարող արտահայտել հաստատված ձևերից մեկում (օրինակ՝ որևէ հաշվառման ցուցակի բացակայության դեպքում):

Աուդիտորական կազմակերպության կարծիքը տնտեսավարող սուբյեկտի հաշվապահական հաշվետվության արժանահավատության մասին պետք է արտահայտվի այնպես, որպեսզի այդ սուբյեկտի և օգտվողների համար պարզ լինի նրա բովանդակությունը և ձևը:

Աուդիտորական եզրակացությունում աուդիտի օբյեկտը պետք է նշված լինի որպես «հաշվապահական հաշվետվություն»՝ տնտեսավարող սուբյեկտի լրիվ անվանումով և ստուգման ժամանակահատվածի նշումով: «Հաշվապահական հաշվետվություն» բառերի տակ հասկացվում է հաշվապահական հաշվետվության լրիվ ձևերի ամբողջությունը, որը սահմանված է օրենսդրությամբ:

Աուդիտորական եզրակացությունը չի կարող և չպետք է քննարկվի տնտեսավարող սուբյեկտների և աուդիտորական եզրակացությունից օգտվողների կողմից՝ որպես աուդիտորական կազմակերպությունների երաշխիք նրանում, որ այլ հանգամանքներ, որոնք ցուցաբերում են կամ ընդունակ են ցուցաբերելու ազդեցություն տնտեսավարող սուբյեկտի հաշվապահական հաշվետվության վրա, գոյություն չունեն:

Աուդիտորական կազմակերպությունը պարտավոր է աուդիտորական եզրակացությունը ներկայացնել միայն տնտեսավարող սուբյեկտին՝ համաձայնեցված քանակի օրինակներով և կողմերի համաձայնեցված ժամկետներում: Աուդիտորական եզրակացությանը կցվում է տնտեսավարող սուբյեկտի հաշվապահական հաշվետվությունը՝ աուդիտորի նշումով (ստորագրությամբ կամ աուդիտորական կազմակերպությունների հատուկ կնիքով): Աուդիտորական կազմակերպության եզրակացությունը հանդիսանում է տարեկան հաշվապահական հաշվետվության պարտադիր տարր:

ԳԼՈՒԽ 11

Շինարարական կազմակերպության գործունեության տարբերակված մոտեցումները

11.1 Արտադրական գործունեության ընդլայնման տարբերակված մոտեցումների էությունը

Տնտեսագիտության մեջ գոյություն ունեն «դիվերսիֆիկացիա» հասկացության բազմազան նշանակություններ: Ընդհանուր իմաստով դիվերսիֆիկացիան տնտեսական գործունեության տարածումն է նոր ոլորտների, շուկաների, բնագավառների վրա:

Ընդունված է տարբերել տնտեսական և արտադրական դիվերսիֆիկացիաներ: Տնտեսական դիվերսիֆիկացիան նույն ընկերությունում, տարբեր շահութաբերությամբ թողարկվող արտադրանքների միավորումն է, որը թույլատրվում է մանիպուլացիա կատարել արտադրական ծախսերով:

Շինարարությունում գործնականորեն հնարավոր չէ կիրառել տնտեսական դիվերսիֆիկացիան, քանի որ շինարարական կազմակերպությունները իրականացնում են պատվերով գործունեություն՝ մոտավորապես շահութաբերության նույն մակարդակով (8-10%): Այդ պատճառով շինարարության համար ամենամեծ հետաքրքրությունը արտադրական դիվերսիֆիկացիան է:

Շինարարությունում արտադրության դիվերսիֆիկացիան ներթափանցումն է շինարարական և ոչ շինարարական շուկայի նոր սեգմենտներ՝ միաժամանակ զարգացման մի քանի իրար կապված կամ չկապված տեսքով արտադրության կամ ապրանքների արտադրության կապակցումը գործունեության տարատեսակ ոլորտներում:

Արտադրության դիվերսիֆիկացիան որոշվում է որպես կազմակերպության գործունեության ոլորտների ընդլայնում՝ կապված կամ չկապված հիմնական արտադրությանը: Շինարարությունում կարելի է առանձնացնել արտադրության դիվերսիֆիկացիայի հետևյալ ուղղությունները՝ նույն համակարգում սեփական շինարարության և արտադրության շինարարական նյութերի ստեղծումով կազմակերպության տնաշինական կոմբինատների միավորումը և նույն արտադրական համակարգում շինարարական

նախագծային և սեփական շինարարության ստեղծումով կազմակերպության նախագծաշինարարական կազմակերպությունների միավորումը: Այս երկու տեսակի գործունեությունների միավորումը ունի բավականին տնտեսական պոտենցիալ, քանի որ.

- թույլ է տալիս կուտակել կազմակերպության ներսում բազմազան շինարարական խնդիրների օպերատիվ լուծումների մեծ հնարավորություններ, որը կազմակերպությունների վարքը շինարարական շուկայում դարձնում է ավելի ճկուն,
- ստեղծում է մասնագիտացված կազմակերպություններ՝ ներգրավելով իր գործունեության ոլորտում աշխատանքի և ծառայությունների ողջ համակարգը՝ ավարտված օբյեկտների ստեղծումով, և նախագծային հզորությամբ պատրաստվածը շահագործելու համար (այդ թվում այն օբյեկտները, որոնք կապված են ենթաակառուցվածքի ստեղծման հետ),
- ընկերությունների շինարարական նյութերի արտադրության և դրանց կուտակումը շուկայում՝ օգտագործելով շինարարական արտադրության, շենքերի և կառույցների վերակառուցումից հետո առաջացած մնացորդները,
- այլ արտադրական կազմակերպություն՝ չկապված հիմնական արտադրության հետ, որոնց վրա կարելի է այս կամ այն չափով օգտագործել աշխատավորների որակավորումը (օրինակ՝ կահույքի արտադրությունում):

Արդյունաբերական դիվերսիֆիկացիան հանդիսանում է կազմակերպության գործունեության և տնտեսական կայունության արդյունավետության բարձրացման ուղղություններից մեկը: Զարգացման այդ ուղղությունը հատկապես նպատակահարմար է խիստ մրցակցային պայմաններում, երբ նեղ մասնագիտությունը ավելի շատ պակասեցնում է շինարարական կազմակերպության իրար հետևից կատարվող աշխատանքների ստացման հնարավորությունը:

Իր գործունեությունը դիվերսիֆիկացնելու ցանկությունը բերում է այնպիսի մոտիվներ, ինչպիսիք են կապիտալի ներդրման անհրաժեշտությունը, ռիսկերի պակասեցումը, արտադրված արտադրանքի ծախսերը,

ձգտումը ավելի արդյունավետ օգտագործել մատակարարման կապերը, ղեկավարելու համակարգը և այլն:

Առաջարկելով ապրանքների և ծառայությունների ավելի լայն սպեկտոր՝ կազմակերպությունը կարող է բարձրացնել իր մրցակցության հնարավորությունը: Բացի այդ, դիվերսիֆիկացիայի ժամանակ անհապաղ առաջանում է սիներգետիկական արդյունավետություն, որը արտահոսում է համակարգերի հստակությունից՝ համակարգից դուրս բաղադրատարրն ունենում է քիչ պոտենցիալ, քան ամբողջական համակարգում:

Դիվերսիֆիկացիան լինում է կապված և չկապված: Կապվածը իր հերթին լինում է ուղղահայաց և հորիզոնական:


Ուղղահայաց դիվերսիֆիկացիան (ինտեգրացիան) համակարգում եղած նոր բաղադրատարրերի միացման ընթացքն է (արտադրություն, կազմակերպություն), որը մտնում է միակ տեխնոլոգիական շղթայի արտադրական ընթացքի մեջ: Ընդ որում տարբերվում են երեք տիպի ինտեգրացիաներ.

- լրիվ,
- մասնակի,
- երևակայական (ենթադրվում է հետաքրքրվող կազմակերպությունների միջև միավորման ստեղծում՝ առանց սեփականության անցման իրավունքի):

Բացի այդ՝ ուղղահայաց դիվերսիֆիկացիան կարող է լինել ուղիղ (ինտեգրացիան կազմակերպություններով, արտադրանքի սպառողներով) և հակառակը (կազմակերպություններով՝ մատակարարներին):

Հորիզոնական դիվերսիֆիկացիան այն կազմակերպությունների միավորման ընթացքն է, որոնք աշխատում են նույն ոլորտում, անցկացվում է իր մրցակից լինելու ուժեղացման համար կամ մրցակիցների հանդեպ հսկողության համար:

Չկապված դիվերսիֆիկացիան նոր շուկա ներթափանցելու ընթացքն է՝ չկապված կազմակերպության հիմնական տեսքի գործունեության հետ: (Դիվերսիֆիկացիայի ընթացքի դասակարգումը դիտել Գծապատկեր 11.1-ում): Արևմուտքի փորձը ցույց է տալիս, որ ընդհանուր էկոնոմիկական անկման դեպքում ավելի կայուն կազմակերպությունները կապված են դիվերսիֆիկացիայի հետ:



Գծապատկեր 11.1: *Շինարարությունում դիվերսիֆիկացիայի ընթացքի դասակարգումը*

Արտադրական դիվերսիֆիկացիան ունի զարգացման երկու ճանապարհ.

- ներքին աճ՝ գոյություն ունեցող կազմակերպության դիվերսիֆիկացիայի անցկացում (նոր ուղղությունների ստեղծումը կամ առանձնացումը),
- արտաքին աճ՝ դիվերսիֆիկացիան միավորման և կլանման ճանապարհով:

Ամեն դեպքում դիվերսիֆիկացիայի ընթացքը հանդիսանում է բավականին բարդ և նախօրոք պահանջում է համակարգային տնտեսական գնահատական:

Դիվերսիֆիկացիայի համար տարբերակների ընտրության ընթացքում ընկերությունը կարող է ընտրություն կատարել հոգեհարազատ կամ նոր ոլորտից:

Առաջին դեպքում դիվերսիֆիկացիան անց է կացվում այն ոլորտում, որը ունի յուրատեսակ ռազմավարական համապատասխանություն:

Որոշ կազմակերպություններ նախընտրում են անցկացնել դիվերսիֆիկացիան այլ ոլորտներում շահույթի ստացման համար լավ հնարավորություններով:

Կազմակերպությունները, որոնք գնում են դեպի ոչ պրոֆիլային դիվերսիֆիկացիայի, համարյա ներխուժում են նոր արտադրական սեգմենտներ՝ արդեն գործող կազմակերպությունների ձեռքբերման ճանապարհով, իսկ նոր մասնաճյուղի ստեղծումը առանց միջնորդության՝ եզակի կորպորատիվային կազմության շրջանակներում: Նման ռազմավարությունը հիմնվում է իրավիճակի վրա նրանում, որ կազմակերպության աճը մյուս կազմակերպություններին կլանելու միջոցով բարձրացնում է բաժնետոմսերի կայունությունը: Հավելյալ եկամուտ ստանալու չափանիշը մղվում է երկրորդ պլան, ինչը արդարացնում է իրեն այնքան ժամանակ, մինչև ոչ կտրվածքային դիվերսիֆիկացիան ապահովում է աճը կորպորատիվ եկամուտների, ինչպես նաև այն պայմանով, որ ձեռքբերված արտադրություններից ոչ մեկը չի գործի անարդյունավետ:

Արտադրության դիվերսիֆիկացիան կարող է լինել.

- պլանային (նախապես մշակված գործարար պլանով) և արտապլանային (հարկադրված),
- ներբնագավառային և միջբնագավառային,
- հասարակ (առանց ծախսերի նրա անցկացման համար) և բարդ (նրա իրականացման համար կապիտալ ներդրման առանձնացումով):

Խոշոր շինարարական կազմակերպությունները, որպես կանոն, ունեցել են և ունեն իրենց կազմում ստորաբաժանումներ շինարարական նյութերի, սարքավորումների և արտադրանքների արտադրողականության (երկաթբետոնե և բետոնե սարքավորումների հավաքածու, աղյուս ասֆալտբետոնե, դռների և պատուհանների կմախքներ և այլն), այդ պատճառով շինարարական նյութերի, սարքավորումների, ապրանքների բաց թողման շարքը դա ներբնագավառային դիվերսիֆիկացիան է: Նշված ապրանքների առևտուրը արտադրության միջբնագավառային դիվերսիֆիկացիան է:


Ներկայումս շինարարական կազմակերպությունում տեղի է ունենում երկու տիպի արտադրական դիվերսիֆիկացիա.

- Ներբնագավառային, կապալային տիպի, հակառակ կապերով՝ ոչ պլանավորման հիման վրա,
- Միջբնագավառային, ոչ կապալային տիպի, որպես կանոն, պլանավորման հիման վրա: Կարող է բարդ և հասարակ՝ կախված կազմակերպության ֆինանսական իրավիճակից:

Տնտեսավարության անբարեհաջող պայմանները, որոնք հանդիսանում են անցողիկ տնտեսության ճգնաժամի պայմաններում շինարարական կազմակերպությունների մեծամասնության համար բնութագրական՝ դարձել են հայրենական կազմակերպությունների դիվերսիֆիկացիոն ռազմավարության օգտագործման նախադրյալները: Այստեղ ցանկալի է նշել, որ հայրենական պրակտիկայում դիվերսիֆիկացիան ստիպված միջոցներ են ճգնաժամի շրջանում՝ գոյատևելու միջոցներից մեկը, իսկ արևմուտքում՝ հավելյալ շահույթի աղբյուրների փնտրում, երբ ավանդական բնագավառի շրջանակներում դառնում է նեղ և առաջանում է հնարավորություն մյուս բնագավառներում հասնել լավագույն էկոնոմիկական արդյունքների:

Զգվող էկոնոմիկական ճգնաժամի պայմաններում շինարարական կազմակերպությունները պրակտիկայում սկսեցին դիվերսիֆիկացիան ընդունել որպես իրենց էկոնոմիկական իրավիճակի ուժեղացման միջոց: Գծապատկեր 11.2-ում պատկերված են շինարարական կազմակերպությունների տնտեսական ռազմավարության տարբերակները անցողիկ տնտեսությունում:

Արտադրության դիվերսիֆիկացիան հանդիսանում է թույլատվության միջոց հակասություն առաջացնող շահույթի նորմայի նվազեցման և շինարարական շուկաների ուրիշ սեգմենտներում հնարավոր նրա ավելացման միջև:



Գծապատկեր 11.2: *Անցողիկ տնտեսական պայմաններում շինարարական կազմակերպության գործունեության տնտեսական ռազմավարության տարբերակները:*

11.2. Արտադրական դիվերսիֆիկացման պայմանները և չափանիշները

Արտադրության դիվերսիֆիկացիայի անցկացման արդյունավետության վրա ազդում են գործոնների երեք խումբ՝

- մակրոտնտեսական,
- ճյուղային,
- ներֆիրմային:

Մակրոտնտեսական գործոնները, առանձնացվում են պետության ներդրվող և հարկային քաղաքականությունը, արժեզրկման մակարդակը, դրամական (դրամավարկային) քաղաքականությունը, ստեղծում են էական պայմաններ շինարարական կազմակերպության կենսագործման համար, որոնք կարող են կրել ինչպես բարեհաջող, այնպես էլ անբարեհաջող բնութագիր նրանց գործունեության համար:

Գնաճն արժեզրկում է կազմակերպության մաշվածքամարման պաշարները, նվազում է ներդրման ակտիվությունը, ինչը դժվարեցնում է հիմնական կապիտալի հասարակ վերարտադրության ընթացքը՝ հիմնական արտադրական ֆոնդերի տեսքով:

Միևնույն ժամանակ գնաճը նվազեցնում է ձեռնարկատիրական ակտիվությունը, բացասական ազդեցություն է ունենում դրանց ֆինանսական վիճակի վրա:

Մյուս կողմից, գնաճը խթանում է գործունեության փնտրումը այնպիսի ոլորտներում և ուղղություններում, որոնցում շահույթի աճի տեմպերը կգերազանցեն գնաճի տեմպերին: Դա հնարավոր է այն դեպքերում, երբ կա արտադրանքի կայուն և մեծ պահանջ, ինչը թույլ է տալիս կազմակերպություններին բարձրացնել գները ավելի արագ, քան կաճի գները: Նման իրավիճակը կարող է դրդել կազմակերպությանը արտադրական դիվերսիֆիկացիայի:

Դրամավարկային քաղաքականությունը իր անմիջական ազդեցությունն է ցուցաբերում այնպիսի կարևոր ցուցանիշների վրա, ինչպիսին է գների մակարդակը, ներդրման ակտիվությունը, զբաղվածությունը:

Կազմակերպության գործունեության համար մեծ նշանակություն ունի հարկադրումը: Որքան քիչ է հարկային բեռը, այնքան շատ է կազմակերպության գործունեության ակտիվությունը, և հակառակը:


Գործոնները, որոնք գործադրվում են ճյուղերի մակարդակի վրա, բաժանենք հիմնական և ճյուղերի պոտենցիալ եկամուտների գործադրման շարքերի (տե՛ս Գծապատկեր 11.3).

- շինարարական ապրանքերի պահանջարկ և առաջարկ,
- մրցակցություն շուկայում գործող շինարարական կազմակերպությունների կապալային աշխատանքների միջև,
- ֆինանսավորման ծավալները կապիտալ ներդրման, կապիտալ վերանորոգման և վերանորոգման,
- նյութերի և ծառայությունների մատակարարների միջև մրցակցությունը,
- շինարարությունում նյութերով և ծառայություններով կապալային աշխատանքների շուկան լցնելու մակարդակը:

Շինարարական կազմակերպության կապալային աշխատանքի իրավիճակը շուկայում կախված է շինարարական տեխնիկայի առկայությունից, շինմոնտաժային աշխատանքների որակից և արժեքից, գործիքներից, սարքավորումներից, արտադրական բազաներից և այլն:

Գծապատկեր 11.3-ում պայմանական թվերով նշված են հետևյալ ֆինանսական և նյութական հոսքերը.

1. կազմակերպության ներդրողների կապիտալ ներդրումները,
2. շինարարական ապրանքները կառուցված շենքերի և կառույցների տեսքով,
3. ներդրումներ կապիտալ վերանորոգում կատարելու համար և դրամական միջոցները՝ վերանորոգումը իրականացնելու համար,
4. կատարվող համալիր վերանորոգման շինարարական աշխատանքների (ՎՇԱ),
5. շինարարական նյութերը, կոնստրուկցիաները, արտադրանքները,
6. դրամական միջոցները կազմակերպություններին՝ շինարարական նյութերի, կոնստրուկցիաների և արտադրանքների մատակարարներին,



Գծապատկեր 11.3: *Շինարտադրանքի հնարավոր դիվերսիֆիկացիայի անցկացում*

7. շինարարամոնտաժային և վերանորոգման-շինարարական աշխատանքները՝ կատարված արտադրության ներճյուղային դիվերսիֆիկացիայի շրջանակներում՝ կապային տիպի,
8. կապալի պայմանագիրը, որը կնքվել է արտադրության ներճյուղային դիվերսիֆիկացիայի շրջանակներում՝ կապալային:

Նյութեր և ծառայություններ արտադրողի դիրքը նույնպես որոշվում են արտադրվող ապրանքների արժեքից և որակից, ճյուղերի նշանակությունից՝ որպես սպառողներ, և գնորդների հարցման դիֆերենցիալ հաշվառման հնարավորությամբ: Բացի թվարկված գործոններից նշանակություն ունեն մասնագիտացված կազմակերպության առանձին տարածաշրջանում ֆունկցիոնալացման քանակը, նրանց հզորությունը, այսինքն, արտադրության հզորության կենտրոնացման մակարդակը միատեսակ արտադրանքի թողարկումով, տարբեր տեսքի աշխատանքների և ծառայությունների կատարումով: Մյուս կողմից անհրաժեշտ է հաշվի առնել նրանց արտադրանքի պահանջի ծավալը, ներդրողների և գնորդների կողմից կատարված աշխատանքներն ու ծառայությունները:

Արտադրության դիվերսիֆիկացիան պոտենցիալ հնարավորություն է ամրապնդելու և բավարարելու շինարարական կազմակերպության ֆինանսական իրավիճակը:

Արտադրության դիվերսիֆիկացիայի ամենաարդյունավետ ուղղությունը հանդիսանում է շինարարական կազմակերպության գործունեության ոլորտի ընդլայնումը ըստ նրա հիմնական մասնագիտացման ուղղությամբ: Այդպիսի դեպքերում գտնում և կիրառում են արտադրական բազայի և աշխատողների որակավորման, և գործնական կապերի ուղղությունները պատվիրատուների հետ:

Դա իր հերթին ազդում է շինարարական կազմակերպության մրցակցության պոտենցիալի վրա, երբ այն դուրս կգա իր համար նոր սեգմենտի շուկա: Բացի այդ առաջանում է հնարավորություն ոչ միայն ներգրավել նոր համախոհներ և սպառողներ, այլ նաև պահպանել կապը նախկինների հետ:

Շինարարական կազմակերպությունների մեծամասնության ֆինանսական վիճակի անկայունությունը, աշխատողների ավելորդ քանակը

պարտադրում է կազմակերպությանը դիմել արտադրության դիվերսիֆիկացիայի: Նշված գործունեության վերջնական նպատակները կարող են լինել շահույթի մաքսիմալացումը, պահպանումը կամ նոր աշխատանքային տեղերի ստեղծումը, կազմակերպության հիմնական ֆոնդերի օգտագործման մակարդակի բարձրացումը, կապալային աշխատանքի շուկայի և ոչ շինարարական շուկայի նոր սեգմենտների յուրացումը: Ելնելով վերը նշվածից՝ որպես չափանիշների հիմնավորում, շինարարական կազմակերպությունից արտադրության դիվերսիֆիկացիա անցում կատարելու համար օգտագործում են ցուցանիշներ՝ կախված դիվերսիֆիկացիայի տիպից: Վերոգրյալից հետևում է, որ պետք է համեմատել տվյալ երեք նշանակության չափանիշային ցուցանիշները՝

- ցուցանիշներ եռամսյակի համար, որը նախորդում է արտադրության դիվերսիֆիկացիայի անցմանը,
- ցուցանիշ պլանային մեծությունը այն դեպքերում, երբ շարունակվում է ավանդական տեսքի գործունեությունները,
- ցուցանիշի կանխատեսվող մեծությունը այն դեպքերում, երբ իրականանում է դիվերսիֆիկացիան ($ՉՑ_{բ}$, $ՉՑ_{կմ}$, $ՉՑ_{պլ}$):

Համեմատման համար, որպես բազա, հանդիսանում է նախորդող դիվերսիֆակացիայի ժամանակահատվածի ցուցանիշի նշանակությունը ($ՉՑ_{i}$):

Կախված արտադրական դիվերսիֆիկացիայի տարատեսակության և սնանկացման նպատակներից կարող է բարելավվել.

- ինը ցուցիչներ (պլանային դիվերսիֆիկացիա),
- մի քանի ցուցիչներ (հարկադրական դիվերսիֆիկացիա):

Ներկայացված ցուցիչները իրարից տարբերվում են ձեռնարկության գործունեության համար իրենց նշանակությամբ: Ընդ՝ որում նրանցից ոչ մեկը չի կարող լինել որոշիչ, այսինքն՝ ցուցիչներից որևիցէ մեկի նշանակությունը չի կարող միանշանակ լուծել հարցը ի օգուտ դիվերսիֆիկացիայի անցկացման կամ նրանցից հրաժարվելուն:

Աղյուսակ 11.1

Անցումը չափանիշային ցուցանիշների (ՉՑ)	Մինչև դիվերսիֆիկացիայի անցումը (փաստացի)	Դիվերսիֆիկացիայի անցկացումից հետո (կանխատեսվող)
Հաշվապահական (հաշվեկշռային) շահույթի մեծությունը(ՀՇ), հազար դրամ	+	+
Իրացվելիության ընդհանուր գործակիցը(ԳԸԳ)	+	+
Կազմակերպության ակտիվների (գույքի) արժեքը (Ա), հազար դրամ	+	+
Ամբողջական ակտիվների շահութաբերությունը (Շա)%	+	+
Կազմակերպության աշխատողների միջև ցուցակների քանակը (Քա), մարդ	+	+
Բարձր որակավորմամբ աշխատողների քանակը (Քբո)	+	+
Աշխատողների ամսական միջին աշխատավարձը (Աշ₂ՄԱ), հազար դրամ	+	+
Բարձր որակավորմամբ աշխատողների աշխատավարձը (Աշբո), հազար դրամ	+	+
Հիմնական ֆոնդերի ակտիվ մասի ֆոնդերի տրամադրումը (Ֆա)	+	+
Դիֆերսիֆիկացիայի անցկացման ծախսերը (Ծդ), հազար դրամ	-	+

Ավելի էական է հանդիսանում այն ցուցիչը, որը պատկերում է ստացված շահույթի մեծությունը (ՇՄ): Այն ընդհանրացնում է շինարարական ձեռնարկության գործունեության ֆինասատնտեսական արդյունքը: Երկրորդը՝ ըստ նշանակության, հանդիսանում է բարձր որակավորմամբ

աշխատողների քանակի ցուցանիշը ($Ք_{բո}$), քանի որ դիվերսիֆիկացիայի գլխավոր նպատակներից մեկը հանդիսանում է աշխատունակ աշխատողների պահպանումը և ավելացումը: Ավելի քիչ զանգված ունեն ձեռնարկության աշխատողների միջին ցուցանիշների քանակը, նրանց աշխատավարձերի, ձեռնարկության հիմնական արտադրական ֆոնդերի օգտագործման ցուցիչները: Շահույթի մեծության ցուցիչները հաշվառում են տնտեսական արտադրության դիվերսիֆիկացիայի արդյունքների արդյունավետությունը, իսկ բարձր որակավորմամբ աշխատողների ուժի ցուցիչները մեծ մասամբ կանխորոշում են ձեռնարկության մրցունակության մակարդակը:

Սննկացման իրական վտանգն ստիպում է շատ շինարարական կազմակերպությունների աշխատել այնպիսի պայմաններով, երբ ստացվող եկամուտները ծածկում են ծախսերը նվազագույն շահույթով կամ ընդհանրապես առանց դրա:

Այսպիսով, որպեսզի «ապրեն», նրանք ստիպված են առանց պարտավորության հիմնավորման անցկացնել հասարակ տիպի արտադրության դիվերսիֆիկացիա (առանց ֆինասական միջոցների ներգրավման):

Չի կարելի հաշվի չառնել, որ մասսայական գործազրկության ժամանակ հեռացվող աշխատողների համար, հատկապես տարածաշրջանի մակարդակով, շատ դժվար է գտնել նոր աշխատանք, որն էլ ուժեղացնում է սոցիալական լարվածությունը հասարակության մեջ: Այս ամենը վկայում է արտադրության դիվերսիֆիկացիայի ընթացքի սոցիալական կարևորության մասին:

Այսպիսով, դիվերսիֆիկացիայի տարբերակների համեմատումը առաջարկված չափանիշի ցուցիչների հետ նպաստում է հարցերի լուծմանը՝ արտադրության դիվերսիֆիկացիայի իրականացման միջոցների ընտրության մասին, այսինքն՝ ինչ ճանապարհով մասնագիտացված գործունեությունից հասնել ընդարձակման: Ելնելով դիվերսիֆիկացիայի նպատակներից՝ կարելի է նախօրոք կանխատեսել նրա արդյունքները , հաշվարկել շահույթի և ծախսերի միջև փոխադարձ կապը՝ ձեռնարկության ակտիվների և աշխատողների քանակության միջև: Ցուցիչների համակարգերի օգտագործման չափանիշը թույլ է տալիս շինարարական կազմակերպու-

թյան մասնագետներին նախապես գնահատել արտադրության դիվերսիֆիկացիայի հնարավոր արդյունքները:

Շինարարական ձեռնարկության արտադրության դիվերսիֆիկացիայի տարբերակների անցկացման ընտրության համար անհրաժեշտ է օգտագործել մարքեթինգային մոտեցում: Տնտեսության շուկայական պայմաններում ցանկացած ձեռնարկություն հանդիպում է մեկ կամ մի քանի սեփական ապրանքների պահանջարկի անկմանը: Այս դեպքում անհրաժեշտ է վերլուծել անկման պատճառները և որոշել, թե արդյոք հնարավոր է նորից խթանել վաճառահանումը նոր նպատակային շուկաներ փնտրելու կամ ապրանքի բնութագրման փոփոխության միջոցով: Մարքեթինգի խնդիրն է կանգնեցնել պահանջարկի անկման միտումը ապրանքի առաջարկման վերաբերմունքի բարելավման հաշվին:

Արտադրության ոչ պլանային դիվերսիֆիկացիայի տնտեսագիտական հիմնավորումը:

Անցումային տնտեսություններում կարևոր խնդիրներից մեկն է հանդիսանում շինարարական կազմակերպության պոտենցիալ ճգնաժամային ֆինանսական վիճակի կանխատեսումը և դրանց սնանկացումը կանխելու համար ելքեր գտնելը:

Շինարարական կազմակերպության ծանր ֆինանսական վիճակի հիմնական պատճառներն են հանդիսանում կազմակերպությունների մեծամասնության ցածր ներդրումային ակտիվությունը, արտադրական հզորության չբեռնվածությունը և աշխատողների ավելցուկ քանակը, շինարարական արտադրության շահավետության ցածր մակարդակը, վարկերից և փոխառություններից օգտվելու համար բարձր տոկոսը:

Խնդիրն այն է, որ պոտենցիալ սնանկացման մասին ժամանակին նախազգուշացնելը և կազմակերպության ֆինանսական կարգավորման համար գործարար-պլանի մշակումը արտադրության դիվերսիֆիկացիայի հիմնական ձևի անցկացումով:

Հնարավոր սնանկացման որոշման յուրահատկությունը և նրա նախազգուշացումը շինարարական կազմակերպության համար կայանում է հետևյալում.

- շինարարությունում անկայուն նախաճգնաժամային վիճակից ճգնաժամային վիճակին անցնելու տևողությունն ավելի քիչ է, քան

ազգային տնտեսության այլ ճյուղերում: Դա բացատրվում է նրանով, որ շինարարական ձեռնարկություններում ընդհանուր ծավալով շրջանառու միջոցներում սեփական շրջանառու միջոցների տեսակարար կշիռը մի քանի կարգով քիչ է, քան արդյունաբերական ձեռնարկությունում,

- կապիտալ շինարարությունում արտադրական և ֆինանսական ռիսկերի մեծությունը մի քանի անգամ բարձր է, քան տնտեսության այլ ճյուղերում,
- շինարարական կազմակերպության անվճարունակությունը շատ դեպքերում կանխորոշվում է արտաքին միջավայրով՝ ներդրողների ֆինանսական քաղաքականությամբ: Կառուցապատողների կատարած աշխատանքի ոչ ժամանակին կամ մասամբ վճարումը մեկ-երկու եռամսյակների ընթացքում կապալային կազմակերպություններին բերում են իրենց ֆինանսական ճգնաժամային վիճակին: Ընդ որում եթե նույնիսկ վաճառում են անավարտ շինարարության օբյեկտները, ապա որպես կանոն իրենց արժեքից ցածր,
- անվճարունակությունն որոշելու և կանխատեսելու համար ֆինանսական ցուցանիշների համակարգերի ընդունումն արդյունավետ է, քանի որ նրանց կարելի է հաշվել հաշվետու ժամանակամիջոցի ավարտից հետո (1-2 ամիս հետո), իսկ այդ ընթացքում կարող է տեղի ունենալ շինարարական կազմակերպության սնանկացում:

Շինարարական ձեռնարկության սնանկացման համար ժամանակին և հիմնավորված կանխատեսման նպատակով խորհուրդ է տրվում ընդունել տնտեսական ցուցանիշների համակարգերը, որոնք ընդհանուր պատկերում են ոչ միայն կազմակերպության՝ գոյություն ունեցող ֆինանսական վիճակը, այլև կանխատեսում է կազմակերպության ֆինանսական վիճակն առաջիկա հեռանկարում (1-6 ամիս):

Շինարարական կազմակերպության բնականոն գործունեությանը նպաստում են հետևյալ կազմակերպչատնտեսական պայմանները.

- շինարարական կազմակերպության արդյունավետ մարքեթինգային գործունեությունը, որը թույլ է տալիս հսկել կապալային աշխա-

տանքը տարածաշրջանի (կամ տեղական) շուկայի որոշակի սեգմենտում և ապահովվել մոնտաժային աշխատանքների կատարման պայմանագրերի եզրակացությունը,

- վճարունակ ներդրողների մշտական մշտադիտարկման անցկացումը, կապալային պայմանագրերում պայմանների և ժամկետի կանխավճարի (ավանս) և կատարված աշխատանքների վճարման կանխիկությունը,
- աշխատողների աշխատանքի արտադրողականության չվատթարացնող պահանջվող ցուցանիշների մակարդակի որակի պահպանումը, հիմնական արտադրական ֆոնդերի տրամադրումը, շինանյութերի սպառումը, որոնք մեծմասամբ կանխորոշվում են շինարարական կազմակերպության մենեջերների որակավորված գործունեությամբ,
- շրջանառու սեփական միջոցների չափսերի բարձրացումը արտադրական պաշարների արժեքի հանդեպ և պարտադիր ռենտայի գումարի վճարումը հաշվետու ժամանակամիջոցում (վճարը շինարարական տեխնիկայի վարձակալության, սարքավորման, պահեստների, անբնակելի շինությունների, կոմունալ ծառայությունների վճարը, հեռախոսներ, ֆաքսեր և այլն, հարկային պահումները գույքի, հողի և այլ պահանջվող պաշարների համար),
- սպասվող ծախսերի ռեզերվի չբաշխված շահույթի, ռեզերվային կապիտալի չափը պետք է ոչ քիչ լինի ծախսերից, որոնք կապված են ձեռնարկության աշխատողների քանակի սպասվող կրճատման հետ:

Նախատեսվող ժամանակամիջոցում անվնասաբեր գործունեության ցուցանիշ է հանդիսանում կապալի պայմանագրերի ապահովման մակարդակը՝ պլանավորած տարում:

Շինարարական կազմակերպության հզորության օգտագործման մակարդակը (ՄՕԳ) խորհուրդ է տրվում հաշվել հետևյալ բանաձևով.

$$Մ_{ՕԳ} = \sum_{i=1}^{n} ԿՊ \times \frac{Գ_{պլ}}{Հ_{պլ}} \times 100\%, \qquad (11.1)$$

որտեղ n-ը կապալի կնքված պայմանագրերի քանակն է նախատեսված ժամանակամիջոցում, ԿՊ-ն՝ բոլոր կնքված կապալային պայմանագրերի աշխատանքների ընդհանուր արժեքն է (առանց ԱԱՀ-ի,հազար դրամ), Գպ-ն՝ ներդրող-պատվիրատուի վճարունակության i-րդ պայմանագրի գործակիցն է, Հպ-ն՝ շինարարական կազմակերպության հաշվարկային հզորությունը նախատեսված ժամանակահատվածում (հազար դրամ):

Խորհուրդ է տրվում հաշվարկներում ընդունել նախատեսվող ժամանակամիջոցի (Ժն) հետևյալ ժամկետները՝ փոքր կազմակերպությունների համար՝ 3 ամիս, միջին ձեռնարկությունների համար՝ 6 ամիս, մեծ կազմակերպությունների համար՝ 1տարի:

Ներդրողի վճարունակության գործակիցը խորհուրդ է տրվում ընդունել հավասար.

- պատվիրատուի բնականոն և կայուն ֆինանսական վիճակի ժամանակ՝ 1.0,
- անկայուն ֆինանսական վիճակի ժամանակ՝0.5,
- ճգնաժամային ֆինանասական վիճակի ժամանակ՝ 0.25:

Ներդրող-պատվիրատուի ֆինանսական վիճակը կարելի է իմանալ հրապարակումների միջոցով կամ ներդրողի մշտադիտարկման շուկայի մուտքում: Շինարարական կազմակերպության հաշվարկային հզորության ներքո հասկացվում է շինարարական-մոնտաժային աշխատանքների ծավալը, որը կարող է կատարվել նախատեսվող ժամանակամիջոցում սեփական ուժերով նույն կազմակերպչատեխնիկական պայմանների, ինչպես և հաշվետու ժամանակամիջոցում:

Նախատեսվող տարում հաշվարկային հզորությունը (Հհ) խորհուրդ է տրվում որոշել՝ կախված մեկ աշխատողի վաստակածից՝ զբաղվածությամբ բազայի ժամանակամիջոցում (ՎԲ).

$$Հ_{հ} = Բ^{Բ}_{աշխ} \times Վ_{Բ} \times Գ_{եկք} \times Ի_{արժ}, \qquad (11.2)$$

որտեղ Բաշխ-ն աշխատողների միջին ցուցակի քանակն է, որոնք զբաղված են եղել շինարարամոնտաժային աշխատանքներով բազային ժամանակամիջոցում, ՎԲ-ն՝մեկ աշխատողի վաստակածն է, Գեկք-ն՝գործակիցը, որը հաշվի է առնում նախատեսված ժամանակաշրջանում աշխատավորի

ֆոնդի մեծացման փոփոխությունը՝ բազայի համեմատ, $Ի_{արժ}$-ն՝ պլանավորված ժամանակամիջոցի արժեզրկման դասիչն է:

Նախատեսվող ժամանակամիջոցում շինարարական կազմակերպության հզորության օգտագործման մակարդակը կարող է լինել ինչպես ավելի 100%-ից, այնպես էլ պակաս: Եթե $Մ_{օգ}$>100%, ապա կարելի է նախագուշակել կայուն տնտեսական վիճակը և համապատասխանաբար շինարարական ձեռնարկության նորմալ վճարունակությունը:

Եթե $Մ_{օգ}$<100%, ապա պահանջվում է ընդլայնված տնտեսական հետազոտման անցկացում՝ հնարավոր սննկացման մակարդակի պարզաբանման և այն նախազգուշացնող ճանապարհների համար: *Շինարարական կազմակերպության հնարավոր անվճարունակության կանխորոշման կարևոր փուլ է հանդիսանում հզորության օգտագործման նվազագույն մակարդակի որոշումը ($Մ_{նվ}$).*

$$Մ_{նվ} = \frac{\left(ԱԱ \times Բ^{ց}_{աշխ} + ԱՄԱ \times Բ^{բ}_{աշխ} \times \frac{1}{ՏԿ_{աա} \times Ն_{ամ}} \right)}{Հ_{հ}} \times 100\%, \qquad (11.3)$$

որտեղ ԱԱ-ն տրված տարածաշրջանում մեկ մեծահասակ մարդու ամսական ապրելու նվազագույն աշխատավարձը (դրամ), $Բ^{ց}_{աշխ}$-ն ցածր որակավորմամբ աշխատողների քանակը (I, II և III կարգի, մարդ), ԱՄԱ-ն աշխատավարձի միջին ամսական մեծությունը, $Բ^{բ}_{աշխ}$-ն՝ բարձր որակավորմամբ աշխատողների քանակը (IV, V և VI կարգի, մարդ), $ՏԿ_{աա}$-ն՝ աշխատողների աշխատավարձի տեսակարար կշիռն է, $Ն_{ամ}$-ն՝ նախատեսված ժամանակամիջոցի ամիսների քանակն է: Խորհուրդ է տրվում փոքր կազմակերպություններին հաշվարկում վերցնել մեկ եռամսյակ:

Եթե $Մ_{օգ}$<$Մ_{նվ}$, ապա շինարարական կազմակերպությանն անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել հնարավոր սնանկացումը կանխելու համար.

- կրճատել ցածր որակավորմամբ անձնակազմին (աշխատողների և ծառայողների),
- անցկացնել արտադրության դիվերսիֆիկացիա:

Միաժամանակ անհրաժեշտ է գնահատել ֆինանսային ռեզերվները (ՖՌ), որոնք հնարավոր կլինի օգտագործել հակաճգնաժամային միջոցառումները ֆինանսավորելու համար:

Դրանք կազմված են անցած տարիների չբաշխված շահույթից և հաշվետու տարվանից (ՉԾ), ռեզերվային կապիտալից (ՌԿ), սպասվող ծախսերի ռեզերվներից (ՍԾՌ) և չծախսված ամորտիզացիոն ռեսուրսներից (ԱՄՌ).

$$ՖՌ = ՉԾ + ՌԿ + ՍԾՌ + ԱՄՌ : \qquad (11.4)$$

Անձնակազմի կրճատումը կապված է նշանակալից դրամական ծախսերի հետ ($ԴԾ_{կրճ}$).

- աշխատողներին զգուշացնում են ապագա կրճատումից երկու ամիս առաջ ($ԱԶ_{կրճ}$),
- վճարվում է աշխատանքից ազատվելու վերջնահաշվարկ, աշխատավարձի միջին ամսականի չափով ($ՎԳ_{կրճ}$):

Հետևաբար.

$$ԴԾ_{կրճ} = \left(ԱԶ^{p}_{կրճ} \times 2 \times 1.356 + ՎԳ_{կրճ} \right) \times Ք_{կրճ}, \qquad (11.5)$$

որտեղ $Ք_{կրճ}$-ն կրճատվող աշխատողների քանակն է, 1.356- գործակիցը, որը հաշվի է առնում սոցիալական վճարի միավորի ավելացումը: Դիվերսիֆիկացիայի անցկացումը կախված է նաև որոշակի ծախսերից ($Ծ_դ$):

Կազմակերպությունը հակաճգնաժամային միջոցներ կիրառելիս չի կարող գործածել միջոցներ ավել, քան կան ֆինանսական ռեզերվներում (ՖՌ), այդ պատճառով ճշմարիտ է հետևյալ բանաձևը՝

$$ՖՌ < ԴԾ_{կրճ} + Ծ_դ : \qquad (11.6)$$

Բացի վերը նշված ցուցանիշների հաշվարկներից, խորհուրդ է տրվում ձեռնարկություններին ամեն ամիս հետազոտել օգտագործվող աշխատանքային և նյութական պաշարները.

- մեկ աշխատողի արտադրական աշխատանքը, որը զբաղված է շինարարամոնտաժային աշխատանքներով (յուրաքանչյուր ամիս),
- հիմնական արտադրական ֆոնդերի տրամադրումը (ամսում կամ եռամսյակում),
- շինանյութերի սպառում (յուրաքանչյուր ամիս):

Տրված ցուցանիշները խորհուրդ է տրվում սահմանել ըստ կատարվող շինարարական աշխատանքների տեսակների և ամեն ամիս հետազոտել դրանց շեղումը բազային մակարդակից (նախորդ եռամսյակին): Վերը թվարկված ցուցանիշների որակական վատթարացումն առաջանում է

նյութերի և աշխատանքային պաշարների ոչ ռացիոնալ օգտագործելուց, ինչը բերում է ինքնարժեքի բարձրացմանը և, որպես կանոն, հիմնական գործունեության կորուստի:

Հետևաբար, այն շինարարական կազմակերպությունները, որոնք իրականացնում են հնարավոր սնանկացման հետազոտությունները՝ ըստ տնտեսական ցուցանիշների, և պաշարների ամենամսյա օգտագործման հաշվառման, կարող է ժամանակին գտնել սնանկացման հնարավոր պատճառները, մշակել և իրականացնել հակաճգնաժամային ծրագիրը՝ արտադրության դիվերսիֆիկացիայի անցկացման և անձնակազմի կրճատման ճանապարհներով:

Շինարարական ձեռնարկության սնանկացման տնտեսական հետազոտությունը խորհուրդ է տրվում անցկացնել կազմակերպության ֆինանսական վիճակի հետազոտման հետ միաժամանակ:

11.3.Արտադրության դիվերսիֆիկացիայի կազմակերպումն ու անցկացումը

Ցանկացած դիվերսիֆիկացիոն նախագիծն ունի չորս փուլ.

- նախագծի հիմնավորումն ու մշակումը (նախադիվերսիֆիկացիոն աշխատանք),
- նախագծի ներդրում,
- աշխատանքի, ծառայության արտադրություն, նախագծին համապատասխան արտադրանքի բացթողում,
- նախագծի գործողության ավարտ և արդյունքների անցկացում:

Համաձայն նախագծի՝ դիվերսիֆիկացիայի ծրագրի հիմնավորումն ու մշակումը իր հերթին անցկացվում է մի քանի փուլերով.

I. Կապալային աշխատանքների շուկայի կոնյունկտուրաների մշտադիտարկում:

II. Շինանյութերի, կոնստրուկցիաների, արտադրանքների, տրանսպորտային ծառայությունների պահանջարկի և առաջարկությունների հետազոտում:

III. Ոչ շինարարական շուկայի կոնյունկտուրաների հետազոտում:

IV. Ձեռնարկության սնանկացման ֆինանսական վիճակի և (կամ) տնտեսական հետազոտություն:

V. Արտադրության դիվերսիֆիկացիայի տիպի ընտրություն և նախագծի կամ գործարար-պլանի մշակում:

VI. Ձեռնարկության գործունեության վերջնական ցուցանիշների նախատեսում:

Շինարարական ձեռնարկության դիվերսիֆիկացիայի ծրագրերի մշակման ժամանակ պետք է ժամանակի զգալի մասը տրամադրել այնպիսի կարևոր պահերի, ինչպիսիք են՝ դիվերսիֆիկացիայի համար շուկայական հնարավորությունների գնահատումը, դիվերսիֆիկացիայի ուղղության և տիպի ընտրությանը:


Կարևոր նշանակություն ունի արտադրության դիվերսիֆիկացիայի անցկացման մեջ որոշակի համակարգայնություն և հաջորդականություն, որը ներկայացված է Գծապատկեր 11.4-ում:

Առաջին կարգի խնդիրների կատարումը (շուկաների կոնյուկտուրաների մշտադիտարկումը) պահանջում է մեծ քանակությամբ հավաստի տեղեկատվության ընդունում և մշակում:

Շուկայական տեղեկատվական համակարգը ձևակերպում են երեք օժանդակ ենթահամակարգեր՝

- ձեռնարկության ներքին հաշվետվության ենթահամակարգ,
- արտաքին ընթացիկ տեղեկատվության հավաքածուի ենթահամակարգ,
- մարքեթինգային հետազոտության ենթահամակարգ:

Ներքին հաշվետվության ենթահամակարգ է հանդիսանում կազմակերպության գործունեության ցուցիչը: Կատարելով հակառակ կապերի գործառնությունները՝ ներքին հաշվետվության համակարգը ցույց է տալիս շուկայի միջավայրի ռեակցիան կազմակերպության վրա, ինչը արտահայտվում է դրական կամ բացասական ֆինանսական և տնտեսական արդյունքներում, կազմակերպության տնտեսական գործունեության հիմնական ցուցիչների դինամիկայի փոփոխությամբ և այլն: Ներքին հաշվետվության ենթահամակարգը կրում է զգալի դեր:



Գծապատկեր 11.4: *Շինարարական ձեռնարկության արտադրական դիվերսիֆիկացիայի անցկացման բլոկ-սխեման*

Արտաքին ընթացիկ տեղեկատվության հավաքածուի ենթահամակարգը պետք է ապահովի շինարարական կազմակերպության վերջին իրադարձությունների տվյալներով, որոնք տեղի են ունենում տարբեր շուկաներում: Այսպիսի տեսքի տեղեկատվության աղբյուր է հանդիսանում համակարգչային ծրագրերի, թերթերի, ամսագրերի տվյալները:

Բացի այդ, այն կարելի է ստանալ շինարարության աշխատողների անմիջական հաղորդակցությունից այլ կազմակերպությունների մասնագետների հետ (մատակարարներ, ներդրողներ, պատվիրատուներ):

Չճարվող տեղեկատվություն ստանալու համար շինարարական կազմակերպությունը կարող է պատվիրել մարքեթինգային հետազոտություն, որոնք անցկացնում են մասնագիտացված կազմակերպությունները:

Պետք է նշել, որ չնայած բոլոր դրական կողմերի՝ մարքեթինգային հետազոտությունները հանդիսանում են ամենաթանկարժեքը:

Ֆինանսական միջոցների անբավարար պայմաններում շինարարական կազմակերպության մեծամասնության մոտ միայն կարևոր լրացուցիչ տեղեկատվության անհրաժեշտությունն է կարող պարտադրել նրանց դիմել այդ տեղեկատվության աղբյուրին:

Դիվերսիֆիկացիայի անցկացման շուկայական հնարավորությունների հայտնաբերումն ու գնահատումը անհապաղ կբերի մի քանի տարբերակների հայտնաբերման, որոնցից անհրաժեշտ է ընտրել մեկը, որը համապատասխանում է շինարարական կազմակերպության հնարավորություններին:

Շինարարական կազմակերպությունը կարծում է, որ ամենագրավիչը հանդիսանում է արտադրական և շինարարական արտադրանքներ թողարկող «X»-ը: «X» արտադրության ներմուծումը աշխատանքների և ծառայությունների անվանացուցակի մեջ համապատասխանում է կազմակերպության նպատակներին, այսինքն՝ արտադրական բազան, կազմը ձեռնարկության աշխատողների որակավորումը թույլ են տալիս կազմակերպել ապրանքների արտադրություն «X»-ը, իսկ ունեցած ֆինանսական միջոցներն ու տնտեսական կապերը կարող են ապահովել արտադրությանը անհրաժեշտ ռեսուրսներով և կազմակերպել նոր արտադրանքի վաճառահանումը:

Դիվերսիֆիկացիայի նման տարբերակը պետք է ուսումնասիրել մեծության տեսանկյունից և հատկապես նոր շուկաների յուրացման տեսանկյունից: Տվյալ տարբերակի հնարավոր իրացումն ուսումնասիրվում է հետևյալ կերպ՝

- չափվում և կանխատեսվում է պահանջարկը,
- սեգմենտավորվում է նոր շուկա,
- հաստատվում են նպատակային սեգմենտներ,

- դիրքավորվում է արտադրանքի տրված տեսքը շուկայում:

Որպեսզի շինարարական ձեռնարկության նոր արտադրանք՝ «X»-ի իրացումը տեղի ունենա զարգացող շուկայում, պետք է շուկայաբանները որոշեն նոր շուկայի հեռանկարները:

Որպեսզի կանխատեսումը լինի դրական, ապա շինարարական կազմակերպությունը պետք է որոշի, թե ինչպես պետք է դուրս գա շուկա արտադրանք «X»-ը:

Կազմակերպությունը կարող է օգտագործել տարբեր պարամետրեր, ըստ որոնց կարելի է իրականացնել շուկայի սեգմենտավորումը: Շուկան սեգմենտավորելու համար որպես հիմնական պարամետրեր կարելի է վերցնել եկամուտների մակարդակը, սպառողների հայցային շահավետությունը, սպառման լարվածությունը և այլն:

Սեգմենտավորումը թույլ է տալիս բացահայտել շուկայի տարբեր սեգմենտների հնարավորությունները, որոնցից պետք է օգտվեն կազմակերպությունները նրանց արտադրանքներով: Դրանից հետո կազմակերպությանը անհրաժեշտ է որոշել, թե քանի՞ սեգմենտ է պետք ընդգրկել և ինչպե՞ս որոշել նրանցից ամենաարդյունավետները:

Կազմակերպությունը կարող է օգտվել շուկաների ձեռքբերման երեք միջոցից՝

- ոչ դիֆերենցված մարքեթինգ,
- դիֆերենցված մարքեթինգ,
- կենտրոնացված մարքեթինգ:

Առաջին դեպքում շինարարական կազմակերպությունն արհամարում է սեգմենտներում տարբերությունը և անմիջապես դիմում է բոլոր շուկաներին նույն առաջարկությամբ:

Երկրորդ դեպքում կազմակերպությունը որոշում է հանդես գալ մի քանի սեգմենտների վրա և դրանցից յուրաքանչյուրի համար մշակում է առանձին առաջարկություն: Երրորդ դեպքում մեծ շուկայի ոչ մեծ չափով կուտակումների ջանքերի փոխարեն կազմակերպությունը դրանք կուտակում է մեծ չափով մեկ կամ մի քանի ենթաշուկաներում: Վերջին տար-

բերակն ավելի շատ համապատասխան է սահմանափակ պաշարներով կազմակերպության համար:

Միևնույն ժամանակ կենտրոնացված մարքեթինգը կապված է ռիսկի բարձր մակարդակի հետ, քանի որ ընտրված սեգմենտը կարող է չարդարացնել հույսերը կամ նրա վրա կցանկանա ներազդել մրցակիցը:

Շուկաների ընդգրկման ռազմավարության ընտրության ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալ գործոնները.

- *կազմակերպության ռեսուրսներ* շերտավորված մարքեթինգային ռազմավարության դեպքում կազմակերպությունը պետք է ունենա հնարավորություն բավարարելու մի քանի շուկաների սեգմենտների պահանջները,
- *ապրանքների միատեսակության աստիճան*՝ միատեսակ ապրանքների համար, ինչպիսիք են՝ երկաթբետոնե կոնստրուկցիաները, շինարարական աղյուսը, համապատասխանում է չշերտավորված մարքեթինգային ռազմավարությանը,
- *շուկայի միատեսակության աստիճան*՝ սպառողի միանման պահանջները պետք չէ բավարարել՝ օգտագործելով կենտրոնացված մարքեթինգային ռազմավարություն,
- *մրցակիցների մարքեթինգային ռազմավարություն*՝ տարբերվող մարքեթինգային ռազմավարության ընդունումը կբերի օգուտ, եթե մրցակիցները նույնպես օգտագործում են չտարբերակվող մարքեթինգ: Հակառակ դեպքում կբերի տնտեսական կորստի:

Ենթադրենք, որ մեր օրինակում շուկաների ընդգրկման ռազմավարության ընտրության ժամանակ կազմակերպությունը կանգ է առել տարբերակվող մարքեթինգի վրա: Այժմ կազմակերպությանն անհրաժեշտ է իր համար գտնել շուկայի «X» արտադրանքի համար բարեհաջող սեգմենտ:

Ընտրելով որպես արտադրանք «X»-ը արտադրության գործունեության դիվերսիֆիկացիայի ուղղություններից մեկը, շինարարական կազմակերպությունը կարող է հնարավորություն ունենալ յուրացնել ցանկացած արտադրություն ըստ բարդության, որակի և արժեքի: Պայմանականորեն

այդ տեսակներն անվանենք առաջին, երկրորդ և երրորդ կարգի բարդություններ:

Բացի այդ, կազմակերպությունը կարող է իր ապրանքներն առաջարկել երեք տարբեր շուկաների՝

- սպառողական,
- արդյունաբերական,
- շինարարության և բնակելի քաղաքացիական շինարարության:

Այսպիսով, ստացվում է ինը ապրանքաշուկայական կապակցություն (տե՛ս Աղյուսակ 11.2), ըստ որի՝ կազմակերպությանն անհրաժեշտ է հավաքել տեղեկատվություն: Այդ տեղեկատվության հիման վրա որոշում է կայացվում, թե որ սեգմենտների վրա առաջին հերթին պետք է կենտրոնացնել ջանքերը: Դրանք պետք է լինեն տվյալներ աշխատանքների ծավալների մասին՝ դրամական արտահայտմամբ, վաճառահանման սպասելի աճի տեմպերով, շահույթի նախատեսված չափերով և այլն:

Դիվերսիֆիկացիայի փուլերի իրականացման ժամանակ առաջանում են նորանոր հարցեր, որոնց պատասխանելու համար անընդհատ պահանջվում են լրացուցիչ տեղեկատվություն:

	Սպառողական շուկա	Արդյունաբերական շուկա	Բնակելի-քաղաքացիական շուկա
I կարգի բարդության ապրանքներ			
II կարգի բարդության ապրանքներ			
III կարգի բարդության ապրանքներ			

Աղյուսակ 11.2: *«X» ապրանքի արտադրության նկատմամբ ապրանքաշուկայական գծագիր*

Կարգավորված համակարգերի հավաքածուի և շուկայի վերաբերյալ տեղեկատվության մշակման առկայության դեպքում այդ խնդիրը կարող է լուծվել: Սակայն նոր հարցերին պատասխանելու համար առաջանում է անհրաժեշտություն այն հարցերի պատասխանների մանրամասնորեն պարզաբանմանը, որոնք արդեն տեղ ունեն նախկին փուլերում: Դա տեղի է ունենում, օրինակ նպատակային շուկաների ընտրության ժամանակ, ընտրված շուկայի սեգմենտավորման ժամանակ: Այդ պատճառով կարևոր է ունենալ ոչ միայն նոր տեղեկատվություն ստանալու համար հնարավորություն, այլ նաև հետազոտման միջոցով կարողանալ ավելի շուտ ստացված տեղեկատվությունից դուրս բերել առավել կարևոր տեղեկությունը:

Ավելի ձեռնտու սեգմենտը պետք է օժտված լինի բարձր իրացման մակարդակով, շահութաբերության բարձր մակարդակով, թույլ մրցակցությամբ և ազատ մուտքի հնարավորությամբ: Իրականում այսպիսի իդեալական կապակցում չի հանդիպում, այդ պատճառով կազմակերպությունը ընտրում է փոխզիջման տարբերակը:

Կանգնեցնելով ընտրությունը որոշակի սեգմենտի վրա՝ կազմակերպությունը պետք է որոշի, թե ինչպես թափանցել այդ սեգմենտների մեջ:

Եթե սեգմենտները պահպանվում են և նրանցում ներկա են մրցակից կազմակերպություններ, մինչ սեփական դիրքորոշման հարցի լուծումը, կազմակերպությունը պետք է որոշի մրցակիցների դիրքերը: Մրցակիցների դիրքերի հաշվառման համար կազմակերպությունը ունի երկու հնարավոր տարբերակ:

Առաջին՝ դիրքավորվել գոյություն ունեցող իր մրցակիցներից մեկի կողքին և սկսել պայքարը շուկայի իր բաժնի համար: Նման մարտավարությունն արդարացված է, եթե.

- շուկան բավականին մեծ է, որպեսզի նրանում տեղերը բավարար լինեն բոլոր մրցակցող կազմակերպությունների համար,

- կազմակերպությունն ունի մրցակցելու մեծ առավելություն, քանի որ ընտրված դիրքը մեծ մասով պատասխանում է կազմակերպության գործունեության ուժեղ կողմերով:

Երկրորդ՝ գտնել այնպիսի նյութ կամ տեխնոլոգիա, որոնցից դեռ չկա շուկայում և առաջարկել սպառողին այս ապրանքի հիման վրա ստեղծված ապրանք հատուկ առանձնահատկությամբ՝ դրանով սպառողին գրավելով իր կողմը: Բայց կազմակերպության ղեկավարությանը նախևառաջ անհրաժեշտ է համոզվել հետևյալում՝ կազմակերպության աշխատելու հնարավորությունը այսպիսի նյութերով կամ տեխնոլոգիայով, ապրանքի արտադրության հնարավորությունը պլանավորված գների սահմաններում, պոտենցիալ սպառողների բավականին քանակով, որոնք նախընտրությունը տալիս են տվյալ կազմակերպությանը:

Ընդունելով որոշում իր նոր արտադրանքի (արտադրանք «X») մրցող դիրքի մասին՝ շինարարական կազմակերպությունը մշակում է մարքեթինգային համակարգ:

Մարքեթինգային համակարգը մարքեթինգի փոփոխական հսկողության հանձնված գործոնների հավաքածուն է, որոնց ամբողջությունը ձեռնարկությունն օգտագործում է ձգտելու շուկայում առաջացնել ցանկալի պատասխան ռեակցիա:

Մարքեթինգային համակարգի մեջ մտնում է այն ամենը, ինչը կարող է ազդեցություն ցուցաբերել իրենց ապրանքի պահանջարկի համար: Այս հնարավորությունները խորհուրդ է տրվում միավորել հետևյալ խմբերում՝ գին, տարածման և խթանման մեթոդներ:

Գինը եղել և մնում է որպես հիմնական գործոն, ինչը որոշում է սպառողների ընտրությունը: Առավելագույն գինը որոշվում է պահանջարկով, նվազագույնը՝ արտադրության ծախսերով: Այս միջակայքում կազմակերպությունները պետք է ընտրեն գնի սեփական մակարդակ, ընդ որում նրանք կարող են օգտագործել տարբեր մոտեցումներ գնագոյացման հարցերում: Սակայն ցանկացած մոտեցման հիմքում պետք է կազմավորվեն նպատակներ, որոնք կազմակերպությունը դնում է իր առջև՝ իր

արտադրանքներով դուրս գալով շուկա: Շատ անգամ է նշվել, որ դիվերսիֆիկացիայի անցկացման գլխավոր նպատակն է անվնասաբերության ապահովումը, հեռացումը ճգնաժամային ֆինանսական վիճակից: Այդ պատճառով, որպեսզի ապահովվի աշխատանքը և արտադրության ապրանքների պահանջարկը, շինարարական կազմակերպությունները ստիպված են գնալ գների իջեցման: Այդ կազմակերպությունների համար գոյատևումը կարևոր է շահույթից: Քանի դեռ գների իջեցումը կծածկի ծախսերը, շինարարական կազմակերպությունները կարող են շարունակել իրենց գործունեությունը:

Մյուս պահը, որը կարող է ազդեցություն ունենալ գնի մակարդակի հաստատմանը, հանդիսանում է մրցակիցների ապրանքներն ու գները:

Գոյատևման ռազմավարությունը և նրա հետ կապված ցածր գների հաստատումը թույլ է տալիս կազմակերպությանը նոր շուկայում գրավել հաստատուն և ամուր դիրք:

Ժամանակակից մարքեթինգը պահանջում է արտադրվող ապրանքի մասին տեղեկատվության տեղայնացումը սպառողների մոտ: Խորհուրդ է տրվում օգտվել գովազդներից և վաճառահանման խթանումներից: Գովազդը և վաճառահանման խթանումը լուծում են այն խնդիրները, որոնք կանխորոշված են նախորդ փուլում:

Գովազդը բավականին ծախսատար ներդրում է, այդ պատճառով ֆինանսական միջոցների պակասուրդի պայմաններում կազմակերպությունից պահանջվում է հստակ և հակիրճ ձևակերպում արտադրանքի մասին: Ուշադրություն գրավելու համար օգտագործում են գովազդների ցուցադրում, գովազդը հրապարակում են նպատակային թերթերում:

Սպառողների վրա ազդեցությունը ուժեղացնելու և նրանց պահանջարկի մեծացման նպատակով կազմակերպությունը գովազդում է իր ապրանքը: Վաճառքի խթանումը խթանումների ազդեցության բազմազան միջոցների օգտագործումն է, որոնք նախատեսված են արագացնելու և(կամ) ուժեղացնելու շուկայի պատասխան ռեակցիան:

Այսպիսով, սպառողների համար արտադրանքի գրավիչ գին հաստատելու համար գովազդային գործունեությունը և վաճառքի խթանման չափը իրենցից ներկայացնում են միջոցառումների համակարգ, որոնք ապահովվում են կազմակերպության արտադրանքի շարժն ամբողջ շուկայի ընտրված սեգմենտներում:

Գոյություն ունեն շինարարական կազմակերպության համար արտադրական դիվերսիֆիկացիայի անցկացման 3 գլխավոր պատճառներ.

- եկամտի մեծացումը ակտիվների շահութաբերության մակարդակը կապիտալի ավելի գրավիչ գործունեության ոլորտ տեղափոխելու միջոցով,
- «հեռացում» հնարավոր սննկացումից՝ ձգտումը ամեն գնով հասնել կազմակերպության գործունեության շահութաբերությանը,
- կազմակերպության կադրային պոտենցիալի պահպանում՝ աշխատողների համար նոր աշխատանքային տեղերի ստեղծման ճանապարհով:

Առաջին դեպքում շինարարական կազմակերպությունը, նախապես ուսումնասիրելով իր ֆինանսական վիճակը և կապալային աշխատանքի շուկայի կոնյուկտուրան (իրավիճակը), ինչպես նաև ոչ շինարարական շուկաները, պլանավորման հիման վրա անցկացնում է արտադրության դիվերսիֆիկացիա:

Արտադրության դիվերսիֆիկացիայի համար մշակվում են գործարար-պլաններ՝ առանձնացվում են անհրաժեշտ ֆինանսական, նյութական և աշխատանքային պաշարներ, վերահսկվում են գործարար-պլանների իրացման քայլերը, հիմնավորվում են դրանց կատարնման արդյունքները:

Մյուս երկու դեպքերում անցկացվում է պլանից դուրս արտադրության դիվերսիֆիկացիա՝ կապալային տիպի առանց ֆինանսական միջոցների ներգործության:

Շինարարական արտադրության դիվերսիֆիկացիան տեղի է ունենում հիմնականում ներքին աճի հաշվին (մի կազմակերպության սահման-

ներում): Դիվերսիֆիկացիան արտաքին աճի հաշվին տեղի է ունենում շատ հազվադեպ:

Ռազմավարական նպատակի և արտադրության դիվերսիֆիկացիայի հնարավոր ոլորտի որոշումից հետո ընտրվում է դիվերսիֆիկացիայի օպտիմալ տարբերակ, այսինքն՝ կազմակերպության ներխուժումը շինարարական և ոչ շինարարական շուկաների նոր սեգմենտներ: Այնուհետև կազմվում է դիվերսիֆիկացիայի գործարար-պլան և մշակվում է համանման միջոցառում:

Արտադրության դիվերսիֆիկացիայի գործարար-պլանը պետք է իր մեջ ընդգրկի՝ շինարարական շուկայում կազմակերպության ներկա վիճակը, արտադրության շուկայի և դիվերսիֆիկացիայի աշխատանքի, ծառայության, արտադրանքի վաճառահանման հետապնդման և հետազոտման, արտադրական պլանի, մարքեթինգային, ֆինանսական պլանի ամփոփում:

Ամփոփման մեջ նշվում է գործարարության նպատակները՝ պատրաստվող ապրանքների ծավալի աճը, աշխատողների քանակի փոփոխությունը, արտադրության շահութաբերության փոփոխություն՝ դիվերսիֆիկացիայի իրականացնելու միջոցով: Երկրորդ և երրորդ մասերում անհրաժեշտ է լուսաբանել կազմակերպության կողմից զբաղված շինարարական շուկայի սեգմենտները, մրցակցության մակարդակը և անցկացնել դիվերսիֆիկացիայի ոլորտով պոտենցիալ մրցակիցների գործունեության հետազոտում:

Արտադրական պլանում պետք է ներկայացվեն արտադրության դիվերսիֆիկացիայի հիմնական ցուցանիշները՝ նշված պլանավորվող ռեսուրսներով: Պետք է առանձին ուշադրություն դարձնել կազմվող աշխատատեղերի քանակի և որակի վրա:

Մարքեթինգային պլանում պատկերվում է մարքեթինգային հայեցակարգը, գնագոյացման հարցերը, արտադրանքի վաճառահանման ռազմավարությունը: Ֆինանսական պլանը պետք է արտահայտի ըստ դիվերսիֆիկացիայի նախագծի եկամուտներն ու ծախսերը, տրված նախագծի շահութաբերությունը, ինչպես նաև լրացուցիչ կապիտալ ներդրման փոխհա-

տուցվելիության ժամկետները, որոնք ներգրավում են նախագծի իրականացման համար: Նոր արտադրանքով շուկա դուրս գալով շինարարական կազմակերպությունը համար սկսվում է դիվերսիֆիկացիայի միջոցառումների գործնական իրագործման փուլը: Բոլոր նախկին փուլերը, սկսած շուկայական հնարավորությունների հետազոտումից և վերջացրած մարքեթինգային համակարգի մշակմամբ՝ նախապատրաստական են: Ընդ որում դիվերսիֆիկացիայի միջոցառումների իրացման սահմանում առաջանում է ստացված արդյունքների գնահատման պահանջ: Դրա համար օգտագործվում են օպերատիվ, հաշվապահական, վիճակագրական և կառավարման հաշվառման տվյալները:

Դիվերսիֆիկացիայի կառավարման ընթացքը պետք է լինի անընդհատ: Բացի անընդհատությունից կառավարումը պետք է լինի պարբերաշրջանային, քանի որ շուկայական վիճակի փոփոխությունը և սպառողների ռեակցիան պետք է պատկերվի նրա հետագա գործունեության պլանավորման մեջ:

Խորհուրդ է տրվում դիվերսիֆիկացիայի ուղղության և մեթոդների ընտրման ժամանակ վերցնել սեփական արտադրության և աշխատանքային պաշարների ռացիոնալ օգտագործման խնդրի ելման կետը: Հնարավոր է, որ նման մոտեցումը կարող է սահմանափակել դիվերսիֆիկացիայի ուղղությունների ընտրության հնարավորությունը, բայց միևնույն ժամանակ նման սահմանափակումը դրական է անդրադառնում շինարարական կազմակերպության աշխատանքի վրա:

Այստեղ պետք է հաշվի առնել, որ կապելով դիվերսիֆիկացիայի ընթացքը և ավանդական գործունեությունը, շինարարական կազմակերպությունը ունենում է բարեհաջող հնարավորություն իրականացնել իր մրցակցային առավելությունները (արտադրական պոտենցիալը, տնտեսական կապերը) ընտրված սեգմենտներում՝ նպատակային շուկայի, քիչ ֆինանսական ծախսերով անցկացնել նշված դիվերսիֆիկացիայի միջոցառումները:

Համակցված տիպի արտադրության դիվերսիֆիկացիայի անցկացման տարբերակների համեմատության ժամանակ կարևոր նշանակություն ունեն.

- հիմնական գործունեության շահույթի չափերի ավելացումը կամ չպակասեցումը բազային ժամանակամիջոցի համեմատ ($ԲԺ_հ$): Եթե փոքրանում է արդյունաբերական նշանակության շինարարական օբյեկտների պայմանագրերի արժեքը ($ԲԺ^բ_{օպ}$), ապա նրանց փոխհատուցում են բնակարանային շինարարական կապալի պայմանագրերի ամփոփմամբ, կապիտալային շինարարությամբ և այլն.

$$ԲԺ_հ > ԲԺ^բ_{օպ}. \qquad (11.7)$$

- բարձր որակավորմամբ անձնակազմի քանակի պահպանումը ($Ք^դ_{բո}$), առաջին հերթին նրանց տեղափոխման միջոցով՝ հաջորդող աշխատանքների կատարման համար, օրինակ՝ ընդհանուր շինարարական աշխատանքները վերանորոգման շինարարական աշխատանքների հետ.

$$Ք^դ_{բո} \geq Ք^բ_{բո}. \qquad (11.8)$$

- դրամական միջոցների վերադարձման ակտիվ մասի ավելացումը կամ պահպանումը.

$$Ֆ^դ_ա \geq Ֆ^բ_ա: \qquad (11.9)$$

Եթե տրված երեք չափանիշները չկատարվող են, ապա յուրաքանչյուր կազմակերպություն ինքնուրույն է ընտրում գլխավոր չափանիշը: *Մեծմասամբ դա շինարարական կազմակերպության աշխատանքների շահութաբերության պահպանումն է դիվերսիֆիկացիայի անցկացումից հետո, այսինքն $ԲԺ^դ_հ > 0$, շահույթի չափերի փոքրացումը պետք է լինի նվազագույնը, այսինքն.*

$$ԲԺ^բ_հ - ԲԺ^դ_հ \to \min: \qquad (11.10)$$

Որոշ շինարարական կազմակերպություններ առաջին հերթին ձգտում են պահպանել լավագույն աշխատողներին (ամենաորակավորված և լավ աշխատող), հետևաբար.

$$Ք^{դ}_{բո} - Ք^{բ}_{բո} \to \min: \qquad (11.11)$$

Դիվերսիֆիկացիայի անցկացման նրանց կարգախոսն է (նշանաբանը) ցանկացած գնով պահպանել կազմակերպության մրցունակ աշխատանքային պոտենցիալը:

Լրացուցիչ կապիտալ ներդրումների դեպքում դիվերսիֆիկացիայի նախագծի անցկացման ծախսերը խորհուրդ է տրվում համեմատել տարբեր տարբերակներին հետևյալ ցուցանիշներով.

- դիվերսիֆիկացիայի տնտեսական արդյունավետությամբ ($ԷԱ_դ$),
- ծախսերի փոխհատուցվելիության ժամկետը, որոնք կապված են դիվերսիֆիկացիայի նախագծի ներդրման հետ ($Ժ_{փոխ.դ}$):

Ծախսեր, որոնք կապված են դիվերսիֆիկացիայի անցկացման հետ (Ծդ), կազմված են կազմակերպության հետևյալ ծախսերից.

- մարքեթինգային հետազոտման արժեքից ($Ծ_{մարք}$),
- ձեռքբերման, շինարարության, մոնտաժի կամ օբյեկտների վարձակալության ծախսերը՝ սարքավորումներ, մեքենաներ, գործիքներ, արտադրական շենքեր (ԾՆՕՎ),
- ապրանքաարտադրական պաշարների ձեռքբերման ծախսերը (ԾԱԱՊ),
- դիվերսիֆիկացիա արտադրության աշխատողների վերապատրաստման կամ վարձման ծախսերը ($Ծ_{աշխ}$),
- դիվերսիֆիկացիա վարկի օգտագործման համար տոկոսների վճարման ծախսերը ($Ծ_{վարկ}$),
- այլ ծախսեր ($Ծ_{այլ}$):

Հետևաբար դիվերսիֆիկացիայի անցկացման ծախսերը հաշվարկվում են որպես վերը նշված ծախսերի ամբողջություն հետևյալ բանաձևով.

$$Ծ_դ = Ծ_{մարք} + ԾՆՕՎ + ԾԱԱՊ + Ծ_{աշխ} + Ծ_{վարկ} + Ծ_{այլ}: \qquad (11.12)$$

Դիվերսֆիկիացիայի համար փոխհատուցվելիության ծախսերի ժամկետը ($ժ_{փոխ.դ.}$) հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$ժ_{փոխ.դ.} = \frac{Ծ_դ}{ՄՇ_դ}, \quad (11.13)$$

որտեղ $ՄՇ_դ$ դիվերսիֆիկացիայի գործունեությունից ստացված տարեկան մաքուր շահույթն է (հազար դրամ):

Եթե $Ծ_դ$ աննշան է, ապա խորհուրդ է տրվում փոխհատուցվելիության ժամկետը որոշել ամիսներում, եթե դիվերսիֆիկացիայի ծրագիրը կապիտալ տարողությամբ է, ապա ժամկետը որոշվում է տարիներով:

Դիվերսիֆիկացիայի նախագծի (գործարար-պլան) իրականացման տնտեսական արդյունավետությունը (ԷԱդ) հաշվարկվում է որպես տարբերություն տնտեսական արդյունքի և ծախսերի միջև՝ կապված տրված նախագծի իրացման հետ.

$$ԷԱ_դ = ՀՇ_դ - Ծ_դ, \quad (11.14)$$

որտեղ $ՀՇ_դ$ դիվերսիֆիկացիայի համախառն շահույթն է:

Տվյալ բանաձևը ընդունվում է դիվերսիֆիկացիայի անցկացման ընթացքում՝ մեկ տարում: Եթե ծրագիրը տևում է մի քանի տարի ($Ժ_դ$) սովորաբար 1-ից 5 տարի, իսկ այդպիսի նախագծերը մեծամասնություն են, ապա 11.14 բանաձևը փոխվում է (11.15) բանաձևի.

$$ԷԱ_դ = \sum_{ժ=0}^{ժ_դ} (Գ_դ - ԻԱ_դ) \times ԶԳ_դ - Ծ_դ \times Գ_ժ, \quad (11.15)$$

որտեղ $Գ_դ$-ն դիվերսիֆիկացիոն արտադրանքի իրացումից ստացված գումարը առանց ԱԱՀ-ի (հազար դրամ), $ԻԱ_դ$-ն՝ իրացված արտադրանքի լրիվ ինքնարժեքն է, $ԶԳ_դ$-ն զեղչման գործակից՝ հաշված դիվերսիֆիկացիայի նախագծի ֆունկցիոնալացման շրջանում՝ $Ժ_դ$, $Գ_ժ$-ն՝ զեղչման գործակիցը՝ հաշված դիվերսիֆիկացիայի ծախսերի փոխհատուցվելիության շրջանում:

Ոչ համակցված տիպի արտադրության դիվերսիֆիկացիայի տարբերակների ընտրության ժամանակ շինարարական ձեռնարկությունը,

կախված իր ֆինանսական վիճակից, պետք է ղեկավարվեն հետևյալ չափանիշներից (տե՛ս Աղյուսակ 11.3):

Ցուցանիշների ներկայացված համակարգը թույլատրում է անցկացնել դիվերսիֆիկացիայի արդյունքների քանակական և որակական գնահատում: Այն կարելի է օգտագործել ինչպես սկզբնական փուլում, այնպես էլ դիվերսիֆիկացման նախագծի իրացման փուլում: Վերջնական նպատակների հաշվառումով մշակված դիվերսիֆիկացիան թույլ է տալիս շինարարական կազմակերպություններին կատարել արտադրության դիվերսիֆիկացիայի տարբերակների և արդյունքների գնահատականների ընտրություն:

Աղյուսակ 11.3

Ձեռնարկության ֆինանսական վիճակը		
Կայուն	Ճգնաժամային	Անկայուն
Դիվերսիֆիկացիայի նպատակները		
• Շահույթի չափերի ավելցում, • Նոր աշխատատեղերի ստեղծում, • Բարձր որակավորմամբ աշխատողների աշխատավարձի ավելացում, • Բարձր տեխնոլոգիական արտադրանքի տեսակարար կշռի բարձրացում	• Ամեն գնով խուսափել ձեռնարկության սնանկացումից և ձեռնարկության վճարունակության նորմալ մակարդակի վերականգնում, • Ամենաշատ բարձր որակավորմամ անձնակազմի պահպանում	• Շահույթի չափերի ավելացում, • Նոր աշխատատեղերի ստեծղում որակավորված աշխատողների համար, • Օգտագործումը ավելցուկ սարքավորումների, արտադրական հրապարակների
Դիվերսիֆիկացիայի տարբերակների ընտրության չափանիշները		
• $Բժ_{ղ}>Բժ^{բ}$ • $Ք_{ղ}>Ք_{բ}$ • $Ծժ^{ղ}_{բո}>Ծժ^{բ}_{բո}$	• $Բժ_{ղ}>0$ • $Ա\geq1$ • $Ք^{ղ}_{բո}\geq Ք^{բ}_{բո}$	• $Բժ_{ղ}\geq Բժ^{բ}$ • $Ֆ^{դ}_{բո}\geq Ք^{բ}_{բո}$ • $Ֆ^{դ}_{ա}\geq Ֆ^{բ}_{ա}$

11.4. Արտադրատնտեսական գործունեության արդյունավետության հետազոտում

Արտադրատնտեսական գործունեության տնտեսական արդյունավետությունը կարող է բնութագրվել արդյունքի վերաբերյալ՝ նրանով ստացված ռեսուրսների կապով:

Որպես ազդեցություն ցանկալի է օգտագործել շահույթի մեծությունը: Սակայն նույն ազդեցությունը կարող է ստացվել շինարարական կազմակերպության հիմնական և արտաշրջանառու միջոցների գույքի տարբեր մեծությունների ժամանակ: Այդ պատճառով արտադրատնտեսական գործունեությունում որպես օգտագործվող պաշարներ ընդունում են գույքի միջին մեծությունը՝կախված շինարարական արտադարանքի իրացման ծավալից, նրա կատարման ծախսերից, հետևաբար և շահույթները շինարարական արտադրանքի իրացումից, ինչպես նաև գույքի կանխիկ ծավալի և կազմության ռացիոնալության աստիճանից: Արդյունավետության գնահատման այսպիսի մոտեցումը թույլ է տալիս գնահատել արդյունավետության մակարդակը:

Շինարարական կազմակերպության գործունեության արդյունավետության ընդհանրացնող ցուցանիշը պետք է բնութագրի կառավարելու ընդունակության մակարդակը և շինարարական կազմակերպության կոլեկտիվին հասցնի առավելագույն արդյունքի՝ շինարարական կազմակերպության պաշարների նվազեցման ժամանակ, և կարող է ներկայացվել հետևյալ բանաձևով.

$$Ա_{բ} = \frac{Շ}{Գ}, \qquad (11.16)$$

որտեղ $Ա_բ$-ն արտադրատնտեսական գործունեության բացարձակապես արդյունավետության ընդհանրացնող ցուցանիշն է, Շ-ն՝ շահույթն է, որն ստացվել է կազմակերպությունից հետազոտման ժամանակաշրջանի ընթացքում, Գ-ն՝ շինարարական կազմակերպության ամբողջական գույքի միջին տարեկան արժեքն է:

Արտադրատնտեսական գործունեության արդյունավետության ցուցանիշի մեծությունը կախված է շինարարական արտադրանքի իրացման ծավալից, նրա կատարման ծախսերից, հետևաբար, և շահույթը շինարարական արտադրանքի իրացումից, ինչպես նաև գույքի կանխիկ ծավալի և կազմության ռացիոնալության աստիճանից: Դա պայմանավորվում է որոշված մակարդակով գույքի վերադարձմամբ շահութաբերությանը (Շհ) հասած մակարդակի և գույքի շրջանառության (Շրջ) մակարդակի հաշվին:

Գործունեության արդյունավետության ցուցանիշը կարելի դասավորել երկու կազմությամբ՝

$$Ա_{բ} = \frac{Շ}{ՄԳ} \times \frac{ՄԳ_{շա}}{Գ}, \qquad (11.17)$$

որտեղ ՄԳշա-ն շինարարական արտադրանքի իրացումից ստացված գումարն է:

Օգտագործելով շղթայական տեղադրման մեթոդը՝ կարելի է որոշել վերը նշված գործոններից յուրաքանչյուրի ազդեցության մակարդակը արդյունավետության ցուցանիշի դինամիկայի վրա տոկոսներով կամ միավոր մասով.

$$\Delta Ա_{բշղ} = \left(Շհ_{շա1} - Շհ_{շա0}\right) \times Շրջ_{գ0} : \qquad (11.18)$$

Գույքի շրջանառության փոփոխության ազդեցությունը.

$$\Delta Ա_{բգշ} = \left(Շրջ_{գ1} - Շրջ_{գ0}\right) \times Շհ_{շա1} : \qquad (11.19)$$

Կախված ստացված արդյունքներից՝ անհրաժեշտ է որոշել հաջորդ հետազոտման առաջնային ուղղությունը:

Կախված շինարարական կազմակերպության գործունեության պայմաններից և հարկերի կայունությունից գործունեության արդյունավետության ցուցանիշի հաշվարկի համար օգտագործում են գործողության շահույթի ցուցանիշը (հաշվեկշռային կամ մաքուր շահույթը):

Յուրաքանչյուր շինարարական կազմակերպություն, որը հետաքրքրված է իր արտադրատնտեսական գործունեության արդյունավետության բարձրացմամբ, անցկացնում է հաշվարկ իրացումից սպասվող գումարի մեծության, նրա ստեղծման համար փոփոխական և հաստատուն ծախսերի,

իսկ դա նշանակում է ունենալ իր հիմնական գործունեության շահույթի ցուցանիշի հաշվարկը, քանի որ հիմնական գործունեության շահույթը հանդիսանում է ամենաշատ կշիռ ունեցողը և որոշիչը շահույթում:

Նրա հետազոտմանն անհրաժեշտ է մեծ ուշադրություն դարձնել: Շահույթի հետազոտման առաջին փուլում անցկացվում է փաստացի ստացվող շահույթի ընդհանուր համադրում, այդ թվում նրա կազմության ստորաբաժանումներում:

Երկրորդ փուլում որոշվում է փաստացի շահույթի հաշվարկից շեղում շինարարական արտադրանքի միավոր ծախսերի ծավալի մեծության փոփոխության և շինարարական արտադրության ծավալի փոփոխության ազդեցության հաշվին:

Այդ նպատակով կարելի է օգտագործել շղթայական տեղադրման մեթոդը, որի օգնությամբ որոշվում է շինարարական արտադրության ծավալի փոփոխության ազդեցությունը շահույթի ծավալի վրա.

$$\Delta Շ = \left(ՍԳ_{շա} - ՍԳ_{շա.ծվ} \right) \times \left(1 - Շ_{մ} \right), \qquad (11.20)$$

որտեղ Շմ-ն՝ շինարարական արտադրանքի միավորի ծախսերի մակարդակն է:

Շինարարական արտադրանքի միավորի ծախսերի մակարդակի փոփոխության ազդեցությունն որոշվում է հետևյալ բանաձևով.

$$\Delta Շ = \left(Շ_{հ} - Շ_{Ф} \right) \times ՍԳ_{շա1}, \qquad (11.21)$$

որտեղ Շհ-ն՝ շինարարական արտադրանքի միավորի ծախսերի հաշվարկային մակարդակն է, Շф-ն՝ շինարարական արտադրանքի միավորի ծախսերի փաստացի մակարդակն է:

Անցկացված հաշվարկների արդյունքներով առաջանում է հնարավորություն ընտրել ամենաշատ գոյություն ունեցող հետագա ուղղությունները, շինարարական արտադրանքի իրացումից ստացված շահույթի ավելի խորը հետազոտում: Ցանկացած դեպքում փաստացի ստացվող շահույթի մեծության վրա ազդում են շինարարական արտադրանքի ծավալը և

իրացման ծավալի կազմությունը, արժեզրկման մակարդակը, գները և ընդհանուր ծախսերը:

11.5. Կառավարչական որոշումների ընդունումը շինարարությունում

Կարևոր վարչական որոշում է համարվում կազմակերպության արտադրական հզորության ճիշտ հիմնավորումն ու հաստատումը՝ արտադրության ինչպիսի ծավալներում այն չի կարող շահույթ բերել:

Այդ նպատակով հաշվարկում են

- իրացման անվնասաբերության ծավալը, որի դեպքում ապահովվում է կազմակերպության մշտական ծախսերի լրիվ փոխհատուցումը,
- շինարարական արտադրանքի իրացման ծավալը, որը երաշխավորում է կազմակերպությանը անհրաժեշտ շահույթի գումարը,
- կազմակերպության անվտանգ գոտին (ֆինանսական կայունության պաշարը):

Այս ցուցանիշներն որոշելու համար կարելի է օգտագործել գրաֆիկական և վերլուծական միջոցներ:

Շինարարական կազմակերպության ծախսերը բաժանվում են երկու խմբի՝

- *Փոփոխական*՝ կախված շինարարական արտադրանքի ծավալից և կառուցվածքից,
- *Հաստատուն*՝ կապված է շինարարական կազմակերպության վարչական և առևտրային գործունեության ծախսերից, ինչպես նաև շինարարական արտադրության կազմակերպման հետ:

Հետազոտման ընթացքում հաշվարկվում են համախառն շահույթի ցուցանիշները (մարժինալային եկամտի) ($Ե_մ$), շինարարական արտադրանքի իրացումից շահույթները ($Շ_շա$), մարժինալային եկամտի բաժինը ($Ե_Բ$), ինչպես նաև շինարարական արտադրանքի շահութաբերության մակարդակը ($Շհ_շա$).

$$Ե_մ = ՀԾ + Շ_շա = ՍԳ_շա - ՓԾ = ՍԳ_շա Ե_Բ$$

$$Ե_Բ = \frac{Ե_մ}{ՍԳ_շա} \qquad (11.22)$$

$$Շ_շա = ՍԳ_շա Ե_Բ - ՀԾ$$

$$Ե_բ = \sum di Ե_բ , di ՍԳ / ՍԳ_{շա}$$

$$Շհ_{շա} = \frac{Շ_{շա}}{ՍԳ_{շա}}: \qquad (11.23)$$

Հաշվի առնելով շինարարական արտադրանքի իրացման ծախսերը և շահույթները՝ անհրաժեշտ է որոշել նաև ստացված գումարների կրիտիկական վիճակը (ՍԳկր), որի դեպքում շինարարական կազմակերպությունը ի վիճակի կլինի ծածկել իր փոփոխական և հաստատուն ծախսերը՝ չստանալով շահույթ:

Այդպիսի հաշվարկը թույլ է տալիս սահմաններում պահել շինարարական կազմակերպության ամենավնասաբեր գործունեությունը: Ստացված գումարի ծավալի նվազեցումը կրիտիկականից ցածրի կբերի գործունեության կորուստի և հակառակը՝ ծավալի մեծացումը կբերի շահույթի աճի՝ պահպանելով մյուս նախնական տվյալների մեծությունը, որոնք ընդունվում են հաշվարկների համար: Պարզ է, որ փոփոխական կամ հաստատուն ծախսերի կրճատումը կբերի իրացման կրիտիկական ծավալի կրճատմանը:

Իրացման կրիտիկական ծավալը որոշվում է հետևյալ բանաձևով.

$$ՍԳ_{կր} = \frac{ՀՇ}{Ե_բ}: \qquad (11.24)$$

Դիտարկենք պայմանական օրինակ, որի տվյալները կթույլատրեն գնահատել արդյունավետությունը ձևակերպման, փոփոխության և արտադրական ծրագրի փաստացի կատարման (տես Աղյուսակ 11.4):

Շինարարական կազմակերպության մեկ տարվա հաստատուն ծախսերի չափը կազմում է 16 միլիարդ դրամ:

Որոշենք շինարարական արտադրանքի իրացման կրիտիկական ծավալը հետևյալ բանաձևով.

$$ՍԳ_{կր} = \frac{16.0}{0.465} = 34.4 մլրդ դրամ:$$

Եթե շինարարական կազմակերպությունը կարողացավ ձևակերպել պատվերների պորտֆելը 41 միլիարդ դրամից բարձր ծավալով, սպասվող շահույթի մեծությունը կկազմի 19.13-16.00=3.13 միլիարդ դրամ, իսկ շինարարական արտադրանքի շահութաբերության մակարդակը՝

$$\left(\frac{3.13}{41.12} \times 100\right) = 7.61\%:$$

Աղյուսակ 11.4

Շինարարական կազմակերպության արտադրական ծրագիրը հետազոտվող տարում

Շինարարության օբյեկտները	Օբյեկտի վրա պայմանագրային գինը	Օբյեկտի վրա փոփոխական ծախսերը	Օբյեկտների քանակը	B-ի իրացումից ստացված գումարը (հ2xհ4)	$Գ_ձ$ փոփոխական ծախսերի գումարը (հ3xհ4)	$Ե_ա$ մարժինալային եկամուտի ծավալը (հ5-հ6)	Մարժինալային եկամուտի բաժնեմասը $Ե_լ$ (հ7/հ5)
Արդյունաբերական օբյեկտ A	4500	4000	2	15000	8000	7000	0.467
Արդյունաբերական օբյեկտ B	6300	4000	1	6300	4000	2300	0.365
Գյուղտնտեսական ձեռնարկություն C	230	90	180	60	3	1	690
D	90	540	60	150	30	0.217	0.333
18 հարկանի բնակելի շենք	5700	2400	2	11400	4800	6600	0.579
Կոտտեջ	370	190	12	4440	2280	2160	0.489
Կոմունալ շինարարություն	1500	950	1	1500	950	550	0.355
Օբյեկտի վերակառուցում	1700	1360	1	1700	1360	340	0.200
Ընդամենը				*41120*	*21990*	*19130*	*0.465*

Ենթադրենք, որ մրցակցության պայքարի ազդեցության ներքո պատվիրատուն շինարարական կազմակերպությանը առաջարկել է նոր, ավելի

ցածր պայմանագրային արժեք՝ A օբյեկտով՝ 6300 մլն. դրամ, կոտտեդջով՝ 350 մլն. դրամ:

Պահանջվում է որոշել, թե ինչպես կազդի նման առաջարկության ընդունումը (տարբերակ առաջին փոփոխություն) կամ դրանից հրաժարվելը (երկրորդ տարբերակ) իրացման, մարժինալային եկամտի մեծության և բաժնեմասի, շինարարական արտադրանքի շահույթի և շահութաբերության մեծությաունների ցուցանիշների վրա: Հաշվարկների արդյունքները բերված են Աղյուսակ 11.5-ում: Ինչպես երևում է առաջին տարբերակով, բազայինի համեմատ շինարարական արտադրանքի շահութաբերությունը կտրուկ կրճատվում է 83.3%-ով՝ իրացումից ստացված գումարների ծավալի իջեցման և հատկապես շահույթի (84.4%-ով) մեծության կրճատման հաշվին: Պատվիրատուի նոր առաջարկություններից հրաժարվելը ավելի կիջեցնի իրացումից ստացված գումարների ծավալը և կբերի մեծության բացասական ազդեցությանը: Այդպիսի արտադրական ծրագրի կատարումը շահույթի փոխարեն կբերի 6 միլիարդ դրամ կորուստ, իսկ շահութաբերության մակարդակը կարտահայտվի բացասական՝ վկայելով, որ շինարարական արտադրանքի իրացման յուրաքանչյուր միավոր կբերի կորուստի 0.273 միավորի ստացմանը:

Աղյուսակ 11.5

Արտադրական ծրագրերի միջակա փոփոխությունների արդյունավետության հիմնական ցուցանիշներ (մլն. դր.)

Ցուցանիշները	Տարբերակները	
	I	II
Շինարարական արտադրանքի իրացումից ստացված գումար (ՍԳ)	38480	21680
Փոփոխական ծախսեր (ՓԾ)	21990	11710
Մարժինալային եկամուտը (Եմ)	16490	9970
Հաստատուն ծախսեր ՀԾ	1600	1600
Մարժինային եկամուտի բաժնեմաս Եբ	0.429	0.460
Արտադրանքի իրացումից շահույթը $Շ_{շա}$	490	-6030
Շինարարական արտադրանքի շահութաբերության մակարդակը $Շհ_{շա}$	1.27%	-27.8%

Այսպիսով, երկու տարբերակներն էլ չեն կարող բավարարել շինարարական կազմակերպությանը՝ ոչ ցածր շահութաբերության արտադրություն, առավել ևս ոչ կորուստային:

Այդ պատճառով ստեղծված իրավիճակից որպես բնական ելք կարող է լինել նոր պատվիրատուների ավելի նպատակաուղղված փնտրումը: Նման փնտրումը պահանջում է մասնագիտական մոտեցում և կազմակերպությանը կբերի հատուկ մարքեթինգային ծառայության, որի տարեկան սպասարկումը կմեծացնի մշտական ծախսերը 60 մլն. դրամով: Արդյունքում մասնագետների գործառնությունը՝ ըստ մարքեթինգի հաջողվեց ներգրավել լրացուցիչ պատվիրատուներ շինարարության երկու արդյունաբերական օբյեկտների B և երկու 18 հարկանի բնակելի շենքերի համար:

Պահանջվում է գնահատել արտադրական ծրագրի ձևակերպման երկու նոր տարբերակները՝ ներգրավել լրացուցիչ պատվիրատուներ և համաձայնվել նախկին պատվիրատուների նոր առաջարկությունների՝ ըստ պայմանագրային գների (տարբերակ երրորդ) կամ արտադրության ծրագրում ավելացնել նոր պատվիրատուներ, որոնք հրաժարվել են A շինարարական օբյեկտի նոր պայմաններից և քոտեդջներից (տարբերակ չորրորդ):

Յուրաքանչյուր տարբերակների հաշվարկների արդյունքները ներկայացված են Աղյուսակ 11.6:

Հաշվարկները ցույց են տվել, որ արտադրության ծրագրի ձևակերպման համար ավելի արդյունավետ միջոց է հանդիսանում երրորդ տարբերակը, որը տարբերվում է մյուսներից ստացված գումարների և շահույթի ավելի նշանակալից ծավալով, ինչպես նաև շինարարական արտադրանքի շահութաբերության մակարդակով, որի դեպքում շինարարական արտադրանքի յուրաքանչյուր միավոր կազմակերպությունն ստանում է շահույթի 18%-ից բարձր:

Աղյուսակ 11.6

Արդյունաբերության ծրագրի վերջնական փոփոխության արդյունավետության հիմնական ցուցանիշները (մլն. դր.)

Ցուցանիշներ	Տարբերակներ	
	III	IV
Շինարարական արտադրանքի իրացումից ստացված գումար (ՍԳ)	62480	45680
Փոփոխական ծախսեր (ՓԾ)	34790	24510
Մարժինալային եկամուտ (Եմ)	27690	21170
Հաստատուն Ծախսեր (ՀԾ)	16060	18080
Մարժինալային եկամուտի բաժնեմաս (Եբ)	0.443	0.352
Արտադրանքի իրացումից շահույթ ($Շ_{շա}$)	11830	5110
Շինարարական արտադրանքի շահութաբերության մակարդակ ($Շհ_{շա}$)	18.61%	11.18%

Այսպիսով, այդպիսի արտադրության ծրագրի կատարումն ապահովում է շինարարական կազմակերպությանը առավելագույն շահույթով և ավելի շատ շահութաբերության բարձր մակարդակով:

Պայմանականորեն կընդունենք, որ շինարարական կազմակերպությունն ամբողջությամբ կատարել է ընդունված արտադրության ծրագիրը ըստ երրորդ տարբերակի հաշվարկներին համապատասխան և ստացել է շինարարական արտադրանքի իրացումից սպասվելիք շահույթի գումարը՝ բազային գումարն ավելացնելով 8.5 միլիարդ դրամով (11.63-3.13): Ընդ որում՝ փոխվում է նաև շինարարական արտադրանքի շահութաբերության մակարդակը 7.61% -18.61%:

Հետազոտման միջոցով կորոշենք, թե ինչպես է ազդել իրացման և նրա կազմության ծավալի փոփոխության վրա շահույթի գերաճը: Դրա համար կատարենք հաշվարկներ հետևյալ բանաձևերի համաձայն.

Իրացման ծավալի փոփոխությունը.

$$\Delta ЧՍԳ = \left(ՍԳ_{շա1} - ՍԳ_{շա}\right) \times ՉՀ_{շա} = \left[\frac{62.48 - 41.12}{100}\right] \times 7.61 = 1.625 \text{մլրդ դրամ}:$$

Շինարարական արտադրանքի շահութաբերության մակարդակի փոփոխությունը.

$$\Delta ЧУГ = (Чh_{շա1} - Чh_{շա}) \times УГ_{շա} = (18.61 - 7.61)62.48 = 6.879 մլրդ դրամ:$$

Այսպիսով, շահույթի 80%-ից բարձր գերաճն ապահոված է արտադրության ծրագրի մեջ ավելի արդյունավետ օբյեկտներ ընդգրկելու հաշվին, որոնք ունեն մարժինալային եկամտի համեմատաբար ավելի բարձր բաժնեմաս: Շահույթի մոտ 20% գերաճի դեպքում հասանելի է իրացման ծավալի մեծության արդյունքը:

Իրական պայմաններում անհրաժեշտ է կատարել նաև ծախսերի հետազոտում: Դա պայմանավորված է շինարարական կազմակերպության գործառնական փոփոխական պայմաններից, որոնք կապված են շուկայական հարաբերություններին անցնելու հետ:

Շինարարական կազմակերպությունը պետք է ձգտի նրան, որ արտադրության արդյունքներն աճեն արագ, քան նրանց վրա կատարված ծախսերը: Շինարարական կազմակերպության նման զարգացման հիմք է հանդիսանում արտադրությունում գիտության և տեխնիկայի նոր հաջողությունների լայն ներդրումը: Բոլոր տնտեսական համակարգերում շինարարական արտադրանքի ինքնարժեքը շարունակում է մնալ պաշարների պահանջարկի ինտեսիֆիկացիայի և արդյունավետության ընդհանրացված ցուցանիշներից մեկը: Ծախսերի հետազոտման նպատակն է բարձրացնել նյութատեխնիկական, աշխատանքային և դրամական պաշարների օգտագործման արդյունավետությունը շինարարական արտադրանքի արտադրության և իրացման ընթացքում: Փոփոխական ծախսերի հետազոտման արդյունքները բնութագրում են շինարարական կազմակերպության անձնակազմի տնտեսական ակտիվության մակարդակը, իսկ հաստատուն ծախսերը՝ անձնակազմը ղեկավարելու արդյունավետությունը:

11.6.Շինարարական կազմակերպության ֆինանսական վիճակի գնահատումը և ֆինանսական հաշվետվությունը

Շինարարական արտադրության, ֆինանսների ղեկավարման, ներդրումների ոլորտում վարչական որոշումների ընդունման համար անհրաժեշտ է մշտական տեղեկություն ունենալ համապատասխան հարցերում, որոնք հանդիսանում են ընտրության, հետազոտման, գնահատման

և ելակետային տեղեկատվության կուտակման արդյունքները: Անհրաժեշտ է տվյալների վերլուծական ընթերցում՝ ելնելով հետազոտման և ղեկավարման նպատակներից:

Ֆինանսական հաշվետվության վերլուծական ընթերցման հիմնական մեթոդը դեդուկտիվ է՝ ընդհանուրից մինչև մասնավոր: Բայց այն պետք է օգտագործել շատ անգամ: Նման հետազոտման սկզբում պայմանական վերարտադրվում է տնտեսական գործոնների և իրադարձությունների ժամանակագրական և տրամաբանական հաջորդականությունը:

Ֆինանսական հաշվետվության գոյություն ունեցող հետազոտման մեթոդներից կարելի է առանձնացնել վեցը.

- *հորիզոնական (ժամանակավոր) հետազոտում*՝ հաշվետվության յուրաքանչյուր դիրքի համեմատումը նախորդ ժամանակամիջոցի հետ,
- *ուղղահայաց (կառուցվածքային) հետազոտում*՝ ամբողջ ֆինանսական ցուցանիշների կառուցվածքի որոշումն արդյունքի վրա հաշվետվության յուրաքանչյուր դիրքի ազդեցության դրսևորմամբ,
- *տրենդային հաշվետվության հետազոտում*՝ յուրաքանչյուր դիրքի համեմատումը նախորդող ժամանակամիջոցի շարքի հետ և տրենդի որոշումը, այսինքն՝ դինամիկայի հիմնական տենդենցիայի ցուցանիշները: Տրենդի օգնությամբ ձևակերպում են ցուցանիշների հնարավոր նշանակությունը՝ արագացում, հետևաբար անցկացվում է հեռանկարային կանխատեսման հետազոտում,
- *հարաբերական ցուցանիշների հետազոտում (գործակիցներ)*՝ հարաբերությունների հաշվարկը հաշվետվության առանձին դիրքերի միջև կամ հաշվետվության տարբեր ձևերի դիրքերի միջև,
- *համեմատական հետազոտում*՝ որպես հաշվետվության ամփոփիչ ցուցանիշների ներքին տնտեսական հետազոտում ըստ կազմակերպությունների, ենթակա կազմակերպությունների, արտադրամասերի առանձին ցուցանիշների,
- *գործոնային հետազոտում*՝ արդյունքային ցուցանիշի վրա առանձին գործոնների ազդեցության հետազոտում՝ հետազոտման դետերմինավորված կամ քաոսային գործելաձևերի օգնությամբ: Ընդ որում՝ գործոնային հետազոտումը կարող է լինել ինչպես ուղիղ, երբ արդյունքների ցուցանիշը մասնատում են բաղադրատարրերի

մասերի, այնպես և հակառակը, երբ նրա առանձին տարրերը միավորվում են ընդհանուր արդյունքային ցուցանիշում:

Ֆինանսական վիճակի հետազոտման ավելի լայն օգտագործվող գործիքներ են հանդիսանում գործակիցները: *Ֆինանասական գործակիցների հետազոտումը թույլատրում է հայտնաբերել փակ երևույթների հայտանիշները, խնդիրները, որոնք պահանջում են ավելի խորն ուսումնասիրություն:* Ամենից տարածված և ուսումնասիրված հանդիսանում են հետևյալ ֆինանսական գործակիցները՝

- իրացվելիության,
- գործնական ակտիվության,
- ֆինանսական կայունության,
- շահութաբերության:

Ֆինանասական վիճակը համակարգային հասկացություն է, որը բնութագրվում է ցուցանիշների համակարգով պատկերված ֆինանսական պաշարների կանխիկությամբ, տեղաբախշամբ և օգտագործմամբ, որոնք հանդիսանում են շինարարական կազմակերպության ֆինանսական հարաբերությունների համակարգերի բոլոր տարրերի փոխազդեցության արդյունք:

Կազմակերպության ֆինանասական վիճակը կախված է նրա արտադրական, առևտրային և ֆինանսական գործունեության արդյունքներից: Շինարարական արտադրանքի իրացման հետ կապված՝ դժվարությունները բերում են դրամական միջոցների ստացման, կրճատման, որի արդյունքում վատանում է նրա վճարունակությունը: Կա նաև հակառակ կապը, քանի որ դրամական միջոցների բացակայությունը կարող է բերել նյութական պաշարների ապահովման ընդհատմանը, հետևաբար և արտադրական գործընթացում:

Ֆինանասական գործունեությունը պետք է լինի ֆինանասական պաշարների սիստեմատիկ ստացման և արդյունավետ օգտագերծման ապահովմամբ, հաշվարկային և վարկային կանոնակարգի պահպանմամբ, սեփական և փոխառու միջոցների ռացիոնալ փոխադարձ կապերին հասնելով, ֆինանսական կայունությամբ՝ կազմակերպության արդյունավետ ֆունկցիոնալացման նպատակով: Կայուն վիճակին հասնելու իրագործման դերը պատկանում է հետազոտմանը:

Ներքին հետազոտումը իրականացվում է կազմակերպության ղեկավարելու անհրաժեշտության համար:

Նրա արդյունքներն օգտագործում են նաև ֆինանսական վիճակի պլանավորման, հսկողության և կանխագուշակման համար: Արտաքին հետազոտումն իրականանում է հետազոտման արտաքին սուբյեկտներով: Այդ հետազոտման կազմությունը որոշվում է սեփականատերերի, գործընկերների, ղեկավարող և հսկող օրգանների շահերից ելնելով:

Հետազոտման նման բաժանումը մի քիչ պայմանական է, այդ պատճառով է, որ ներքին հետազոտումը կարող է դիտվել որպես արտաքին հետազոտման շարունակությունը և հակառակը, իսկ տեղեկատվության աղբյուրների մասերը օգտագործվում են երկու տեսքերի համար էլ:

Արտաքին ֆինանսական հետազոտումը հիմնականում բաղկացած է.

- շահույթի բացարձակ ցուցանիշների հետազոտում,
- շահութաբերությանը վերաբերող ցուցանիշների հետազոտում,
- ֆինանասական վիճակի, շուկայական կայունության, հաշվեկշռի իրացվելիության, ձեռնարկության վճարունակության հետազոտում,
- ձեռնարկության ֆինանասական վիճակի տնտեսական հետազոտություն և էմիտենտների (արժեթղթերի թողարկիչ հաստատություն) վարկանիշի գնահատում:

Ֆինանասական վիճակի ներքին հետազոտումը՝ որպես տեղեկատվության աղբյուր, բացի հրապարակայնորեն հաշվետվությունից՝ օգտագործում են նաև համակարգային հաշվապահական հաշվետվության այլ տվյալները, արտադրության տեխնիկական նախապատրաստման մասին տվյալները, նորմատիվ և պլանային տեղեկատվություն և այլն:

Ներքին հետազոտման հիմնական պարունակությունը կարող է լրացվել և այլ տեսակներով, որոնք նշանակություն ունեն ղեկավարելու օպտիմալացման համար, օրինակ, ինչպիսիք են՝ կապիտալի ավանսավորման արդյունավետության հետազոտումը, ծախսերի, շրջանառության և շահույթի փոխկապվածության հետազոտումը:

Կազմակերպության ֆինանասական վիճակը բնութագրվում է դրանց պասիվների ակտիվների աղբյուրների դասավորմամբ և օգտագործմամբ:

Այդ տեղեկությունները ներկայացված են կազմակերպության հաշվեկշռում: Ֆինանասական վիճակը որոշող հիմնական գործոններն են հանդիսանում նախ ֆինանասական պլանի կատարումը և առաջացած պա-

հանջների սահմաններում սեփական շրջանառու կապիտալի լրացումը շահույթի հաշվին, և երկրորդ՝ շրջանառու միջոցների (ակտիվների) շրջանառելիության արագությունը: Ազդանշանային ցուցանիշը, որում դրսևորվում է ֆինանասական վիճակը, հանդես է գալիս կազմակերպության վճարունակությամբ, որի տակ ենթադրում են նրա ընդունակությունը՝ ժամանակին բավարարել մատակարարների վճարային պահանջարկները տեխնիկայի և նյութերի համար՝ տնտեսական պայմանագրերին համապատասխան, վերադարձնել վարկերը, դուրս բերել անձնակազմի աշխատավարձը: Քանի որ ֆինանասական պլանի կատարումը հիմնականում կախված է արտադրական և տնտեսական գործունեությունների արդյունքներից ամբողջությամբ, ապա վիճակը որոշվում է տնտեսական գործոնների ամբողջությամբ և հանդիսանում է առավել ընդհանրացվող ցուցանիշ:

Ֆինանասական վիճակի ընդհանուր բնութագրումից և հաշվետվության շրջանում նրա փոփոխությունից հետո ֆինանսական վիճակի հետազոտման կարևոր խնդիրն է հանդիսանում կազմակերպության ֆինանսական կայունության բացարձակ ցուցանիշների զննումը:

Նշված տեսակի հետազոտման համար որոշիչ նշանակություն ունի այն, թե ինչպիսի բացարձակ ցուցանիշներ են պատկերում ֆինանսական վիճակի կայունության էությունը: Նրա պատասխանն առաջին հերթին կապված է հաշվեկշռային ձևաչափի հետ, որից սկիզբ է առնում հետազոտումը: Այն ունի հետևյալ տեսքը.

$$Կ_{միջ} + Ն + Դ + Կ_{ատ} + Կ_{հտ} = Ս^{Ա} + Վ^{ժ} + Վ^{ժ} + Պ_{այլ}, \qquad (11.25)$$

որտեղ $Կ_{միջ}$-ն՝ կազմակերպության ոչ շրջանառու ակտիվներն են, Ն-ն՝ նյութական պաշարները և անավարտ արտադրությունը, Դ-ն՝ դրամական միջոցները, կարճաժամկետ ֆինանսական ներդրումները, ծախսերը և այլ պասիվները, $Կ_{ատ}$-ն՝ անցած տարիների կորուստները, $Կ_{հտ}$-ն՝ կորուստները հաշվետու տարվա կորուստները, $Ս^{Ա}$-ն՝ վճարման սեփական աղբյուրները, $Վ^{ժ}$-ն՝ երկարաժամկետ վարկեր և փոխառության միջոցները, $Վ^{ժ}$-ն՝ կարճաժամկետ վարկերը և փոխառության միջոցները, $Պ_{այլ}$-ն՝ հաշիվներ և այլ պասիվներ:

Նկատի ունենալով,որ երկարաժամկետ վարկերը և փոխառության միջոցներն ուղղվում են առավելապես հիմնական միջոցների ստացման և կապիտալ ներդրման վրա, կարելի է 11.25 բանաձևը փոխառել հետևյալ կերպ.

$$Ն + Դ = \left(\left(Ս^{Ա} - Կ_{ատ} - Կ_{հտ}\right) + Վ^{ժ} - Կ_{միջ}\right) + Վ^{ժ} + Պ_{այլ}, \qquad (11.26)$$

որտեղ Ն+Դ-ն՝ շրջանառու միջոցներն են, $\left(\text{Ս}^{\text{Ա}} - \text{Կ}_{\text{ատ}} - \text{Կ}_{\text{հտ}}\right)$*-ն՝ կազմակերպության սեփական միջոցները,* $\left(\left(\text{Ս}^{\text{Ա}} - \text{Կ}_{\text{ատ}} - \text{Կ}_{\text{հտ}}\right) + \text{Վ}^{\text{ժ}} - \text{Կ}_{\text{միջ}}\right)$*-ն՝ շրջանառու միջոցների վճարման համար պայմանական սեփական միջոցներն են:*

Այստեղից կարելի է հետևություն անել, որ սահմանափակման դեպքում.

$$\text{Ն} \times \left(\left(\text{Ս}^{\text{Ա}} - \text{Կ}_{\text{ատ}} - \text{Կ}_{\text{հտ}}\right) + \text{Վ}^{\text{ժ}} - \text{Կ}_{\text{միջ}}\right) + \text{Վ}^{\text{ժ}}, \qquad (11.27)$$

կկատարվի ձեռնարկության վճարունակության պայմաններում, այսինքն՝ դրամական միջոցները, կարճաժամկետ ֆինանսական ներդրումները (արժեթղթերը) և ակտիվ ծախսերը կվճարվեն ձեռնարկության կարճաժամկետ պարտքերի դիմաց $\left(\text{Վ}^{\text{ժ}} + \text{Պ}_{\text{այլ}}\right)$

$$\text{Դ} \times \text{Վ}^{\text{ժ}} + \text{Պ}_{\text{այլ}} : \qquad (11.28)$$

Այսպիսով, փոխադարձ կապը նյութական շրջանառու միջոցների արժեքի, նրանց ձևավորման, սեփական և փոխառության աղբյուրների մեծություններն որոշում են կազմակերպության ֆինանսական վիճակի կայունությունը: Պաշարների և ձևակերպման աղբյուրների ծախսերի ապահովությունը հանդիսանում է ֆինանսական կայունության էությունը: Միևնույն ժամանակ պաշարների և ձևակերպման աղբյուրների ծախսերի ապահովության աստիճանը վճարունակության այս կամ այն աստիճանի պատճառն է՝ հանդես գալով որպես ապահովության հետևանք: Ֆինանսական պաշարների աղբյուրների և ծախսերի բնութագրման համար օգտագործվում են մի քանի ցուցանիշներ.

- սեփական շրջանառու միջոցների գումարը, հավասարեցնելով սեփական միջոցների աղբյուրների մեծությունների տարբերությանը, գումարած երկարաժամետ փոխառության միջոցների ու հիմնական միջոցների և ներդրման մեծությունները.

$$\text{Ս}^{\text{Մ}} = \left(\text{Ս}^{\text{Ա}} - \text{Կ}_{\text{ատ}} - \text{Կ}_{\text{հտ}}\right) - \text{Կ}_{\text{միջ}}, \qquad (11.29)$$

- պայմանական սեփական շրջանառու միջոցների գումարը, որն ստացվում է նախկին ցուցանիշին ավելացնելով երկարաժամկետ վարկերի և փոխառության միջոցների գումարը.

$$\text{Ս}^{\text{ժ}}_{\text{պ}} = \left(\text{Ս}^{\text{Ա}} - \text{Կ}_{\text{ատ}} - \text{Կ}_{\text{հտ}}\right) + \text{Վ}^{\text{ժ}} - \text{Կ}_{\text{միջ}}, \qquad (11.30)$$

- շրջանառու միջոցների ընդհանուր մեծությունը՝ ներառելով կարճաժամկետ պարտքերը առանց կրեդիտորականի, հավասար է նախկին ցուցանիշի և կարճաժամկետ վարկերի և փոխառության միջոցների մեծությունների գումարին.

$$Մ_{Ը} = \left(Ս^{Ա} - Կ_{ատ} - Կ_{հտ}\right) + Վ^{ժ} + Վ^{ժ} - Կ_{միջ} : \qquad (11.31)$$

Պաշարների ձևավորման աղբյուրների և ծախսերի երեք ցուցանիշներին համապատասխանում են պաշարների ապահովման և նրանց ձևավորման աղբյուրների ծախսերի երեք ցուցանիշներ.

- սեփական շրջանառու միջոցների ավելցուկ (+) կամ պակասություն (-).

$$ΔՍ^{Ս} = Ս^{Ս} - Ն, \qquad (11.32)$$

- սեփական շրջանառու միջոցների ավելցուկ (+) կամ պակասություն (-) պայմանական

$$ΔՍ^{ժ}_{պ} = Ս^{ժ} - Ն, \qquad (11.33)$$

- շրջանառու միջոցների ընդհանուր մեծության ավելցուկ (+)կամ պակասություն(-)

$$ΔՍ^{Ը} = Ս^{Ը} - Ն : \qquad (11.34)$$

Պաշարների ապահովության և դրանց ձևավորման աղբյուրների ծախսերի երեք ցուցանիշների հաշվարկումը թույլ է տալիս ֆինանասական իրավիճակը դասակարգել ըստ իրենց կայունության աստիճանի:

Հնարավոր է առանձնացնել ֆինանասական իրավիճակի չորս տեսակ.

- *բացարձակ կայունություն*, որը հանդիպում է հազվադեպ և իրենից ներկայացնում է ֆինանասական կայունության ծայրահեղ վիճակ: Այն տրվում է հետևյալ պայմանով. $ΔՍ^{Ս} \geq 0$, $ΔՍ^{ժ}_{պ} \geq 0$, $ΔՍ^{Ը} \geq 0$,
- *կազմակերպության ֆինանսական վիճակի բնականոն կայունություն*, որը երաշխավորում է նրա վճարունակությունը. $ΔՍ^{Ս} < 0$, $ΔՍ^{ժ}_{պ} \geq 0$, $ΔՍ^{Ը} \geq 0$,
- *անկայուն ֆինանսական վիճակ*, որը կապված է վճարունակության խախտման հետ, որի դեպքում, այնուամենայնիվ, պահպանվում է հավասարության վերականգման հնարավորությունը սեփական միջոցների աղբյուրների լրացման և սեփական շրջանառու միջոցների մեծացման հաշվին. $ΔՍ^{Ս} < 0$, $ΔՍ^{ժ}_{պ} < 0$, $ΔՍ^{Ը} \geq 0$,
- *ճգնաժամային ֆինանսական իրավիճակ*, որի դեպքում կազմակերպությունը գտնվում է սնանկացման վիճակում, քանի որ տվյալ իրավիճակում դրամական միջոցները, կարճաժամկետ արժեթղթերը և դեբիտորական պարտքը չեն վճարում նույնիսկ նրա կրեդիտորական պարտքը.$ΔՍ_{Ս} < 0$, $ΔՍ^{ժ}_{պ} < 0$, $ΔՍ^{Ը} < 0$:

Հաշվեկշռի իրացվելության հետազոտման մեջ պահանջը առաջանում է շուկայական պայմաններում ֆինանսական սահմանափակման ուժեղացման հետ կապված և կազմակերպության վարկունակության գնահատա-

կանի անհրաժեշտությամբ: Հաշվեկշռի իրացվելությունը որոշվում է որպես կազմակերպության պարտավորության վճարման աստիճան՝ նրա ակտիվներով, որոնց դրամի վերլուծելու ժամկետը համապատասխանում է պարտավորության մարման ժամկետին: Ակտիվների իրացվելիությունը մեծություն է, որը հաշվեկշռի հակառակ իրացվելիությունը ժամանակավոր վերածում է ակտիվների՝ դրամական միջոցներում: Որքան քիչ է պահանջվում ժամանակ, որպեսզի ակտիվների տվյալ տեսքը ստանա դրամական տեսք, այնքան բարձր է նրա իրացվելիությունը:

Իրացվելության աստիճանից կախված, այսինքն՝ դրամական միջոցների վերլուծելու արագությունից, կազմակերպության ակտիվները բաժանվում են հետևյալ խմբերի.

- $А_1$՝ առավել իրացվելի ակտիվներ, կազմակերպության դրամական միջոցներ և կարճաժամկետ ֆինանսական ներդրումներ (արժեթղթեր),
- $А_2$՝ արագ իրացվող ակտիվներ, դեբիտորական պարտք և այլ ակտիվներ,
- $А_3$՝ դանդաղ իրացվող ակտիվներ, պաշարներ և ծախսեր,
- А4՝ դժվար իրացվող ակտիվներ, հիմնական և այլ արտաշրջանառու միջոցներ:

Հաշվեկշռի պասիվները խմբավորվում են՝ ըստ իրենց վճարման հրատապության.

- $П_1$՝ առավել շտապ պարտավորության (կրեդիտորական պարտք, դրամական վարկեր, որոնք չեն մարվել ժամկետում),
- $П_2$՝ կարճաժամկետ պասիվներ (կարճաժամկետ վարկեր և փոխառու միջոցներ),
- $П_3$՝ երկարաժամկետ պասիվներ (երկարաժամկետ վարկեր և փոխառու միջոցներ),
- $П_4$՝ մշտական պասիվներ:

Հաշվեկշռի իրացվելությունն որոշելու համար անհրաժեշտ է համադրել՝ ըստ ակտիվների և պասիվների բերված խմբերի եզրակացությունները: Հաշվեկշիռ համարվում է բացարձակապես իրացվելի, եթե տեղի ունեն հետևյալ փոխադարձ կապերը՝ $А_1 > П_1$, $А_2 \geq П_2$, $А_3 \geq П_3$, $А_4 \geq П_4$:

Առավել իրացվելի միջոցների և շտապ իրացվող ակտիվների համադրումն առավել շտապ պարտավորությունների և կարճաժամկետ պասիվների հետ թույլատրվում է պարզաբանել ընթացիկ իրացվելությունը: Դանդաղ իրացվող ակտիվների համեմատումը երկարաժամկետ ու միջի-

նաժամկետ պասիվների հետ արտահայտում է հեռանկարային իրացվելիությունը: Ընթացիկ իրացվելությունը վկայում է կազմակերպության վճարունակության մասին մոտակա ժամանակամիջոցում: Հեռանկարային իրացվելիությունն իրենից ներկայացնում է վճարունակության նախագուշակում՝ հետագա ստացման և վճարման համեմատության հիման վրա:

Ըստ շարադրված գծագրի՝ անցկացվող հաշվեկշռի իրացվելիության հետազոտումը հանդիսանում է մոտավոր այն պատճառով, որ իրացվելիության համապատասխան աստիճանը պայմանավորված է տեղեկատվության սահմանափակությամբ, որն իր տրամադրության ներքո ունի վերլուծաբանը, որն էլ անցկացնում է արտաքին հետազոտումը՝ հաշվապահական հաշվետվության հիման վրա: Ֆինանսական գործակիցներն իրենցից ներկայացնում են կազմակերպության ֆինանսական իրավիճակի վերաբերյալ ցուցանիշները: Նրանք հաշվարկվում են ֆինանսական իրավիճակի բացարձակ ցուցանիշների հարաբերության տեսքով: Ֆինանսական գործակիցների հետազոտումը կայանում է դնրանց նշանակության ու բազիսային մեծությունների համեմատությամբ, ինչպես նաև հաշվետու շրջանում դրանց դինամիկայի ուսումնասիրությամբ: Որպես բազիսային մեծություն, օգտագործում են.

- նորմատիվ ցուցանիշներ,
- ըստ ժամանակավոր շարքային նշանակության՝ ցուցանիշների միջինացնելը, որոնք վերաբերվում են ֆինանսական վիճակի բարեհաջող շրջանին,
- ցուցանիշների միջին ոլորտային նշանակությունը:

Ֆինանսական գործակիցների մասին համակարգը, ըստ տնտեսական տեսակետի, կարող է դասակարգվել մի շարք բնութագրական խմբերի.

1. կազմակերպության շահութաբերության գնահատման ցուցանիշներ,
2. արտաքին վարման կամ շահույթի արդյունավետության գնահատման ցուցանիշներ,
3. գործնական ակտիվության կամ կապիտալի վերադարձման գնահատումների ցուցանիշներ,
4. շուկայական կայունության գնահատման ցուցանիշներ,
5. հաշվեկշռի ակտիվների իրացվելիության գնահատման ցուցանիշներ՝ որպես վճարունակության հիմունքներ:

Դիտարկենք ֆինանսական գործակիցների յուրաքանչյուր խմբերից հիմունքներ:

1. Ձեռնարկության շահութաբերության գնահատականը.

1.1. $\text{ՇՄԱ Շահութաբերություն} = \frac{\text{Ընդհանուր շահույթ}}{\text{ՇՄԱ իրացված ծավալը}},$

1.2. $\text{Ձեռնարկության ընդհանուր շահութաբերություն} = \frac{\text{Համախառն շահույթ}}{\text{Գ ույքի միջին տարեկան արժեքը}} \times 100\%,$

1.3. $\text{Ձեռնարկության մաքուր շահութաբերություն} = \frac{\text{Ձեռնարկության մաքուր շահույթ}}{\text{Գ ույքի միջին արժեքը}} \times 100\%,$

1.4. $\text{ê»ö ³ Ï ³ Ý Ï ³ åÇ ï ³ ÉÇÙ ³ ùáõñß ³ ÑáõÃ ³ µ»ñáõÃÛáõÝ} = \frac{\text{Ò»éÝ ³ ñÏáõÃÛ ³ Ý Ù ³ ùáõñß ³ ÑáõÛÃ}}{\text{ê»ö ³ Ï ³ Ý Ï ³ åÇ ï ³ ÉÇÙÇçÇÝ Ù»Ï áõÃÛáõÝ}} \times 100\%,$

1.5. Արտադրական ֆոնդերի ընդհանուր շահութաբերությունը=համախառն շահույթ= =հիմնական արտադրական և շրջանառու նյութական ակտիվների միջին արժեք $\times 100\%$,

2. Կառավարման ընդհանուր արդյունավետությունը.

2.1. $\text{Հազար դրամի շրջանառության մաքուր շահույթը} = \frac{\text{Ձեռնարկության մաքուր շահույթ}}{\text{ՇՄԱ իրացված ծավալը}} \times 100\%,$

2.2. $\text{Հազար դրամի շրջանառության շահույթը ամբողջ իրացումից} = \frac{\text{Ամբողջ իրացման շահույթը}}{\text{ՇՄԱ իրացված ծավալը}} \times 100\%,$

2.3. $\text{Հազար դրամի շրջանառության ընդհանուր շահույթը} = \frac{\text{Համախառն շահույթ}}{\text{ՇՄԱ իրացված ծավալը}} \times 100\%,$

3. Գործնական ակտիվության գնահատականը.

3.1. Ընդհանուր կապիտալի ետ վերադարձը=ՇՄԱ իրացման ծավալը=Գույքի միջին արժեքը,

Հիմնական արտադրական միջոցների և ոչ նյութական միջոցների վերադարձը =

3.2. $= \frac{\text{ՇՄԱ իրացված ծավալը}}{\text{Հիմնական արտադրական միջոցների միջին արժեքը}},$

Բոլոր շրջանառու ակտիվների շրջանառելիությունը =

3.3. $= \frac{\text{ՇՄԱ իրացված ծավալը}}{\text{Շրջանառու ակտիվների միջին արժեքը և ոչ նյութական ակտիվները}},$

3.4. $\text{Պաշարների շրջանառելիությունը} = \frac{\text{ՇՄԱ իրացված ծավալը}}{\text{Պաշարների միջին արժեքը}},$

3.5. $\text{Դեբիտորական պարտքի շրջանառելիությունը} = \frac{\text{ՇՄԱ իրացված ծավալը}}{\text{Դեբիտորական պարտքի միջին մեծությունը}},$

3.6. $\text{Բանկային ակտիվների շրջանառելիությունը} = \frac{\text{ՇՄԱ իրացված ծավալը}}{\text{Ազատ դրամական միջոցների միջին մեծությունը}},$

3.7. $\text{Շրջանառությունը սե փ ական կապիտալի} = \frac{\text{ՇՄԱ իրացված ծավալը}}{\text{Սե փ ական կապիտալի միջին մեծությունը}},$

4. Շուկայական կայունության գնահատականը.

4.1. $\text{Ինքնավարության գործակիցը} = \frac{\text{Սե փ ական միջոցների աղբյուրները}}{\text{Բոլոր տնտեսական միջոցներ}},$

4.2. ö áË ³ éáõ ë» ÷ ³ Ï ³ ÝÙÇçáóÝ»ñÇ ÷ áË ³ ¹ ³ ñÓÏ ³ å Ç · áñÍ ³ ÏÇóÁ = $\frac{\text{Ձեռնարկության պարտավորությունը}}{\text{Սե փ ական միջոցների աղբյուրները}}$,

Մոբիլիզացված և հակամոբիլիզացված ակտիվների փ ոխադարձ կապի գործակիցը =

4.3. = $\frac{\text{Շրջանառու ակտիվները}}{\text{Հակամոբիլիզացված ակտիվներ}}$,

4.4. Շարժունակության գործակիցը = $\frac{\text{Սե փ ական շրջանառու միջոցները}}{\text{Շրջանառու միջոցների աղբյուրները}}$,

Սե փ ական աղբյուրների ձևավորմամբ շրջանառու միջոցների ապահովման գործակիցը =

4.5. = $\frac{\text{Սե փ ական շրջանառու միջոցները}}{\text{Պաշարները և դրամական միջոցները}}$,

Փոխառու միջոցների երկարաժամկետ ներգրավման գործակից =

4.6. = $\frac{\text{Ե րկարաժամկետ վարկերը}}{\text{Սե փ ական միջոցների աղբյուրներ+Ե րկարաժամկետ վարկեր}}$,

4.7. Կար ճ աժամկետ պարտքերի գործակից = $\frac{\text{Կար ճ աժամկետ պարտավորությունը}}{\text{Ամբողջ պարտականությունը}}$,

Պաշարների և ծախսերի ձևավորման ինքնավարության աղբյուրների գործակից =

4.8. = $\frac{\text{Սե փ ական շրջանառու միջոցներ}}{\text{Պաշարների ձևավորման աղբյուր}}$,

4.9. Կրեդիտային պարտքի և այլ պասիվների գործակից = $\frac{\text{Կրեդիտական պարտք + այլ պասիվներ}}{\text{Ձեռնարկության պարտավորության գումար}}$:

5. Ձեռնարկության ակտիվների իրացվելիության գնահատականը.

5.1. Բացարձակ իրացվելիության գործակից = $\frac{\text{Առավել իրացվելի միջոցներ(դրամ, արժեթուղթ)}}{\text{Ձեռնարկության առաջնահերթ պարտավորության գումար}}$,

Նորմատիվ նշանակությունը 0.1-ից ոչ պակաս

Միջանկյալ իրացվելիության գործակից =

5.2. = $\frac{\text{Առավել իրացվելի շրջանառու միջոցներ +Դեբիտորական պարտք}}{\text{Ձեռնարկության առաջնահերթ պարտավորության գումար}}$,

Նորամտիվ նշանակությունը 0.5-ից ոչ պակաս

Ընթացիկ իրացվելիության գործակից =

5.3 = $\frac{\text{Առավել իրացվելի շրջանառու միջոցներ +Դեբիտորական պարտք + Արտադրական պաշարների արժեք}}{\text{Ձեռնարկության առաջնահերթ պարտավորության գումար}}$,

Նորմատիվ նշանակությունը 2.0-ից ոչ պակաս:

Չի կարելի մոռանալ, որ որոշ ֆինանսական ցուցանիշներ հանդիսանում են ձեռնարկության ֆինանսական վիճակի և նրա վճարունակության կողմնորոշիչ ցուցանիշներ: Ձեռնարկության ֆինանսական վիճակի ազդանշային ցուցանիշ է հանդիսանում նրա վճարունակությունը, որը բնութագրվում է բացարձակապես տվյալներով, որոնք դիտվում են չվճարված հաշվեկշռում և նրանց պատճառներում:

Գրականության ցանկ

1. Экономика строительства: учебник/ под общей ред. И.С. Степанова.-3-е изд., доп. И перераб.-М.: Высшее образование.-2010.-620с.
2. Investments-5th edition- William F. Sharpe, Gordon J. Alexander, Jeffery V. Bailey-900pg
3. Экономика строительства:учеб. Пособие для студ. Высш. Учеб. Заведений / [В.В. Бузырев и др.]. - 3-е изд. – 2010. – 336 с.
4. Экономика строительства / Ю. Ф. Симонов [и др.]; под ред. Ю. Ф. Симонова. - Ростов н/Д: Феникс, 2009. - 378 с.
5. Экономика строительства. 2-е ИЗД. /Л. М. Чистов. -СПб.: Питер, 2003. - 637 с.

Տպագրության եղանակը՝ ռիզոգրաֆիա:
Թուղթը՝ օֆսեթ, 80 գր:
Ծավալը՝ 19,75 տպագրական մամուլ:
Ստորագրված է տպագրության 25.01.2019թ.:
Պատվեր թիվ 439: Տպաքանակը՝ 100 օրինակ:
Տպագրված է Ճարտարապետության և
շինարարության Հայաստանի ազգային համալսարանի
տպագրության և լրատվության վարչության տպարանում:
Հասցե՝ Երևան, Տերյան 105